

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

«Կրթությունը 21-րդ դարում»
գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես

Հատոր 7, համար 1, 2025
Երևան

«Образование в 21-ом веке»
международный научно-методический рецензируемый журнал

Том 7, Номер 1, 2025
Ереван

«Education in the 21st Century»
International Scientific-Methodical Peer-Reviewed Journal

Volume 7, Issue 1, 2025
Yerevan

*«ԿԸԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ԸԴ ԴԱՐՈՒՄ» գիտամեթոդական միջազգային գրախոսվող
հանդեսն ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄ նախարարության բարձրագույն կրթության և
գիտության կոմիտեի կողմից ընդունելի
պարբերականների գիտական հրատարակությունների ցուցակում:*

*Международный научно-методический рецензируемый журнал «ОБРАЗОВАНИЕ
В 21-ОМ ВЕКЕ» включен в перечень периодических научных изданий, рекомендованных
Комитетом высшего образования и науки Министерства образования,
науки, культуры и спорта РА.*

*The international scientific-methodical peer-reviewed journal "EDUCATION IN THE 21ST
CENTURY" is included in the list of scientific periodicals recommended by the Committee of
Higher Education and Science of the Ministry of Education, Science,
Culture and Sports of the Republic of Armenia.*

*Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդեսը տպագրվում է
Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ:*

*Международный научно-методический рецензируемый журнал издается по
рекомендации Ученого совета Ереванского государственного университета.*

*The international scientific-methodical peer-reviewed journal is published by the
recommendation of the Scientific Council of Yerevan State University.*

ՀԱՆՐԱՅՈՒՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Գլխավոր խմբագիր՝

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Կ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն

Խմբագրական խորհուրդ՝

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ. Վ.

Երևանի պետական համալսարանի ռեկտոր,
պատմ. գիտ. դոկտոր,
Հայաստանի Հանրապետություն

ԱՍՐԻՅԱՆ Է. Վ.

Երևանի պետական համալսարանի պրոռեկ-
տոր, հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ,
Հայաստանի Հանրապետություն

ՄԱՐԴՈՅԱՆ Ռ. Ա.

գլխավոր խմբագրի տեղակալ, մանկ. գիտ. դոկ-
տոր, պրոֆեսոր, Շիրակի պետական համալսա-
րան, Հայաստանի Հանրապետություն

ԱԶԱՐՅԱՆ Ռ. Ն.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պե-
տական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն

ԲԵՐՄՈՒՄ Ա. Գ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Դոնի Ռոստովի
Հարավային դաշնային համալսարան,
Ռուսաստանի Դաշնություն

ԲՈՅԼ Բ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Ձևավորող
գնահատման ուսումնասիրությունների
կենտրոն, Մանչեստրի համալսարան,
Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Կ.

ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն

ԳԵՎՈՐԳՅԱՆ Պ. Հ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ.,
Վանաձորի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն

ԺՈՒԿ Ա. Ի.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Բելառուսի
Մ. Տանկի անվ. պետական մանկ. համալսարա-
նի ռեկտոր, Բելառուսի Հանրապետություն
բան. գիտ. թեկնածու, դոցենտ, Աբու Դաբիի
կրթության և գիտության նախարարություն,
Որակի ապահովման և վերահսկողության վար-
չություն, ԱՄԷ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ի. Կ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Վ.Բրյուսովի
անվ. պետական համալսարան, Հայաստանի
Հանրապետություն

ՀՈՊՖՆԵՐ Ի.

ՄԱՂԱԼԻՆՍԿԱ-ՄԻՉԱԼԱԿ Ի.

ՄԵՀՐԱՆԵԱՆ Ե.

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ. Հ.

ՊԼԱՉԻՆԴԱՍ Ս. Ս.

ՊՈՂՏՈՎԱԼ Ս. Ս.

ՎՈՒԲԵԼՍ Թ. Հ.

ՔԱՂԻՍ Ս.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Գրացի համալսարան,
Ավստրիայի Հանրապետություն
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Վարշավայի համալսարան,
Լեհաստանի Հանրապետություն
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, Ջորջիա քոլեջ,
Ամերիկայի Միացյալ Նահանգներ
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Վ. Բրյուսովի
անվան պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Յուրի Կոնդրատյուկի անվան Պոլտավայի պոլի-
տեխնիկական ազգային համալսարան, Ուկ-
րաինա
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Մոսկվայի
պետական մանկավարժական համալսարան,
Ռուսաստանի Դաշնություն
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Ուտրեխտի համալսարան,
Նիդեռլանդներ
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
հետբուհական կրթություն՝ հատուկ մանկա-
վարժություն մասնագիտությամբ,
Բրազանսայի պոլիտեխնիկական ինստիտուտ,
Պորտուգալիա

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ НАУЧНОГО ЖУРНАЛА

Главный редактор:

АРУТЮНЯН Н. К.

Доктор пед. наук, профессор,
Ереванский государственный университет,
Республика Армения

Члены редакционного совета:

ОГАННИСЯН О. В.

Ректор Ереванского государственного
университета, доктор ист. наук, Республика
Армения

АСРИАН Э. В.

Проректор Ереванского государственного
университета, кандидат психол. наук, доцент,
Республика Армения

МАРДОЯН Р. А.

Заместитель главного редактора, доктор пед.
наук, профессор,
Ширакский государственный университет,
Республика Армения

АЗАРЯН Р.Н.

Доктор пед. наук, профессор,
Ереванский государственный университет,
Республика Армения

БЕРМУС А. Г.

Доктор пед. наук, профессор,
Южный федеральный университет, Ростов-на-
Дону, Российская Федерация

БОЙЛ Б.

Доктор пед. наук, профессор, Центр
исследований формирующего оценивания,
Манчестерский университет, Великобритания

ВУББЕЛЬС Т. Х.

Доктор пед. наук, профессор,
Утрехтский университет, Нидерланды

ГЕВОРГЯН П. Г.

Доктор пед. наук, профессор,
Ванадзорский государственный университет,
Республика Армения

ГРИГОРЯН А. К.

Кандидат физ.-мат. наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения

ЖУК А. И.

Доктор пед. наук, профессор, ректор
Белорусского государственного
педагогического университета, Республика
Беларусь

КАРАПЕТЯН И. К.

Доктор пед. наук, профессор, Государственный
университет им. В. Брюсова, Республика
Армения

КАРДИМ С.

Доктор экономических наук, профессор,
Послевузовское образование по специальности
«Специальная педагогика»,
Политехнический институт Брагансы,
Португалия

МАДАЛИНСКА-МИЧАЛАК И.

Доктор пед. наук, профессор,
Варшавский государственный университет,
Республика Польша

МЕЙРАНЯН Е.

Кандидат пед. наук, доцент, Колледж Джорджия,
Соединенные Штаты Америки

ПЕТРОСЯН Г. А.

Доктор пед. наук, профессор,
Государственный университет
им. В. Брюсова, Республика Армения

ПЛАЧИНДА Т. С.

Доктор пед. наук, профессор,
Полтавский технический университет имени Ю.
Кондратюка, Украина

ПОДЫМОВА Л. С.

Доктор пед. наук, профессор,
Московский педагогический государственный
университет, Российская Федерация

ХАЧАТРЯН Р. Х.

Кандидат филолог. наук, доцент, Министерство
Образования и Науки Абу-Даби,
Департамент контроля качества, ОАЭ

ХОПФНЕР И.

Доктор пед. наук, профессор,
Грацский университет,
Австрийская Республика

EDITORIAL BOARD

Editor-in-chief:

HARUTYUNYAN N.K.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Yerevan State University, RA

Members of the Editorial Board:

HOVHANNISYAN H. V.

Rector of Yerevan State University,
Doctor of Historical Sciences, RA

ASRIYAN E. V.

Vice-rector of Yerevan State University,
Ph.D. of Psychology, Associate Professor, RA

MARDOYAN R. A.

Deputy editor-in-chief, Doctor of Pedagogical
Sciences, Professor, Shirak State University, RA

AZARYAN R. N.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Yerevan State University, RA

BERMUS A. G.

Doctor of Pedagogical Sciences,
Professor, Rostov-on-Don

BOYLE B.

Southern Federal University, RF

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Center for Formative Assessment Studies,
University of Manchester, UK

CARDIM S.

Adjunct Professor, Doctor of Economical Sciences,
Postgraduate education in the specialty “Special
Pedagogy”

GRIGORYAN A. K.

Instituto Politécnico de Bragança, Portugal

Ph.D. of Physical and Mathematical Sciences,

Associate Professor, Yerevan State University, RA

GEVORGYAN P. H.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Vanadzor State University, RA

ZHUK A. I.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Rector of Belarus State Pedagogical University,
Republic of Belarus

KHACHATRYAN R. KH.

Ph.D. of Philology, Associate Professor, Ministry
of Education and Science, Abu Dhabi, Department
of Quality Control, UAE

KARAPETYAN I. K.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Brusov State University, RA

HOPFNER J.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
University of Graz, Republic of Austria

MADALINSKA-MICHALAK J.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
University of Warsaw, Republic of Poland

MEHRANIAN Y.

Ph.D. of Pedagogy, Associate Professor, Georgia
College, USA

PETROSYAN H. H.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Brusov State University, RA

PLACHYNDA T. S.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
National University Yuri Kondratyuk Poltava
Polytechnic, Ukraine

PODYMOMA L. S.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Moscow Pedagogical State University, RF

WUBBELS T. H.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Utrecht University, Netherlands

Խմբագրության հասցեն՝ ՀՀ,
0025, Երևան, ԵՊՀ,
փ. Արովյան 52ա:

Адрес редакции:
Республика Армения, 0025,
Ереван, ЕГУ
ул. Абовяна 52а,

Editorial address: Armenia,
0025, Yerevan, YSU,
Abovyan str., 52a.

Հեռ.՝ (060) 71-06-16

Тел.: (060) 71-06-16

Tel: (060) 71-06-16

Էլ. կայք՝ publications.ysu.am
publishing.ysu.am

Ձև. ասր: publications.ysu.am
publishing.ysu.am

Webpage:
publications.ysu.am,
publishing.ysu.am

Էլ. փոստ՝
education21@ysu.am
Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ հա-
մամիտ չլինելով հեղինակ-
ների տեսակետներին:

Ձև. փոստ:
education21@ysu.am
Редакция может
публиковать материалы,
не соглашаясь с мнением
авторов.

E-mail:
education21@ysu.am
Authors' ideas may not
necessarily coincide with
those of the editorial office.

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝

Մերի Ավետիսյան
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարան, ՀՀ

Սույն համարի գրախոսները՝

Ալեքսանյան Ա.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, Գրացի համալսարան, Ավստրիա
Աշիկյան Ա.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Ասատրյան Ս.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ, ՀՀ
Ավետիսյան Մ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Բաղդասարյան Վ.	դասախոս, ԵՊՀ, ՀՀ
Բերմուս Ա.	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Դոնի Ռոստովի Հարավային դաշնային համալսարան, ՌԴ
Բրուտյան Ա.	բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Գյուլբուդաղյան Վ.	բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Խաչատրյան Ռ.	բան. գիտ. թեկնածու, դոցենտ, Աբու Դաբիի կրթության և գիտության նախարարություն, Որակի ապահովման և վերահսկողության վարչություն, ԱՄԷ
Խլոպուզյան Ա.	դասախոս, ԵՊՀ, ՀՀ
Կարապետյան Ի.	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԲՊՀ, ՀՀ
Հակոբյան Տ.	մանկ. գիտ. թեկնածու, ԵՊՀ, ՀՀ
Հայրապետյան Լ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Ղազարյան Ա.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Ղուկասյան Լ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Մխիթարյան Զ.	դասախոս, ԵՊՀ, ՀՀ
Ոսկանյան Ա.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Պետրոսյան Հ.	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԲՊՀ, ՀՀ
Պողիմովա Լ.	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան, ՌԴ
Ռամազյան Ս.	բան. գիտ. թեկնածու, ասիստենտ, ԵՊՀ, ՀՀ
Սարգսյան Լ.	դասախոս, ԵՊՀ, ՀՀ

Հանդեսում ներառված հոդվածներում արտահայտված մտքերի ու գաղափարների հեղինակային իրավունքը պատկանում է հոդվածի հեղինակ(ներ)ին. նա է (նրանք են) պատասխանատու հոդվածում առկա մտքերի ձևակերպման, ինչպես նաև բովանդակության համար:

Ответственный секретарь журнала:

Мери Аветисян
канд. пед. наук, доцент,
Ереванский государственный университет, РА

Рецензенты данного номера:

Аветисян М.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Айрапетян Л.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Акопян Т.	канд. пед. наук, ЕГУ, РА
Алексян А.	канд. пед. наук, доцент, Университет Граца, Австрия
Асатрян С.	канд. пед. наук, доцент, АГПУ, РА
Ашикян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Багдасарян В.	преподаватель, ЕГУ, РА
Бермус А.	доктор пед. наук, профессор, Южный федеральный университет, Ростов-на-Дону, РФ
Брутян А.	канд. филол. наук, доцент, ЕГУ, РА
Восканян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Гукасян Л.	канд. пед. наук, доцент, ШГУ, РА
Гюльбудагян В.	канд. филол. наук, доцент, ЕГУ, РА
Казарян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Карапетян И.	доктор пед. наук, проф., ГУ им В. Брюсова, РА
Мхитарян З.	преподаватель, ЕГУ, РА
Петросян Г.	доктор пед. наук, проф., ГУ им В. Брюсова, РА
Подымова Л.	доктор пед. наук, профессор, Московский педагогический государственный университет, РФ
Рамазян С.	канд. филол. наук, ассистент, ЕГУ, РА
Саргсян Л.	преподаватель, ЕГУ, РА
Хачатрян Р.	канд. филол. наук, доцент, Министерство образования и науки Абу-Даби, ОАЭ
Хлопузян А.	преподаватель, ЕГУ, РА

Авторские права на идеи и мысли, выраженные в статьях журнала, принадлежат автору/авторам статьи, которые несут ответственность за формулировку и содержание статьи.

Executive secretary of the journal:

Meri Avetisyan,
Ph.D. of Pedagogy, Associate Professor,
Yerevan State University, RA

The reviewers of this volume:

Aleksanyan A.	Ph.D. of Pedagogy, Associate Professor, University of Graz, Austria
Asatryan S.	Ph.D. of Pedagogy, Associate Professor, ASPU, RA
Ashikyan A.	Ph.D. of Pedagogy, Associate Professor, YSU, RA
Avetisyan M.	Ph.D. of Pedagogy, Associate Professor, YSU, RA
Baghdasaryan V.	Lecturer, YSU, RA
Bermus A.	Doctor of Pedagogical Sciences, Professor, Rostov-on-Don Southern Federal University, RF
Brutyan A.	Ph.D. of Pedagogy, Associate Professor, YSU, RA
Ghazaryan A.	Ph.D. of Pedagogy, Associate Professor, YSU, RA
Ghukasyan L.	Ph.D. of Pedagogy, Associate Professor, ShSU, RA
Gyulbudaghyan V.	Ph.D. of Philology, Associate Professor, YSU, RA
Hakobyan T.	Ph.D. of Pedagogy, YSU, RA
Hayrapetyan L.	Ph.D. of Pedagogy, Associate Professor, YSU, RA
Karapetyan I.	Doctor of Pedagogical Sciences, Professor, Brusov SU, RA
Khachatryan R.	Ph.D. of Philology, Associate Professor, Ministry of Education and Science Abu Dhabi, Head of Quality Control Department, UAE
Khlopuzyan A.	Lecturer, YSU, RA
Mkhitaryan Z.	Lecturer, YSU, RA
Petrosyan H.	Doctor of Pedagogical Sciences, Professor, Brusov SU, RA
Podymova L.	Doctor of Pedagogical Sciences, Professor, Moscow Pedagogical State University, RF
Ramazyan S.	Ph.D. of Philology, Assistant, YSU, RA
Sargsyan L.	Lecturer, YSU, RA
Voskanyan A.	Ph.D. of Pedagogy, Associate Professor, YSU, RA

The copyright to the ideas and thoughts expressed in the articles contained in the journal belongs to the author(s) of the article, and he/she (they) is (are) responsible for the formulation and content of the article.

ԲԱԺԻՆ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	15
РАЗДЕЛ 1: ТЕОРИЯ ПЕДАГОГИКИ.....	15
SECTION 1: THEORY OF PEDAGOGY	15
Աշիկյան Արմենուհի ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ.....	15
Բրուսյան Անահիտ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ (Երևանի պետական համալսարանի օրինակով)	24
Գրիգորյան Վահագն ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՒԵԿՏԻՎԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ.....	39
Խոսպուղյան Անահիտ ԶԱԽԼԻԿՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	53
Марджян Рузанна ТЪЮТОРСТВО КАК ИННОВАЦИОННАЯ ПЕДАГОГИЧЕСКАЯ ТЕХНОЛОГИЯ: ВОЗМОЖНОСТИ И ВЫЗОВЫ	65
Подымова Людмила, Алисов Евгений, Терешкина Карина СОБЫТИЙНЫЙ ПОДХОД К ПРОЕКТИРОВАНИЮ ПЕРСОНАЛИЗИРОВАННОЙ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СРЕДЫ ДЛЯ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ С ОГРАНИЧЕННЫМИ ВОЗМОЖНОСТЯМИ ЗДОРОВЬЯ.....	76
Asatryan Samvel, Hakobyan Lisa, Adamyan Nune THE ROLE OF BIG DATA AND LEARNING ANALYTICS IN THE QUALITY ASSURANCE PROCESS OF HIGHER EDUCATION	87
Boyle Bill, Charles Marie THE NORMALIZED INVISIBILITY OF BLACK AGENCY WITHIN THE SCHOOLING SYSTEM IN ENGLAND	100
ԲԱԺԻՆ 2. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.....	110
РАЗДЕЛ 2: ОБУЧЕНИЕ И ВОСПИТАНИЕ.....	110
SECTION 2: TEACHING AND UPBRINGING	110
Գևորգյան Պարզև, Էմինյան Գագիկ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՅՈՐՈՐԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ.....	110
Հայրապետյան Լուսինե, Ավետիսյան Մերի, Աբրահամյան Մերի ՈՒՍՈՒՑԻՉ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԱՆԱԶ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....	124
Պետրոսյան Հայկ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՅՈՒՄ.....	135

Ռամազյան Սամվել

ԹՅՈՒՐԳԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐԻ («ԴԵԴԵ ՔՈՐՔՈՒԹ» ԵՎ «ՔՅՈՌՈՂԼԻ»)

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՊՀ ԹՅՈՒՐԳԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԱՍԲԻՈՆՈՒՄ 144

Ангуриян Сусанна

ПРИМЕНЕНИЕ ДАННЫХ ЯЗЫКОВЫХ КОРПУСОВ НА ПРАКТИКЕ

ПРЕПОДАВАНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА 158

Tshughuryan Armen, Khachatryan Nonna, Karapetyan Svetlana

THE ASSESSMENT ISSUES OF EDUCATION BY LEARNING OUTCOMES AND CREDIT

MEASUREMENT 167

ԲԱԺԻՆ 3. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ 177

РАЗДЕЛ 3: МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ..... 177

SECTION 3: TEACHING METHODICS 177

Արզումանյան Արմենուհի

«ՇՐՋԱԾ ԴԱՍԱՐԱՆ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ 177

Միրայելյան Կարինե

ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵԶՐՈՒԹԱՅԻՆ ԲԱՌԱՇԵՐՏԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԸՍՏ

«ԳՈՒՄ» ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ..... 187

Փանոսյան Հովիկ

ԲՈՒՀԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՎԻՐՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ

ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 200

Варданян Луиза, Айрапетян Сюзанна

МЕТОДИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ХИМИИ В УСЛОВИЯХ

ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ 210

Gabrielyan Anna, Madatyan Karine

SOCIOCULTURAL THEORY OF LEARNING TO PROMOTE COMMUNICATIVE

LANGUAGE TEACHING 221

Мноян Размик

ALGO-HEURISTIC RESEARCH METHODS AND THEIR APPLICATION

IN TEACHING HISTORY 230

ԲԱԺԻՆ 4. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՃՅՈՒՂԵՐ 239

РАЗДЕЛ 4: НАУЧНЫЕ ОТРАСЛИ ПЕДАГОГИКИ..... 239

SECTION 4: SCIENTIFIC BRANCHES OF PEDAGOGY 239

Ալեքսանյան Սանն

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱԿՄԵՈԼՈԳԻԱՅԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ XXI ԴԱՐԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 239

Ղազարյան Արևիկ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ

ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ..... 246

Азарян Роберт, Меликян Лусине

К ПРОБЛЕМЕ РАЗВИТИЯ УРОВНЯ ИНФОРМИРОВАННОСТИ УЧИТЕЛЕЙ

НАЧАЛЬНЫХ КЛАССОВ В ВОПРОСАХ ОБУЧЕНИЯ И ВОСПИТАНИЯ ДЕТЕЙ С

НАРУШЕНИЕМ ЗРЕНИЯ..... 257

ԲԱԺԻՆ 5. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 280

РАЗДЕЛ 5: УПРАВЛЕНИЕ ОБРАЗОВАНИЕМ 280

SECTION 5: EDUCATION MANAGEMENT 280

Տոնոյան Տաթևիկ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԴԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 280

ԲԱԺԻՆ 6. ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 305

РАЗДЕЛ 6: ОБРАЗОВАНИЕ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ 305

SECTION 6: EDUCATION IN FOREIGN COUNTRIES 305

Հարությունյան Նազիկ, Ալեքսանյան Մարիամ

ՇՎԵԴԻԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 305

Скок Вероника

АКТУАЛЬНЫЕ ВЫЗОВЫ И ПЕРСПЕКТИВЫ

УНИВЕРСИТЕТСКОГО ИСТОРИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ

В РЕСПУБЛИКЕ БЕЛАРУСЬ 320

ԲԱԺԻՆ 7. ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՄՓՑՈՒՌՔՈՒՄ 335

РАЗДЕЛ 7: АРМЯНСКОЕ ОБРАЗОВАНИЕ В ДИАСПОРЕ 335

SECTION 7: ARMENIAN EDUCATION IN DIASPORA 335

Մկրտչյան Կարեն

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՆԱՀԱՅ ԴՊՐՈՑԻ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՑՈՒՑԻԶ (2000-2008 թթ.) 335

ԲԱԺԻՆ 8. ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 344

РАЗДЕЛ 8: ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ШКОЛЫ И ПЕДАГОГИЧЕСКОЙ МЫСЛИ 344

SECTION 8: HISTORY OF ARMENIAN SCHOOL AND PEDAGOGICAL THOUGHT 344

Բաղդասարյան Վիկտորիա

ՄԱՆԿԱՎԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ

ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ՈՒՍՈՒՅԶԻ ԿՈՉՄԱՆ ՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 344

UDC 37.048.45

DOI 10.46991/educ-21st-century.v7.i1.015

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԽ-ԴԻՐԸ

Աշիկյան Արմենուհի

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն

armine_ashikian@yahoo.com

<https://orcid.org/0000-0002-7172-6007>

Ամփոփում

Ժամանակակից պայմաններում ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրն արդիական է և գտնվում է մասնագետ-հետազոտողների ուշադրության կենտրոնում: Պատանին՝ որպես ապագա մասնագետ, փորձում է գտնել իր տեղը մասնագիտությունների շարքում՝ անցնելով գիտելիքների ձեռքբերման երկարատև ճանապարհ: Մինչդեռ տեղեկատվության մեծ հոսքը հաճախ դժվարացնում է ավագ դպրոցականին ինքնուրույն կողմնորոշվելու մասնագիտական ընտրության գործում: Այս հարցում իրենց կարևոր դերակատարությունն ունեն ինչպես ընտանիքը (ծնողները), այնպես էլ դպրոցը (մասնագետ-սոցիալական մանկավարժը), որոնց արդյունավետ ուղղորդումն ու աջակցությունը ոչ միայն կօգնեն երեխային մասնագիտության ընտրության հարցում, այլև կապահովեն հասարակության տնտեսական, սոցիալական, գիտական զարգացումը:

Համառոտ ներածական: Ավագ դպրոցում պատանիների մասնագիտական կողմնորոշման գործընթացը լուրջ մարտահրավեր է հասարակության ու կրթության համակարգի համար: Այս հարցում լուրջ անելիքներ ունեն ինչպես ընտանիքը, այնպես էլ դպրոցը: Մի կողմից ընտանիքի կառուցվածքը, ընտանեկան դերերը, ներընտանեկան հարաբերություններն են կարևոր դեր խաղում երեխայի մասնագիտական կողմնորոշման հարցում: Ծնողների դերը ավագ դպրոցականի մասնագիտական կողմնորոշման գործում արդիական է հատկապես ներկայիս պայմաններում, երբ տեղեկատվության մեծ հոսքը դժվարացնում է ինքնուրույն կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում, մյուս կողմից, դպրոցի ուղղորդումը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտությունների ընտրության, մասնավորապես նորարարական մասնագիտությունների հարցում, որոնք կապահովեն հասարակության սոցիալական, տնտեսական զարգացումը:

Բանալի բառեր՝ *մասնագիտական կողմնորոշում, ավագ դպրոցական, նորարարական մասնագիտություն, մասնագիտական նույնականացում, մասնագիտական վարքագծային նորմ, մասնագիտության ընտրություն:*

Հիմնախնդիրը: Ավագ դպրոցների գործառույթներից մեկը պետք է լինի մասնագիտական կողմնորոշումը: Հիմք ընդունելով այս հանգամանքը՝ հողվածում քննվում են ավագ դպրոցում դպրոցականների մասնագիտական կողմնորոշումն ապահովելու հնարավորություններն ու հեռանկարները, առկա դժվարություններն ու հաղթահարման ուղիները:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել և վերլուծել ավագ դպրոցում դպրոցականների մասնագիտական կողմնորոշումն ապահովելու հնարավորություններն ու հեռանկարները, առկա դժվարություններն ու հաղթահարման ուղիները՝ կարևորելով այդ հարցում սոցիալական մանկավարժի դերն ու գործառույթները:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակչությունների վերլուծություն: Հիմնախնդրով զբաղվել են ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա գիտնականները (Ռ. Աղուզումցյան, Ռ. Ստեփանյան, Վ. Պապոյան, Յա. Ս. Ռոշչևա, Օ. Վ. Լուցենկո, Ե. Ա. Կլիմով և ուրիշներ), յուրաքանչյուրը յուրովի մեկնաբանմամբ՝ հաշվի առնելով դպրոցականի տարիքին բնորոշ առանձնահատկությունները:

Հետազոտության նորույթը: Հողվածում մեկնաբանվել ու վերլուծվել են ավագ դպրոցում սովորողների մասնագիտական կողմնորոշումն ապահովելու հնարավորություններն ու հեռանկարները, այդ գործում սոցիալական մանկավարժի դերակատարությունն ու գործառույթները՝ քննելով առկա դժվարություններն ու հաղթահարման ուղիները:

Հիմնական նյութի շարադրանքը: ՀՀ հանրակրթության համակարգը վերջին տարիներին ինտենսիվ բարեփոխումների է ենթարկվել: Խոսքն ինչպես ծրագրային փոփոխությունների, այնպես էլ կազմակերպատարական փոխակերպումների մասին է: Այս համատեքստում առանցքային կարևորություն ունի ավագ դպրոցներում դպրոցականի մասնագիտական կողմնորոշման խնդիրը:

Անձի մասնագիտական կողմնորոշման և ուղղորդման հիմնախնդիրը բոլոր ժամանակներում էլ չի կորցնում իր արդիականությունը և մնում է մանկավարժների ու հոգեբանների ուշադրության կենտրոնում: Անձը՝ որպես ապագա մասնագետ, փորձում է գտնել իր տեղը մասնագիտությունների շարքում՝ անցնելով գիտելիքների ձեռքբերման երկարատև ճանապարհ: Մասնագիտական կրթության ձեռքբերման գործընթացում անձնային հետաքրքրությունների դրսևորման և իմաստավորման հնարավորություններն արդյունավետ ուղի են ձևավորում ապագայում աշխատանքային գործունեության համար: Կրթությունն ստանալու արդյունքում ավելի ակտիվ են դառնում մասնագիտական աշխատանքի ձեռքբերման սպասումները: Սակայն դժվար է անդրադառնալ այս հարցերին, առանց մասնագիտական կողմնորոշման և ուղղորդման հնարավորությունների մեկնաբանման: Մասնագիտական կողմնորոշման արդյունավետ գործոնները, որոնք նպատակահարմար է հաշվի առնել ընտրության գործընթացում, ունեն արտաքին և ներքին ուղղվածություն: Արտաքինը վերաբերում է ընտանիքի, սոցիալական միջավայրի և ձևավորվող փոխհարաբերությունների

ազդեցության տարրերին, իսկ ներքինը՝ անձնային առանձնահատկություններին, դրդապատճառային ոլորտի ցուցանիշներին և այլն: Այս իմաստով անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ ուղղությունները.

- առաջին ուղղությունը աշակերտի ունակություններին և հակումներին համապատասխան մասնագիտության ընտրությունն է, որը ենթադրում է աշակերտի ունակությունների և հակումների բացահայտման համար կրթական բարենպաստ պայմանների ստեղծում, աշակերտին համապատասխան մասնագիտության ընտրության ուղղորդում,
- աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող մասնագիտության ընտրության ուղղորդումն է՝ հաշվի առնելով աշակերտների ապագա զբաղվածության հավանականությունը,
- ուղղորդումն է դեպի նորարարական մասնագիտություններ, որոնք կապահովեն հասարակության հետագա զարգացումը:

Անդրադառնալով մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ առկա գիտական մոտեցումներին՝ տեղին է նշել մասնագիտական կողմնորոշման տեսության հիմնադիր, ամերիկացի գիտնական Ֆ. Պարսոնսի եռագործոն մոդելը, որը հիմնականում ճանաչողատեղեկատվական բնույթ ունի: Ըստ նրա՝ մասնագիտության ընտրությունը պետք է հիմնվի՝

- անձի սեփական հակումների, ունակությունների, հետաքրքրությունների, ռեսուրսների և այլ որակների մասին հստակ պատկերացումների վրա,
- գործունեության տարբեր բնագավառներում հնարավորությունների և հեռանկարների, փոխհատուցումների, առավելությունների և թերությունների, հաջողության հասնելու պահանջների ու պայմանների ճանաչման վրա,
- նշված երկու գործոնների հիմնավորված և ճիշտ համադրության վրա:

[11]

Մասնագիտական ինքնորոշման մեջ նախապես հաշվի է առնվում առաջնային ու երկրորդային գործոնների առկայությունը: Որպես առաջնայիններ՝ կարևորվում են համապատասխան բնագավառում կադրերի պահանջարկը և որակավորումը, կրթության մակարդակը, մասնագիտական պատրաստվածությունը, անձի անհատական-հոգեբանական, ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Որպես երկրորդայիններ՝ առանձնացվում են մասնագիտական աճի հեռանկարները, մասնագիտությանը համապատասխանող սեռային ու տարիքային առանձնահատկությունները, մասնագիտության տեսանկյունից ապագա մասնագետին ներկայացվող պահանջները: Պահպանելով մասնագիտական կողմնորոշման համար անհրաժեշտ վերը նշված գործոնները՝ կարելի է ապահովագրել ունակ և հուսալի անձանց մուտքը գործունեության համապատասխան բնագավառ, նպաստել աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, վերանայել որակյալ ուսուցմանը ներկայացվող պահանջները, մասնագիտական պիտանելիության չափանիշները, հստակեցնել մասնագիտության հեռանկարները [1, էջ 15-18]:

Մասնագիտական կողմնորոշումը՝ որպես կայացման հիմնական նախա-
դրյալ, հասարակության զարգացման անհրաժեշտ բաղադրիչ է և ունի իր
հստակ բնութագրիչները, որոնց գնահատման ու ուղղորդման ճանապարհով
կարելի է հասնել մասնագիտական աճի և տվյալ բնագավառում ինքնիրացման
գործունեության [2, էջ 20]:

Վերջին տասնամյակների ընթացքում սովորողների մասնագիտական
կողմնորոշման գործում կարևորում ենք նաև մասնագիտական նույնականաց-
ման (իդենտիֆիկցիան) խնդիրը, որը հասարակական տարբեր գիտությունների
հետազոտողների հետազոտության առարկան է: Սակայն իրականացված բազ-
մաթիվ աշխատանքները դեռևս չեն տալիս այս հայեցակարգի միանշանակ սահ-
մանումը, չեն ենթադրում նրա էության ըմբռնումը:

«Իդենտիֆիկացիա» տերմինի լայն տարածումն ու նրա ներդրումը գիտու-
թյան մեջ կապված են է.Հ.Էրիկսոնի անվան հետ, որը նույնականացումը սահ-
մանեց որպես ներքին շարունակականության ու ինքնության, որպես նրա ամ-
բողջականության ու հասունության ամենակարևոր հատկանիշ, ինչպես նաև
անձի նույնականացում որոշակի սոցիալական խմբերում: Սա որոշում է ար-
ժեքների համակարգը, իդեալները, կյանքի պլանները, անձի սոցիալական դե-
րը, նրա կարիքները և դրանց իրականացման ուղիները [3, էջ. 42]:

Չնայած այս ոլորտում իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություն-
ներ, սակայն դեռ չկա մասնագիտական իդենտիֆիկացիայի միասնական մո-
տեցում: Մասնագիտական իդենտիֆիկացիայի ամենատարողունակ սահմա-
նումներից մեկը տվել է Ն.Ա. Քուշնիրը, որն արտահայտում է անձի կողմից իր
մասնագիտական գործունեության ընդունում, նրա մասնագիտական բնութագ-
րերը (նորմեր, դերեր և կարգավիճակներ) ճանաչողական, հուզական, արժե-
քային, վարքային մակարդակներում [6, էջ 10]:

Այս խնդրին անդրադարձել են նաև Յա. Ս. Ռոչևան, Օ. Վ. Լուցենկոն, Ս. Պ.
Միրոնովան, Լ. Բ. Շնեյդերը, որոնք մասնագիտական նույնականացումը դի-
տարկում են որպես մարդու կողմից հասարակական մասնագիտական մշա-
կույթի իրացման բազմագործոն և բազմաստիճան գործընթաց, մասնագիտա-
կան արժեքների, ավանդույթների, մասնագիտական վարքագծային նորմերի
ինտեգրում մասնագիտական հարաբերությունների համակարգ [9, էջ 8], [7, էջ
182], [8, էջ 82], [11]:

Իսկ ինչպե՞ս է ավագ դպրոցականը կողմնորոշվում մասնագիտություննե-
րի լայնարձակ դաշտում, ինչպե՞ս է ընտրում մասնագիտություն: Գաղտնիք չէ,
որ անձը՝ որպես ապագա մասնագետ, փորձում է գտնել իր տեղը մասնագի-
տությունների շարքում՝ անցնելով գիտելիքների ձեռքբերման երկարատև ճա-
նապարհ: Այս տարիքը համընկնում է վաղ պատանեկության շրջանին: Այն
ընդգրկում է 15-18 տ. ժամանակաշրջանը: Այս տարիքում շարունակվում ու
խորանում են դեռահասության տարիքում ձեռք բերված թե՛ ֆիզիկական-բնա-
խոսական և թե՛ հոգեկան զարգացման առանձնահատկությունները, այլ խոս-
քով՝ շարունակվում և կատարելագործվում են մինչ այդ ձեռք բերված առանձ-

նահատկությունները: Մա այն տարիքն է, երբ ավագ դպրոցականին հետաքրքրում են ոչ միայն տեսական հարցերը, այլև վերլուծության ընթացքը, ապացուցման մեթոդները: Նրանք առավելապես նախընտրում են դասավանդողի կողմից առաջադրվող տարբեր տեսակետների լուծման ուղիների որոնումը, պնդումների հիմնավորումը, բանավեճը և իրենց դիրքորոշման պաշտպանումը: Այս տարիքն առավել շատ մտքի վարժանքների, ինքնագիտակցության բարձր մակարդակի, քննադատության, սեփական վարքը վերահսկելու, խնդիրները վերլուծելու և համադրելու տարիք է:

Հետևապես պատահական չէ, որ ներկայիս հարափոփոխ հասարակարգում բազում խնդիրների շարքում արդիական խնդիրներից է նաև ավագ դպրոցականի մասնագիտության ընտրությունը և ինքնիրացումը:

Պատանեկության տարիքում մասնագիտության ընտրության վրա ազդում են տարբեր գործոններ, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական իրավիճակը, էթնիկական պատկանելությունը, ինտելեկտը, սեռը, հատուկ ունակությունները, հետաքրքրությունները, ինչպես նաև ծնողների մասնագիտությունը: Ավագ դպրոցականը ձգտում է ընտրել այնպիսի մասնագիտություն, որը համադրվում է սեփական անձի մասին պատկերացումների հետ, և եթե այդ պատկերացումներն ու ընտրած մասնագիտությունը համապատասխանում են ես-կերպարին, կարող ենք ասել, որ անձն ինքնիրացման ճանապարհին է:

Տարիքային զարգացմանը զուգընթաց պատանին պարզեցնում և հստակեցնում է ներքին մոտիվները, հետաքրքրություններն ու հակումները, մղումներն ու ձգտումները: Արդյունքում ձևավորվում է հստակ պատկերացում, գիտակցում ապագա մասնագիտության մասին, որին հաջորդում է մասնագիտության ընտրությունը:

Մասնագիտական բնագավառային ընտրությունը կարող է լինել ինչպես ցանկալի, այնպես էլ պարտադրված՝ պայմանավորված աշխատաշուկայի պահանջներով: Ուստի ավագ դպրոցականի մասնագիտական կողմնորոշումը (կարիերայի ընտրությունը) բարդ և բազմաբնույթ գործընթաց է, որն ունի մի շարք առանձնահատկություններ:

- **Ինքնաճանաչողության գործընթացը**, երբ երեխան պետք է լավ ճանաչի իր անձնային առանձնահատկությունները, հմտությունները, հետաքրքրությունները, արժեհամակարգը, բնավորության գծերը և կարողությունները: Այն թույլ է տալիս հասկանալ, թե որ մասնագիտությունն է համահունչ իր պահանջմունքներին:
- **Արտաքին միջավայրի ազդեցությունը** – Մասնագիտության ընտրությունը հաճախ պայմանավորված է հասարակության, ընտանիքի կամ մշակույթի նորմերով: Երկրի տնտեսական վիճակը, աշխատաշուկայի պահանջները մեծ դեր ունեն մասնագիտական կողմնորոշման գործում:
- **Հետաքրքրությունների և նպատակների ձևավորում** – Ավագ դպրոցականի մասնագիտական ընտրությունը պայմանավորված է նրա հետաքրքրություններով ու նպատակներով: Կան կարճաժամկետ և երկա-

րաժամկետ նպատակներ, որոնք համահունչ են մասնագիտության պահանջներին:

- **Տարիքային-անհատական առանձնահատկությունները** – մասնագիտական կողմնորոշումը սկսվում է դեռ վաղ պատանեկության շրջանում, երբ երեխան, ելնելով իր անհատական առանձնահատկություններից, սկսում է պատկերացում կազմել իր ապագայի մասին:
- **Կրթության դերը** – Վերջինս օգնում է ստանալ համապատասխան գիտելիքներ ու կարողություններ, որոնք անհրաժեշտ են տվյալ մասնագիտության համար:
- **Կամք, նպատակասլացություն** – Երբեմն մասնագիտական ընտրությունն ուղեկցվում է անորոշությամբ ու նույնիսկ վախերով: Ավագ դպրոցականը պետք է ունենա կամային որակներ, հաստատականություն՝ դժվարությունները հաղթահարելու և նոր հնարավորություններ բացահայտելու համար:
- **Մասնագիտական կողմնորոշում** – Դպրոցներում մեկնարկել է այս առարկայի դասավանդումը, և խորհրդատվությունները, թեստերը, զրույցները օգնում են առավել ճիշտ ուղղությամբ շարժվել: Այն առավել կարևոր է հատկապես նրանց համար, ովքեր դեռևս չեն կարողանում ընտրություն անել: Այս հարցում կարևորվում է նաև սոցիալական մանկավարժի դերակատարությունը: Վերջինս, համագործակցելով ուսուցիչների, ծնողների հետ, հաշվի առնելով պատանու նախասիրություններն ու հետաքրքրությունները, կարող է անցկացնել մասնագիտական խորհրդատվություն՝ ուղղորդելով մասնագիտության ընտրության հարցում:
- **Ճկունություն և ժամանակի պահանջին համընթաց ընթանալու կարողություն** – Աշխատաշուկան արագ փոփոխվում է, և անհրաժեշտ է հարմարվել նոր պայմաններին: Նոր հմտությունների ձեռքբերումը և մշտապես սովորելու ցանկությունը շատ կարևոր են: Հարկ է նշել, որ ավագ դպրոցը՝ որպես նախամասնագիտական կրթություն տրամադրող օղակ, ենթադրում է, որ հիմնական դպրոցից հետո երեխան պետք է որոշակի մասնագիտական կողմնորոշում ունենա: Ավելին, ավագ դպրոցը միջանկյալ օղակ է հիմնական կրթությունից դեպի մասնագիտական կրթություն: Սա ենթադրում է, որ ավագ դպրոցների և բուհերի կապը պետք է սերտ լինի: Հաճախ ավագ դպրոցականների մեծ մասը, չունենալով մասնագիտական կողմնորոշման գործում աջակցություն, առաջնորդվում են ծնողների կամ ընկերների խորհուրդներով՝ ընտրելով մասնագիտություններ, որոնց մասին պատկերացում անգամ չունեն: Արդյունքում, մի կողմից երեխան հայտնվում է մի միջավայրում, որտեղ չի կարողանում ինքնաիրացվել, մյուս կողմից էլ տեսադաշտից դուրս են մնում ժամանակակից շատ մասնագիտություններ, իսկ որոշ մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության նվազումն էլ վտանգում է այդ մասնագի-

տությունների գծով մասնագետների պատրաստման հարցը: Ողջունելի է այս հարցում «Այբ» և Վաղարշապատի Մ. Գորկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցներում մասնագիտական կողմնորոշումն ապահովելու համար անհրաժեշտ մասնագետների առկայությունը, որոնք ծավալուն աշխատանք են տանում խնդրի լուծման գործում: Այս բացը լրացվում է նաև հենակետային ավագ դպրոցների ստեղծմամբ, որտեղ կոնկրետ այս կամ այն մասնագիտության գծով պատրաստվում են ապագա կադրեր (Երևանի պետական համալսարանում, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում և այլն):

Այնուհանդերձ, ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշումն իրականացվում է դեռևս հոսքային ուսուցման միջոցով (բնագիտամաթեմատիկական, հումանիտար) և մասնագիտական կողմնորոշման հնարավորությունները սահմանափակվում են առաջարկվող հոսքերով և ենթահոսքերով: Ավելին, հոսքային դասարանների կազմակերպման ընթացքը դեռևս լիակատար չէ. կան մի շարք խնդիրներ, որոնք լուծում են պահանջում: Այսպես, խնդիրներից մեկն այն է, որ հոսքային կրթությունը չի ապահովում ծրագրային ճկունություն, որով հնարավոր կլինե՞ր առարկայի դասավանդումը իրականացնել այն ծավալով և բարդությամբ, որն անհրաժեշտ է աշակերտին իր ապագա մասնագիտության ընտրության հարցում: Արդյունքում երեխան, անկախ մասնագիտացումից, ստիպված է ուսումնասիրել տվյալ հոսքի համար նախատեսված այնպիսի առարկաներ, որոնք իր ընտրած մասնագիտության մեջ այդչափ խորությամբ անցնելու անհրաժեշտություն չկա: Մա կարող է հանգեցնել հետաքրքրության, սովորելու ցանկության, դրդապատճառի նվազման: Հաշվի չի առնվում նաև համայնքային /քաղաքի, գյուղի/ առանձնահատկությունները՝ տարածքի բնակչության կարիքներն ու պահանջները: Մինչդեռ տարածքային առանձնահատկությունների հաշվառումը և տվյալ համայնքի համար մասնագետների նախապատրաստումն ու ուղղորդումը բխում է հենց տվյալ համայնքի շահերից:

Ավագ դպրոցում սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղորդման գործում սոցիալ-մանկավարժական գործիքակազմում կարևորում ենք նաև այնպիսի մեթոդների կիրառությունը, որոնք օգնում են պատանիներին առավել գիտակցաբար ընտրել իրենց մասնագիտությունը՝ հաշվի առնելով հետաքրքրությունները, կարողությունները, արժեքներն ու հնարավորությունները: Դրանք են՝

❖ Ինքնաճանաչողության մեթոդներ

ա) թեստային աշխատանքներ (օր.՝ Ջ. Լ. Հոլանդի մասնագիտական թեստ, Մայերս-Բրիգսի տիպաբանության ցուցիչ-թեստ), որոնք միտված են բացահայտելու անձի առանձնահատկություններն ու հետաքրքրությունները,

բ) անհատական զրույցներ,

գ) մոտիվացիայի վերլուծություն,

❖ Տեղեկատվական գործիքներ

ա) աշխատաշուկայի վերլուծություն,

բ) մասնագետների հետ հանդիպում,

❖ **Հմտությունների զարգացման գործիքներ**

ա) փորձնական ծրագրեր,

բ) խաղային իրավիճակներ – ուսուցողական խաղեր, որոնք ցույց են տալիս իրական աշխատանքի պայմանները,

❖ **Կրթական ծրագրեր** – դասընթացներ, որոնք զարգացնում են հատուկ հմտություններ,

❖ **Տեխնոլոգիական գործիքներ** – առցանց հարթակներ,

❖ **Վիրտուալ իրականություն** – մասնագիտական աշխատանքային պայմանների ցուցադրում:

Վերոնշյալներն այն մեթոդներն են, որոնք՝ որպես արդյունավետ գործիքակազմ, կարող է կիրառել մասնագետը (սոցիալական մանկավարժը) սովորողների մասնագիտական ուղղորդման գործում:

Եզրահանգում: Այսպիսով՝ մասնագիտական կողմնորոշման ճիշտ ռազմավարություն ընտրելու համար խիստ կարևոր է հասկանալ արդի շուկայական հարաբերությունների պայմաններում առաջարկ-պահանջարկ համատեքստում ո՞ր մասնագիտություններն են առավել նախընտրելի՝ հաշվի առնելով երեխայի հակումները, նախասիրություններն ու հետաքրքրությունները: Դրա համար անհրաժեշտ է դպրոցներում սովորողների մասնագիտական կողմնորոշմանն աջակցող մասնագետի հաստիքի առկայություն, որը, իրականացնելով որոշակի գործառնություններ, կարող է ապահովել սոցիալ-մանկավարժական մասնագիտական իրազեկում-խորհրդատվություն, միջին մասնագիտական հաստատությունների և բուհերի ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում, աջակցություն երեխային մասնագիտության կողմնորոշման գործում:

THE PROBLEM OF PROFESSIONAL ORIENTATION OF HIGH SCHOOL STUDENTS

Ashikyan Armenuhi

PhD of Pedagogy, Associate Professor

Yerevan State University Republic of Armenia

armine_ashikyan@yahoo.com

Summary

In modern conditions, the problem of professional orientation of high school students is relevant and is in the focus of attention of researchers. A young person, as a future specialist, tries to find his place among the professions, passing a long path of acquiring knowledge. Meanwhile, the large flow of information often makes it difficult for a high school student to independently orient himself in the matter of choosing a profession. In this matter, both the family (parents) and the school (specialist, social pedagogue) play an important role, whose effective guidance and support will not only help the child in choosing a profession, but will also ensure the economic, social, scientific development of society.

Keywords: *professional self-determination, high school student, innovative profession, professional identification, professional behavioral norm, choice of profession.*

ПРОБЛЕМА ПРОФЕССИОНАЛЬНОЙ ОРИЕНТАЦИИ СТАРШЕКЛАССНИКОВ

Ашикян Арменуи

Аннотация

В современных условиях проблема профессиональной ориентации старшеклассников актуальна и находится в центре внимания исследователей. Молодой человек, как будущий специалист, пытается найти свое место среди профессий, проходя долгий путь получения знаний. Между тем, большой поток информации зачастую затрудняет старшекласснику самостоятельное ориентирование в вопросе выбора профессии. Здесь важную роль играет как семья (родители), так и школа (специалист, социальный педагог), эффективное руководство и поддержка которых не только помогут ребенку в выборе профессии, но и обеспечат экономическое, социальное, научное развитие общества.

Ключевые слова: профессиональная ориентация, старшеклассник, инновационная профессия, профессиональная идентификация, профессиональная поведенческая норма, выбор профессии.

Օգտագործված գրականության ցանկ

1. Aghuzumtsyan R.V., Stepanyan R.R., Masnagitakan hokebanakan yntrutyun, Yerevan, 1988., ej 15-18:
2. Papoyan V., Galstyan A., Muradyan Ye., Sargsyan D., Masnagitakan inknoroshman yev kayatsman hokebanakan ughghordumy krthakan hamakargum// Nyutheri zhoghovatsu, hegh. // Yer., YePH hrat., 2015, 76 ej, ej 4-5:
3. Zabneva E.I., Usloviya formirovaniya ustojchivoj professional'noj identichnosti munitsipal'nykh sluzhashikh // Vestnik VolGU. Seriya 7: Filosofiya. Sotsiologiya i sotsial'nye tekhnologii. 2014. № 1. S. 41–45.
4. Klimov Ye.A., Psikhologiya professional'nogo samoopredeleniya// M.: Akademiya, 2007, 304s., s.137.
5. Klimov Ye.A., Kak vybrat' professiyu? M., Akademiya, 1990.
6. Kushnir N.A., Professional'naya identichnost' v strukture avto-psikhologicheskoy kompetentnosti gosudarstvennykh sluzhashikh: avtoreferat diss. na soisk. uch. step. kand. ped. nauk. Moskva: MGU, 2009. 27 s., s. 10.
7. Lutsenko O.Ye., Teoreticheskie kontsepty issledovaniya protsessa professional'noj sotsializatsii munitsipal'nykh sluzhashikh // ISOM. 2015. № 6–2. s. 182–186.
8. Mironova S.P., Professional'naya identifikatsiya lichnosti: postanovka problemy i opredelenie ponyatiya // Obrazovanie i nauka. 2008. № 4. s. 81–90.
9. Rocheva Ya.S., Sotsial'no-professional'naya identichnost' munitsipal'nykh sluzhashikh. Avtoreferat diss. na soisk. uch. step. kand. ped. N. SPb.: SPbGU, 2010. 28 s., s. 8.
10. Shnejder L.B., Professional'naya identichnost': Monografiya. M.: MOSU, 2001. 272 s., 24s. 27.
11. Parsons F., Choosing a Vocation, Houghton Mifflin Company, Boston, 1909.

Получено: 10.04.2025

Received: 10.04.2025

Рассмотрено: 11.04.2025

Reviewed: 11.04.2025

Принято: 25.05.2025

Accepted: 25.05.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

UDC 378.1

DOI 10.46991/educ-21st-century.v7.i1.024

**ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄԸ՝ ՈՐՈՇԵՍ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿԻԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ
(Երևանի պետական համալսարանի օրինակով)**

Բրուտյան Անահիտ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն,

anahitbrutyanyan@ysu.am

<https://orcid.org/0009-0000-4468-2478>

Ամփոփում

Բարձրագույն կրթության անընդհատ զարգացող և բարդ համակարգում արդյունավետ կառավարումն ու կրթության բարձր որակի ապահովումը պահանջում են համակարգում տեղի ունեցող գործընթացների մշտական վերլուծություն և առկա («մշտատև») կամ նորահայտ տարաբնույթ խնդիրների լուծում: Այդ առումով առանձնահատուկ նշանակություն է տրվում մշտադիտարկմանը (մոնիթորինգ), որը, մի կողմից, դիտվում է որպես առկա իրավիճակն ու իրողություններն ուսումնասիրելու և գնահատելու գործիք, մյուս կողմից՝ կրթական կազմակերպության առաջընթացն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու կարևոր միջոց: Կրթության որակի մշտադիտարկումը կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման և ուսումնական գործընթացների բարելավման կարևորագույն պայմաններից է:

Հոդվածում փորձ է արվում արժևորելու կրթության, մասնավորապես բարձրագույն կրթության ոլորտում մշտադիտարկման դերը, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) օրինակով համակողմանիորեն դիտարկվում և ներկայացվում են բուհում կրթական ծրագրերի (ԿԾ) մշտադիտարկման իրականացման ու դրա արդյունքում ԿԾ-ների բարելավման ուղղությամբ անհրաժեշտ գործողությունների սահմանման, դրանց արդյունավետությունն ապահովող միջոցառումների պլանավորման ու կատարման գործընթացները:

Բանալի բառեր. *ԵՊՀ, մշտադիտարկում (մոնիթորինգ), ֆոկլուս-խումբ, որակի ապահովում, բոլոնյան գործընթաց, կրեդիտային համակարգ, կրթական ծրագիր, կրթության որակ:*

Հոդվածում դիտարկվող խնդրի էությունը: Որպես ուսումնասիրության առարկա՝ ընտրվել է բուհում կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացը՝ այն դիտարկելով իբրև բարձրագույն կրթության որակի ապահովման և բարձրացման, ինչպես նաև բուհի կրթական գործունեության կառավարման կարևոր գործոններից մեկը:

Հետազոտության նպատակն է ԵՊՀ օրինակով վերլուծաբար ներկայացնել և արժևորել բուհական կրթության արդյունավետության բարձրացման գործընթացում մշտադիտարկման կարևոր դերակատարումը, դիտարկել նրա իրականացման առանձնահատկությունները, մեթոդները, արդյունքների համադրման և ամփոփման մեթոդաբանությունը:

Թեմայի արդիականությունը: Նորագույն տեխնոլոգիաների սրարշավ մուտքը հասարակական կյանքի բոլոր ոլորտներ զգալիորեն փոխել և շարունակում է փոփոխել դրանց զարգացման պայմանները, ընթացքը, դրանց նկատմամբ պահանջներն ու ակնկալիքները՝ շեշտը դնելով արդյունքի որակի ապահովման վրա: Այդ ամենը պահանջում է նաև որոշակի փոփոխությունների իրականացում տվյալ ոլորտի կառավարման կազմակերպական գործընթացներում:

Բարձրագույն կրթության արդիականացման ու արդյունավետության աճի հիմնական պայմաններից մեկը նրա որակի անհրաժեշտ մակարդակի ապահովումը և բարելավումն է: Այս տեսանկյունից կարևորվում է բուհի գործունեության բոլոր ոլորտներում, հատկապես ուսումնական և գիտական ուղղություններով գործընթացների արդյունքների մշտադիտարկումը:

Գիտական նորույթը: Հոդվածում ԵՊՀ օրինակով համակողմանիորեն դիտարկվում և ներկայացվում են բուհում կրթական ծրագրերի մշտադիտարկման իրականացման, դրանց բարելավման և արդյունավետության ապահովման ուղղությամբ անհրաժեշտ գործողությունների սահմանման, միջոցառումների պլանավորման և կատարման գործընթացները:

Ուսումնասիրության մեթոդաբանության հիմքում մշտադիտարկման կազմակերպման և իրականացման առանձնահատկությունների ներկայացումն ու վերլուծությունն են, դիտարկման արդյունքների ընդհանրացումն ու դրանց հիման վրա արված եզրահանգումները:

Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն: Բարձրագույն կրթության որակի ապահովման և գնահատման ուղղությամբ իրականացվող գործընթացների շարքում առանձնակի ուշադրություն է գրավում բուհական կյանքի տարբեր ոլորտների կամ առանձին գործընթացների մշտադիտարկումը: Բարձրագույն մասնագիտական կրթության որակի և արդյունավետության բարձրացման, ոլորտի հիմնախնդիրների վերհանման, դիտարկման և լուծման ուղիների կիրառման հարցերին և այդ համատեքստում մշտադիտարկման՝ որպես կարգավորող, հաշվեկշռող գործոնի դերին անդրադարձել են ոլորտի հայ և օտարազգի բազմաթիվ մասնագետներ: Նրանք կրթական ծրագրերի բարելավման, բոլոնյան գործընթացի համատեքստում կրթության որակի՝ եվրոպական սահմանված չափանիշներին և չափորոշիչներին համապատասխանեցման առնչությամբ իրենց իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները ներկայացրել են թե՛ մասնագիտական հանդիպումների, քննարկումների, գիտաժողովների, աշխատաժողովների ընթացքում, թե՛ հոդվածների, մենագրությունների, դասագրքերի, ուսումնական, մեթոդական ձեռնարկների, ուղեցույցների և այլնի տեսքով: Մեր հոդվածում սեփական դիտարկումներին և կատարած քննական վերլուծություններին ու արդյունքների համադրումներին զուգահեռ անդրադարձել ենք մի շարք հեղինակների (Յու. Մարգսյան, Ա. Բուդաղյան, Ն. Հարությունյան, Ա. Գրիգորյան, Ն. Աբակյան, Ն. Վորոնովա, Ս. Կանաշևիչ, Ս. Բորովկովա, Ի. Մորև, Ա. Լոյկո, Ս. Նեստերենկով և ուրիշներ) աշ-

խատանքներին և խնդրո առարկայի առնչությամբ դրանցում արտահայտված հիմնական գաղափարներին, փաստերին, փաստարկումներին, հիմնավորումներին և այլն: Միաժամանակ անդրադարձել ենք հիմնախնդրին առնչվող օրենսդրական և նորմատիվ մի շարք փաստաթղթերի:

Հիմնական նյութի շարադրանքը: Յուրաքանչյուր երկրի առաջընթացն առաջին հերթին պայմանավորված է նրա մտավոր ներուժով, բոլոր բնագավառներում բարձր մակարդակի գիտելիքներով օժտված կադրերի առկայությամբ, որի ապահովման հիմնական հանձնառուն կրթության, առանձնապես բարձրագույն մասնագիտական կրթության համակարգն է: «Կրթությունն այսօր ակտիվ գիտելիքների արտադրություն է, որն ապահովում է հասարակության զարգացումը բոլոր ուղղություններում» [1, էջ 80]:

Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով սահմանված է. «Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող՝ տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության կառույցների և նախաձեռնությունների, ինչպես նաև կրթության կառավարման մարմինների և սոցիալական գործընկերների փոխկապակցված ամբողջությունն է» [9, էջ 3]: «Կրթության մասին» ՀՀ օրենքով ամրագրված է. «Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը» [8, հ. 24]:

Խորհրդային Միության փլուզումից հետո անկախություն հռչակած Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկված բազմազան գործընթացների շարքում իրենց կարևորությամբ զգալի տեղ ունեցան նաև կրթական բարեփոխումներն ու նորամուծությունները: «Հասարակության կրթվածության հիմնախնդիրը որոշիչ դեր ունի ազգերի ժամանակակից և սոցիալական նշանակություն ունեցող արժեքային համակարգի, հասարակության կողմնորոշվածության, մարդու կողմից իր դերի գիտակցված ընտրության համար: Կրթությունը կոչված է կատարելու, աջակցելու և զարգացնելու հասարակության արժեքային համակարգը: Բարեփոխումների նպատակը նաև կրթության համակարգի կայուն զարգացման մեխանիզմների ստեղծումն ու մշակումն է, հասարակության պահանջներին դրա համապատասխանության և արդյունավետության ապահովումը» [2, էջ 6], – գրում են Ն. Հարությունյանը և Ա. Գրիգորյանը:

Դեռևս 1990-ական թթ. առաջին կեսին մեր հանրապետության բարձրագույն կրթության համակարգում անցում կատարվեց որակավորումների երկաստիճան համակարգին՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ներմուծմամբ: Նախորդ հասարակարգում ամրակայված հնգամյա բարձրագույն կրթությանը փոխարինելու եկավ նոր համակարգ, որի արդյունավետ կի-

րարկումն ապահովելու նպատակով ձեռնարկվեցին ծրագրային բարեփոխումներ, կազմակերպական և կառուցվածքային փոփոխություններ՝ պայմանավորված գլոբալացվող աշխարհում բարձրագույն կրթության բնագավառում կատարվող փոփոխություններով և թելադրված բոլոնյան գործընթացի պահանջներով: «Բոլոնիայի գործընթացը մեկնարկել է 1999 թ., երբ 29 եվրոպական երկրների կրթության նախարարները հանդիպեցին իտալական Բոլոնիայում և ստորագրեցին մի հռչակագիր, որն ամրագրում էր բոլոր այն պահանջները, որոնք անհրաժեշտ էին մինչև 2010 թ. ԵԲԿՏ-ն ստեղծելու համար» [3, էջ 7]: Ու թեև արդեն հետագա տասնամյակի ավարտին պարզ դարձավ, որ նախատեսված ժամանակահատվածը բավարար չէր այդ որոշումը լիովին իրականացնելու համար, այդուհանդերձ գործընթացը լայնորեն ծավալվեց՝ ներգրավելով աշխարհի բազմաթիվ երկրներ:

Հայաստանի Հանրապետությունը բոլոնյան գործընթացին միացավ 2005 թ. և կարճ ժամանակ անց անդամ երկրների նման որդեգրեց բուհական կրթության եռաստիճան համակարգին անցնելու քաղաքականությունը: Նախորդ տասնամյակում բարձրագույն կրթության համակարգ ներմուծված որակավորումների երկու աստիճաններին (բակալավրիատ, մագիստրատուրա) շուտով հավելվեց երրորդը (հետազոտողի որակավորում): Բազմաթիվ փոփոխությունների շարքում հրատապ դարձան բարեփոխումները ինչպես բարձրագույն կրթության համակարգում, այնպես էլ գիտահետազոտական ոլորտում:

Ուսումնական գործընթացում ձեռնարկված առաջին բարեփոխումներից մեկը կրեդիտային համակարգի ներդնումն էր: Բոլոնիայի հռչակագրի կարևորագույն նպատակներից մեկով սահմանված է. «Հիմնադրել կրեդիտային համակարգ, ինչպիսին է ECTS-ը՝ որպես ուսանողների մեծամասշտաբ շարժունությունը խթանող միջոց: Կրեդիտները կարելի է ձեռք բերել նաև բարձրագույն ուսումնական հաստատություններից դուրս, եթե այդ կրեդիտները ճանաչված են ընդունող շահագրգիռ համալսարանների կողմից» [4, էջ 192]: Գործող կրթական համակարգից կրեդիտայինին անցնելու ժամանակահատվածում անհրաժեշտ էր հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ, միջոցներ ձեռնարկել տարաբնույթ հարցերի լուծման համար, և այս համատեքստում կարևորվեց հատկապես կրթության որակի ապահովումը:

Երևանի պետական համալսարանը հայաստանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների շարքում առաջիններից էր, որտեղ, ԵԲԿՏ (Եվրոպական բարձրագույն կրթության տարածք - Մ. Բ.) պահանջներին և սկզբունքներին համապատասխան, մշակվեց և ներդրվեց որակի ներքին ապահովման համակարգ: Սկսած 2007/2008 ուսումնական տարվանից՝ ԵՊՀ մագիստրատուրայում, իսկ 2008/2009 ուստարվանից նաև բակալավրիատում բոլոր մասնագիտությունների գծով ներդրվեց ուսումնառության կրեդիտային համակարգը, որի գործունեության հիմքում առաջին հերթին բուհի կողմից մշակված և հաստատված կրեդիտային համակարգով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող փաստաթղթերն էին,

ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը, համապատասխան կրթական ծրագրերի արմատապես վերակառուցված ուսումնական պլանները և այլն: Անցած տասնամյակների ընթացքում ԵՊՀ-ում այդ գործընթացները պարբերաբար վերակազմակերպվել են՝ համապատասխանեցվելով առկա պահանջներին և միջազգային չափանիշներին: Անշուշտ, ուղղորդիչ գործոնը առաջին հերթին բուհի զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված խնդիրներն ու նպատակներն են: Կրթության որակի գնահատմանը, բարելավմանը և արդյունավետության բարձրացմանն ուղղված գործընթացների իրականացումը ԵՊՀ առաջնահերթություններից է, ինչը սահմանված է նաև ԵՊՀ տարբեր ժամանակահատվածների զարգացման ռազմավարական ծրագրերում: Այդ տեսակետից ԵՊՀ որակի ապահովման համակարգը հիմնվում է, մասնավորապես, կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման և պարբերական վերանայման հստակ սահմանված սկզբունքների և ընթացակարգերի վրա: «Ռազմավարական պլանավորումը բուհի կողմից իրականացվող գործընթաց է՝ գնահատելու, թե ինչ է ցանկանում անել բուհը իր առաքելությունը և հիմնական նպատակները երկարաժամկետ հեռանկարում արդյունավետ կերպով իրականացնելու համար... Ռազմավարական ծրագիրը ենթակա է մշտական մշտադիտարկման ու ընտրված ուղղությամբ առաջընթացի պարբերական գնահատման և պետք է կարգաբերվի նոր իրողություններին համապատասխան» [6, էջ 4]:

Բարձրագույն մասնագիտական կրթության որակի անհրաժեշտ մակարդակի ապահովման պայմաններից կարևորագույնը, թերևս, կրթական ծրագրերի իրականացման, հատկապես դասավանդման արդյունավետության ապահովումն է: Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ օրենքում (Նախագիծ) կրթական ծրագիրը սահմանվում է որպես «բարձրագույն կրթության որևէ մակարդակի և մասնագիտության ուսումնական և հետազոտական բաղադրիչների ամբողջություն, որն իրականացվում է ուսումնառության որոշակի վերջնարդյունքներով պայմանավորված հաջորդականությամբ և դասավանդման մեթոդներով» [5, հ.3]: Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Կրթական ծրագիրը սահմանում է որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը» [8, հ. 10]: ԵՊՀ-ում պարբերաբար և շարունակաբար իրականացվող կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումները համահունչ են աշխատաշուկայի արդի պահանջներին և որակավորումների ազգային, մի շարք մասնագիտությունների գծով նաև ոլորտային շրջանակներին:

Կրթական ծրագրերի որակի ապահովման արդյունավետության համար, ինչ խոսք, բարելավման գործընթացները կարևոր նշանակություն ունեն: Այդուհանդերձ, առանց լուրջ դիտարկումների և գնահատումների, խնդիրների և ռիսկերի բացահայտման, բացերի և բացթողումների վերհանման, դրանք շտկելու, լրացնելու հնարավորությունների ուրվագծման և այլ գործողությունների ձեռնարկման անհնար է ակնկալել, առավել ևս ապահովել կրթական ծրագրերի

բարելավման ուղղությամբ ցանկալի արդյունք: Այս կարևոր խնդրի իրականացման արդյունավետ մեխանիզմներից է մշտադիտարկումը:

Ըստ Տ. Բորովկովայի և Ի. Մորնի՝ մշտադիտարկումն ամենաընդհանուր ձևով կարելի է սահմանել որպես «որևէ գործընթացի նկատմամբ մշտական հսկողություն՝ նպատակ ունենալով վերհանելու նրա համապատասխանությունը ցանկալի արդյունքին կամ ելակետայի դիրքին» [12, էջ 73]: Մշտադիտարկման էության վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում տալու համար մեր կողմից վերը հիշատակված և այլ հեղինակներ հանգամանորեն ուսումնասիրել են, թե ինչպես է այն դրսևորվում տարբեր ոլորտների առնչությամբ կիրառվելիս: Ըստ արձանագրված արդյունքների՝ նկատվում է, որ մշտադիտարկման կիրառման տեսության և պրակտիկայի ամենամեծ զարգացումը վերագրվում է բնապահպանության (էկոլոգիա) և սոցիոլոգիայի ոլորտներին:

Մասնագետների պատրաստման որակի ապահովման ներքին համակարգը ենթադրում է մշտադիտարկման անցկացում, որը ժամանակակից հեղինակների կողմից դիտարկվում է որպես կրթական գործընթացի իրականացման կարևորագույն գործոնների վերաբերյալ տվյալների հավաքագրման համակարգված ընթացակարգ և հետազոտության արդյունքների տվյալների շտեմարան ստեղծելու գործիքամիջոց [15, էջ 135]:

Մշտադիտարկումը դիտարկելով որպես կրթության որակի ուսումնասիրության գիտական մեթոդ՝ Ն. Կոլոսովան կարծում է, որ այն կրթության առավել նշանակալի որակական բնութագրերի վերաբերյալ տվյալների հավաքագրման, դրանց մշակման, վերլուծության և մեկնաբանության նպատակաուղղված, համակարգված, հատուկ կազմակերպված համակարգ է, որի նպատակն է ստանալ որակյալ ու տվյալ ժամանակային տեղեկատվություն կրթական գործընթացների և արդյունքների՝ կարգավորող (նորմատիվային) պահանջներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կարիքներին համապատասխանության վերաբերյալ, և անհրաժեշտ է կրթական հաստատության հետագա զարգացման կանխատեսման համար [14, էջ 135]:

Անդրադառնալով վերջին տարիներին մեծ ուշադրություն պահանջող բարձրագույն կրթության որակի բարձրացման խնդրին՝ որոշ մասնագետներ նշում են բարձրագույն կրթության որակի ամբողջական մոդելի մշակման անհրաժեշտությունը: Մյուսները դիտարկում են տարբեր ասպեկտներ, որոնք ազդում են կրթության որակի վրա: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կրթության որակի գնահատման տեխնոլոգիաներին և մշտադիտարկմանը՝ որպես կրթության որակի գնահատման գործիքամիջոցի [15, էջ 135]:

Մշտադիտարկումը՝ որպես կրթական ծառայությունների որակի նպատակային երկարաժամկետ վերահսկում ու գնահատում, արժեքավոր է հատկապես այն առումով, որ թույլ է տալիս ախտորոշել տվյալ գործընթացի վիճակը, ժամանակին ճշգրտումներ կատարել առարկաների դասավանդման նպատակների, բովանդակության և տեխնոլոգիաների շրջանակում, ինչպես նաև նա-

խագծել ուսումնական գործընթացում ուսանողների անձնական զարգացման ընթացքն ու արդյունքները [16, էջ 131]:

Ընդգծելով այն միտքը, որ բարձրագույն կրթության ոլորտում առավելագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է ապահովել որակյալ կրթության ձեռքբերում յուրաքանչյուր աստիճանում՝ Ն. Վորոնովան և Տ. Կանաշնիչի կարծիքով պայմաններից մեկը համակարգված մշտադիտարկման անցկացումն է, որով հնարավոր է ազդել ձեռք բերվող կրթության որակի վրա, ժամանակին կարգավորել նպատակներն ու ուսուցման արդյունքները, ապահովել կրթական աստիճանների փոխկապակցվածություն [13, էջ 29]:

Սկզբում մշտադիտարկում իրականացվել է հողագիտության, շրջակա միջավայրի պահպանության և հարակից այլ գիտությունների, իսկ ավելի ուշ՝ տեխնիկական և հասարակական գիտությունների ոլորտներում [11, էջ 238]:

Ինչպես նշում է Ն. Աբակյանովան, կրթության ոլորտում մշտադիտարկումն ի սկզբանե օգտագործվել է որպես սոցիոլոգիական մեթոդներից մեկը: Առաջին հրապարակումները, որ հայտնվեցին 1980-ական թթ. վերջին, մշտադիտարկման կիրառումը կապում էին ուղղակի տեղեկատվության անմիջականորեն կուտակման և կառուցվածքավորման հետ: Նորարարությունների ծավալումը խթանում է մշտադիտարկման տարբեր մոդելների զարգացումը [10, էջ 6]:

Կրթության որակի մշտադիտարկումը կրթության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման և ուսումնական գործընթացների բարելավման կարևորագույն պայմանն է: ԵՊՀ գործունեության կրթական ոլորտում մշտադիտարկում այս կամ այն կերպ միշտ իրականացվել է, մասնավորապես ուսանողական անանուն հարցումների, ուսումնական ստորաբաժանումների և համահամալսարանական տարեկան հաշվետվությունների, ռազմավարական ծրագրերով նախատեսված գործողությունների կատարողականների և այլնի միջոցով:

ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի (ՈԱԿ) կողմից, այդուհանդերձ, դեռևս 2011 թ. մշակվել և բուհի գիտական խորհրդի կողմից հաստատվել է գործընթացը կարգավորող համապատասխան փաստաթուղթ՝ ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման կարգ, որը մի քանի անգամ հրապարակվել է նոր խմբագրությամբ (վերջինը հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2023 թ. մարտի 23-ի թիվ 9 նիստում): Կարգի սահմանմամբ՝ «Կրթական ծրագրերի մշտադիտարկումը որակի ապահովման ներբուհական գործընթաց է, որի նպատակն է գնահատել ծրագրերի իրականացման որակն ու համապատասխանությունը ծրագրի սահմանված նպատակներին ու կրթական վերջնարդյունքներին» [7, էջ 6]: Որպես մշտադիտարկման արդյունք՝ կարևորվում է ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կազմումը և սահմանված ժամկետում դրա իրականացումը:

Կրթական ծրագրերի մշտադիտարկում ԵՊՀ-ում առաջին անգամ ձեռնարկվել է 2019/2020 ուսումնական տարում: Չնայած ոչ պատեհ ժամանակահատվածին (հանկարծահաս համավարակի՝ Covid-19-ի և արցախյան 44-օրյա

պատերազմի պայմաններում՝ բուհի համապատասխան կրթական ստորաբաժանումներում իրականացվել է գործող ավելի քան 100 մագիստրոսական կրթական ծրագրերի մշտադիտարկում: Իսկ ահա 2023/2024 ուսումնական տարում մշտադիտարկվել է գործող 50-ից ավելի բակալավրի կրթական ծրագիր: Երկու դեպքում էլ գործընթացը կանոնակարգվել է ըստ նշված փաստաթղթի և բուհի ռեկտորի հրամանի հստակ սահմանված ժամանակացույցով: Մշտադիտարկումը և դրան առնչվող բոլոր գործընթացները կազմակերպվել և համակարգվել են ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի կողմից և իրականացվել ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետ, ինստիտուտ, կենտրոն) կողմից: Գործընթացն իրականացվել է մի շարք գործողությունների համաժամանակյա կամ հաջորդաբար կատարմամբ, որոնք համադրելով՝ կարող ենք պայմանականորեն դասակարգել հետևյալ հիմնական փուլերի՝

1. նախապատրաստական/կազմակերպական,
2. անցկացման/իրականացման,
3. արդյունքների ամփոփման/հաշվետվության ներկայացման:

Նպատակի ու խնդիրների գրագետ առաջադրումը, իրականացման մեթոդաբանության, արդյունքների մշակման և ներկայացման միջոցների սահմանումը կրթության որակի մշտադիտարկման արդյունավետության անհրաժեշտ պայմաններ են: Մշտադիտարկման արդյունավետության համար շատ կարևոր է դրան ճիշտ նախապատրաստվելը: Այս փուլը պատասխանատու և միաժամանակ, կարելի է ասել, ծանր աշխատանքի շրջան է. որոշվում են մշտադիտարկման օբյեկտը և առարկան, ընտրվում և պատրաստվում են անցկացման համապատասխան գործիքամիջոցները, հստակեցվում են ժամկետները և այլն: ԵՊՀ-ում իրականացված և՛ մագիստրոսի, և՛ բակալավրի կրթական ծրագրերի մշտադիտարկումները նախապատրաստվել և անցկացվել են բուհի ԳԽ-ի կողմից հաստատված կարգի պահանջներին և սահմանված ընթացակարգերին համապատասխան, Որակի ապահովման կենտրոնի անմիջական ուղղորդմամբ և աջակցությամբ: Ստորև կանոնադառնանք մասնավորապես բակալավրի կրթական ծրագրերի մշտադիտարկմանը:

Համաձայն սահմանված կարգի և բուհի ռեկտորի հրամանի՝ մշտադիտարկումն իրականացրել են ԵՊՀ համապատասխան ուսումնական ստորաբաժանումները, ուստի կազմակերպական փուլում դրանց ղեկավարները յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ձևավորել են 6 հոգուց բաղկացած մշտադիտարկման խումբ, որի ղեկավարը կրթական ծրագրի ղեկավարն է, անդամներից երկուսը՝ դասախոս, երկուսը՝ ուսանող և մեկը՝ գործատու: ՈԱԿ-ը մշտադիտարկմանը նախապատրաստվող բոլոր խմբերի հետ անցկացրել է խորհրդատվական հանդիպումներ, որոնց ընթացքում նրանց ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթային փաթեթները, բացատրել գործընթացին վերաբերող նրբություններ, մասնակիցների հետ քննարկել առանձին դրույթներ, պատասխանել նրանց հարցերին:

Մշտադիտարկման իրականացման արդյունավետության նախապայմաններինց մեկը, թերևս, կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ուսանողների հետ անցկացված ֆոկուսխմբային հարցումներն են: Թիրախային խմբերը ձևավորվել են կրթական ծրագրերի ղեկավարների երաշխավորությամբ. ընտրվել են հիմնականում բարձր առաջադիմություն ունեցող 8-10 ուսանողներ: Ֆոկուսխմբային հարցումների ընթացքում ուսանողներն անանուն պատասխանել են նախապես պատրաստված և ԵՊՀ մեթոդական խորհրդում քննարկված հարցաշարին՝ կազմված մասնագիտության ընտրությանը, կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերին, կարևորագույն կրթական վերջնարդյունքների ձեռքբերման աստիճանին, հետազոտական, ինքնուրույն և ավարտական աշխատանքներին, պրակտիկայի անցկացմանը և արդյունավետությանը, դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացներին, դասախոսական կազմին, ուսումնական միջավայրին և ռեսուրսներին վերաբերող բաժիններում ընդգրկված հարցերին: Կրթական ծրագրերի մշտադիտարկման խմբերը ուսումնասիրել են հարցման արդյունքները և դրանց անդրադարձել համապատասխան զեկույց-հաշվետվությունը պատրաստելիս: Այստեղ արժե համառոտ ներկայացնել մի շարք ծրագրերի սովորողների կողմից վերհանված նույնատիպ խնդիրներին, որոնք մասնավորապես վերաբերում են՝

- ✓ մասնագիտական և ընդհանուր տարբեր դասընթացների բովանդակային կրկնությանը,
- ✓ դասավանդման ոչ արդիական, հնացած մեթոդների (օր.՝ ընթերցվող դասախոսություն) կիրառման և մասնագիտությանն առաջադրվող ժամանակակից պահանջների անհամապատասխանությանը,
- ✓ որոշ դասախոսների (ընդ որում՝ և՛ տարեց, և՛ երիտասարդ)՝ նորագույն տեխնոլոգիաներին չտիրապետելու խնդրին,
- ✓ լսարանների՝ ժամանակակից տեխնիկայով և կահավորմամբ ապահովվածության անհրաժեշտությանը, լաբորատոր պայմանների, սարքավորումների և նյութերի սակավությանը,
- ✓ մասնագիտական պրակտիկայի հետ կապված մի շարք հիմնախնդիրների,
- ✓ օտար լեզուների (հատկապես մասնագիտական) դասավանդման և յուրացման ոչ բավարար մակարդակին, հայերեն մասնագիտական գրականության պակասին և այլ խնդիրների:

Ստացած կրթության արդյունավետությունը մշտադիտարկման միջոցով որոշելու կամ բնորոշելու նպատակով կիրառվել է ևս մեկ գործիք: Ֆոկուսխմբային հարցումների ընթացքում ուսանողներին տրամադրվել են համապատասխան կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման գնահատման համար մշակված թերթիկներ, որոնք բովանդակում են տվյալ ԿԾ-ի համար սահմանված առավել կարևոր կրթական վերջնարդյունքները (հնարավորինս պարզեցված, համառոտ և դյուրընկալելի ձևակերպմամբ): Ուսանողները համապատասխանաբար գնահատել են ինչպես ուսումնառու-

թյան ընթացքում տրված գիտելիքների և կարողությունների անհրաժեշտությունը ապագա մասնագիտական գործունեության համար, այնպես էլ իրենց ուսումնառության արդյունքում գիտելիքներին և կարողություններին տիրապետելու մակարդակը: Անշուշտ, սա ևս մի գործիք է (ինչպես և ֆոկուսխմբային հարցումները), որի միջոցով հնարավոր է եղել հիմնավոր պատկերացում կազմել ինչպես ամբողջական ծրագրի, այնպես էլ առանձին դասընթացների արդյունավետության վերաբերյալ: Հարցումներն իրականացրել և արդյունքները ՈԱԿ են ներկայացրել ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի համապատասխան մասնագետները:

Ցանկացած գործընթացի արդյունավետության համար կարևոր է նաև այն հստակ պլանավորելը և դրան համապատասխան իրականացնելը: ԵՊՀ-ում կազմակերպված մշտադիտարկման դեպքում նշված ուղղություններով աշխատանքներն իրականացվել են սահմանված ստույգ ժամանակացույցով և համապատասխան գործողությունների հերթագայությամբ:

Մշտադիտարկման գործընթացի ավարտին Որակի ապահովման կենտրոնը հավաքագրել է մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվությունների փաթեթները, ստուգել դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին, ներքին գնահատական տվել յուրաքանչյուր ծրագրի մշտադիտարկման արդյունքներին, ընդհանրացրել բարձրացված խնդիրները, գործընթացին վերաբերող բացթողումները, ծագած կազմակերպչական, տեխնիկական և այլ բնույթի հարցերն ու դժվարությունները, դրանք ամփոփել և քննարկել մշտադիտարկման խմբերի հետ առանձին-առանձին:

Մշտադիտարկման արդյունքում հավաքագրված տվյալներն ամփոփվել են բովանդակային վերլուծության մեթոդով: Արդյունքների ամփոփման և գնահատման համար հիմք են եղել մի շարք գործոններ, մասնավորապես՝ կրթական ծրագրի մշտադիտարկման խմբի ներկայացրած պաշտոնական զեկույց-հաշվետվությունը, որում առանձին բաժիններով և սահմանված պահանջներին համապատասխան ներկայացվել են այնպիսի ցուցանիշներ և տվյալներ, ինչպիսիք են՝

- **ծրագրի քանակական բնութագիրը**, որում ներկայացված տվյալները վերաբերում են ընդունելությանը և ուսանողների համակազմին, ուսումնական առաջադիմությանը, ծրագրի շրջանավարտներին,
- **ուսանողական հարցումների արդյունքները**, որոնցում ամփոփվել են մշտադիտարկմանը նախորդող վերջին 4 կիսամյակների ընթացքում կրթական ծրագրի բաղկացուցիչ դասընթացների վերաբերյալ հարցումների արդյունքները, ինչպես նաև այդ ժամանակահատվածում ուսանողների կողմից պարբերաբար բարձրացված խնդիրներն ու անընդմեջ ցածր գնահատված դասընթացները,
- **շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները**, որտեղ ներկայացվել են նախորդ երկու տարիների շրջանավարտների բավարարվածության հարցումների ամփոփ արդյունքները, որոնք վե-

րաբերում են կրթական ծրագրի համապատասխանությանը մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջներին, ծրագրի բովանդակությանը, դասավանդման մեթոդաբանությանը, ծրագրի որակին առնչվող ու պարբերաբար բարձրացված խնդիրները և այլն,

- **Ծրագրի մյուս շահառուների արձագանքը**, որտեղ ներկայացվել են ուսանողների՝ որպես շահառուների հետ անցկացված ֆոկլուսխմբային հարցումների արդյունքները,
- **համագործակցային կապերն ու պրակտիկան**, որտեղ գնահատվել են ծրագիրը սպասարկող ուսումնական այլ ստորաբաժանումների և արտաքին շահակիցների, այդ թվում՝ պրակտիկաների անցկացման վայր հանդիսացող ձեռնարկությունների ու կազմակերպությունների հետ համագործակցության ձևերն ու արդյունքները, մասնագիտական պրակտիկայի արդյունավետությունը,
- **կրթական ծրագրի ուժեղ ու թույլ կողմերը, տարածման արժանի լավագույն փորձը**, որտեղ ներկայացված են ուսանողների և շրջանավարտների հետ անցկացված և ֆոկլուսխմբային հարցումների արդյունքների վերլուծությունների հիման վրա արված եզրակացությունները, ծրագրի ուժեղ ու թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների ու վտանգների (SWOT) աղյուսակը,
- **ծրագրի որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանը**, որտեղ ներկայացվել է նախորդ բոլոր կետերում նշված գործողությունների արդյունքների հիման վրա կազմված միջոցառումների պլանը՝ նախատեսված իրականացնելու հաջորդ երկու ուստարիների ընթացքում: Այն վերաբերում է բարելավման համար նախատեսված ոլորտին, պլանավորված գործողություններին, կատարման պատասխանատուներին և ժամկետին:

Մշտադիտարկված կրթական ծրագրի հետագա գործարկման և արդյունավետության համար էական նշանակություն ունի ծրագրի որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանի կազմումը՝ ելնելով մշտադիտարկման արդյունքներից: Այդ պլանները ևս համատեղ դիտարկվել-քննարկվել և վերանայվել են: Մշտադիտարկման խմբերը դրանց վերաբերյալ որոշակի կատարողական են ներկայացրել, ինչը և գնահատվել է ՈԱԿ-ի կողմից՝ հիմք ընդունելով սահմանված ժամանակահատվածում իրականացված գործողության կատարումը (չկատարելու դեպքում՝ պատճառը, հիմնավորումը) և արդյունքը:

Մշտադիտարկման արդյունքները ամփոփելով՝ համադրվել են մի շարք ընդհանուր խնդիրներ և մտահոգություններ, որոնք արձանագրվել են գրեթե բոլոր ծրագրերի ֆոկլուսխմբային հարցումների ընթացքում կամ մշտադիտարկման խմբերի կազմած հաշվետվություններում: Դրանք հիմնականում վերաբերում են դասընթացների բովանդակությանը, դասավանդման հնացած մեթոդաբանությանը, գործնական դասաժամերի սակավությանը, մասնագիտական և առհասարակ օտար լեզուների դասավանդման անարդյունավետությանը:

նը, պրակտիկայի կազմակերպման և անցկացման գործընթացներում տեղ գտած թերություններին, պրակտիկայի մի շարք վայրերում ուսանողների հանդեպ անբարյաղակամ վերաբերմունքին, կրթական ծրագրերի կարևորագույն վերջնարդյունքներին ուսանողների մի մասի չտիրապետելուն, մի շարք դեպքերում հետազոտական բաղադրիչի ոչ արդյունավետ կիրառմանը, լաբորատոր սարքավորումների և անհրաժեշտ նյութերի պակասին, լսարանների՝ ժամանակակից տեխնիկայով պակաս հագեցվածությանը և այլ խնդիրների: Անշուշտ, ամփոփիչ զեկույցներում դրանք դիտարկվել են, որոշ դեպքերում հիմնավորվել են պատճառները, մի շարք դեպքերում պարզապես արձանագրվել են, քիչ դեպքերում էլ անտեսվել են: Այդուհանդերձ, իրականացված մշտադիտարկումը ծառայել է նպատակին. հավաքագրվել և ի ցույց են դրվել կրթական ծրագրերին վերաբերող քանակական և որակական տվյալներ, դասավանդման և ուսումնառության հետ կապված մի շարք խնդիրներ, համապատասխան գործընթացների կազմակերպման աշխատանքներում բացթողումներ, ծրագրերի ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները և այլն: Այդ ամենի հաշվառմամբ կազմվել է «տվյալ կրթական ծրագրի որակի բարելավման/բարձրացման ուղղությամբ ուսումնական ստորաբաժանման (ամբիոնի, ֆակուլտետի, կենտրոնի, ինստիտուտի) ու համալսարանի կենտրոնական վարչակազմի մակարդակով իրականացվելիք միջոցառումների (գործողությունների) պլանը հաջորդ երկու ուստարիների համար» [7, էջ 22]: Դիտարկելով բոլոր կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունները և համապատասխան բարելավման պլանները՝ ՈԱԿ-ը կազմել է ընդհանրական մի զեկույց, ըստ որի էլ վերահսկողություն է սահմանվում բարելավման պլաններով նախատեսված գործողությունների կատարման նկատմամբ:

Միանգամայն իրավացի են Տ. Բորովկովան և Ի. Մորենը՝ շեշտադրելով, որ մշտադիտարկումը դարձել է կառավարման գործունեության ինքնուրույն ուղղություն, որտեղ տեղի է ունենում չափումների, ուսումնասիրությունների, փորձարկման, ինֆորմատիկայի և կառավարման ինտեգրում: Մշտադիտարկման համակարգը ձեռք է բերել համալիր, ամբողջական բնույթ: Այն ապահովում է մարքեթինգային գործունեության համապարփակ (ունիվերսալ) հնարավորություններ կրթության ոլորտում [11, էջ 73]:

Եզրակացություն: Հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացումն ապահովող հիմնական ուժը մարդկային ռեսուրսներն են՝ համապարփակ գիտելիքներով և անհրաժեշտ կարողություններով ու հմտություններով օժտված մասնագետները, մասնավորապես բարձրագույն կրթությամբ և համապատասխան որակավորմամբ կադրերը: Նրանց մասնագիտական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները ձևավորվում և ամրակայվում են ուսումնառության ընթացքում: Այդ գործընթացների հաջողության գրավականը ամենից առաջ տվյալ կրթական ծրագրի լավագույնս մշակվածությունը, արդիական ու մրցունակ լինելն է, որոնցով և ապահովվում է մասնագիտական որակյալ կրթությունը: Սույն հոդվածի շրջանակում դիտարկելով ԵՊՀ-ում իրա-

կանացված կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացը (նպատակից մինչև արդյունքներ) և ուսումնասիրելով կրթության արդյունավետության ու որակի բարձրացման խնդիրներին նվիրված մի շարք հեղինակների գիտական աշխատանքներ՝ արել ենք հետևյալ եզրահանգումը. *կրթական ծրագրերը ժամանակի պահանջներին և աշխատաշուկայի պահանջմունքներին համապատասխանեցնելու լավագույն միջոցներից մեկը դրանց մշտադիտարկումն է, որի արդյունքներից էլնելով՝ կարևոր է իրականացնել նաև ծրագրերի պարբերական վերանայում:*

**MONITORING AS A GUARANTEE OF QUALITY ENHANCEMENT
IN HIGHER PROFESSIONAL EDUCATION
(Using the example of Yerevan State University)**

Brutyan Anahit

*PhD of Philology, Associate Professor,
Yerevan State University,
Republic of Armenia,
anahitbrutyan@ysu.am*

Summary

In the continuously evolving and complex system of higher education, effective management and the assurance of high-quality education require constant analysis of ongoing processes within the system, as well as solutions to existing (“permanent”) or newly emerging diverse issues. In this regard, special importance is given to monitoring, which, on the one hand, is viewed as a tool for studying and evaluating the current situation and realities, and on the other hand, as a vital means of obtaining the necessary information to ensure the advancement of the educational institution. Quality monitoring in education is one of the key prerequisites for enhancing the effectiveness of education system management and improving learning processes.

This article attempts to emphasize the role of monitoring in the field of education, particularly in higher education. Using the example of Yerevan State University (YSU), it comprehensively examines and presents the processes of implementing monitoring of study programs (SPs), identifying necessary actions for improving these programs based on the results, and planning and executing measures that ensure the effectiveness of these actions.

Keywords: YSU, monitoring, focus group, quality assurance, Bologna Process, credit system, study program, quality of education.

**МОНИТОРИНГ КАК ГАРАНТИЯ ПОВЫШЕНИЯ КАЧЕСТВА ВЫСШЕГО
ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ
(на примере Ереванского государственного университета)**

Брутян Анаит

*Кандидат филологических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения,
anahitbrutyan@ysu.am*

Аннотация

Эффективное управление и обеспечение качества образования в постоянно развивающейся и сложной системе высшего образования требуют постоянного анализа процессов, протекающих в системе, и решения актуальных или различных новых задач. В связи с этим, особое внимание уделяется мониторингу, который, с одной стороны, рассматривается как инструмент для изучения и оценивания текущей ситуации и фактов, с другой стороны, – как

средство, для получения необходимой информации для обеспечения развития учебной организации. Мониторинг качества образования является самым важным инструментом для повышения эффективности управления образовательной системой и улучшения учебных процессов.

В статье сделана попытка оценить роль мониторинга системы образования, в частности, в высшем образовании, рассмотрены и представлены процессы осуществления мониторинга учебных программ (УП) и в итоге определения действий, нацеленных на улучшение учебных программ, на планирование и осуществление мероприятий, обеспечивающих их эффективность, взяв за образец Ереванский государственный университет.

Ключевые слова: ЕГУ, мониторинг, фокус-группа, обеспечение качества, Болонский процесс, кредитная система, учебная программа, качество образования.

Օգտագործված գրականության ցանկ

1. **Harutyunyan Nazik**, Hayastani yev Belarusi bardzraguyn krtuthyan karavarman hamematakan verlutcuthyun, «Krtuthyuny 21-rd darum», Gitametodakan mijazgayin grakhosvogh handes, N 2 (2), YPH, Yer., 2019, ej 80-89.:
2. **Harutyunyan Nazik, Grigoryan Aleksandr**, Krtuthyan zargacman yev vorakavorman khndirneri, «Mankavarjakan mitq», Ye., «Zangak» hrat., 2013, 1-2, 280 ej:
3. **Sargsyan Yu. L., Budaghyan A. S.**, Boloniayi gortcyntacy Hayastanum: Ughecuyc, Yer., Antares, 2008, 74 ej:
4. Bardzraguyn krtuthyun, Bardzraguyn krtuthyan pastathghteri zhoghovatsu, Prak I, HH krtuthyan yev gituthyan nakhararuthyun, Krtuthyan azgayin institut, Yer., 2005, 224 ej:
5. «Bardzraguyn krtuthyan yev gituthyan masin» HH orenqy (Nakhagitsc), <https://www.e-draft.am/projects/7684/about>:
6. YePH zargacman razmavarakan tcragir (2010-2014 tt.), Yer., 2009, 44 ej:
7. ««Yerevani petakan hamalsaran» himnadrami krthakan tcragreri mshtaditarkman (monitoringi) yev veranayman karg, Ye., 2023 (Hastatvatc e «Yerevani petakan hamalsaran» himnadrami gitakan khorhrdi 2023 th. marti 23-i tiv 9 nistum), <http://documentation.ysu.am/wp-content/uploads/2023/03/Monitoring.pdf>:
8. «Krtuthyan masin» HH orenqy (Yndunvatc e Azgayin zhoghovi koghmits 14 aprili 1999 th.), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=91377>
9. «Hayastani Hanrapetutyan krtuthyan minchev 2030 thvakani zargacman petakan tcragiry hastatelulu masin» HH orenqy (Yndunvatc e 2022 thvakani noyemberi 16-in), <https://escs.am/files/files/2023-02-13/24f4e5a9401631c711a946eb640ae734.pdf>:
10. **Abakumova N. N.**, Sistema monitoringa v obrazovanii: uchebnoe posobie. - Tomsk: Izdatel'skiy Dom Tomskogo gosudarstvennogo universiteta, 2018. – 140 s.
11. **Bartosh D. K., Gerashchenko T. B.**, Rol' monitoringa v sisteme vysshego professional'nogo pedagogicheskogo obrazovaniya; “Vestnik universiteta”, 2012, 9-1; s. 238–246. Moskva; Izd-vo: Izdatel'skiy dom GUU (Gosudarstvennyy universitet upravleniya). <https://cyberleninka.ru/article/n/rol-monitoringa-v-sisteme-vysshego-professionalnogo-pedagogicheskogo-obrazovaniya/viewer>
12. **Borovkova T. I., Morev I. A.**, Monitoring razvitiya sistemy obrazovaniya. Chast' 1. Teoreticheskie aspekty: Uchebnoe posobie. – Vladivostok: Izd-vo Dal'nevostochnogo universiteta, 2004. – 150 s.

13. **Voronova N. P., Kanashevich T. N.**, Monitoring kak odno iz usloviy povysheniya kachestva obrazovaniya v vuze; Izd. Adukatsyya i vykhavanne, 2013.
https://scholar.google.com/citations?view_op=view_citation&hl=ru&user=Vtk7ogAAAAJ&citation_for_view=VtkC7ogAAAAJ:aqlVkmm33-oC t2 39:
14. **Kolosova N. N.**, Monitoring kak nauchnyy metod izucheniya kachestva obrazovaniya. Uchebnyye zapiski Krymskogo federal'nogo universiteta imeni V. I. Vernadskogo. Sotsiologiya. Pedagogika. Psikhologiya. Tom 2 (68). 2016. № 3. S. 32–36.
15. **Loyko A. G., Nesterenkov S. N.**, Monitoring kachestva vysshego professional'nogo obrazovaniya: problemy i perspektivy // Kachestvo obrazovatel'nogo protsessa: problemy i puti razvitiya = *Quality of the educational process: challenges and ways of development* : materialy Mezhdunarodnoy nauchno-prakticheskoy konferentsii, Minsk, 30 aprelya 2021 g. / Belorusskiy gosudarstvennyy universitet informatiki i radioelektroniki ; redkol.: Yu. E. Kuleshov [i dr.]. – Minsk : BGUIR, 2021. – S. 135.
16. **Turtkaraeva G. B.**, Monitoring kak metod otsenki i izmereniya kachestva obrazovatel'noy deyatel'nosti; Vestnik PGGPU, Seriya N 1. Psikhologicheskiye i pedagogicheskiye nauki. 2014:
<https://cyberleninka.ru/article/n/monitoring-kak-metod-otsenki-i-izmereniya-kachestva-obrazovatelnoy-deyatelnosti/viewer>:

Получено: 09.04.2025

Received: 09.04.2025

Рассмотрено: 11.04.2025

Reviewed: 11.04.2025

Принято: 18.04.2025

Accepted: 18.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ

Գրիգորյան Վահագն

*մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
v.grigoryan@ysu.am
<https://orcid.org/0009-0005-2011-2100>*

Ամփոփում

Համառոտ ներածական: Վերջին տասնամյակներում, պայմանավորված հասարակության ներսում փոփոխվող սոցիալական և տնտեսական խնդիրներով, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կենցաղ մուտք գործելով, փոխվում են նաև հասարակության յուրաքանչյուր անդամի հոգեբանությունը, վարքը: Օնունդ են առնում նոր խնդիրներ երեխաների ու ծնողների, երեխաների ու դպրոցի, դպրոցի ու ծնողների միջև: Այդ առումով մեծանում է դպրոցի և հասարակության համագործակցության դերը: Ժամանակակից դպրոցի առջև ծառացած է համագործակցության և փոխգործակցության նոր ձևեր ու մեթոդներ, որոնք դժվար են ընկալվում թե՛ մանկավարժների, և թե՛ ծնողների կողմից: Արդյունքում փաստվում է, որ գործ ենք ունենում ընտանիքի և մանկավարժական կոլեկտիվի, ծնողների ու երեխաների համագործակցության կազմակերպման նոր պայմանների հետ:

Մանկավարժության պատմության վերջին շրջանում մի շարք ճանաչված մանկավարժներ (Ա. Ն. Բոյկո, Լ. Ի. Նովիկովա, Գ. Ի. Շչուկինա), հոգեբաններ (Ա. Վ. Պետրովսկի, Կ. Ա. Աբուլխանովա-Սլավսկայա, Ե. Վ. Շորոխովա), սոցիոլոգներ (Տ. Ա. Գոտկո, Ռ. Մերտոն, Ն. Ամելդեր) անդրադարձել են այս խնդրին, առաջ են քաշել մոտեցումներ, առաջարկել ծրագրեր ու մոդելներ, որոնք առանձնակի նշանակություն են ունեցել մանկավարժական կոլեկտիվի և ընտանիքի համագործակցության կազմակերպման համար: Հոդվածում հաճախ դիմել ենք նրանց մոտեցումներին ու գաղափարներին: Ուշադրություն է դարձվել ծնողների և երեխաների փոխազդեցության կառավարման մի շարք մոդելների վրա: Մեկնաբանվել են ուսուցիչների, ծնողների ու երեխաների վարքագծերը, ժամանակակից ընտանիքին ցուցաբերվող աջակցության առանձնահատկությունները, մանկավարժական աջակցության բովանդակությունը:

Աշխատանքում տեղ են գտել մանկավարժական կոլեկտիվի ու ծնողների հաղորդակցման ձևերը, դրանց արդյունավետությունն ու դերը:

Հոդվածում առանձնացրել ենք ծնողների ու երեխաների փոխգործակցության հինգ որոշիչ, որոնք հենքային նշանակություն ունեն ժամանակակից ընտանիքի բարոյահոգեբանական, սոցիալ-մշակութային մթնոլորտի ձևավորման ու կայացման գործում:

Առանձնացվել են դպրոցի ու ծնողների համագործակցության և դրա միջոցով ծնողների ու իրենց երեխաների փոխգործակցության կազմակերպման մոտեցումները, որի արդյունքում փոփոխվում են համագործակցության բնույթը, սկզբունքները, որոշակի բաղադրիչները, և վերջնարդյունքում փոփոխվում են փոխգործակցության նպատակները, բովանդակությունը, ձևերն ու տեխնոլոգիաները:

Բանալի բառեր՝ համագործակցություն, փոխգործակցություն, համագործակցության պայման, կառավարման մոդել, փոխվստահության մթնոլորտ, մանկավարժական կուլտուրա, բիհեհորիստական հոգեբանություն, էզովիճակ, էթնոմանկավարժական մոտեցում:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերն են.

- գիտամանկավարժական հետազոտությունների կազմակերպման և իրականացման տեսությունները (Ա. Մ. Նովիկով, Գ. Խ. Վալին),
- ընտանիքի գործառնությունների վերաբերյալ սոցիալ-հոգեբանական տեսությունները (Ե. Բ. Գրուզևա, Վ. Յա. Տիտարենկո),
- դպրոցի կառավարման տեսությունը (Տ. Ի. Շամովա, Բ. Ֆ. Լոմով),
- սոցիալական դաստիարակության տեսությունը (Ա. Վ. Մուդրիկ, Վ. Գ. Բոչարովա, Ս. Ի. Գոլոդ),
- համակարգային մոտեցման տեսությունը (Ի. Վ. Բեստուժևա-Լադա, Վ. Ա. Կարակովսկի, Ա. Վ. Ավերյանով):

Հիմնախնդրի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Տվյալ հետազոտության նպատակն է ներկայացնել մեր հասարակության մեջ ընտանիքի և մանկավարժական կուլեկտիվի համագործակցության կազմակերպման պայմանները և փոխազդեցության կառավարման մոդելները, վերլուծել ծնող-մանկավարժ աշխատանքի բովանդակությունը, փոխգործակցության ձևերը:

Գիտական նորությունը: Տեսական նյութի վերլուծության և գիտամանկավարժական փորձի ընդհանրացման արդյունքում բացահայտվել են ուսուցիչների և ընտանիքի (ծնողների և երեխաների) համագործակցության կազմակերպման ձևերը, փոխգործակցության դրսևորումները, ցուցիչները, ներկայացվել են մանկավարժական պայմանները փոխազդեցության կառավարման մոդելների կիրառման ժամանակակից մոտեցումները:

Հիմնախնդիրներին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Մեր կողմից տեսական արդիական նյութի ուսումնասիրությամբ (Ն. Ի. Դերեկևա, Մ. Ի. Կովալենկո, Վ. Մ. Լիզինսկի, Լ. Ի. Պետրովա, Ս. Ա. Սմիրնովա) և կրթահաստատություններում (Թիվ 155, 189, 199, 200 դպրոցներ) իրականացված հետազոտությունների ու սոցիոլոգիական հարցումների վերլուծությամբ բացահայտվել են մանկավարժական կուլեկտիվի, ծնողների ու երեխաների համագործակցության մի շարք խնդիրներ, օրինաչափություններ: Հրատարակվել են գիտական հոդվածներ:

Հետազոտության տեսական նշանակությունը: Բացահայտվել և վերլուծվել են մանկավարժների, ծնողների ու երեխաների միջև տեղի ունեցող համագործակցության կազմակերպման պայմանները, ներկայացվել են փոխազդեցության կառավարման մոդելները: Հետազոտության գործնական նշանակությունը: Աշխատանքը կարող է օգտակար լինել մանկավարժների, հատկապես հանրակրթական, այդ թվում օժանդակ կրթահաստատությունների ուսումնադաս-

տիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենների, դասղեկ-դասավարների համար:

Հիմնական նյութի շարադրանքը: XXI դարը վերափոխված արժեքների, տեղեկատվական տեխնոլոգիաների, մարդկային մտքի թռիչքի, հանդուրժողականության, փոխգործակցության դար է: Այդ համատեքստում առաջին պլան են մղվել հասարակության անդամների ինտելեկտի, ինքնուրույնության, ստեղծագործական կարողությունների, արժեքային կոդմոտորշումների զարգացման, սոցիալական և մշակութային կապիտալի ձևավորման խնդիրները, որոնցում էական դեր է հատկացվում դպրոցին ու հասարակությանը:

Վերջին շրջանում մանկավարժական գրականության մեջ դպրոցի և ընտանիքի գործընկերության, երկխոսության համագործակցության գաղափարները դարձել են անհրաժեշտ: Մակայն դրանց կիրառումը դպրոցի մանկավարժական պրակտիկայում ընթանում է դժվարությամբ: Մանկավարժները, որպես կանոն, դժվար են վերակառուցում իրենց գործունեությունը, քանի որ չեն տիրապետում սովորողների և նրանց ծնողների հետ երկխոսության և փոխգործակցության մեխանիզմներին: Իրականում չեն պատկերացնում, որ համատեղ գործունեության բովանդակության խորացումը, կրթության որակն ու արդյունավետությունը կարելի է ապահովել միայն համայնքի հետ սերտ համագործակցության, համատեղ ծրագրերի և միջոցառումների իրականացման, սովորողների ծնողների հետ ստեղծագործական հաղորդակցման և նրանց մանկավարժական կուլտուրայի բարձրացման պայմաններում: Այդ փոխգործակցության արդյունավետությունը պահանջում է ուսուցչի որոշակի չափանիշներ՝ հոգևոր-բարոյական կերպար, մասնագիտական հմտություն, դպրոցի և մանկավարժական առաջավոր փորձի վերաբերյալ գիտելիքներ, մանկավարժական կուլտուրա, գործընկերների, սովորողների և նրանց ծնողների հետ համագործակցելու կարողություն:

Երեխայի սոցիալական պաշտպանության նպատակով ընտանիքը միշտ հանդես է գալիս որպես միջնորդ երեխայի և հասարակության միջև: Դպրոցի գործառնություններն այլ են: Նրա խնդիրն է ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխաների ուսուցման, ընդունակությունների զարգացման, աշխարհայացքի ձևավորման և դաստիարակության համար՝ նպաստելով նրա սոցիալականացմանը, գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերմանը և արժեքահամակարգի ձևավորմանը: Այսինքն՝ սովորողների նպատակաուղղված դաստիարակության և սոցիալականացման խնդիրը չափազանց սուր է դրված ինչպես դպրոցի, այնպես էլ ընտանիքի առջև, և դա փաստում է այն տեսակետը, որ դպրոցի դաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը առանց սովորողի ընտանիքի հետ համագործակցության անհնար է:

Հանրակրթական դպրոցը սոցիալական այն ինստիտուտն է, որով գործնականում անցնում են բոլոր երեխաները, և որում իրականացվում են ընտանիքի հետ համագործակցության մի շարք ձևեր:

Մեր բազմամյա վարչական աշխատանքի փորձը և ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոց-ընտանիք համագործակցության արդյունավետությունը պայմանավորված է փոխգործակցության տեխնոլոգիաներով, դպրոցի կառավարման սուբյեկտների կողմից մանկավարժական կոլեկտիվի վրա կառավարչական ներգործության որակով և փոխգործակցության արդյունավետության վերահսկմամբ:

Այս գործընթացում փոխգործակցության որակական դրսևորումներն ու բնութագրերը մենք դիտարկել և ուսումնասիրել ենք երեխաների ու ծնողների անմիջականորեն առարկայական, որոշակի գործունեության մեջ: Ընդ որում, հաշվի են առնվել այն հանգամանքները, որ նրանց համատեղ գործունեության ենթատեքստից դուրս սուբյեկտների փոխգործակցության քննարկումը ենթադրում է պայմանավորվածություն, բովանդակալից հիմքի բացակայություն [4, էջ 175]:

Դպրոց-ընտանիք համագործակցության, ծնող-երեխա փոխգործակցության արդյունքների որակի ցուցիչներ կարելի է ընդունել սովորողների կրթվածության որակը, ուսուցիչների և դպրոցի ղեկավարության մասնագիտական կոմպետենտությունը, ծնողների հոգեբանամանկավարժական գիտելիքների մակարդակը:

Դասղեկների ժողով-գրույցների, ժողով-պրակտիկումների, սեմինարների ընթացքում հաջողվել է տեղեկանալ ուսուցիչների կարծիքը ծնողների հետ համագործակցության նշանակության մասին: Նրանց հետ անցկացվել են համալիր մեթոդական միջոցառումներ, որոնց արդյունքները շարադրված են ստորև: Այդ արդյունքները քննարկվել են որպես ուսուցիչների իրական հնարավորությունների արտացոլում՝ դասարանական կյանքում ծնողների ու նրանց երեխաների հետ անմիջականորեն համագործակցության մեջ:

Իմանալով ընտանիքի դաստիարակչական ներուժը՝ յուրաքանչյուր դասարանի դասղեկ պետք է օժանդակի ծնողներին՝ հաղթահարելու իրենց երեխաների դեռահասության տարիքի դժվարությունները: Ուսուցիչները և ծնողները քաջատեղյակ պիտի լինեն, որ մանկավարժական փոխգործակցության արդյունքում ծնողների և երեխաների միջև առաջ են գալիս նոր երևույթներ:

Օրինակ՝ դպրոցամուտը, որը բնութագրվում է իբրև ճգնաժամային, հոգեբանական ու կազմաբնախոսական զարգացման նշանակալի շրջան երեխայի կյանքում, նաև մեծագույն իրադարձություն է, ոչ միայն երեխաների, այլև ծնողների համար [8, էջ 54]:

Նոր երևույթներ են նաև դպրոցական ռեժիմին, ընկերների խմբին, ուսուցիչների պահանջներին հարմարվելը:

Ընդհանրապես առաջին դասարանցիները դպրոցին հարմարվելու գործընթացում կրում են ֆիզիոլոգիական և հոգեբանական դժվարություններ: Այդ պատճառով ուսուցիչները ոչ միայն իրենք պետք է իմանան դպրոցականների մտածական գործունեության առանձնահատկությունները, ճանաչեն երեխայի

հուզաշխարհը և նրա նշանակությունը երեխայի զարգացման մեջ, այլև ծնողներին հաղորդեն գիտելիքներ այդ գործընթացների մասին:

Այս առումով մեծ աշխատանք պետք է կատարի դասուցիկը, որի աշխատանքի հիմնական ուղղություններից մեկը դիագնոստիկան է: Ն. Ի. Դերեկլեևան նշում է. «Առանց հոգեբանամանկավարժական դիագնոստիկայի հնարավոր չէ կառուցողական ձևով պլանավորել դաստիարակչական աշխատանքը դասարանական կոլեկտիվում և կարգավորել ծնողների հետ տարվող աշխատանքը» [1, էջ 52]:

Մեր ուսումնասիրության ընթացքում առանձնացվել են մի շարք մանկավարժական պայմաններ, որոնք նպաստում են ուսուցիչների և ծնողների համագործակցության, երեխաների և ծնողների փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը: Այդ պայմաններից ենք համարում.

- ուսուցչի մարդասիրական կողմնորոշումը,
- ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա համակարգում փոխվստահության մթնոլորտի ապահովումը, համատեղ գործունեության մեջ փոխըմբռնումը,
- համաստեղծագործական-կրթական միջավայրի ստեղծումը,
- ուսուցիչների կոմպետենտությունը,
- մանկավարժական համագործակցության կառուցվածքի մոդելավորումը, մտավոր մանկավարժական խնդիրների առաջադրումը,
- փոխօգնության և փոխադարձ բարյացակամության մթնոլորտի ստեղծումը,
- համամարդկային արժեքների նկատմամբ դրական ներգործությունների կիրառումը,
- քաղաքացիական, մարդասիրական դաստիարակության գաղափարների քարոզումը,
- կողմերի դաստիարակչական ներուժի օբյեկտիվ գնահատումը,
- ժողովրդավարական սկզբունքների զարգացումը փոխհարաբերություններում, առաջացող հիմնախնդիրների արդյունավետ, կառուցողական քննարկումը,
- ընդհանուր համաձայնության ձգտումը դաստիարակչական գործընթացի բոլոր փուլերում,
- կողմերի ներգրավվածությունը ստեղծագործական, դաստիարակչական գործընթացներում,
- մանկավարժական փոխներգործության մեթոդների տիրապետում դասղեկների կողմից,
- ծնողը՝ որպես կայացած ու դաստիարակության չափանիշներ կրող անձ:

Ուսուցիչներն ու դասուցիկը պետք է դեռևս բուհի ուսման տարիներից քաջատեղյակ լինեն սովորողների ծնողների դաստիարակություն հասկացության էությանը, նպատակներին, կարողանան մշակել ծնողների մանկավարժական

լուսավորության, ընտանիքների ուսումնական և մանկավարժական փոխգործակցության ծրագրեր:

Հանրակրթական դպրոցում կրթության բովանդակության բարդացման, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության անընդհատ ավելացման արդի պայմաններում, դպրոցը և երեխաները զգում են ծնողների մանկավարժական գրագիտության անհրաժեշտությունը: Բազմաթիվ ծնողներ, հատկապես մայրերը, ստիպված սովորում և սովորեցնում են իրենց երեխաներին, որի համար անհրաժեշտ են ոչ միայն առարկայական գիտելիքներ, այլ նաև ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների իմացություն:

Հասունացել է արդեն ընտանիքի դերի և ընտանեկան դաստիարակության որակի, երեխաների սոցիալականացման անհրաժեշտ պայմանների ստեղծման և ծնողների պրոբլեմային իրավիճակներում ծագած մանկավարժական խնդիրների լուծման կարողությունների ձևավորման հիմնախնդիրները:

Ընտանիքի կատարած կարևորագույն գործառույթներից է դաստիարակչական գործառույթը: Դրա իրականացմամբ մեծապես պայմանավորված է թե՛ երեխայի ապագան, թե՛ ընտանիքի ճակատագիրը, թե՛ ամուսինների երջանկությունը [5, էջ 242]:

Ուստի անհրաժեշտ է բարձրացնել ընտանիքի կրթադաստիարակչական գործառույթները որոշակի մանկավարժական պայմանների և ընտանիքի հետ համագործակցության նոր ձևերի ու մեթոդների միջոցով: Այդ գործառույթները պետք է ընդգրկված լինեն դպրոցի աշխատանքային պլանում:

Հարկ է նշել, որ ծնողներին մանկավարժական աջակցության բովանդակությունը պետք է լինի հետևյալը՝

- տեսական պարապմունքներ՝ ծանոթացում ուսուցման սկզբունքներին, մեթոդներին, ձևերին,
- գործնական պարապմունքներ՝ մանկավարժական խնդիրների լուծում, հաղորդակցման ձևեր, էքսկուրսիաների պլանավորում և նախապատրաստման աշխատանքներ:

Ծնողներին դիտելով որպես փոխգործակցության սուբյեկտներից մեկը՝ նշենք, որ նրա հիմնական գծերն են հարուստ կենսափորձը, բազմակողմ անձնային ապրումները, կանխակալ վերաբերմունքը երեխայի հանդեպ: Որպես գործընկերներ կարևորվում են անձի անհատական վարքագիծը, դրդապատճառները, իդեալները, հայացքները, արժեքները և այլն, ինչպես նաև մտածողության և վարքի յուրատեսակ հայեցակարգերը [7, էջ 102]:

Մեր կարծիքով ժամանակակից ընտանիքին ցուցաբերվող մանկավարժական աջակցությունն օժտված է հետևյալ առանձնահատկություններով, որոնցից են՝

- ծնողների տիպաբանության հաշվառումը,
- ծնողների մանկավարժական օգնություն ստանալու և մանկավարժական գիտելիքներ ձեռք բերելու պահանջմունքը,

- ընտանիքում ծնողների երեխաների հետ փոխգործակցության մեջ ծագած հակասությունների բնույթը,
- ընտանիքում դաստիարակության ոճերը:

Վերը նշված առանձնահատկությունների հիման վրա դասդեղների մեթոդափափոխումների կողմից պետք է մշակվի մանկավարժական աջակցության ծրագիր՝ ներառելով այն դպրոցի ծնողների հետ տարվող ընդհանուր աշխատանքային պլանում:

Մանկավարժների կարծիքով ծնողների հետ կրթական տարբեր ծրագրերի իրականացումը ենթադրում է տարբեր տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառում՝ խաղային, ճանաչողական: Դրանք են տեսաֆիլմերի, սահիկաշարերի դիտումը, գրականության ընթերցումը և քննարկումը: Մեր կարծիքով այս ծրագրերի իրականացումը ենթադրում է համակարգային և կոմպետենտային մոտեցում: Մեթոդի ընտրությունը պայմանավորված պետք է լինի պարապմունքի թեմայով և ունկնդիրների պատրաստվածության մակարդակով:

Ծնողներին օգնության ցուցաբերման ժամանակակից ձևերը կարելի է պայմանականորեն բաժանել խմբակային խորհրդատվությունների, անհատական խորհուրդների և հոգեթերապիայի: Որպես կանոն, առաջին դեպքում լուծվում են համեմատաբար բարեկեցիկ ընտանիքների հիմնախնդիրները, իսկ անհատական խորհուրդներն օգնում են ավելի բարդ իրավիճակներում, երբ ծնողների կարծիքներն ու ընկալումը խիստ աղավաղված են, անհրաժեշտ է աշխատանք հոգեթերապիայի հետ [6, էջ 124]:

Մեր կողմից առաջարկվող տեխնոլոգիայում՝ ծնողների մանկավարժական պատրաստության ծրագրում, կարևոր տեղ ենք հատկացրել դերային խաղերին: Զվարճանքից գերծ խաղային գործունեության մեջ համագործակցողների հուզականության և երևակայության շնորհիվ անհետանում է տեղ գտած պայմանականությունը: Ստեղծվում է տարբեր իրավիճակներում կենսական վարժությունների, մարզումների կատարման հնարավորություն, որոնցում բացահայտված սխալները զգուշացնում են իրականության մեջ դրանց կրկնության վերաբերյալ: Իհարկե, այն մանկավարժները, որոնք իրենց գործունեությունը կառուցում են խաղաձևի վրա, պետք է օժտված լինեն մանկավարժական դիտարկման հմտություններով, որոշակի մանկավարժական հետևություններ, դիտարկումներ կատարելու և այդ բոլորն իրենց աշխատանքում օգտագործելու կարողություններով:

Ուսուցիչ-սովորող-ծնող փոխգործակցության տրամաբանությունը իրական մանկավարժական գործընթացում ենթադրում է հակադարձ կապի ապահովում և տեղեկատվության փոխանակում: Այս գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժի կոմպետենտության և հաղորդակցման մշակույթի բարձր մակարդակով: Դրա կառավարման արդյունավետությունը պայմանավորված է որոշակի մոտեցումներով:

Ընդհանրապես դպրոցի կառավարման տեսության մեջ գերակա են մանկավարժական գործընթացի կառավարման համակարգային, իրավիճակային

ու գործունային մոտեցումները: Մակայն ելնելով կրթության յուրաքանչյուր օղակի համակարգային բնույթից՝ ներկայումս առավել կարևոր է կոմպետեն-տային մոտեցումը:

Այդ մոտեցումների հիման վրա կառուցված են տարբեր հետազոտողների կողմից մշակված ծնողների և երեխաների փոխազդեցության կառավարման մի շարք մոդելներ, որոնցից են Ա. Ադլերի, Մայերի, Թ. Գորդոնի, Ջ. Ջոնսոնի կող-մից մշակված տարբեր մոդելները: Ծնողների և երեխաների փոխգործակցու-թյան կառավարման համատեքստում դիտարկենք դաստիարակության մի քա-նի մոդելներ:

Աղլերյան մոդել: Այս մոդելի մեթոդաբանական հիմքը անձի սոցիալական էությունն է: Այն, որ մարդը բնությամբ սոցիալական էակ է, և նրա վարքը դրսևորվում է սոցիալական դրդապատճառներով:

Ա. Ադլերի մոդելի խնդիրներն են՝ օգնել ծնողներին հասկանալ իրենց երե-խաներին, խորացնել երեխայի դաստիարակության իր մեթոդները նրա՝ որպես անձի հետագա զարգացման նպատակով:

Ըստ մոդելի սկզբունքների՝ ընտանիքը կազմակերպություն է, որի գործու-նեությունը կառուցվում է նրա յուրաքանչյուր անդամի կողմից իր խնդիրների ու սահմանափակումների գիտակցման վրա: Ընտանիքի անդամները համա-տեղ ուժերով պետք է ստեղծեն փոխադարձ ջերմ հարաբերություններ միայն իրավահավասարության պայմաններում: Ծնողները պետք է խուսափեն երե-խաների հետ կոնֆլիկտներից, փորձեն նրանց հետ հարաբերություններում հանդես գալ խորհրդատուի և ղեկավարի դերում:

Հիմնական հասկացություններն են՝ «հավասարություն», «համագործակ-ցություն», «բնական արդյունքներ»:

Այդ մոդելին համապատասխան ծնողների դաստիարակության խնդիրնե-րը՝ կապված են ծնողների՝ իրենց մանկավարժական գիտելիքների խորացման հետ: Աղլերյան մոդելի երկու հիմնական խնդիրները պարզեցված ունեն հետ-կյալ տեսքը՝ օգնել ծնողներին հասկանալ երեխաների մտածելակերպը և արարքների դրդապատճառներն ու նշանակությունը, ապրումակցել նրանց: Անհրաժեշտ է օգնել ծնողներից յուրաքանչյուրին զարգացնելու երեխայի դաս-տիարակության սեփական մեթոդները՝ նրա հետագա զարգացման նպատա-կով:

Գործելով այդ ուղղություններում՝ դաստիարակության աղլերյան տեսու-թյունը ձգտում է նախադրյալներ ստեղծել ծնողների և երեխաների արդյունա-վետ փոխգործակցության համար:

Ուսումնաստնտեսական մոդել: Սա երեխայի ձևավոխումն է, վարքի կառա-վարումը: Դրա արմատները հասնում են ուսուցման բիհեվիորիստական հոգե-բանություն և թերապիա: Ըստ Սուլցերի և Մայերի՝ բիհեվիորիստական մոտե-ցումը կենտրոնացված է վարքային արձագանքների դիտարկման ու չափման ենթարկվող վերլուծության վրա, և վարքը հասկացվում է որպես դիտարկվող

արտաքին արձագանք: Մոդելում հիմնական շեշտը դրվում է երեխայի վարքի տեխնիկայի և տարբեր եղանակներով դրա ձևավորման վրա:

Թ. Գորդոնի մոդելում, որն անվանվում է նաև զգայական հաղորդակցության մոդել, մեծ տեղ է հատկացվում ծնողների կողմից երեք հիմնական կարողությունների յուրացմանը: Դրանք են՝

- ակտիվորեն լսել, այսինքն՝ լսելու կարողություն, թե երեխան ինչ է ասում ծնողներին,
- երեխայի գիտակցությանը հասցնել սեփական բառերը, այսինքն՝ սեփական զգացումները երեխայի ըմբռնման համար մատչելի արտահայտվելու կարողությունը,
- օգտագործել «երկուսն էլ ճիշտ են» սկզբունքը վիճելի հարցերի լուծման ժամանակ, այսինքն՝ երեխայի հետ այնպես խոսելու կարողություն, որ գրույցի արդյունքից գոհ լինեն երկու մասնակիցներն էլ [9, էջ 108]:

Տրանսակցիոն վերլուծության վրա հիմնված մոդել: «Տրանսակցիան» դիտվում է որպես ծնողի և երեխայի էգովիճակների փոխգործակցություն: «Ծնող» էգովիճակը սովորաբար դրսևորվում և իրականացվում է վերահսկողության, արգելքների, մեծացված պահանջների, պատժամիջոցների, հոգատարության և այլ միջոցներով: «Երեխա» էգովիճակի հիմքում շարժման, ակտիվության, ուրախության, երևակայության, բորբոքվածության ու անկաշկանդության հակումն է: Այս վերլուծությամբ սահմանվում է վերոհիշյալ վիճակների բովանդակությունը: Ծնողների հետ տրանսակցիոն խաղերի հաջորդ շարքը օգնում է սեփական էգովիճակի կրիտիկական գիտակցմանը, անմիջականության, մտերմության, անկեղծության ընկալմանը ներընտանեկան փոխգործակցության մեջ:

Տրանսակցիոն վերլուծության վրա հիմնված մոդելում մշտապես ընդգծվում է, որ երեխայի վարքի փոփոխման բանալին ընկած է երեխայի ու ծնողների դերային սպասումների և հարաբերությունների փոփոխության հիմքում և նման որակական փոփոխության արդյունքները երկար սպասեցնել չեն տալիս:

Վերը դիտարկված մոդելները կողմնորոշված են ընտանեկան դաստիարակության տարբեր մեթոդների, տեխնոլոգիաների և ձևերի կիրառմանը:

Մեր ուսումնասիրություններն ու մանկավարժական գործունեության բազմամյա փորձը ցույց է տալիս, որ արդի դպրոցի կարևոր խնդիրներից մեկը պետք է դառնա ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա համակարգերում դերերի վերաիմաստավորումը, իսկ դրա հետ մեկտեղ՝ նաև սովորողների դաստիարակության գործընթացի նկատմամբ պատասխանատվության վերաբաշխումը ծնողների և դպրոցի մանկավարժական կոլեկտիվի միջև: Այսինքն, դպրոցը պետք է դառնա այն հաստատությունը, որտեղ ընտանիքները գտնում են ցանկացած հուզող հարցի պատասխանը և իրենց զգում են կառավարման ենթահամակարգի լիիրավ անդամ: Այստեղ ևս մեծ դեր է խաղում ուսուցչի՝ ընտանիքի հետ շփվելու կարողությունը, մանկավարժական գիտելիքները և մանկավարժական ղեկավարման փորձը, իմիջը:

Ուսուցչի մասնագիտական գործունեության համար, ուսուցչի և ծնողների փոխհաղորդակցման մեջ էական նշանակություն ունեն ուսուցչի մանկավարժական վարպետությունը, հաղորդակցման մշակույթը, մանկավարժական տեխնիկայի տիրապետման անհրաժեշտությունը, ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման մանկավարժական կարողությունները, որոնք պետք է ձևավորվեն բուհում, որը պահանջում է հատուկ աշխատանք՝ ինտեգրելով տեսական և կիրառական հոգեբանության, գործնական մանկավարժության փորձը [2, էջ 22]:

Մանկավարժական հաղորդակցումը մենք դիտարկում ենք որպես ուսուցիչների, երեխաների և նրանց ծնողների փոխգործակցության ձև: Մանկավարժական փոխգործակցության համագիտական տեխնոլոգիան մանկավարժական հաղորդակցումը դիտարկում է որպես սովորողի անձի կառավարման պայման և միջոց:

Հոգեբանների (Ա. Ա. Բոդայլով, Յա. Լ. Կոլումինսկի, Ե. Վ. Շորոխովա, Կ. Ա. Աբուլխանովա-Սլավսկայա) մեծ մասը հաղորդակցումը դիտարկում է որպես գործունեության տեսակ: Սակայն ճանաչված հոգեբան Բ. Ֆ. Լոմովի կարծիքով միջանձնային հաղորդակցման մեջ կան այնպիսի տեսանկյուններ, որոնք չեն կարող գործունեություն համարվել [10, էջ 245]: Միջանձնային հաղորդակցումը՝ որպես առավելապես տեղեկատվության փոխանցման գործընթաց, փաստված է նշաններով և ենթադրում է մարդկանց կողմից միմյանց հասկանալը: Ի տարբերություն հաղորդակցման՝ մարդկանց փոխգործակցությունը կարող է դրսևորվել հատուկ ձեռքսեղմումով, որը, բնականաբար, պարունակում է նվագագույն տեղեկատվություն, բայց համարվում է սոցիալապես կազմակերպված գործընթաց [10, էջ 267]:

Այս սահմանումների համատեքստում մենք կարծում ենք, որ դպրոցի կառավարման սուբյեկտների, աշակերտների և նրանց ծնողների միջև հաղորդակցումը, որի ընթացքում լուծվում են կառավարչական, ուսումնական, դաստիարակչական և անձը զարգացնող խնդիրներ, կոչվում են մանկավարժական հաղորդակցում, որում հստակորեն դրսևորվում են հաղորդակցման մասնակիցների դերային դիրքորոշումները, արտացոլելով նրանցից յուրաքանչյուրի չափանիշային կարգավիճակը:

Ելնելով վերոբերյալից՝ կարելի է փաստել, որ ուսուցչի և ընտանիքի համագործակցությունը՝ որպես մանկավարժական հաղորդակցման տեսակ, ոչ միայն պետք է սահմանափակվի տեղեկատվության ապահովումով, այլև երկխոսության, հաղորդակցման միջոցով ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացմամբ, մանկավարժական խնդիրների լուծման կարողությունների զարգացմամբ, փոխգործակցության որոշակի կանոնների և չափանիշների ուսուցմամբ, ծնողների հոգեբանական օգնության ցուցաբերմամբ: Դպրոցի ուսուցիչը պետք է լինի հաղորդակցման մշակույթի կրողը:

Դաստիարակության գործընթացում, մասնագիտական պարտականություն է համարվում ծնողների միջոցով սովորողների հոգեբանական և մանկա-

վարժական աջակցության ցուցաբերումը, հատկապես՝ աշակերտների ու նրանց ծնողների պահանջմունքների, հետաքրքրությունների բավարարման նկատմամբ ուշադրությունը:

Համագործակցման արդյունավետ մոդելը նոր պահանջներ է ներկայացնում մանկավարժի մասնագիտական պատրաստությանը և ակնառու է, որ ծնողների հետ աշխատանքի իրականացման և մանկավարժական համագործակցության կարողությունները պետք է ձևավորվեն բուհում, որը պահանջում է հատուկ աշխատանք՝ միասնացնելով տեսական և կիրառական հոգեբանության, գործնական մանկավարժության փորձը:

Մանկավարժական փորձի վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել ծնողների և երեխաների փոխգործակցության հինգ որոշիչ՝ ծնողների անձի առանձնահատկություններ, երեխայի անձնային և կլինիկա-հոգեբանական առանձնահատկություններ, սոցիալ-մշակութային և ընտանեկան ավանդույթներ, «բնավորության գործոն», որը կապված է մոր հետ երեխայի վաղ շփումների հետ, ընտանիքի չափահաս անդամների շփման առանձնահատկություններ [3, էջ 106]:

Ծնողների ու նրանց երեխաների փոխգործակցության վրա հոգեբանական և մանկավարժական ներգործության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցիչների, ծնողների և երեխաների հարաբերությունների կարգավորմամբ և դրա զարգացնող ներգործությամբ: Մեր կարծիքով ժամանակակից դպրոցի զարգացման անառարկելի պայման է համարվում մանկավարժական կոլեկտիվի համագործակցությունը ծնողների և երեխաների հետ:

Ձեռնամուխ լինելով դպրոցի և համայնքի գործընկերության, փոխգործակցության արդյունավետ մոդելի մշակմանը՝ մենք հենվել ենք Տ. Ի. Շամովայի, Պ. Ի. Տրետյակովի, հոգեբաններ Բ. Ֆ. Լոմովի, Օ. Վ. Սոլովևայի, Վ. Մ. Պոգալշայի, Ն. Պ. Կապուստինի, Ն. Ի. Դերեկլենայի, Ա. Վ. Մուդրիկի և այլոց մանկավարժական մոտեցումներին: Կ. Ի. Շամովան դպրոցի և ընտանիքի համագործակցության կարևորագույն պայման է համարում ծնողներին խրախուսելը [11, էջ 254]:

Գիտահետազոտական գրականության տեսական վերլուծությունը, փորձառարական դպրոցների, համայնքի հետազոտվող աշխատանքների փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այս հիմնախնդիրն արդիական է և ոչ լիարժեք ուսումնասիրված, ինչպես նաև հնարավորություն է տվել սահմանելու հիմնական մոտեցումները, հայեցակարգային դրույթները, գաղափարները, որոնք կազմում են փորձառարական աշխատանքների կազմակերպման մեթոդաբանական հիմքը:

Մեր կողմից առանձնացվել են դպրոցի և համայնքի համագործակցության և դրա միջոցով ծնողների ու նրանց երեխաների փոխգործակցության արդյունավետության կազմակերպման հետևյալ մոտեցումները՝

- մարդասիրական մոտեցումը, որը ենթադրում է կողմնորոշումը դեպի երեխայի անձի զարգացումը, նրա՝ որպես բարձրագույն արժեքի ընդունումը,

- մշակութաբանական մոտեցումը, որը ենթադրում է ընդհանուր մշակութային, հոգեբանամանկավարժական գիտելիքների միավորումը ամբողջական հոգեբանական, մանկավարժական և կառավարչական գործընթացում,
- էթնոմանկավարժական մոտեցումը, որը հաշվի է առնում ազգային և ընտանեկան ավանդույթները, ժողովրդական մանկավարժության արժեքները երեխայի՝ որպես որոշակի էթնոսի ներկայացուցչի դաստիարակության մեջ,
- անձնակողմնորոշիչ մոտեցումը թույլ է տալիս ապահովել երեխայի բարեկրթությունը, օգնում է երեխային գտնել իր սխալները և համբերատար ձևով, համատեղ շտկել դրանք՝ ձևավորելով երեխայի դրական ինքնագնահատականը:

Նշված մոտեցումների հիման վրա անցկացվել է դպրոցի և ընտանիքի փոխգործակցության համակարգի հետահայաց վերլուծություն, ինչի արդյունքում տարբերակված սկզբունքի վրա մշտապես փոփոխվում էին համագործակցության և փոխգործակցության բնույթը, սկզբունքները, կառուցվածքային, գործառութային բաղադրիչները և, որպես հետևանք, փոփոխվում են փոխգործակցության նպատակները, ուղղվածությունը, բովանդակությունը, ձևերն ու տեխնոլոգիաները:

CONDITIONS OF ORGANIZING INTERACTION BETWEEN THE TEACHING STAFF AND THE FAMILY AND MODELS OF INTERACTION MANAGEMENT

Grigoryan Vahagn

*PhD of Pedagogy, Associate Professor,
Yerevan State University
Republic of Armenia
v.grigoryan@ysu.am*

Summary

Over the past decades, due to changes in social and economic conditions in society, as well as the introduction of new technologies into everyday life, the psychology and behavior of each member of society have changed. New problems arise between children and parents, children and school, school and parents. In this regard, the role of cooperation between school and society increases. The modern school is faced with new forms and methods of cooperation and interaction, which are difficult for both teachers and parents to perceive. As a result, it becomes obvious that we are dealing with new conditions for organizing interaction between the family and the teaching staff, parents and children.

In the modern history of pedagogy, a number of well-known teachers, psychologists, and sociologists addressed this problem, put forward approaches, offered programs and models that were of particular importance in organizing interaction between the teaching staff and the family. We often referred to their approaches and ideas in the article. Attention was paid to a number of models of managing interaction between parents and children. The behavior of teachers, parents and children, the specifics of support provided to a modern family, and the content of pedagogical support are commented on.

The work examines the forms of communication between the teaching staff and parents, their effectiveness and role as a modern process.

In the article, we identified five determinants of parent-child interaction that are of fundamental importance in the formation and development of the moral, psychological, socio-cultural atmosphere of a modern family.

Approaches to organizing school-parent cooperation and, through it, interaction between parents and children are defined, as a result of which the nature, principles and individual components of cooperation change, and ultimately the goals, content, forms and technologies of interaction change.

Keywords: cooperation, interaction, cooperation condition, management model, atmosphere of mutual trust, pedagogical culture, behavioral psychology, ego state, ethnopedagogical approach.

УСЛОВИЯ ОРГАНИЗАЦИИ СОТРУДНИЧЕСТВА ПЕДАГОГИЧЕСКОГО КОЛЛЕКТИВА И СЕМЬИ И МОДЕЛИ УПРАВЛЕНИЯ ИХ ВЗАИМОДЕЙСТВИЯ

Григорян Ваагн

*Кандидат педагогических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения
v.grigoryan@ysu.am*

Аннотация

За последние десятилетия в связи с изменением социальных и экономических условий в обществе, а также с внедрением новых технологий в повседневную жизнь изменились психология и поведение каждого члена общества. Возникают новые проблемы между детьми и родителями, детьми и школой, школой и родителями. В этой связи возрастает роль сотрудничества школы и общества. Современная школа сталкивается с новыми формами и методами сотрудничества и взаимодействия, которые сложно воспринимаются как педагогами, так и родителями. В результате становится очевидным, что мы имеем дело с новыми условиями организации взаимодействия семьи и педагогического коллектива, родителей и детей.

В новейшей истории педагогики к этой проблеме обращался ряд известных педагогов, психологов, социологов, которые выдвигали новые подходы, предлагали программы и модели для организации взаимодействия педагогического коллектива и семьи. Мы часто ссылались в статье на работы этих ученых. Мы рассмотрели ряд моделей управления взаимодействием родителей и детей, прокомментировали поведение педагогов, родителей и детей, проанализировали специфику и содержание педагогической поддержки, оказываемой современной семье. В работе рассматриваются формы общения педагогического коллектива с родителями, их эффективность и их роль как двигателя современного процесса.

В статье нами выделены пять детерминант детско-родительского взаимодействия, имеющих основополагающее значение в формировании и становлении нравственно-психологической, социокультурной атмосферы современной семьи.

Определены подходы к организации школьно-родительского сотрудничества и через него взаимодействия родителей с детьми, в результате чего мы предполагаем, что изменятся характер, принципы и отдельные компоненты сотрудничества, а в конечном итоге и цели, содержание, формы и технологии взаимодействия.

Ключевые слова: сотрудничество, взаимодействие, состояние сотрудничества, модель управления, атмосфера взаимного доверия, педагогическая культура, поведенческая психология, эго-состояние, этнопедагогический подход.

Օգտագործված գրականությունն ցանկ

1. Grigoryan V.V., Mankavarjakan kolektivi ev hamaynqi hamagortcakcutyan kazmakerpman dzevery dprocum: Atenakhosuthyun, Yerevan, 2012, 159 ej:

2. Grigoryan V.V., Mankavarjneri ev tcnoghneri hamagorcacuthyan kazmakerpman tekhnologian: Mankavarjuthyun, KAI, h. 5, 2013 th., ej. 18-23:
3. Grigoryan V.V., Tcnoghneri ev erexaneri pokhgorcaccuthyuny vorpes hoguebanamankavarjakan himnakhndir, «Mkhitar Gosh» gitametodakan handes, N 1-2, Yerevan, 2005 th., ej. 103-107:
4. Grigoryan V.V., Dproci ev tcnoghakan hamaynqi pokhgorcaccuthyan karavarman methodnery, Mankavarjakan mitk, N 1-2, Tatev gitakrthakan hamalir, Yerevan, 2007 th., ej 175-182:
5. Grigoryan V.V., Zhamanakakits yntaniqi social-mankavarjakan nerujy, Kantheqh, Asoghik hrat., N 2, Tathev gitakrthakan hamalir, Yerevan, 2005 th., ej 238-242:
6. Grigoryan V.V., Tcnogh ev yerekha mankarjakan nergortcuthyan himnakan ughghuthyunneri, «Hayoc lezu ev grakanuthyun» amsagir, N 1-2, Yerevan, 2005 th., ej 121-125:
7. Grigoryan V.V., Tcnoghneri ev yerekhaneri pokhgortcaccuthyan harceri shurj, «Krtuthyuny 21-rd darum», 2(10), 2023 th., ej 97-107:
8. Karapetyan A.S. ev urishner, Dproci karavarman tesuthyuny ev praktikan, Yerevan, KBK, 2001 th., 144 ej:
9. Golod S.I., Stabil'nost' semyi: sotsiologicheskii demograficheskii aspekt: dis. dokt. filosof. nauk: Leningrad, 1986, 321 s:
10. Lomov B.F., Metodologicheskii i teoreticheskii problemy psikhologii, Moskva, Direkt-Media, 2008, 1174 s:
11. Shamova T.I. i drugie, Upravlenie obrazovatel'nymi sistemami, 2-e izd., Moskva, Akademiya, 2005, 382 s. THE FAMILY AND MODELS OF INTERACTION MANAGEMENT

Получено: 27.03.2025

Рассмотрено: 01.04.2025

Принято: 25.04.2025

Received: 27.03.2025

Reviewed: 01.04.2025

Accepted: 25.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**ՁԱՒԼԻԿՈՒԹՅԱՆ ԱՌՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Խոլպուզյան Անահիտ
*Հայցորդ,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն,
anahit.khlopuzyan@ysu.am
<https://orcid.org/0000-0003-3607-4434>*

Անվտիպում

Համառոտ ներածական: Ձախլիկությունը դիտարկվում է որպես կենսաբանական և նյարդահոգեբանական հատկանիշ, որն արտահայտվում է շարժողական գործառնությունների գերակայությամբ ձախ ձեռքի կամ մարմնի ձախ կողմի նկատմամբ: Այն նորմալի տարաբնույթ դրսևորում է և ինքնին բժշկական կամ զարգացման խանգարում չի համարվում: Ձախլիկ երեխաները կարող են բախվել ուսուցման գործընթացում հարմարման, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական ինտեգրման խնդիրների: Հատկապես վտանգված են նախադպրոցական ու դպրոցական տարիքային խմբերում ընդգրկված երեխաները, որոնք հայտնվում են ստանդարտացված աջլիկության վրա հիմնված կրթական միջավայրում: Մեր հետազոտության նպատակը եղել է վերլուծել ձախլիկության ախտորոշման և հարմարման առանձնահատկությունները՝ հիմնվելով սոցիոլոգիական հարցումների արդյունքների վրա: Հետազոտական գործիքակազմի միջոցով փորձ է արվել բացահայտելու ձախլիկ սովորողների սուբյեկտիվ պատկերացումները իրենց ձեռքի գերակայության վերաբերյալ, այդ գործոնի նկատմամբ իրենց վերաբերմունքը, ինչպես նաև սոցիալական միջավայրի արձագանքը՝ ուսուցիչների, ծնողների և հասակակիցների մակարդակներում: Ստացված արդյունքները կարևոր հիմք են ստեղծում ինչպես ձախլիկ սովորողների կրթական հաստատություններում հարմարման հիմնախնդիրների խորացված գիտական ըմբռնման, այնպես էլ կրթական քաղաքականության վերանայման և մանկավարժական գործելակերպերի համատեքստում համապատասխան մոտեցումների մշակման համար: Անդրադառնալով ձեռք բերված տվյալներին՝ հնարավոր է ձևակերպել հստակ առաջարկություններ՝ ուղղված ներառական կրթության արդյունավետության բարձրացմանը և ձախլիկ երեխաների կրթական հավասար հնարավորությունների ապահովմանը:

Բանալի բառեր՝ ձախլիկություն, կենսաբանական առանձնահատկություն, նյարդահոգեբանական հատկանիշ, շարժողական գերակայություն, ուսուցման գործընթաց, հարմարում, հարմարման խնդիրներ, կրթական միջավայր, ստանդարտացված աջլիկություն:

Հիմնախնդիրն առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Հիմնախնդիրն իրենց հետազոտություններում անդրադարձել են տարբեր գիտնականներ՝ Մ. Մ. Բեգրուկիխ, Վ. Ա. Դոսկին, Կ. Ռոջերս, Ռ. Դայմոնդ, Վ. Ա. Դոսկին, Ն. Ա. Լավրենտևայ, Վ. Բ. Շարայ:

Ուսումնասիրության նպատակն է վերլուծել ձախլիկության՝ որպես նյարդահոգեբանական և կենսաբանական հատկանիշի դրսևորումները կրթական գործընթացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով հարմարման առանձնահատկություններին և կրթական միջավայրում առաջացող սոցիալ-հոգեբանական դժվարություններին: Հիմնվելով սոցիոլոգիական հարցումների արդյունքների վրա՝ ուսումնասիրության նպատակն է բացահայտել ձախլիկ սովորողների վերաբերմունքն իրենց ձեռքի գերակայության հանդեպ, ինչպես նաև գնահատել ընտանիքի, ուսուցիչների ու հասակակիցների արձագանքները՝ ի նպաստ ներառական և հավասար կրթական պայմանների ձևավորման:

Հետազոտության նորույթը: Ձախլիկության ուսումնասիրությունը դիտարկվում է ոչ միայն որպես գենետիկական առանձնահատկություն, այլ նաև սոցիալ-կրթական հարմարման համատեքստում: Հետազոտությունն առանձնանում է նրանով, որ միավորում է ձախլիկության ախտորոշման մեթոդների վերլուծությունն ու սուբյեկտիվ ընկալումների գնահատումը՝ հիմնված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վրա: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կրթական միջավայրում ձախլիկ սովորողների ինտեգրման և հարմարվողականության գործընթացների ուսումնասիրությանը՝ ներառելով սոցիալական տարբեր դերակատարների՝ ուսուցիչների, ծնողների և հասակակիցների արձագանքները: Սա հնարավորություն է տալիս ձևավորելու համալիր պատկերացում ձախլիկ սովորողների կրթական հարմարման հիմնախնդրի վերաբերյալ և նպաստել ներառական կրթական միջավայրի կատարելագործմանը:

Հիմնական շարադրանք: XXI դարում ձախլիկությունը մարդու բնական ֆիզիոլոգիական առանձնահատկություններից մեկն է, որը արտահայտվում է այն իրողությամբ, որ երեխան իր գերիշխող ձեռքը՝ ձախը, օգտագործում է տարաբնույթ գործողություններ կատարելիս՝ սկսած գրելուց մինչև առօրյա կենցաղին առնչվող գործողություններ:

Մինչդեռ հասարակության մեջ դեռևս գոյություն ունեն կարծրատիպեր և սխալ կարծիքներ, որոնք միտված են ձախլիկների խտրականությանը կամ հարմարման դժվարություններին: Մեր հետազոտությամբ փորձում ենք ցույց տալ, որ ձախլիկությունը ֆիզիոլոգիական առանձնահատկություն է և հիվանդություն կամ արատ չէ:

Հետազոտության շրջանակում որպես ախտորոշիչ գործիքներ ուսումնասիրվել է Կ. Ռոջերսի սոցիալ-հոգեբանական հարմարման ախտորոշման մեթոդիկան: Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի մշակած սոցիալ-հոգեբանական հարմարման ախտորոշման մեթոդիկան լայնորեն կիրառվում է հոգեբանական հետազոտություններում՝ գնահատելու անձի հարմարվողականությունը սոցիալական միջավայրում: Այս մեթոդիկան բաղկացած է 101 հայտարարություններից, որոնք գնահատվում են 7-բալանոց սանդղակով՝ հարմարման տարբեր ցուցանիշների հիման վրա, ինչպիսիք են՝ հարմարում, ինքնընդունում, ուրիշների ըն-

դունում, էմոցիոնալ հարմարավետություն, ինտերնալություն, գերիշխելու ձգտում [3, էջ 2]:

Հանգամանալից ուսումնասիրել ենք նաև Ուրսուլա Կաստներ-Կոլլերի և գործընկերների կողմից մշակված նախադպրոցական տարիքի երեխաների ձեռքի նախապատվության գնահատման թեստը, որը ներառում է 14 տարբեր մոտոր գործողություն, որոնք նպատակ ունեն պարզելու երեխայի ձեռքի գերակայող կողմը: Թեստը կիրառվել է Վիեննայում բնակվող 120 երեխաների շրջանում, և ստացել է բարձր հուսալիության ցուցանիշ: Թեստի հուսալիությունն ու կիրառելիությունը հաստատվել են հետազոտական մի շարք նախագծերի շրջանակում՝ այն դարձնելով համարժեք գործիք նախադպրոցական երեխաների մոտ ձախիկության ախտորոշման համար [4, էջ 239-254]:

Մեկ այլ թեստի օրինակ է «Ձեռքերի բութ մատների խաչաձևումը»: Այն սովորական մեթոդներից մեկն է, որը կիրառվում է ձեռքի նախապատվության ախտորոշման համար: Այս թեստը ենթադրում է, որ քննվողը պետք է շտապ և առանց նախապատրաստման խաչաձևի իր ձեռքի մատները: Աջիկի դեպքում վերևում կլինի աջ ձեռքի բութ մատը, իսկ ձախիկինը՝ ձախ ձեռքի բութ մատը: Այս թեստը թույլ է տալիս բացահայտել ոչ միայն ձեռքի գերակայությունը, այլև ավելի ճշգրիտ տարբերակելու համար, թե ինչպիսիք են այն շարժումները, որոնք տեղի են ունենում ավելի բնորոշ ձեռքով՝ ցույց տալով, թե որն է ավելի սովորական ու ակտիվ ձեռքը: Սա արագ և պարզ միջոց է օգտագործվող ինչպես գիտական հետազոտություններում, այնպես էլ պրակտիկայում ձեռքի նախապատվության ախտորոշման համար: [1, էջ 320]:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է՝ ինքնազգացողության, ակտիվության և տրամադրության օպերատիվ գնահատման CAH մեթոդիկան: Այս (ինքնազգացողություն, ակտիվություն, տրամադրություն) մեթոդիկան մշակվել է 1973 թվականին Վ. Ա. Դոսկինի, Ն. Ա. Լավրենտսայի, Վ. Բ. Շարայի և Մ. Պ. Միրոշնիկովի կողմից [2, էջ 141-145] և նախատեսված է հոգեֆիզիոլոգիական վիճակի արագ ու օբյեկտիվ գնահատման համար: Այն կիրառվում է ինչպես առողջ, այնպես էլ հիվանդ անձանց մոտ ինքնազգացողության, ակտիվության և տրամադրության մակարդակների գնահատման նպատակով:

Մասնավորապես Ջ. Կովելի, Ա. Կարրիոն-Կաստիլյոյի, և Յ. Ֆրանկսի (2019) ուսումնասիրություններում, որոնք իրականացվել են շուրջ 500,000 անձի մասնակցությամբ (UK Biobank), արձանագրվել է, որ ձախիկության տարածվածությունը տղամարդկանց շրջանում հասնում է շուրջ 10.6 %-ի, մինչդեռ կանանց՝ մոտ 8.6%-ի: Հեղինակները նշում են, որ ձախիկության սեռային տարբերությունը կարող է պայմանավորված լինել վաղ մանկության կենսաբանական գործոններով, ներառյալ հորմոնալ և գենետիկական ազդեցությունները [5, էջ 584]:

Առավել նպատակահարմար է ուսուցման գործընթացից առաջ պարզել երեխայի գերակայող ձեռքը: Այս հանգամանքը կարևոր է մի քանի առումներով: Նախ ձախ ձեռքի գերակայությամբ երեխայի աջիկ դարձնելու փորձերը, որոնք

որոշ ընտանիքներում դեռևս կիրառվում են, կարող են բացասաբար ազդել երեխայի նյարդահոգեբանական զարգացման վրա, դժվարացնել նրա հարմարումը դպրոցական միջավայրին և հանգեցնել առողջական լուրջ խանգարումների: Բացի դրանից՝ դպրոց հաճախելուց մեկ-երկու տարի առաջ հնարավոր է համապատասխան մասնագիտական աջակցությամբ նպաստել երեխայի բնական նախասիրությունների վերականգնմանը՝ կանխելով գերակայող ձեռքի արհեստական փոփոխման հնարավոր հետևանքները:

Սոցիոլոգիական հարցումները, որոնք իրականացվել են հիմնախնդրի վերաբերյալ, նպատակ ունեն բացահայտելու այն սոցիալ-կրթական խնդիրները, որոնց հետ բախվում են ձախլիկ երեխաները կրթական հաստատություններում՝ սկսած մանկապարտեզից մինչև դպրոց: Առանձին ուշադրություն է դարձվում ձախլիկության ախտորոշման և հարմարման դժվարություններին, որոնք հաճախ առնչվում են ծնողներին, ուսուցիչներին և հասարակության մեջ առկա նախապայմաններին:

Սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տվել պարզելու, թե ինչպես կարելի է բարելավել ուսուցման գործընթացը ձախլիկ երեխաների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դպրոցներում պետք է կիրառվեն անհատական մոտեցումներ, որոնք կօգնեն ձախլիկ երեխաներին հաղթահարելու հարմարման և ինտեգրման խնդիրները:

Այս հետազոտությունը նպատակ ունի ոչ միայն դիտարկելու խնդիրները, այլև առաջարկելու լուծումներ՝ ինչպես բարելավել ուսուցման գործընթացը և բարձրացնել սոցիալական գիտակցությունը՝ կապված ձախլիկների ընդունման և նրանց համար հարմարավետ պայմաններ ստեղծելու հետ: Սոցիոլոգիական հարցումները ներառում են տարբեր խմբերի՝ ձախլիկ երեխաների և ուսուցիչների պատասխաններ: Հարցերը նպատակ ունեն հասկանալու երեխաների մոտ ձախլիկության ախտորոշման և հարմարման խնդիրները կրթական ու սոցիալական մակարդակներում:

Սոցիոլոգիական հարցումները իրականացվել են 2018-2024 թվականներին Հայաստանի հանրապետության մարզերի հանրակրթական դպրոցներում: Սույն հոդվածում անդրադարձել ենք ՀՀ 4 մարզերում՝ Լոռիում, Սյունիքում, Արմավիրում ու Տավուշում իրականացրած սոցիոլոգիական հարցումներին:

Հանրակրթական դպրոցում ուսումնառությանը աջակերտների հարմարվելու մակարդակը որոշելու համար կիրառվել է «Հարցաթերթիկ աջակերտների համար»:

Հարցաթերթիկը վերաբերում է դպրոցում ձախլիկ երեխայի հնարավոր վարքագծային դրսևորումներին և հարմարման գործընթացում առաջացած դժվարություններին: Հարցաթերթիկը լրացնելիս աշակերտը պատասխանի ձևաթղթում խաչով նշում է այն համարները, որոնցում նկարագրված վարքի դրվագները բնորոշ են իրեն: Ձախլիկ երեխայի հարմարման մասին տեղեկություն ստանալու, ինչպես նաև դպրոց հաճախելուց հետո նրա վարքի փոփո-

խությունները պարզելու նպատակով մենք առաջարկել ենք ուսուցիչներին, ծնողներին ևս լրացնել հարցաթերթիկներ:

Ձախիլկության ախտորոշման հարցաթերթային փուլում կիրառվել է հետևյալ մոտեցումը.

Երեխայի ձեռքի կողմնորոշվածության որոշում հարցաշարի միջոցով, որ- տեղ նշվել են հետազոտության անցկացման ամսաթիվը, սեռը, քաղաքը, մար- գը, տարիքը, ինչպես նաև տրված հարցերն ու պատասխանները:

Ստորև ներկայացնում ենք հիմնախնդրի վերաբերյալ ՀՀ մարզերում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը:

Հետազոտության մեջ ընդգրկված ուսումնական հաստատությունների քա- նակի ու ձախիլի երեխաների թվի վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

N	Մարզ	Դպրոցների քանակ	Հարցվողների թիվը
1	Լոռի	5	30
2	Արմավիր	4	25
3	Տավուշ	2	15
4	Սյունիք	4	12

Աղյուսակ 1. Ուսումնական հաստատությունների քանակն ու հարցվողների թիվը

Ընդհանուր առմամբ, Հայաստանի չորս մարզերի տասնվեց հանրակրթա- կան դպրոցներում իրականացված հետազոտության շրջանակում մեզ հաջող- վել է հարցման միջոցով տվյալներ հավաքել 10-15 տարեկան 82 ձախիլի դպրո- ցականի մասին, որոնցից 51-ը տղա են, իսկ 31-ը՝ աղջիկ:

Ձախիլի տղաների ու աղջիկների հարաբերակցությունը ընդհանուր առ- մամբ համապատասխանում է գիտական գրականության տվյալների այն մա- սին, որ ձախիլի տղաների քանակը գերազանցում է ձախիլի աղջիկների քանա- կը:

Ձախիլի տղաների և աղջիկների հարաբերակցությունը մեր հետազոտու- թյան շրջանակում ընդհանուր առմամբ համահունչ է գիտական գրականու- թյան տվյալներին, ըստ որոնց՝ ձախիլկության տարածվածությունն առավել բարձր է տղամարդկանց շրջանում:


Ստորև ներկայացնում ենք հարցաթերթում ներառված հարցերից երեքը իրենց պատասխաններով և համապատասխան վերլուծությամբ:

Հարց 1. Ձախիլկությունը ստեղծո՞ւմ է դժվարություններ ուսումնական գոր- ծընթացում:

- ա) Այո ☐
- բ) Ոչ ☐
- գ) Երբեմն ☐

Հարցվածներից 34 աշակերտ (41,46%-ը) հարցին, թե արդյոք ձախլիկությունը ստեղծում է դժվարություններ ուսումնական գործընթացում, պատասխանել է ոչ:

29 աշակերտ (35,36 %-ը) նույն հարցին պատասխանել է՝ այո, իսկ 19 աշակերտ (23,18 %)՝ երբեմն:



Գծապատկեր 1. Ձախլիկությունը ստեղծում է դժվարություններ ուսումնական գործընթացում

Այս հարցի վերլուծության արդյունքում պարզվեց, որ հարցված աշակերտների 35,36 %-ի մոտ ձախլիկությունը առաջացնում է խնդիրներ ուսումնական գործընթացում, քանի որ ուսումնական միջավայրը, ուսումնամեթոդական նյութերը և դիդակտիկ գործիքակազմը հիմնականում նախատեսված են աշլիկ երեխաների համար:

Այս անհամապատասխանությունը կարող է դրսևորվել գրելու ընթացքում անհարմար դիրքով, ձեռքի արագ հոգնածությամբ: Բացի դրանից՝ սոցիալ-հոգեբանական առումով հնարավոր է ձախլիկ երեխաները բախվեն հասակակիցների բացասական վերաբերմունքին կամ սեփական յուրահատկության հանդեպ անվստահության զգացողության, ինչը ևս անդրադառնում է նրանց ուսումնական ներգրավվածության և ինքնագնահատականի վրա:

41.46 %-ը (34 աշակերտ) նշել է, որ ձախլիկությունը իրենց համար չի առաջացնում որևէ դժվարություն ուսումնական գործընթացում: Այս պատասխանը թույլ է տալիս ենթադրել, որ մի շարք ձախլիկ սովորողների հարմարվողական կարողությունները բավարար են՝ հաղթահարելու հնարավոր անհարմարու-

թյունները, կամ էլ նրանք ուսումնական միջավայրում չեն բախվել այնպիսի խոչընդոտների, որոնք կարող էին զգալիորեն ազդել իրենց կրթության վրա: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ նման պատասխանները կարող են պայմանավորված լինել ոչ միայն իրական հարմարավետությամբ, այլ նաև երեխաների իրազեկվածության մակարդակով՝ կապված իրենց հնարավոր ուսումնական դժվարությունների բնույթի հետ:

Հարցվածների 23.18 %-ը (19 աշակերտ) պատասխանել է, որ ձախլիկությունը երբեմն ստեղծում է որոշակի դժվարություններ ուսումնական գործընթացում:


Այս պատասխանները վկայում են այն մասին, որ որոշ աշակերտներ ժամանակ առ ժամանակ բախվում են խնդիրների, որոնք, ըստ երևույթին, կապված են ուսումնական նյութերի կամ միջավայրի ոչ բավարար ադապտացվածության հետ՝ ձախլիկ սովորողների կարիքներին համապատասխան: Նմանատիպ պատասխանները կարևոր են կրթական գործընթացի կազմակերպման տեսանկյունից, քանի որ ցույց են տալիս հարմարման անկայուն մակարդակ և աջակցող միջավայրի ձևավորման և համապատասխան մեթոդների ներդրման անհրաժեշտություն:

Հարց 2. Ի՞նչ եք կարծում, ձախլիկները դպրոցում հատուկ մանկավարժական մոտեցման կարիք ունեն՞ն:

- ա) Այո ☐
- բ) Ոչ ☐
- գ) Երբեմն ☐

Հարցվածների 39 աշակերտ (47,56 %-ը) հարցին, թե **ձախլիկները դպրոցում հատուկ մանկավարժական մոտեցման կարիք ունեն՞ն**, պատասխանել է՝ այո:

26 աշակերտ (31,70 %-ը) նույն հարցին տվել է «ոչ» պատասխանը, իսկ 14 աշակերտ (17,07 %) պատասխանել է՝ երբեմն:



Գծապատկեր 2. Ի՞նչ էք կարծում՝ ձախլիկները դպրոցում հատուկ մանկավարժական մոտեցման կարիք ունեն:

Հարցվածների 39 աշակերտ (47.56 %-ը) հարցին, թե ձախլիկները դպրոցում հատուկ մանկավարժական մոտեցման կարիք ունեն, պատասխանել է՝ այո: Այս արդյունքը վկայում է այն մասին, որ ձախլիկ աշակերտների գրեթե կեսը գիտակցում է ուսումնական գործընթացում իրենց առանձնահատկություններին համապատասխանեցված մոտեցման անհրաժեշտությունը:

Նման արձագանքները ենթադրում են, որ դպրոցներում անհրաժեշտ է մշակել և ներդնել անհատականացված մանկավարժական մոտեցումներ, որոնք կօգնեն ձախլիկ սովորողներին առավել հարմարավետ ու արդյունավետ մասնակցել կրթական գործընթացին:

Հարցվածների 26 աշակերտ (31.70 %-ը) նույն հարցին պատասխանել է՝ ոչ:

Սա կարող է վկայել այն մասին, որ որոշ ձախլիկ աշակերտներ չեն զգում ակնհայտ դժվարություններ կամ հատուկ մոտեցման անհրաժեշտություն ուսումնական միջավայրում: Հնարավոր է նաև, որ նրանք արդեն հարմարվել են առկա պայմաններին կամ չեն բախվել բացասական վերաբերմունքի: Այնուամենայնիվ, նման պատասխանների համադրումը «այո» պատասխաններին թույլ է տալիս խոսել տարբեր հարմարման մակարդակների և անհատական փորձառությունների մասին՝ պայմանավորված ինչպես անհատական առանձնահատկություններով, այնպես էլ ուսուցիչների և դպրոցի միջավայրի վերաբերմունքով:


Իսկ հարցվածների 14 աշակերտ (17.07 %-ը) նշել է, որ **ձախլիկները «երբեմն» ունեն հատուկ մանկավարժական մոտեցման կարիք:**

Այս պատասխանները ցույց են տալիս, որ որոշ դեպքերում ձախլիկությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ ուսումնական գործընթացում՝ կախված կոնկրետ առարկաներից, ուսուցման մեթոդներից կամ ուսուցչի վերաբերմուն-

քից: «Երբեմն» պատասխանը հաճախ վկայում է պայմանական դժվարությունների մասին, որոնք ի հայտ են գալիս ոչ մշտապես, այլ որոշակի իրավիճակներում:

Հարց 3, Ձեր կարծիքով ինչո՞վ է պայմանավորված Ձեր ձախլիկությունը:

1. Ժառանգականություն (գենետիկա) ☐
2. Ձեռքի ֆիզիկական վնասվածք ☐
3. Սոցիալական ճնշում ☐
4. Դժվարանում եմ պատասխանել ☐



Գծապատկեր 3. Ձեր կարծիքով ինչո՞վ է պայմանավորված Ձեր ձախլիկությունը:

Հարցվածների 64 աշակերտ (78,04 %-ը) հարցին, թե «Ձեր կարծիքով ինչո՞վ է պայմանավորված Ձեր ձախլիկությունը», նշել է՝ «Ժառանգականությունը»: Այս պատասխանը վկայում է այն մասին, որ երեխաները տեղյակ են իրենց ընտանիքում առկա այլ ձախլիկների մասին կամ գիտակցում են, որ իրենց ձախլիկությունը կարող է ժառանգաբար փոխանցված լինել:

Հարցվածներից 16 աշակերտ՝ 19,51 %, դժվարացել է պատասխանել այն հարցին, թե ինչով է պայմանավորված իրենց ձախլիկությունը: Այս հանգամանքը կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Նախ հնարավոր է, որ նրանք բավարար տեղեկություն չունեն իրենց ընտանիքի ժառանգականության մասին, այսինքն՝ իրազեկված չեն այն մասին, թե արդյո՞ք ընտանիքում եղել են այլ ձախլիկներ:

Բացի այդ՝ նման դժվարությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ որոշ աշակերտներ դեռևս չունեն բավարար ինքնաճանաչողություն կամ համապատասխան գիտելիքներ կենսաբանական, հոգեբանական և սոցիալական գործոնների փոխազդեցության մասին, որոնք կարող են ազդել

ձեռքի գերադասության ձևավորման վրա: Վերջապես, նման պատասխանները կարող են նաև մատնանշել նմանատիպ հարցերի նկատմամբ հետաքրքրության պակաս կամ դրանց քննարկման չընդունվածություն ընտանեկան միջավայրում:

Միևնույն ժամանակ 2,43 %-ը՝ ընդամենը 2 աշակերտ, նշել է, որ իրենք վերավարժեցված աջիկ են: Այս պատասխանը թույլ է տալիս ենթադրել, որ որոշ երեխաներ ենթարկվել են ձեռքի գերադասության փոփոխման նպատակով կիրառված ուղղիչ միջամտությունների, որոնք կարող էին իրականացվել մանկական տարիքում՝ ընտանիքի կամ մանկավարժների նախաձեռնությամբ: Նման փորձառությունը կարող է ազդեցություն ունենալ ինչպես նրանց ուսումնական առաջադիմության, այնպես էլ հարմարվողականության և ինքնընկալման վրա:

Այս տվյալները կարևոր են այն տեսանկյունից, որ անհրաժեշտ է ձևավորել ավելի ճկուն և անհատականացված մանկավարժական մոտեցումներ ձախիկ երեխաների կրթության որակը բարձրացնելու համար:

Մեր հետազոտության արդյունքների մեկնաբանումը միավորում էր թե՛ որակական, թե՛ քանակական վերլուծության բաղադրիչները:

Քանակական վերլուծությունն օգնեց արձանագրել վիճակագրական օրինաչափություններ՝ կապված տարբեր սեռի և տարիքային խմբերի երեխաների շրջանում ձախիկության տարածվածության, ինչպես նաև ձախիկների՝ դպրոցում հարմարվելու գործընթացում հանդիպող դժվարությունների հաճախականության հետ:

Որակական վերլուծությունն իր հերթին նպաստեց ավելի խորքային պատկերացման ձևավորմանը՝ երեխաների կողմից իրենց ձախիկության ընկալման, դրա հանդեպ ունեցած վերաբերմունքի, ինչպես նաև նրանց հաղորդակցման առանձնահատկությունների վերաբերյալ ինչպես ուսուցիչների, այնպես էլ հասակակիցների հետ:

Մեծ կարևորություն ունեցավ նաև դիտարկումների, ծնողների և մանկավարժների հետ զրույցների, ինչպես նաև հարցաթերթիկների տվյալների համադրված վերլուծությունը, ինչը հնարավորություն տվեց բացահայտելու այն թաքնված գործոնները, որոնք կարող են ազդել ձախիկ երեխաների հարմարման գործընթացի և ինքնընկալման վրա:

Թե որակական, թե՛ քանակական վերլուծության համադրությամբ հնարավոր դարձավ ստանալ ամբողջական պատկեր ձախիկության ազդեցության վերաբերյալ՝ երեխայի վարքագծի, հուզական վիճակի և ուսումնառության արդյունավետության վրա, ինչպես նաև ուրվագծել այն ուղղությունները, որոնցով կարելի է կազմակերպել հետագա աջակցության և համարժեք մանկավարժական միջամտության գործընթացը:

Եզրակացություն: Ձախիկությունն այսօր դիտարկվում է ոչ թե որպես խանգարում, այլ որպես բնական կենսաբանական տարբերակ, որը կարող է ազդել սովորողների հարմարվելու գործընթացի վրա: Մույն հետազոտությունը ցույց տվեց, որ ձախիկ երեխաները, գտնվելով աջիկության վրա հիմնված

ստանդարտացված կրթական միջավայրում, հաճախ բախվում են հարմարման և սոցիալական ինտեգրման դժվարություններին:

Սոցիոլոգիական հարցումների միջոցով հավաքագրված տվյալների վերլուծությունը պարզեց, որ ինչպես ձախլիկության վերաբերյալ անձնական ընկալումները, այնպես էլ սոցիալական միջավայրի արձագանքները՝ ուսուցիչների, ծնողների և հասակակիցների կողմից, էական ազդեցություն են ունենում երեխաների կրթական հարմարման վրա: Այս պայմաններում առավել, քան երբևէ, կարևորվում է անհատական մոտեցման ցուցաբերումն ու ներառական կրթության սկզբունքների հետևողական կիրառումը:

Հետազոտության արդյունքները հստակ վկայում են այն անհրաժեշտության մասին, որ կրթական համակարգում ձևավորվի համապատասխան քաղաքականություն, որը միտված կլինի ձախլիկ սովորողների կրթական հավասար հնարավորությունների ապահովմանը և հարմարվելու գործընթացների հեշտացմանը: Ստացված տվյալները կարող են կարևոր դեր ունենալ թե՛ տեսական հետազոտությունների, թե՛ կիրառական մանկավարժական միջոցառումների մշակման գործում:

ANALYSIS OF SOCIOLOGICAL SURVEY RESULTS ON THE DIAGNOSIS AND ADAPTATION CHALLENGES OF LEFT-HANDEDNESS

Khlopuzyan Anahit

Ph.D. student, Yerevan State University,

Republic of Armenia

anahit.khlopuzyan@ysu.am

Summary

Left-handedness is considered a biological and neuropsychological trait, expressed through the dominance of motor functions on the left hand or the left side of the body. Although it is recognized as a variation of the norm and is not regarded as a medical or developmental disorder in itself, a number of studies suggest that left-handed children may face challenges in educational adaptation and socio-psychological integration. These difficulties are particularly pronounced among preschool and primary school children who are placed in learning environments primarily designed for right-handed individuals. The objective of this study was to analyze the specifics of diagnosing left-handedness and the associated adaptation issues, based on the results of sociological surveys. Through the use of diagnostic tools, the study aimed to explore left-handed students' subjective perceptions of their hand dominance, their attitudes towards this trait, and the reactions of their social environment, including teachers, parents, and peers. The results obtained provide a significant foundation for a deeper scientific understanding of the adaptation challenges faced by left-handed students in educational settings. Moreover, they offer insight into the need to revise educational policies and pedagogical practices in order to develop appropriate approaches. Based on the data, it becomes possible to formulate clear recommendations aimed at enhancing the effectiveness of inclusive education and ensuring equal educational opportunities for left-handed children.

Keywords: *left-handedness, biological characteristic, neuropsychological trait, motor dominance, educational process, adaptation, adaptation challenges / issues, educational environment, standardized right-handedness.*

АНАЛИЗ РЕЗУЛЬТАТОВ СОЦИОЛОГИЧЕСКИХ ОПРОСОВ ПО ПРОБЛЕМАМ ДИАГНОСТИКИ И АДАПТАЦИИ ЛЕВОРУКОСТИ

Хлопузян Анаит

Соискатель,

Ереванский государственный университет,

Республика Армения

anahit.khlopuzyan@ysu.am

Аннотация

Леворукость рассматривается как биологическая и нейропсихологическая особенность, проявляющаяся в преобладании моторных функций левой руки или левой стороны тела. Несмотря на то, что леворукость классифицируется как вариация нормы и не является медицинским или развивающимся расстройством, ряд исследований свидетельствует о том, что леворукие дети могут сталкиваться с трудностями адаптации в процессе обучения, а также с проблемами социально-психологической интеграции. Особенно уязвимы дети дошкольного и школьного возраста, которые оказываются в образовательной среде, ориентированной на стандартизированную праворукость. Целью данного исследования является анализ особенностей диагностики и адаптации леворуких детей с опорой на результаты социологических опросов. С помощью исследовательских методов было предпринято выявление субъективных представлений леворуких обучающихся о доминировании их руки, их отношения к этому фактору, а также реакции социальной среды на уровне педагогов, родителей и сверстников. Полученные данные создают значимую основу для углубленного научного осмысления проблем адаптации леворуких учащихся в образовательных учреждениях, а также для пересмотра образовательной политики и разработки соответствующих подходов в рамках педагогической практики. Исходя из полученных результатов, можно выработать конкретные рекомендации, направленные на повышение эффективности инклюзивного образования и на обеспечение равных образовательных возможностей для леворуких детей.

Ключевые слова: леворукость, биологическая особенность, нейропсихологическая характеристика, моторное доминирование, образовательный процесс, адаптация, проблемы адаптации, образовательная среда, стандартизированная праворукость.

Օգտագործված գրականության ցանկ

1. Bezrukikh M.M. Levorukiy rebenok v shkole i doma. - Ekaterinburg: «LITUR», 2001.- 320s
2. Doskin V.A., Lavrent'eva N.A., Miroshnikov M.P., Sharay V.B. //Voprosy psikhologii.1973,N.6, S.141-145
3. Social-Psychological Adaptation Of Academic Gifted Adolescents With Various Degrees Of Internet Addiction | European Proceedings
4. Assessing handedness in preschoolers: Construction and initial validation of a hand preference test for 4-6-year-oldsResearchGate+7, Ursula Kastner-Koller, Pia Deimann, Johanna Bruckner, Psychology Science, 2007, 49.3, 239-254
5. de Kovel Caroline G.F., Carrion-Castillo, A., & Francks, C. (2019). A large-scale population study of early life factors influencing left-handedness. Scientific Reports, 9, 584.. <https://doi.org/10.1038/s41598-018-37423-8>

Получено: 08.05.2025

Рассмотрено: 08.05.2025

Принято: 12.05.2025

Received: 08.05.2025

Reviewed: 08.05.2025

Accepted: 12.05.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

Тьюторство как инновационная педагогическая технология: возможности и вызовы

Мардоян Рузанна

*Доктор педагогических наук, профессор
Ширакский государственный университет им. М. Налбандяна,
Республика Армения
mardoyanr@mail.ru*

<https://orcid.org/0000-0002-6644-1015>

Аннотация

Современное образование стремительно меняется и требует повышения эффективности учебно-воспитательного процесса, что является одной из самых актуальных и важных задач педагогики во все времена.

К воспитанию и обучению, на основе гуманистической парадигмы, предъявляется одно из важнейших требований – осуществление индивидуального подхода к учащемуся, к его потребностям, способностям и др. Однако в реальной практике существует противоречие между фронтальными формами обучения и индивидуальными особенностями ученика, его потребностями в учебно-познавательной деятельности, что вызывает необходимость дифференциации в образовании, индивидуализации, оказания педагогической помощи, поддержки каждому ученику в достижении его целей, преодолении трудностей и др. Одним из путей решения этих проблем является внедрение инновационных технологий, которые позволяют учитывать личные интересы и возможности учащихся, что необходимо в условиях растущего разнообразия образовательных запросов. И одним из ключевых инструментов для достижения этих целей является тьюторская технология. Она характеризуется присущими ей чертами: индивидуализация, развитие особых навыков, адаптация к изменениям и др. Одним словом, актуальность внедрения этой педагогической технологии обоснована условиями быстро меняющегося образовательного пространства и тем фактом, что ее можно эффективно применить в школах, вузах, в системе дополнительного, профессионального образования, где важен индивидуализированный подход.

Цель исследования – раскрыть сущность тьюторства как инновационной педагогической технологии, показать ее возможности в решении проблем современного образования и преодолении вызовов на данном этапе развития образования.

Новизна – актуализировано тьюторство как педагогическая технология, представлены его сущностные характеристики, – возможности и вызовы применения этой инновационной технологии в учебно-познавательном процессе.

На основе теоретического анализа научных исследований по представленной проблеме и результатов социологического опроса сделан вывод о том, что успешное внедрение тьюторской педагогической технологии способно кардинально изменить учебно-познавательный процесс, сделав его более гибким. Сделаны соответствующие методические рекомендации.

Ключевые слова: *тьютор, педагогические технологии, индивидуализация, педагогическая поддержка, педагогическое сопровождение, рефлексия, индивидуальный образовательный маршрут, консультации.*

Краткий обзор публикаций по теме. Проблема тьюторства, тьюторской деятельности, тьюторских технологий получила широкое отражение в научной педагогической литературе. Сущность понятия «тьютор» раскрывается во многих исследованиях Л.В. Бендова, А.Г. Чернявской, С.В. Федотовой и др. Несмотря на разные толкования, авторы сходятся к общему мнению, что тьютор направляет образовательную деятельность на индивидуальное развитие каждого ученика.

Анализ исследований Е.А. Андреевой, А.В. Сапа, И.Г. Воронцовой, Т.Н. Гушиной позволил раскрыть сущность, роль педагогического тьюторского сопровождения, особенности построения индивидуальных образовательных маршрутов и др. Е.А. Челнокова, Т.М. Ковалева и другие ученые в своих исследованиях представили методы, формы, модели тьюторской деятельности.

Изучение и анализ научной литературы по вопросам педагогических технологий и их классификаций выявил, что многие авторы (Г.К. Селевко, О.Б. Даутова, Т.Б. Казачкова и др.) тьюторство не рассматривают как отдельную педагогическую технологию. Например, Г.К. Селевко внес его в «Технологию индивидуализированного воспитания». [9, с. 810]

Анализ публикаций по данной проблеме показал, что исследований по проблеме тьюторства как отдельной инновационной педагогической технологии почти нет. Тем не менее, тьюторство обладает всеми сущностными характеристиками педагогических технологий, и применение этой технологии наряду с другими, несомненно, поможет решению важных задач современного образования на данном этапе его развития.

Цель исследования – раскрыть сущность тьюторства как инновационной педагогической технологии, показать ее возможности в решении проблем современного образования и преодолении вызовов на данном этапе развития образования.

Новизна исследования. Нами актуализировано тьюторство как педагогическая технология, представлены его сущностные характеристики как педагогической технологии, раскрыты возможности и вызовы применения этой инновационной технологии в учебно-познавательном процессе.

Изложение основного материала. В современном образовании все больше места уделяется личным образовательным маршрутам, траекториям, где каждый ученик может двигаться своим темпом, в соответствии со своими способностями и интересами. Сегодня необходимы уже не только знания, но и развитие таких навыков, как критическое мышление, креативность, способность к самообучению и др. Наблюдается также возрастание требований к гибкому образованию и адаптации к быстро меняющимся образовательным, общественным условиям. Эти реалии требуют новых подходов, новых технологий. И одной из таких инновационных технологий мы рассматриваем тьюторство, тьюторскую технологию. Чтобы раскрыть сущность тьюторской технологии, обратимся к вопросам таким, как «Что такое тьюторство?», «Кто такой тьютор?».

Феномен современного тьюторства связан с историей европейских университетов. Тьюторство зародилось в Англии, примерно в XIV в., в таких известных университетах, как Оксфорд, Кембридж, где студенты должны были сами выбрать путь к достижению знаний, и в этом им помогал тьютор. [2] Во многих зарубежных странах тьюторство действует очень эффективно и сегодня: Великобритания, США, Финляндия, Япония и др., «опираясь на идею индивидуализации как стержневую, но при этом внося своеобразие в деятельность в зависимости от национального контекста». [2, с. 16]

В научно-педагогической литературе есть много определений понятия «тьютор». Так, по мнению Б.Д. Эльконина, тьютор является консультантом учащегося, он может помочь ему выработать образовательную программу, самоопределиться к самому процессу обучения и к отдельным элементам этого про-

цесса, а, с другой стороны, он может ответить на вопрос, как использовать результаты обучения и как переложить эту самую учебную программу, учебную деятельность в процессе индивидуального развития этого конкретного человека. [5, с. 14]

Т.М. Ковалева считает, что «тьютор, педагогическая тьюторская позиция принципиально отличается от профессии, позиции учителя-предметника, психолога, социального педагога и классного руководителя». [3, с. 29] По мнению исследователя, это педагогическая деятельность «по индивидуализации образования, направленная на прояснение образовательных мотивов и интересов учащихся, поиск образовательных ресурсов для создания ИОП, работа с образовательным заказом семьи, формирование учебной и образовательной рефлексии учащихся». [3, с. 35]

Анализ этих и других определений позволяет сказать, что тьютор – педагог, наставник, который осуществляет специальную – тьюторскую деятельность, помогая учащимся в осуществлении индивидуальной образовательной программы, поддерживает мотивацию, способствует развитию и др. Тьюторство – это процесс или система, в рамках которой тьютор осуществляет свою деятельность. Это педагогическая практика, по сути, направленная на помощь учащимся в выборе целей, путей достижения результатов и т.д.

В исследованиях разных учёных (Л.В. Бендова, А.Г. Чернявской, Е.А. Александрова и др.) изучаются функции тьютора. Мы обратились к тем функциям, которые, на наш взгляд, наиболее полно отражают сущность тьюторства. Рассмотрим их. Психологическая функция: создание благоприятной для ребёнка психологической атмосферы в школе и за ее пределами; дидактическая и методическая функция, которая выражается в организации помощи учащимся в обучении, привлечении родителей и др.; воспитательная функция, которая направлена на создание эмоционально-положительного фона и социально-психологического климата, способствующего плодотворному усвоению и закреплению в сознании учащихся социально ценного опыта; педагогическая функция состоит в том, чтобы помочь учащимся прояснить значение наблюдаемых и оцениваемых событий, фактов реальной действительности, выстроить индивидуальную траекторию его личностного совершенства, поставить перед ним достижимые и реалистичные цели и задачи. [10, с. 7-9]

К названным выше функциям тьютора, на основе анализа научной литературы и опыта работы, необходимо добавить и аксиологическую функцию, потому что ценностная ориентация, установка, соблюдение системы ценностей – это необходимый компонент деятельности тьютора. Любая деятельность, тем более педагогическая, «основана на приоритетности ценности человека, способствует саморазвитию личности, партнерскому взаимодействию». [6, с. 29]

Тьюторскую деятельность можно определить как полифункциональную, где особая роль принадлежит функции – педагогическое сопровождение в реализации обучающимися индивидуальных образовательных маршрутов и проектов, которое нацелено на процессы индивидуализации, интериоризации и осуществляется лишь в ситуации встречного душевного движения ребенка. Педагогическое сопровождение всегда индивидуализировано, направлено на конкретного учащегося, даже в условиях групповой работы. Т.М. Ковалева в своем исследовании этого вопроса, подчеркивает, что под педагогическим сопровождением тьютора понимает особый тип сопровождения: «сопровождение процесса индивидуализации в ситуации

открытого образования», что это «учебно-воспитательное взаимодействие, в ходе которого ученик совершает действия, а педагог создает условия для эффективного осуществления этого действия». Во время тьюторского сопровождения «тьюторант самостоятельно разрабатывает приемлемые для себя способы, которые затем обсуждает с тьютором». [3, с. 81] На основе анализа исследований по этому вопросу, можно сказать, что тьюторское сопровождение обеспечивает индивидуальную поддержку и сопровождение учащегося на протяжении всего его образовательного пути.

Анализ исследований (З.У. Колокольникова, А.В. Сотникова, Н.А. Мосина, Ю.А. Безруких и др.) показал, что тьюторы используют такие методы работы, как беседа, дискуссия, упражнение и другие известные методы обучения. О.В. Костина отмечает также такие методы работы тьютора как: кейс-обучение, дебаты, портфолио и др. [4]

Обобщив результаты изучения и анализа научной литературы (Т.М. Ковалева, А.А. Теров, С.Ю. Попова и др.) по данному вопросу, мы выявили также и другие методы работы тьютора: консультации, методы рефлексии. Рассмотрим некоторые из них, наиболее важные на наш взгляд:

- тьюторские консультации (индивидуальные, групповые, беседы, рассказы и др.), цель которых – активизация учащихся или учащегося с учетом его индивидуальных особенностей, способностей на дальнейшую самостоятельную работу по формированию и реализации его индивидуальных образовательных результатов, что возможно на практике при помощи проектирования и реализации индивидуальных образовательных маршрутов, которые представляют собой «структурированную программу действий обучающихся, сформированную самим обучающимся во взаимосвязи с педагогом, направленных на достижение образовательного результата на определенном этапе освоения образовательных программ» (5, с. 26);

- методы внутренней и внешней мотивации (метод вовлеченности учащихся, поиск личного смысла для обучающегося, система поощрений, геймификация, социальное признание и др.), которые помогают в определении уровня развития мотивации учащихся, в соотношении различных ожиданий тьюторантов, их приоритетов и целей в построении своих индивидуальных образовательных программ. И, конечно, стимулируют развитие внутренней мотиваций, саморазвитие личности учащегося, его самооценку, формируют интерес к учебе и т.д.;

- рефлексия – регулярные обсуждения успехов и сложностей, которые помогают осознать ценность обучения, анализировать свой опыт и результаты обучения, развивать навыки самооценки, помочь понять, насколько эффективны и приемлемы цели для него и др. При групповой форме работы обеспечивается понимание в группе, своевременная организация конструктивной критики, поиск коллективного решения и т.д. К ним можно отнести портфолио, дневники саморазвития и др.

Изучение научной литературы (Н.С. Сердюкова, Е.В. Посохина, Л.В. Серых, В.М. Букатов, О.В. Гребенюк, А.П. Тряпицына и др.) и обобщение результатов исследования позволило выделить основные этапы тьюторства:

- диагностический этап: выявляются образовательные потребности учащихся, уровень их знаний в данный момент и др.;

- планирование и проектирование индивидуального образовательного маршрута. Совместно с учеником разрабатывается индивидуальный план с краткосрочными, долгосрочными целями, подбираются методические подходы, соот-

ветствующие личным особенностям ученика и т.д. Планирование способствует структурированию образовательного процесса, его целенаправленности;

- сопровождение и реализация образовательного процесса: это основной этап, когда активно взаимодействуют субъекты процесса. Тьютор на этом этапе организует учебный процесс, проводит консультации, мотивирует, корректирует по результатам обратной связи и др.;

- оценка результатов и обратная связь: проводится анализ достигнутых результатов, обсуждение достижений, корректировка и оценка;

- рефлексия и корректировка – это заключительный этап, на котором анализируется весь процесс обучения, выявляются эффективные методы, способствующие обучению, факторы, имеющие негативное влияние и т.д. И производится адаптация плана обучения для дальнейшей работы, что позволяет сделать процесс наиболее гибким и индивидуальным.

Personally, I haven't had any incidents. I have worked in Newham for 20 years and I have never been discriminated because of my colour. [063A]

Lack of support and identity as a professional Black teacher

There always have been many excuses when I have to ask white teaching assistants to do a job. An assumption that you are overly sensitive or difficult to work with. Senior staff member jesting to cut my hair [I have 'locks']. White staff talking to me in a slang or Caribbean accent for no reason. Presuming that when I am off, I am somehow skiving, even though when they check on record, I have 100% attendance. Parents assuming that I am the Teaching Assistant and talking to the white Teaching Assistant instead of me. [027A]

Parents ignoring me and talking to my white TA. Parents ignoring me and talking to another adult that was white. [027C]

I do feel that at times my skin-tone has contributed to colleagues' responses [027B]

I hear comments in the office about a child – whether they are 'proper British'. When asked to do a task by email with an individual, always a member of senior management is copied in to show the presumption that I am difficult. All my teaching methods are questioned. The presumption that I am strict or mean - in a way, that is why my students are well behaved, not that I am skilled in behaviour management. I am a quiet individual and shy, this is perceived as having a bad attitude by comparison with other white or Asian staff. I am just being courteous. [027A]

Some parents [mostly Asians, who are Muslims] assume that the Teaching Assistant is the class teacher and would approach her [instead of me, the actual teacher]. One time, an eastern European parent asked me to go and get the class teacher while I was standing at the door. [027D]

I have been given the more challenging class. I have been overlooked several times for less experienced teachers who have been given mentoring, support, and guidance. [027C]

One partner teacher would hardly speak to me. She was overheard saying things [negative things about me]. As the lead teacher, she would not allow me to plan any of the lessons and would then complain again that she was doing all the work. She would not accept any suggestions that I have made – they would be shut down. [022D]

As a Black teacher I feel that there is a higher expectation of me, maybe because a lot of eyes are on us. Any disagreements [with other teachers or even parents] and I am labelled aggressive or loud. A parent was unable to say my name/class but able to describe me as the 'black one' (I was their child's teacher for a few months). [025B] Racism was not direct but indirect. [065D]

Barriers to promotion for Black teachers

I am a class teacher, yes, I don't think anything has stopped me from being a teacher. However, in terms of progression it's a bit slow. A visitor saw me and assumed I was a Teaching Assistant just by seeing my face [025B]

My school teaching experience is good now, but, before there was always the thought that Black teachers were over-looked for promotion [015C].

Not going to say, no, I have been overlooked on several occasions for promotion. [025D].

I am a class teacher and SENDCO for a primary school. In this role, I have been able to progress without discrimination. In previous roles, outside of teaching, I felt my colour held me back. [034A]

I feel I've had to adjust my aspirations [027A]

I have been overlooked several times and less experienced teachers have been giving mentoring, support, and guidance [079A]

Opportunities have been provided by my headteacher however, there was one particular member of the SLT who was not very supportive until she was directed to do so [027D].

I am an Assistant Headteacher. I have been given coaching and sent on training courses. However, I have had to do a lot of hard work to be considered 'ready' for such development [019B].

Contextual analysis

The common issues resulting from the respondent groups reporting on their personal and then their professional experiences were grouped [through weight of reported evidence] under the headings of ***teacher expectations; racial abuse; lack of support and barriers to promotion.***

Nothing is changing. The authors' current research survey, undertaken in 2023, could have been processed in the year 2000 and [probably] would have still yielded the same concerning results as those found 20 or 25 years later. If anything, the current survey evidences a worsening in teachers' experiences of covert and overt racism. To substantiate that statement, Carrington et al (2000) study reported from a survey sample of 149 Newly Qualified Teachers that around a quarter 26% had encountered incidents of racism in their placement schools" (p.91). Similarly, Stuart et al (2003) research in which 28 Black student teachers and three Deputy Heads were interviewed, revealed "a mixed picture of racism, xenophobia and ignorance in the schools" (p.5). Research by Hargreaves (2011) in which the voices of 65 Black and Asian teachers reported on "...their treatment within the profession, and in particular, the barriers they have faced in relation to promotion to senior leadership roles suggests a high degree of institutional racism within the teaching profession..." (p.39). In 2023 we find the same issue of institutional racism being reported by Demie & See's (2023) study: *Ethnic disproportionality in the school teaching workforce in England*, although this work focuses on a growing mismatch between the ethnic diversity of the pupil population and that of teachers in their schools, these authors recognize the connected relationship between knowledge, power, and the creators of that knowledge within pedagogical settings.

The results from our current survey highlight the very worrying issue of status as it relates to Black professional identity. Several teachers spoke about being misidentified as the classroom helper or *parents ignoring me and talking to my white TA. Parents ignoring me and talking to another adult that was white; Parents assuming that I am the Teaching Assistant and talking to the white Teaching Assistant instead of me.* These statements relate directly to the dominance of 'Whiteness' and "how white teachers maintain their ownership of teaching by being overwhelmingly overrepresented in the workforce and by implication, owning curricular, official knowledge, values, attitudes, culture, norms and so on and so on" (Boyle & Charles, 2016, p.883). A lack of promotion and Senior leadership roles continue to blight the experiences of Black teachers:

Although, I have climbed to the level of Assistant Headteacher and have been given coaching and sent on training courses, I have had to do a lot of hard work to be considered 'ready' for such development.

I have been overlooked several times for less experienced teachers who have been given mentoring, support, and guidance. Mboyu (2019) cites "racism as one of the reasons for ¹BME underrepresentation in positions of school leadership in England. Although self-confidence, resilience, perseverance and drawing on the support of family and friends" (p.110 & p.112) continue as strategies to counter the effects of racism. Similar findings from USA in the study by Bailes & Guthery (2020) state: "We find that race and gender are associated with the probability of promotion to school leadership...Black principals are least likely to be promoted and wait longer for promotion when compared to white assistant principals" (p.1).

¹ The current authors view the labels BME and BAME as highly problematic.

The lack of parity in a segregated teaching workforce has inevitably created a culture which, in 2023, according to recent UK poll: *‘Half of Britons cannot name a Black British historical figure, Majority of British people found to have shockingly little knowledge about Black British history* (The Guardian, 26th October 2023). Instead of a concerted push and a concentration on reframing the curriculum with evidenced primary research on Britain’s founding Black populations, the argument and discussion usually centers on quotas and increasing the number of Black teachers. Of course, equality and representation remain at the heart of reforming the system, but one must avoid a discourse on the simplistic notion of Blacks being role-models for Black children, as West (1999) reminds us that this is a familiar homogenizing impulse that assumes that all Black people are alike...such tendencies result in obliterating differences (class, region, accent, culture and so on) between Black people” (p.36). Indeed, several of the teachers reported in our study a culture of low expectations and the effects and absence of an empowering curriculum: *In school growing up, I would say that teacher expectations [for Black children/students] were generally not as high as they could have been. I remember feeling like not much was expected of me, and I wasn’t ‘stretched’. If your behaviour was considered hard to manage, you were moved to a group below your ability.* If the dominant teaching workforce are socialized and inculcated within a schooling system in which the current content of the curriculum teaches slavery as its starting point for Black history; then it should follow that low expectations coupled with an absence of true Black history will form the basis of pedagogical interaction.

Why is it, then, that we consistently find that a predicable suggested outcome or recommendation to surveys or research within this domain is to essentially ‘train white teachers on how to become less racist in educational settings?’ Decade after decade the issue of racism and its damaging effects on the psyche of Black children, who, when they grow up to become potential Black teachers or leaders, are usually given the responsibility to initiate ‘unconscious bias’ programmes within their school or subject departments without *ever changing* their pedagogical content. Why are senior leaders and government officials ignoring and “failing to fully incorporate the new, diverse histories produced by UK and international researchers?” (Royal Historical Society, 2018, p.7). Gus John (2006) observes: “Tinkering with the system, amendments to the procedures and peripheral provision (through mentoring, counselling etc, no matter how well intended) will not change things for Black pupils generally” (p.238).

Psychologist and historian Amos Wilson (1983/2015) provides a solution: “We cannot wait 20, or 30 years to learn basic lessons - the system is not working for Black children. Words and language are the culmination of a people, so the accumulation of experience and knowledge of Black people should be improved as each generation passes through the education system. That is one of the functions of culture - to solve its problems and this is how people evolve through the workings of its culture. Why must generations of Black children be sacrificed to the system in which they are expelled, suspended, and receive few qualifications?” (lecture presentation).

Conclusion

The common issues resulting from the respondent groups reportage on their personal and then their professional experiences were grouped [through weight of reported evidence] under the headings of *teacher expectations; racial abuse; lack of support and barriers to promotion*. These issues are not new nor sadly, were they unexpected, as the cited research literature from previous [and current] years evidenced. How many more

research exercises and surveys and analyses are required to point to the scale of the malaise and the urgent need for action at pedagogical policy level for both the Black schooling experience and the access, development, and promotional journeys of Black teachers already in and/or thinking about joining the profession?

In summary then, from a somewhat disappointing volume return of responses [despite reminders], Newham's reported profile [from this self-selected sample of respondent teachers] is set at two extremes – a minority expressing positive responses about lack of racism in the teaching experience and conversely a majority of strong positive statements about racist experiences and the effect of those experiences upon those teachers' daily working life and their progression through the teaching hierarchy in their schools.

The researchers also reflect, with concern, that Newham is reported to have the most ethnically diverse teaching population in the 33 London Authorities (Demie. F & Hau. A. 2022), yet the profile that has emerged throughout our research into the life and professional journeys of the Black teachers in Newham does not bode well for similar investigations and comparative studies across the remaining London Authorities.

ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՎՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԵՎԱՄՈՐԹ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԴԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Բոլլ Բիլ

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Մանչեսթերի համալսարան,

Մեծ Բրիտանիա,

william.boyle1405@btinternet.com

Չարլզ Մարի

Մանչեսթերի համալսարան,

Մեծ Բրիտանիա,

william.boyle1405@btinternet.com

Ամփոփում

Այս հոդվածը շարունակում է հեղինակների նախորդ հետազոտությունների ուղղությունը, որոնք վերաբերում են սևամորթ մասնագետների՝ Մեծ Բրիտանիայի կրթության համակարգում նշանակալի դեր ստանձնելու հնարավորությունների սահմանափակմանը և դրանից բխող հիասթափությանը: Ուսումնասիրելով իրավիճակը Լիվերպոլում [Boyle & Charles, 2011, 2016]՝ մենք որոշեցինք դիտարկել նաև մայրաքաղաքը և ընտրեցինք Լոնդոնի վարչական շրջաններից մեկը՝ որպես այլընտրանքային վայր:

Մենք կանգ առանք Նյուիեմի վրա, քանի որ առկա տվյալների համաձայն՝ այս վարչական շրջանն ունի Լոնդոնի 33 վարչական շրջանների մեջ ամենաբազմազան էթնիկական կազմով ուսուցչական անձնակազմը [Demie & Hau, 2022]:

Հետազոտության նպատակը Նյուիեմի ներկայիս սևամորթ ուսուցիչների ինքնագնահատվող փորձի վերլուծությունն էր նրանց անձնական ապրումների տեսանկյունից՝ որպես սևամորթ սովորողների՝ Մեծ Բրիտանիայի կրթության համակարգում, ապա՝ որպես սևամորթ ուսուցիչների՝ նույն համակարգում աշխատելու ընթացքում:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել սևամորթ ուսուցիչների ինքնադրսևորումը Մեծ Բրիտանիայի կրթական համակարգում՝ կենտրոնանալով Լոնդոնի Նյուիեմ թաղամասում սևամորթ ուսուցիչների փորձի վրա: Ուսումնասիրության նպատակն է վեր-

լուծել Մեծ Բրիտանիայի դպրոցական կրթության համակարգում որպես ուսանող իրենց ուղին և բրիտանական դպրոցներում որպես ուսուցիչ աշխատելու փորձը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրթական միջավայրում սևամորթների մարզինալացմանն ու անօրինականությանն առնչվող խնդիրներին:

***Բանալի բառեր՝** սևամորթ մանկավարժներ, կրթության համակարգ, էթնիկ բազմազանություն, անհավասարություն, խտրականություն, սոցիալական արդարություն, Մեծ Բրիտանիա, Լիվերպուլ, Լոնդոն, Նյուհեմ:*

ПРОЦЕСС РЕГУЛИРОВАНИЯ РОЛИ ЧЕРНОКОЖИХ ПЕДАГОГОВ В СИСТЕМЕ ОБЩЕГО ОБРАЗОВАНИЯ АНГЛИИ

Бойл Билл

*Доктор педагогических наук, профессор,
Манчестерский Университет,
Великобритания
william.boyle1405@btinternet.com*

Чарльз Мари

*Манчестерский Университет,
Великобритания
william.boyle1405@btinternet.com*

Аннотация

Эта статья продолжает направление предыдущих исследований, посвященных изучению ограничения возможностей чернокожих специалистов играть значительную роль в системе образования Великобритании и вызванному этим разочарованию. Изучив ситуацию в Ливерпуле [Boyle & Charles, 2011, 2016], мы решили рассмотреть подобную ситуацию также и в столице и в качестве альтернативы выбрали для этого один из административных районов Лондона.

Из 33 административных округов Лондона мы остановились на Ньюхэме, поскольку, согласно имеющимся данным, именно в этом административном округе наблюдается наибольшее этническое разнообразие среди педагогического состава [Demie & Nau, 2022].

Цель исследования заключается в изучении опыта работы современных чернокожих учителей Ньюхэма, за основу взяты их личные переживания в качестве чернокожих учащихся в системе школьного образования Великобритании, а затем в качестве чернокожих преподавателей, работающих в этой системе.

Цель статьи – изучить опыт чернокожих учителей, работающих в системе образования Великобритании, с упором на опыт чернокожих учителей в лондонском районе Ньюхэм. Цель исследования – проанализировать их жизненный путь в качестве учащихся в системе школьного образования Великобритании и их опыт работы учителями в британских школах, уделив особое внимание проблемам, связанным с маргинализацией и бесправием чернокожих людей в образовательной среде.

Ключевые слова: чернокожие педагоги, система образования, этническое разнообразие, неравенство, дискриминация, социальная справедливость, Великобритания, Ливерпуль, Лондон, Ньюхэм.

References

1. Alberge. D. (2023) *Half of Britons can't name a Black British historical figure*: The Guardian, October 26th.
2. Bailes. L.P. & Guthery. S. (2020) *Held down and held back: Systematically delayed principal promotions by race and gender*. AERA Open, vol 6 (2), pp. 1-20.

3. Boyle B & Charles M (2011) *Tightening the shackles: the continuing invisibility of Black African Caribbeans in teaching in Liverpool*, Journal of Black Studies USA, Vol 42, (3) p.427-435
4. Boyle B & Charles M (2016) *How can only 18 Black teachers in Liverpool represent a diverse teaching workforce? A critical narrative*. Journal of Inclusive Education Vol 20 [8] p. 871-888. DOI:10.1080/13603116.2015.1119893
5. Carrington. B. Bonnet. A. Dermaine. J. Hall. I. A. Nyak. G. Short. Skelton. F. & Tomlin. R. (2000) *Ethnicity and professional socialization of teachers. Final Report to the Teacher Training Agency*. London: TTA.
6. Demie. F & Hau. A. (2022) *Diversity in the teaching workforce in London*, ResearchGate, pp. 1-26
7. Demie. F. & See, B.H. (2023) *Ethnic disproportionality in the school teaching workforce in England*. Equality in Education & Society, vol 2 (1), April, pp. 3-27.
8. Hargreaves. L.M. (2011) *The status of minority ethnic teachers in England: Institutional racism in the staffroom*. Dedicar, Revista De Educacao E Humanidades, 1, Marco: pp. 37-52.
9. John. G. (2006) *Taking a Stand: Gus John Speaks on education, race and social action and civil unrest 1980-2005*. Gus John Partnership: UK.
10. Mboyo. J.P.E. (2019) *School leadership and Black and minority ethnic career prospects in England. The choice between being a group prototype or deviant head teacher*. Educational Management Administration & Leadership, vol 47 (1), pp. 110-128.
11. Royal Historical Society (2018), *Race, Ethnicity & Equality in UK History: A Report and Resource for Change*. Royal Historical Society, October.
12. Stuart. J. M. Cole. G. Birrell, D. Snow, & V. Wilson (2003) *Minority ethnic and overseas student teachers in south-east England. An exploratory study*. Report to the Teacher Training Agency, July
13. West. C. (1999) *The Cornel West Reader*. Basic Civitas Books: NY.
14. Wilson. A. N. (1983/2015) *Manhood in the Diaspora*. <http://youtube.com>

Получено: 06.02.2025

Рассмотрено: 08.02.2025

Принято: 15.03.2025

Received: 06.02.2025

Reviewed: 08.02.2025

Accepted: 15.03.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

UDC 371. 263

DOI 10.46991/educ-21st-century.v7.i1.110

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Գևորգյան Պարզև

*մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վանաձորի պետական համալսարան
Հայաստանի Հանրապետություն
pargevgevorgyan007@gmail.com
<https://orcid.org/0009-0000-1859-2153>*

Էմինյան Գագիկ

*մանկավարժական գիտությունների թեկնածու
Վանաձորի պետական համալսարան
Հայաստանի Հանրապետություն
geminyan@mail.ru
<https://orcid.org/0009-0005-7976-9801>*

**Կրթությունը այն է, ինչ մնում է սովորածը մոռանալուց հետո:
Ալբերտ Այնշթայն**

Ամփոփում

Համառոտ ներածություն: Կրթությունը եղել և շարունակում է մնալ հասարակության զարգացման առանցքային շարժիչ ուժը: Այն հնարավորություն է տալիս ձևավորելու սերունդներ, որոնք պատրաստ են անդրադառնալու կյանքի տարբեր մարտահրավերներին և դիմակայելու դրանց: Մինչ օրս, երբ կրթական համակարգերը հղկում են իրենց կառուցվածքը և զարգանում նոր տեխնոլոգիաների ու մոտեցումների միջոցով, կրթության գնահատման մեթոդները և դրանց արդյունավետությունը դարձել են կարևոր քննարկման թեմա: Հոդվածում կներկայացվեն նորարարական մեթոդներ, որոնք նպաստում են գիտելիքների ստուգման արդյունավետությանը:

Հոդվածի արդիականությունը: Ժամանակակից կրթության համակարգերը մշտապես պահանջում են նոր մոտեցումներ, մասնավորապես՝ սովորողների գիտելիքների ստուգման հարցում: Ապագա ուսումնական գործընթացի արդյունավետությունը կախված է հատկապես մնացորդային գիտելիքների ստուգման մեթոդների ճիշտ ընտրությունից, ինչը կօգնի ավելի ամուր հիմքեր դնել ուսումնական նյութի յուրացման մեջ, ստեղծել նոր հնարավորություններ սովորողների զարգացման համար և առավելագույնս բարձրացնել ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը:

Գիտական նորույթը: Հոդվածի գիտական նորույթը կապված է մնացորդային գիտելիքների ստուգման նորարարական մեթոդների կիրարկման հետ: Մեթոդների որոշ առանձնահատկությունների և կիրառելիության վերլուծության միջոցով առաջարկվում

են նորարարական մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան ավելի արդյունավետ և բազմակողմանի գնահատելու սովորողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Թեմայի արդիականությունը: Թեման արդիական է՝ հաշվի առնելով, որ կրթության արդյունավետությունը մեծապես կախված է գնահատման մեթոդների շարունակական կատարելագործումից:

Նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել մնացորդային գիտելիքների ստուգման ձևերը, նորարարական մեթոդները, ներկայացնել դրանց կարևորությունը և կիրառման հնարավորությունները, որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ կրթական գործընթացում:

Նորույթը: Ներկայացված են այնպիսի մեթոդներ և տեխնոլոգիաներ, որոնք ոչ միայն համապատասխանում են ժամանակակից կրթական պահանջներին, այլև զուգորդվում են գնահատման ավանդական մոտեցումներին:

Եզրահանգում: Մնացորդային գիտելիքների ստուգումը կարևոր բաղադրիչ է կրթության արդյունավետության բարձրացման համար: Այս գործընթացում պետք է հաշվի առնել տարիքային, զարգացման ու կրթական պահանջների տարբերությունները և ընտրել համապատասխան ստուգման մեթոդներ, որոնք կօգնեն ոչ միայն ստուգել հիշողությունը, այլև զարգացնել գիտելիքների կիրառման կարողությունները:

Բանալի բառեր՝ *մեթոդ, գնահատում, ուսուցիչ, դպրոց, կրթություն, սովորող, նախագիծ, քննություն, հարցում:*

Թեմայի արդիականությունը: Հանրակրթության բնագավառում տեղի ունեցող բարեփոխումների համատեքստում, երբ լուրջ դրվում է մնացորդային գիտելիքների ստուգման հարցը, հողվածում ներկայացվում են նորարարական մոտեցումներ, որոնք ունեն մեծ նշանակություն կրթական գործընթացի շարունակական զարգացումը հնարավոր դարձնելու համար: Վերջին տարիներին կրթության համակարգում ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով առաջնային տեղ է զբաղեցնում սովորողների իրական կարողությունների բացահայտումը: Խնդիրն ավելի առաջնային է դառնում, երբ խոսքը վերաբերում է գնահատման այն ձևերին, որոնք թույլ են տալիս բացահայտել ոչ միայն փաստային հիշողությունը, այլև խորը ընկալումն ու կիրառման հմտությունները: Ուսումնական մեթոդների և գնահատման ձևաչափերի տարբերակումը տարիքային խմբերի միջև (տարրական, միջին և ավագ դպրոց) կարևոր նախապայման է: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում վերանայելու գնահատման կիրառվող մեխանիզմները՝ որոնելով նոր եղանակներ, որոնք համադրելի են սովորողների տարիքային ու հոգեբանական առանձնահատկությունների հետ:

Հիմնախնդիրը: Գնահատման ավանդական մեթոդների սահմանափակ հնարավորություններն են, քանի որ այդ մեթոդները չեն ապահովում գիտելիքների մտապահման ու կիրառելիության լիարժեք ստուգում: Այսինքն՝ ուսուցման արդյունքների գնահատումը չի համընկնում ժամանակների պահանջներին: Նոր մոտեցումների և տեխնոլոգիաների ներդրումը պահանջում է ուսուցիչների գիտելիքների ու կարողությունների լրացուցիչ զարգացում ու վերա-

պատրաստում: Վերջին շրջանում գնահատման նոր մոտեցումների մասին արտացոլված են Վ. Վ Սիդորովի, Ռ. Մ. Չուդինսկու, Մ. Վ. Կոչուրովայի, Վ. Ա. Տոլստիկի, Ա. Վ. Նիկիտինի, Վ. Գրինի, Տ. Կելզանի, Մ. Կլարկի, Դ. Շիլլի և ուրիշների աշխատություններում, սակայն ոչ մի աղբյուրում չի շոշափվում դպրոցականների մնացորդային գիտելիքների ստուգման ձևերի, մեթոդների ու տեխնոլոգիաների մասին:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ուսումնասիրությունը արժեքավոր է այնքանով, որ այն կարող է ուղենշել ուսուցիչներին ավելի արդյունավետ նորարարական մեթոդների կիրառում, ինչպես նաև օգնել բարելավել դասավանդման ու գնահատման գործընթացները: Այդպիսի մոտեցումները կնպաստեն կրթական արդյունքների բարձրացմանը և միևնույն ժամանակ կտան սովորողներին նոր հնարավորություններ մնացորդային գիտելիքների ճիշտ կիրառման գործում:

Կրթությունը միշտ եղել է հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցը: XXI դարում, երբ կրթական համակարգերը թևակոխում են մի նոր փուլ, առանձնահատուկ կերպով կարևորվում է սովորողների ուսուցման գործընթացի ստուգման ու գնահատման խնդիրը:

Այս տեսանկյունից հիմնական խնդիրը վերաբերում է կրթության որակի գնահատման համակարգերի մշակմանը (ինչպես նաև կրթական քաղաքականության նախագծմանը)՝ առաջնահերթությունների սահմանմանը և դրանց հիմնավորմանը [4, էջ 9]:

Գիտելիքների ստուգման ավանդական ձևերը այլևս չեն բավարարում դպրոցի պահանջները: Այս համատեքստում ուշադրություն է դարձվում սովորողների մոտ մնացորդային գիտելիքների ստուգմանը, ինչը կարևորվում է գիտելիքների լիարժեք վերափոխման ու ամրապնդման տեսանկյունից:

Ներկայացվող նյութը արժեքավոր կարող է լինել ոչ միայն ուսուցիչների համար, որոնք պետք է ավելի ճշգրիտ և բազմակողմանի գնահատեն սովորողների գիտելիքները, այլ նաև սովորողների համար, որոնք և պետք է տեղյակ լինեն, թե ինչպես է ստուգվելու ու գնահատվելու իրենց մոտ մնացորդային գիտելիքների մակարդակը:

Սովորողների մոտ մնացորդային գիտելիքների բնութագրերը

1. Ինքնագիտակցություն և վերահսկում

Սովորողները զարգացնում են ինքնաճանաչողական ունակություն՝ հասկանալով ուսումնական գործընթացի էությունն ու բովանդակությունը, ընտրելով առավել արդյունավետ ռազմավարություններ՝ ըստ խնդիրների բարդության ու ժամանակի սահմանափակման:

2. Սովորելու գործընթացի մշտադիտարկում

Սովորողները կարողանում են ինքնուրույն վերահսկել ուսման մեթոդները՝ գնահատելով դրանց արդյունավետությունը և հարմարեցնելով դրանք ըստ իրավիճակի:

3. Բազմակողմանի մտածողություն

Սովորողները զարգացնում են քննադատական մտածողություն՝ տարբեր տեսանկյուններից մոտենալով խնդիրների լուծմանը և վերլուծելով իրենց գործողությունները:

4. Հակադրվող ռազմավարություններ և ինքնագնահատում

Սովորողները պետք է պատրաստ լինեն փոփոխելու գիտելիքի մտապահման ռազմավարությունները և ինքնագնահատել իրենց գործողությունների արդյունավետությունը:

Սովորողների մոտ մնացորդային գիտելիքների ձևավորման գործընթացը ակտիվ ուսուցման ամենակարևոր գործառույթներից մեկն է: Տեսության և պրակտիկայի միասնության սկզբունքը մնացորդային գիտելիքների ձևավորման մեկ այլ կարևոր առաջնահերթություն է: Սովորողները հնարավորություն պետք է ունենան օգտագործելու տեսական գիտելիքները գործողությունների մեջ:

Ուսուցանողի կողմից պատշաճ արձագանքները կարևոր են սովորողների մոտ մնացորդային գիտելիքների ձևավորման համար: Սովորողը պետք է մշտապես ստանա հստակ ու մանրամասն արձագանք իր աշխատանքի և ուսման վերաբերյալ:

Կարևոր է ընդգծել, որ ուսումնական ձեռքբերումների գնահատումը կազմում է գնահատման համակարգի ընդհանուր գործընթացի անբաժանելի մասը [3, էջ 18]:

Սա կարող է ներառել ինչպես ուսուցիչների, այնպես էլ նրանց հասակակիցների գնահատականները: Արձագանքը ուղղված է սովորողի սեփական վարքագծի ձևավորմանը՝ օգնելով նրան ճիշտ գնահատել իր գործողությունները:

Մնացորդային գիտելիքները իրենց հիմքում ունեն 3 բաղադրիչ՝

ա) նյութի մտապահում,

բ) նյութի գիտակցում,

գ) նյութի օգտագործում գործնական և հետազոտական գործունեության մեջ [7]:

Ինքնագնահատումը սովորողների մոտ մնացորդային գիտելիքների զարգացման անբաժանելի մասն է: Սովորողները պետք է կարողանան գնահատել իրենց ինքնուրույն աշխատանքը՝ հասկանալու իրենց ուժեղ և թույլ կողմերը: Ինքնագնահատումն օգնում է ավելի արդյունավետ կառավարելու ժամանակը և կրթական գործընթացը:

Մնացորդային գիտելիքների ստուգումը դառնում է ավելի ու ավելի կարևոր, քանի որ դրանք նպաստում են սովորողի ինքնակառավարման զարգացմանը և կարողությունների ավելի հավասարակշռված դրսևորումներին: Մնացորդային գիտելիքները սովորողներին հնարավորություն կտան ավելի լավ և արագ կողմնորոշվելու բարդ ուսումնական իրավիճակներում, արդյունավետ կազմակերպելու ուսման գործընթացը՝ ինչպես նաև ավելի կշռադատված ու քննադատական մոտեցում դրսևորել ամենատարբեր պայմաններում:

Գնահատումը սովորողների ուսումնական արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, կուտակելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության արդյունքները վերահսկելու գործընթացն է [1, 231 էջ]:

Կրթության կազմակերպման գործընթացում տարբեր ձևեր են օգտագործվում սովորողների գիտելիքների օբյեկտիվ ստուգման համար, որոնք հիմնականում վերաբերում են տվյալ պահին ի հայտ եկած կրթական մոտեցումներին: Մինչդեռ վերջին տասնամյակներին նորարարական մոտեցումները սկսում են մեծ տարածում գտնել, գիտելիքների ստուգման ավանդական ձևերը՝ գրավոր քննությունները, բանավոր հարցումներն ու տեքստերի վերլուծությունը, շարունակում են մնալ կիրառվող հիմնական մեթոդները, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները:

Գնահատման արդյունքների վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել գործընթացի բոլոր փուլերն ու բաղադրիչները [5, էջ 19]:

Մնացորդային գիտելիքների ստուգման նորարարական մեթոդներն ու տեխնոլոգիաները

Ուսումնական նախագծեր

Նախագծային մեթոդը սովորողներին հնարավորություն է տալիս իրական կյանքում կիրառելու իրենց գիտելիքները՝ լուծելով կոնկրետ խնդիրներ: Նախագծային աշխատանքը կարող է ընդգրկել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի ձևեր, որտեղ սովորողը կամ ուսումնական խումբը իրականացնում է հետազոտական կամ ստեղծագործական աշխատանք՝ թեմայի շրջանակներում:

Նախագծային աշխատանքների առավելություններ

1. Գիտելիքների համախմբում և կիրառման կարողություն

Նախագծային աշխատանքները թույլ են տալիս սովորողներին համախմբել և կիրառել տարբեր գիտելիքներ՝ դրանք կիրառելով ավելի խորը մակարդակով և արդյունավետորեն ստուգել մնացորդային գիտելիքները:

2. Ակտիվ ուսումնական գործընթաց

Նախագծային մեթոդը ներգրավում է սովորողներին պրակտիկ աշխատանքում՝ նվազեցնելով հիշողության բեռը և զարգացնելով համագործակցելու ու ժամանակի կառավարման հմտությունները:

3. Ինքնուրույնություն և պատասխանատվություն

Նախագծերը խթանում են սովորողների ինքնուրույնության, պատասխանատվության ու ինքնավստահության ձևավորմանը, աշխատանքը մշակում ու ներկայացնում են ինքնուրույն:

Նախագծային մեթոդի թերությունները

1. Ժամանակի սահմանափակումներ

Նախագծային աշխատանքները հաճախ ժամանակատար են և կարող են խնդիր առաջացնել, եթե ունենք ժամանակի սահմանափակում:

2. Գնահատման դժվարություն

Նախագծային աշխատանքների գնահատումն ավելի բարդ է, քանի որ սովորողները կարող են ուժեղ լինել ըստ տարբեր կարողունակությունների, ինչը բարդացնում է չափանիշների ստեղծումը:

2. Ինքնագնահատում

Այս մեթոդը սովորողի համար կարևոր է, քանի որ այն դարձնում է նրան ուսումնական ճանապարհի սեփական պատասխանատուն՝ գիտակցելով սեփական ուժեղ և թույլ կողմերը:

Ինքնագնահատումը ոչ միայն գնահատում է սովորողի առաջընթացը՝ հիմնվելով ուսուցչի կամ արտաքին գնահատողի կարծիքի վրա, այլ նաև օգնում է սովորողին ինքնուրույն վերանայել ու մտածել իր ուսումնական առաջընթացը ապահովելու մասին:

Ինքնագնահատման առավելությունները

1. Ինքնագնահատումը թույլ է տալիս սովորողներին գնահատել իրենց աշխատանքը, գտնել ուժեղ և թույլ կողմերը, զարգացնել ինքնուրույնություն ու պատասխանատվություն՝ ազդելով ապագա ուսման հստակության վրա:

2. Սովորողը անկեղծ է իր աշխատանքի հանդեպ, քանի որ գնահատում է այն առանց արտաքին ճնշումների:

3. Ինքնագնահատման մեթոդը զարգացնում է ինքնահսկողություն. սովորողը կարող է հետևել իր ընտրած ռազմավարություններին և ճշտումներ կատարել:

Ինքնագնահատման թերությունները

1. Կազմակերպման չհամապատասխանության դեպքում սովորողները կարող են լինել կողմնապահ կամ չափազանց խիստ իրենց աշխատանքի նկատմամբ՝ առանց ուսուցչի աջակցության:

2. Սովորողը չի կարող ճիշտ գնահատել իր աշխատանքը, եթե չունի հստակ չափանիշներ կամ վերջնարդյունքների վերաբերյալ պատկերացումներ:

Բացի վերոբերյալ մեթոդներից՝ կիրառություն են գտել նաև հետևյալ նորարարական մեթոդներն ու տեխնոլոգիաները՝ թվային հաշվողական գործիքներ, արհեստական բանականության ռեսուրսներ, որոնց բնութագրմանը չենք անդրադառնա՝ որոշ հանգամանքներից ելնելով:

Գնահատման նպատակը ապացույցների մանրակրկիտ հավաքումն ու վերլուծությունն է [8]:

Սովորողների մոտ մնացորդային գիտելիքների ստուգման առանձնահատկությունները

Սովորողների մոտ մնացորդային գիտելիքների ստուգումը կարևոր փուլ է ուսումնական գործընթացում, քանի որ այն ոչ միայն թույլ է տալիս գնահատել դասի ընթացքում յուրացված նյութը, այլև սովորողի երկարաժամկետ հիշողության մեջ պահված և կիրառվող գիտելիքները:

Ինչպես նշվեց, մնացորդային գիտելիքների ստուգումը հատկապես արդյունավետ է այն դեպքերում, երբ սովորողը գործնականում կիրառելու է իր գիտելիքները տարբեր նախագծերի, հարցազրույցների, խմբային քննարկումների

կամ այլ միջոցներով: Դա ցույց է տալիս, թե որքան լավ է սովորողը հիշում և թե ինչպես է կարողանում կիրառել իր ստացած գիտելիքները: Դրա համար կարևոր է, որ սովորողները աշխատեն այնպիսի նախագծերի ու խնդիրների վրա, որոնք հնարավորություն են տալիս միաժամանակ ստուգելու ինչպես հիշողությունը, այնպես էլ ճանաչողական ու ստեղծագործական հմտությունները:

Գնահատման մեթոդների ընտրությունը նույնպես կարևոր է մնացորդային գիտելիքների ստուգման արդյունավետության համար: Գրավոր քննությունները շատ դեպքերում չեն կարող լիովին արտացոլել սովորողների կիրառելի գիտելիքները, քանի որ դրանք հաճախ կենտրոնանում են միայն հիշողության ստուգման վրա: Նման դեպքերում կիրառելի են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են նախագծային աշխատանքները, դեպքերի վերլուծությունները, ռեֆլեքսիվ քննարկումները, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու ոչ միայն հիշողությունը, այլև գիտելիքների կիրառումը բարդ ու համատեքստային իրավիճակներում:

Նորարարական ուսումնական մոտեցումները, ինչպիսիք են խմբային քննարկումները, ինքնագնահատումը, փոխօգնությունը և նախագծային աշխատանքները, կարող են զգալիորեն բարձրացնել գիտելիքների ստուգման արդյունավետությունը, քանի որ դրանք խթանում են սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացում և ավելի շատ կենտրոնանում են գիտելիքների կիրառման վրա: Այս մեթոդները խթանում են նաև սովորողների ստեղծագործական մտածողությունը, քանի որ նրանք ստիպված են մտածել և կիրառել իրենց գիտելիքները տարբեր համատեքստերում:

Մեթոդների տարբերությունն ըստ կրթական մակարդակների նույնպես կարևոր նշանակություն ունի մնացորդային գիտելիքների ստուգման գործընթացում: Տարրական դպրոցում կարևոր է ինտերակտիվ և վիզուալ մեթոդների օգտագործումը, որոնք մոտ են երեխաների առօրյա փորձին: Օրինակ՝ խաղային մեթոդները (գիտելիքների ստուգման հարցաշարերը, շախմատային խնդիրները) խթանում են երեխաների հիշողության զարգացմանը: Միջին դպրոցում ուսումնական պահանջները բարդանում են, և այստեղ ավելի շատ կիրառվում են հարցազրույցներ, քննարկումներ և նախագծային աշխատանքներ՝ սովորողի մտածողության զարգացման ու գիտելիքների կիրառելիության ստուգման համար: Ավագ դպրոցում ուսումը դառնում է ավելի նպատակաուղղված մասնագիտական կողմնորոշմանը, ուստի մնացորդային գիտելիքների ստուգման մեթոդները պետք է կենտրոնանան ոչ միայն հիշողության գնահատման, այլև դրանք վերլուծության և ստեղծագործական մտածողության մեջ կիրառելու կարողությունների վրա ինչպես դեպքերի վերլուծության, այնպես էլ խորքային հետազոտական աշխատանքների միջոցով:

Այսպիսով՝ մնացորդային գիտելիքների ստուգման գործընթացը պետք է համապատասխանի ուսումնական մակարդակին և խթանի ոչ միայն հիշողության, այլև գիտելիքների կիրառման կարողությունների զարգացմանը, հատկապես ավելի բարդ և համատեքստային խնդիրներ լուծելիս:

Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը [9]:

Այսկերպ կրթական ծրագրերը ոչ միայն նպաստում են գիտելիքների յուրացմանը, այլև ընդգծում են սովորողների մոտ կարողությունների ու հմտությունների զարգացման կարևորությունը:

Գիտելիքը մարդու կողմից օբյեկտիվ իրականության արտացոլումն է փաստերի, պատկերացումների, հասկացությունների և գիտական օրենքների տեսքով [2, էջ 38]:

Պարզելու համար, թե ինչպիսի պատկերացումներ ունեն հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչները սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման գործընթացի վերաբերյալ, իրականացրել ենք առցանց հարցումներ Լոռու, Շիրակի, Արարատի, Տավուշի մարզերի և Երևան քաղաքի դպրոցների ուսուցիչների շրջանում: Հարցմանը մասնակցել է 112 ուսուցիչ:

Հարցաթերթիկի այն հարցին թե **«Ի՞նչ ձևերով եք սովորաբար ստուգում սովորողների մոտ մնացորդային գիտելիքները»**, հարցվողների 40 %-ը պատասխանել է գրավոր քնությունների, 38 %-ը՝ բանավոր հարցումների, 12 %-ը՝ խմբային աշխատանքների, 10 %-ը՝ նախագծային աշխատանքների միջոցով, իսկ դեպքերի վերլուծության, ինքնագնահատման կամ այլ տարբերակ որևէ մեկը չի նշել: Արդյունքների վերլուծությամբ պարզ դարձավ, որ ուսուցիչները առավելապես օգտագործում են ավանդական մեխանիզմները սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման աշխատանքների իրականացման ժամանակ:

Հարցաթերթիկի հաջորդ՝ **«Ի՞նչն է կարևոր մնացորդային գիտելիքների ստուգման ժամանակ, որպեսզի այն լինի օբյեկտիվ և արդյունավետ»** հարցին հարցվողների 31.5 %-ը պատասխանել է՝ սահմանված չափորոշիչների հստակ գործածումը, 11.5 %-ը՝ սովորողի ակտիվ մասնակցությունը և մտավոր զարգացումը, 6.2 %-ը՝ վստահելի գնահատման գործիքների կիրառումը, իսկ 50.8 %-ը՝ ավանդական մեթոդների օգտագործումը:

Ակնհայտ է, որ ուսուցիչները ոչ միայն ապավինում են ավանդական մեթոդների լայն կիրառմանը, այլև անտեսում են սովորողների ակտիվ մասնակցության դերը:

Հարցաթերթիկի մյուս՝ **«Ո՞րն է, ըստ Ձեզ, ավելի կարևոր՝ ստուգել միայն գիտելիքների մտապահումը, թե՞ նաև դրանք կիրառելու կարողությունը»** հարցին հարցվողների 8 %-ը հիմնականում կարևորել է մտապահումը, 29 %-ը՝ պատասխանել է՝ գիտելիքների կիրառելու կարողությունը, 63 %-ը նշել է՝ երկուսն էլ կարևոր են:

Իսկ ասիա **«Ի՞նչ դժվարություններ եք հանդիպում մնացորդային գիտելիքների ստուգման ժամանակ (օրինակ՝ ժամանակի սահմանափակում, միջանկյալ**

գնահատում և այլ» հարցին հարցվողների 85.5 %-ը պատասխանել է՝ ժամանակի պակասը, 5 %-ը՝ սովորողների անհամապատասխան մոտեցումները, 9.5 %-ը՝ գնահատման հստակ չափանիշների բացակայությունը:

Հավելենք, որ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24 փետրվարի 2023 թ. N 11-Ն հրամանի՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում, ըստ նպատակի, ներկայումս կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ՝

- 1) հայտորոշիչ գնահատում,
- 2) ձևավորող գնահատում,
- 3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող) [4]:

«Ի՞նչ կարծիք ունեք, երբ սովորողները կրկնում են ուսումնասիրած նյութը՝ ստուգելով մնացորդային գիտելիքները, դա որքանով կարող է ամրապնդել նրանց կարողունակությունը» հարցին հարցվողների 76 %-ը պատասխանել է, որ այս գործընթացը շատ կարևոր է, քանի որ նպաստում է ավելի երկարատև հիշողության ձևավորմանը, 1 %-ը արձագանքել է՝ կրկնությունը չի բերում նշանակալի արդյունքների, եթե ուսումնական նյութը անիմաստ է թվում, 19.5 %-ը մնացորդային գիտելիքների կրկնությունը որոշակի ազդեցություն ունի՝ կախված աշակերտի մոտեցումից, իսկ 3.5 %-ը կրկնություն կիրառելու ժամանակ միշտ չէ, որ գիտելիքները պահպանվում են երկարաժամկետ:

Հարցաթերթիկի հաջորդ՝ **«Ըստ Ձեզ՝ որո՞նք են մնացորդային գիտելիքների ստուգման դժվարությունները»** հարցին հարցվողների 5.5 %-ը պատասխանել է, որ դժվար է հստակ պարզել սովորողի մտապահման մակարդակը, 15.5 %-ը պատասխանել է, որ բավականին շատ ժամանակ ու ջանք պետք է ներդրվեն արդյունավետ գնահատման ձևերի ընտրության համար, 43 %-ը՝ նման աշխատանքների իրականացման բովանդակությամբ վերապատրաստումների բացակայությունը, իսկ 36 %-ը՝ մնացորդային գիտելիքների ստուգման մեթոդական ուղեցույցների բացակայությունը:

Իսկ անհա «Ո՞րն է, ըստ Ձեզ, մնացորդային գիտելիքների առավել արդյունավետ ստուգման ձևը՝ տարբեր դասարանների համար (տարրական, միջին, ավագ դպրոց)» հարցին հարցվողների 82.5 %-ը տարրական դասարանների համար առանձնացրել է խաղային ու նախագծային մոտեցումները, գրավոր քննություններն ու բանավոր հարցումները, միջին դպրոցի համար հարցվողների 92 %-ն առանձնացրել է գրավոր քննությունները, բանավոր հարցումները, գործնական աշխատանքները, իսկ ավագ դպրոցի համար հարցվողների 87 %-ը պատասխանել է՝ գրավոր քննություններ, բանավոր հարցումներ, գործնական աշխատանքներ, նախագծային և խմբային աշխատանքի իրականացում, ինքնագնահատում և հետադարձ կապ:

Ուսուցիչները հիմնականում հավատարիմ են ավանդական մեթոդներին (գրավոր ստուգումներ, քննություններ և բանավոր հարցումներ), որոնց կիրառումը գերակշռում է մնացած այլ ձևերի նկատմամբ (օրինակ՝ խմբային աշխատանքներ, նախագծային աշխատանքներ և այլ նորարարական մոտեցումներ):

Սա ցույց է տալիս, որ դպրոցներում դեռևս գերակշռում են գնահատման դասական մեթոդները:

Հարցմանը մասնակցած ուսուցիչների մեծամասնությունը նշել է, որ կարևոր են ավանդական մեթոդները (50.8 %), ինչը ցույց է տալիս, որ ուսուցիչները չեն կիրառում նորարարական մոտեցումներ: Սա նշանակում է, որ դպրոցներում դեռևս մեծ է ավանդական կրթական մշակույթի դերը: Հարցված ուսուցիչների մեծամասնությունը (63 %) նշել է, որ մնացորդային գիտելիքների ստուգման ժամանակ պետք է ստուգվի ոչ միայն հիշողությունը, այլ նաև գիտելիքները կիրառելու կարողությունը: Սա նշանակում է, որ կան ավանդույթներ, որոնց համաձայն՝ պետք է առավել ուշադրություն դարձվի նաև գիտելիքների գործնական կիրառման վրա, ինչը համատեղում է թե՛ ավանդական մոտեցումները, թե՛ նորարարական մեթոդները:

Հարցման արդյունքում բացահայտվել է մի շարք խոչընդոտներ, որոնք առնչվում են մնացորդային գիտելիքների ստուգմանը: Դրանց թվում հատկապես նշվում է ժամանակի պակասը (85.5 %), ինչը կտրուկ սահմանափակում է ուսուցիչների հնարավորությունները՝ արդյունավետ գնահատելու աշակերտների գիտելիքները: Ավելին, դեռևս մեծ ազդեցություն ունի գնահատման չափանիշների բացակայությունը (9.5 %), ինչը ցույց է տալիս, որ օբյեկտիվ գնահատման համար ուսուցիչները դեռևս չունեն հստակ ու կայուն չափորոշիչներ:

Հարցման արդյունքները նաև ցույց են տալիս, որ ուսուցիչները չեն դիտարկում սովորողների ակտիվ մասնակցությունը՝ որպես գիտելիքների ստուգման կարևոր բաղադրիչ նույնիսկ այն դեպքում, երբ գիտելիքների կրկնությունը համարվում է արդյունավետ եղանակ (76 % մասնակիցներ հստակ նշել են, որ կրկնությունը կարևոր է երկարաժամկետ հիշողության համար): Ենթադրվում է, որ ուսուցիչները հաճախ չեն կիրառում ինտերակտիվ ու մասնակցային մեթոդներ, որոնք սովորողներին կիրախուսեն ավելի ակտիվորեն ներգրավվել կրթական գործընթացում: Ուսուցիչները նշել են, որ մնացորդային գիտելիքների ստուգման գործընթացում դժվար է հստակ սահմանել սովորողների մտապահման մակարդակը (5.5 %), իսկ արդյունավետ գնահատման ձևերի ընտրությունը պահանջում է ավելի շատ ժամանակ ու ջանք (15.5 %), ինչը նաև կարող է հանդիսանալ բարելավման ոլորտ: Իսկ մնացորդային գիտելիքների ստուգման մեթոդական ուղեցույցների բացակայությունը (36 %) ու խնդրին վերաբերող վերապատրաստումների սակավությունը (43 %) դիտարկվել են որպես խոչընդոտներ, որոնք պահանջում են լուծում: Տարբեր դասարանների համար ուսուցիչները նշել են, որ տարբեր մեթոդներն առավել արդյունավետ են. տարրական դպրոցում՝ խաղային և նախագծային մոտեցումները, իսկ ավագ դպրոցում՝ գրավոր քննությունները, բանավոր հարցումները, գործնական աշխատանքներն ու նախագծային աշխատանքները: Սա ցույց է տալիս, որ ուսուցիչները կիրառում են ուսուցման տարբեր մեթոդներ: Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ, չնայած նորարարական մեթոդների ու տեխնոլոգիաների զարգացմանը, դպրոցներում դեռևս գերակշռում են ուսուցման և գնահատման

ավանդական ձևերը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ ուսուցիչների գերակշիռ մասը չունի ուսուցման և գնահատման գործընթացում S2S ռեսուրսների կիրառելիության անհրաժեշտ մակարդակ: Իրավիճակի բարելավման համար արժեքավոր կլինի ուսուցիչների հերթական (պարտադիր) ատեստավորման մոդուլներում սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման ձևերի ու մեթոդների բազմազանության բաղադրիչի ներդրումը: Այնուամենայնիվ, ուսուցիչներն ավելի շատ ուշադրություն են դարձնում ոչ միայն գիտելիքների մտապահմանը, այլ նաև դրանց կիրառման կարողությանը, ինչը առաջացնում է պահանջ նորարարական մոտեցումների ներառում ուսուցման գործընթացում:

Եզրակացություն

Մնացորդային գիտելիքների ստուգումը կարևոր բաղադրիչ է կրթական համակարգի արդյունավետության բարձրացման համար: Այս գործընթացում պետք է հաշվի առնել տարիքային, զարգացման ու կրթական պահանջների տարբերությունները և ընտրել համապատասխան ստուգման մեթոդներ, որոնք կօգնեն ոչ միայն ստուգել հիշողությունը, այլև զարգացնել գիտելիքների կիրառման կարողությունները:

Տարրական դպրոցում պետք է կիրառվեն ինտերակտիվ ու զննական միջոցներ՝ շեշտադրելով խաղերն ու մուլտիմեդիան, որոնք ստեղծում են միջավայր, որտեղ երեխաները կարողանում են մտածել և կիրառել իրենց գիտելիքները: Միջին դպրոցում օգտագործել ավելի բարդ մեթոդներ՝ նախագծային ուսուցում, թեմատիկ հարցազրույցներ ու ինքնագնահատում, ինչը կնպաստի ավելի խորացված վերլուծության և անձնական փորձի վրա հիմնված եզրակացությունների ձևավորման:

Ավագ դպրոցում, որտեղ սովորողները մասնագիտական կողմնորոշման վճռորոշ փուլում են, կարևոր է կիրառել մեթոդներ, որոնք խթանում են խորացված և համապարփակ գիտելիքների գործնականում կիրառմանը, դեպքերի վերլուծությանը և հետազոտական աշխատանքների իրականացմանը: Այս մեթոդները օգնում են գնահատել ոչ միայն հիշողությունը, այլև գիտելիքների կիրառելիությունը բարդ իրավիճակներում:

Ուսուցիչները, ընտրելով և համադրելով այս մեթոդները, կստեղծեն միջավայր, որտեղ սովորողները կկարողանան արդյունավետորեն ձեռք բերել, պահպանել և կիրառել գիտելիքները՝ հասնելով ուսումնական գործընթացի բարձր որակի: Այն, որ ուսուցիչների կեսից մի փոքր ավելին նախապատվությունը տվել է ավանդական մեթոդներին, օրինաչափ է, քանի որ մարդու գիտակցությունը պահպանողական է, այն փոխելու գործընթացը՝ երկարատև: Փոխելու գործընթացը պիտի խարսխվի համոզմունքի, այլ ոչ թե պարտադրանքի վրա:

Քանի որ ավանդական և նորարարական մեթոդների բաժանումը պայմանական է, կարծում ենք, որ ճիշտ կլինի ուսուցիչներին դրդել մեթոդներն ընտրելիս ելնել ոչ թե հակադրության, այլ համալրության սկզբունքից:

PROBLEM OF METHODS FOR ASSESSING STUDENTS' RESIDUAL KNOWLEDGE

Gevorgyan Pargev

*Doctor of Pedagogical Sciences, Professor,
Vanadzor State University,
Republic of Armenia
pargevgevorgyan007@gmail.com*

Eminyan Gagik

*Ph.D. of Pedagogy
Vanadzor State University,
Republic of Armenia
geminyan@mail.ru*

Summary

Education has always been and continues to be a key driving force for the development of society. It provides an opportunity to shape generations that are ready to respond to various life challenges and solve them. Even now, when educational systems are refining their structure and developing with the help of new technologies and approaches, the methods of assessing education and their effectiveness have become an important topic of discussion. The article presents innovative methods that contribute to the efficiency of knowledge assessment.

Relevance of the article. Modern educational systems constantly require new approaches, particularly in matters of assessing students' knowledge. The effectiveness of the future educational process primarily depends on the correct choice of methods for assessing residual knowledge, which will help lay a more solid foundation for mastering the learning material, create new opportunities for students' development, and maximize the effectiveness of educational and upbringing activities.

Scientific novelty. The scientific novelty of the article lies in the introduction of innovative methods for assessing residual knowledge. Through an analysis of some features of these methods and their applicability, new approaches are proposed that will allow for more effective and comprehensive assessment of students' knowledge, skills, and abilities.

Relevance of the topic. The topic is relevant because the effectiveness of the educational system largely depends on the continuous improvement of assessment methods. In the context of reforms in general education, the importance of assessing residual knowledge becomes a key issue. The article presents innovative approaches that are significant for the possible continuation of the development of the educational process.

Main problems. One of the main issues regarding the limited capabilities of traditional assessment methods is that these methods do not provide a full check of knowledge acquisition and its applicability. In other words, the assessment of learning outcomes does not meet the demands of the time. The introduction of new approaches and technologies requires additional development and retraining of teachers, as well as enhancing their knowledge and skills.

Purpose of the article. The purpose of the article is to investigate and analyze the state of assessing residual knowledge using innovative methods, to present their significance and possible applications, which can have a significant impact on the educational process.

Novelty lies in the following: The article presents methods and technologies that not only meet modern educational requirements but also complement traditional approaches to assessing students' knowledge.

Practical significance of the study. The study is valuable because it can guide teachers in more effectively applying innovative methods and help improve teaching and assessment processes. Such approaches contribute to improving educational outcomes while providing students with new opportunities for the correct application of residual knowledge.

Keywords: *method, assessment, teacher, school, education, learner, project, exam, questionnaire.*

ПРОБЛЕМА МЕТОДОВ ПРОВЕРКИ ОСТАТОЧНЫХ ЗНАНИЙ УЧАЩИХСЯ

Геворгян Паргев

*Доктор педагогических наук, профессор
Ванадзорский государственный университет,
Республика Армения
pargevgevorgyan007@gmail.com*

Эминян Гагик

*Кандидат педагогических наук
Ванадзорский государственный университет,
Республика Армения
geminian@mail.ru*

Аннотация

Образование всегда было и продолжает оставаться ключевым движущим фактором развития общества. Оно предоставляет возможность формировать поколения, которые готовы реагировать на различные жизненные вызовы и решать их. До сих пор, пока образовательные системы оттачивают свою структуру и развиваются с помощью новых технологий и подходов, методы оценки образования и их эффективность остаются важной темой обсуждения. В статье представлены инновационные методы, способствующие повышению эффективности проверки знаний учащихся.

Актуальность статьи. Современные образовательные системы постоянно требуют новых подходов, в частности, в вопросах проверки знаний учащихся. Эффективность будущего образовательного процесса зависит прежде всего от правильного выбора методов о проверке остаточных знаний, что поможет заложить более прочную основу для усвоения учебного материала, создать новые возможности для развития учащихся и максимально повысить эффективность учебно-воспитательной работы.

Научная новизна. Научная новизна исследования заключается во внедрении инновационных методов проверки остаточных знаний. После анализа некоторых особенностей существующих методов и способов их применения нами предлагаются новые подходы, которые позволят более эффективно и всесторонне оценивать знания, навыки и способности учащихся.

Актуальность темы. Тема актуальна, поскольку эффективность работы образовательной системы в значительной степени зависит от постоянного совершенствования методов оценивания. В контексте реформ в сфере общего образования встает вопрос о проверке остаточных знаний. В статье представлены инновационные подходы, которые имеют важное значение для развития образовательного процесса.

Основные проблемы. Одна из основных проблем, касающихся ограниченных возможностей традиционных методов оценки, заключается в том, что эти методы не обеспечивают полноценную проверку усвоения знаний и их применения. Иными словами, оценка результатов обучения не соответствует вызовам времени. Внедрение новых подходов и технологий требует дополнительного развития и переподготовки учителей, а также повышения их знаний и навыков.

Цель статьи. Цель статьи – исследовать и проанализировать состояние методов проверки остаточных знаний с помощью инновационных методов, представить их значимость и возможности их применения, что может оказать большое влияние на образовательный процесс.

Новизна заключается в следующем: представлены такие методы и технологии, которые не только соответствуют современным требованиям образования, но и дополняют традиционные подходы к оценке знаний учащихся.

Практическая значимость исследования.

Исследование имеет ценность, поскольку полученные результаты помогут учителям более эффективно применять инновационные методы при оценке знаний учащихся, а также эффективнее осуществлять процессы преподавания и оценивания.

Это способствует повышению образовательных результатов, и в то же время они предоставляют учащимся новые возможности для правильного применения остаточных знаний.

Ключевые слова: метод, оценка, учитель, школа, образование, обучающийся, проект, экзамен, анкета.

Օգտագործված գրականության ցանկ

1. Asatryan L. yev urishner, «Krtuthyan hamakargi karavarman himunqner», Yerevan, 2003, 360 ej;
2. Harutyunyan N.K. yev urishner, Mankavarzhakan bararan, «Zangak», 2018, 248 ej;
3. Grini V., Kellagan T., Provedenie natsional'noy otsenki uchebnykh dostizheniy, kniga 4, Moskva Logos 2014, 372 s.
4. Matryushkina M.D., Otsenka kachestva postdiplomnogo pedagogicheskogo obrazovaniya: Opyt i perspektivy, Sant-Peterburg 2011, 158 s.
5. Shil D., Kartrajt F., «Analiz dannyykh natsional'noy otsenki uchebnykh dostizheniy», kniga 4, Moskva Logos 2015, 336 s.
6. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760> / ditvel e 20.03.2024/
7. https://aspu.am/website/images/files/us_%20gnahatman%20hamakargi%20ardyunavetutyuan%20barelavman%20karg.pdf / ditvel e 20.03.2024/
8. https://www-evalcommunity-com.translate.google/career-center/what-is-evaluation/?_x_tr_sl=en&_x_tr_tl=hy&_x_tr_hl=hy&_x_tr_pto=sc / ditvel e 20.03.2024/
9. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=195148> / ditvel e 20.03.2024/

Получено: 05.03.2025

Received: 05.03.2025

Рассмотрено: 06.03.2025

Reviewed: 06.03.2025

Принято: 24.03.2025

Accepted: 24.03.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License

**ՈՒՍՈՒՑԻՉ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԱՆԱԶ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. ՃԱՆԱԿԱՐՀ ԴԵՊԻ ԿԱՅՈՒՆ
ՋԱՐԳԱՅՈՒՄ**

Հայրապետյան Լուսինե

*մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
lusine.hayrapetyan@ysu.am
<https://orcid.org/0000-0003-2884-7935>*

Ավետիսյան Մերի

*մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
mavetisyan@ysu.am
<https://orcid.org/0000-0001-9339-1060>*

Աբրահամյան Մերի

*Թաիրովի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի
Հայաստանի Հանրապետություն
m.abrahamyan@ysu.am
<https://orcid.org/0009-0000-8228-0584>*

Ամփոփում

Համառոտ ներածական: Էկո դպրոցները կամ կանաչ դպրոցները ոչ միայն ուղղված են շրջակա միջավայրի պահպանությանը, այլև նպաստում են այնպիսի կրթական միջավայրի ձևավորմանը, որտեղ աշակերտներն ու ուսուցիչները միասին մշակում են ռազմավարություններ, որոնք կապում են հասարակական արդարությունը, բնապահպանական խնդիրների լուծումը և տնտեսական կայունությունը: Կանաչ կրթության կարևորությունը այս դպրոցներում անխուսափելիորեն կապված է էկոլոգիական դաստիարակությանը՝ ներառելով նաև սոցիալական գործոններ, որոնք նպաստում են հասարակական հարաբերությունների բարելավմանը և փոփոխությունների առաջընթացին: Աշխատանքն ուսումնասիրում է էկո դպրոցների և կանաչ կրթության դերը կայուն զարգացման կրթության մեջ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ուսուցչական առաջնորդության նշանակությանը: Հոդվածում ներկայացվում են էկո դպրոցների հիմնական սկզբունքները, դրանց կառուցվածքային մոդելները և ազդեցությունը սովորողների բնապահպանական գիտակցության ձևավորման վրա, ուսուցիչ առաջնորդների դերը էկո դպրոցների կայացման գործում:

Բանալի բառեր: *Էկո դպրոցներ, կանաչ կրթություն, կայուն զարգացում, բնապահպանական կրթություն, ուսուցչական առաջնորդություն, համայնքային ներգրավվածություն, կրթական քաղաքականություն, սոցիալական արդարություն, էկոլոգիական գիտակցություն:*

Հոդվածը գրվել է «Առաջնորդ ուսուցիչները՝ որպես նորարարությունների հանձնառուներ ՀՀ դպրոցներում» թեմայով ԵՊՀ ներքին դրամաշնորհի շրջանակում:

Հիմնախնդիր: Գլոբալ բնապահպանական մարտահրավերների համապատկերում կրթությունը դարձել է կայուն զարգացման հիմնական գործոններից մեկը: Դպրոցները մեծ դեր ունեն սովորողների բնապահպանական գիտակցության ձևավորման գործում, իսկ «Էկո դպրոցներ» ծրագիրը դարձել է կանաչ կրթության խթանման կարևոր գործիքներից մեկը: Ներկայումս կրթական համակարգը պետք է հաշվի առնի շրջակա միջավայրի պահպանության ու սոցիալական արդարության պահանջները:

Հետազոտության նպատակ: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Էկո դպրոցների ազդեցությունը կայուն զարգացման ոլորտում, Էկո կրթության սկզբունքները, ուսուցիչների առաջնորդությունը և համայնքի ներգրավվածությունը, թե ինչպես կարող են Էկո դպրոցները և ուսուցիչները երկարաժամկետ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական արդարության առաջխաղացման վրա:

Հետազոտության խնդիրներն են.

1. ուսումնասիրել Էկո դպրոցների նշանակությունը՝ որպես կայուն զարգացման գործընթացի մաս,
2. վերլուծել Էկո կրթության կազմակերպման սկզբունքները և ուսուցիչների դերը դրանց իրականացման գործում,
3. բացահայտել ուսուցիչ-առաջնորդների դերակատարությունը բնապահպանական նախաձեռնությունների իրականացման հարցում,
4. անդրադառնալ Էկո դպրոցների աշխատանքներում համայնքների ներգրավվածության դերին,
5. պարզել, թե որ գործոնների արդյունքում են Էկո դպրոցները կարողանում երկարաժամկետ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի պահպանության ու արժեքներ կրթության կազմակերպման վրա:

Հետազոտության նորույթ: Տեսական գրականության ուսումնասիրության, ինչպես նաև սոցիոլոգիական հարցումների հիման վրա արված համահավաք արդյունքների վերլուծությունն է, որը թույլ է տալիս կանխատեսել Էկոկրթության ապագա տեսլականը ներկա զարգացումների արդյունքում:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը: Ուսուցիչ առաջնորդների դերի ուսումնասիրությունը կանաչ դպրոցների կազմակերպման և կայացման համատեքստում հիմնված է մի շարք տեսությունների և մեթոդաբանական մոտեցումների վրա: Հիմնական տեսական հիմքն է կայուն զարգացման կրթության տեսությունը՝ հիմնված ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստաթղթերի ու Ջոն Ֆիեմի, Դեյվիդ Օրչարդի, ինչպես նաև Ռոբերտ Սթեյլի աշխատանքների վրա: Այս տեսությունն ընդգծում է կրթության առանցքային դերը սոցիալ-էկոլոգիական մարտահրավերների լուծման գործում: Դրանք մի քանիսն են:

- Էկոլոգիական կրթության տեսությունը, որի հիմնադիրներից են Ֆրիթյոֆ Կապրան, Դեյվիդ Օրշերդն ու Կառլ Անդերսոնը: Տեսությունը շեշտադրում է հոլիստիկ մտածողության զարգացումը և մարդու ու բնության փոխհարաբերությունների վերախմաստավորումը:

- Փոխակերպող առաջնորդության տեսությունը, որը ձևակերպել է Ջեյմս Բրնսը և զարգացրել Բեռնարդ Բասը: Այն ընդգծում է առաջնորդի՝ որպես տեսլականի կրող ու փոփոխությունների խթանողի դերը՝ ոգեշնչելով ուսումնական համայնքը դեպի ընդհանուր նպատակի:

- Սոցիալ-մշակութային տեսությունը, որի արմատները գնում են մինչև Լև Վիգոտսկու գործնական-գործընկերային ուսուցման մոդելը: Տեսությունն ընդգծում է միջանձնային փոխազդեցության, համատեղ գործունեության և համայնքի ներգրավման կարևորությունը սովորողների ու ուսուցիչների շրջանում:

Հայտնի է, որ կանաչ դպրոցների ձևավորման գործընթացում ուսուցիչ առաջնորդները դիտվում են որպես հիմնական ուժ թե՛ բովանդակային, թե՛ կառավարչական մակարդակներում: Մասնավորապես՝ Ֆինլանդիայի, Նորվեգիայի և Կանադայի կրթական համակարգերում ուսումնասիրված է ուսուցիչ առաջնորդների դերը կայուն զարգացման ռազմավարությունների իրականացման հարցում:

Հիմնական նյութի շարադրանքը: Էկո դպրոցները կամ կանաչ դպրոցները ոչ միայն ուղղված են շրջակա միջավայրի պահպանությանը, այլև նպաստում են այնպիսի կրթական միջավայրի ձևավորմանը, որտեղ աշակերտներն ու ուսուցիչները միասին մշակում են այնպիսի ռազմավարություններ, որոնք կապում են հասարակական արդարությունը, բնապահպանական խնդիրների լուծումն ու տնտեսական կայունությունը: Կանաչ կրթության կարևորությունը այս դպրոցներում անխուսափելիորեն կապված է էկոլոգիական դաստիարակությանը՝ ներառելով նաև սոցիալական գործոններ, որոնք նպաստում են հասարակական հարաբերությունների բարելավմանն ու փոփոխությունների առաջընթացին [7]:

Սովորաբար էկո դպրոցներում կիրառվում են ինտեգրված ծրագրեր, որոնք ուշադրություն են դարձնում էներգիայի օգտագործման արդյունավետությանը, շրջակա միջավայրի պահպանությանն ու կրթության մեջ էկոլոգիական լուծումների ներդրմանը [5, էջ՝ 118-120]: Քարոլին Ռոդրիգեսի ուսումնասիրությունը հաստատում է, որ այնպիսի մոտեցումները նպաստում են սովորողների էկոլոգիական գիտակցությանը և նրանց մասնակցությանը շրջակա միջավայրի բարելավման գործընթացներում [5, էջ՝ 121-124]:

«Էկո դպրոցներ» ծրագիրը, որը նախաձեռնել է Բնապահպանական կրթության հիմնադրամը (FEE), ապահովում է դպրոցներում կայուն զարգացման սկզբունքների ներդրման կառուցվածքային մոդել: Դպրոցները մասնակցում են նման նախաձեռնություններին, ինչպիսիք են թափոնների նվազեցումը, էներգախնայողությունը և կենսաբազմազանության պաշտպանությունը՝ ձևավորե-

լով բնապահպանական պատասխանատվության մշակույթ սովորողների ու անձնակազմի շրջանում:

Ծրագրին մասնակցող դպրոցները դրսևորում են **բնապահպանական բարձր գիտակցություն, ակադեմիական առաջադիմության բարելավում և համայնքների ակտիվ մասնակցություն բնապահպանական նախաձեռնություններին** [8, էջ 122-124]:

Իրականում ուսուցիչները, հանդես գալով որպես համայնքի առաջնորդներ, ունեն կարևոր դեր՝ խթանելու աշակերտների ներգրավվածությունը ոչ միայն գիտելիքի ձեռքբերման, այլև պրակտիկ գործողություններում, որոնք ուղղված են կայուն զարգացման նպատակներին: Ուսուցչական առաջնորդությունը կարող է լինել այն շարժիչ ուժը, որն օգնում է աշակերտներին հասկանալ էկոլոգիական մարտահրավերները և գտնվել լուծումներ դրանց համար [6]:

Այսօր կարևոր է, որ ուսուցիչներն ունենան բավարար պատրաստություն՝ կիրառելու և ուսուցանելու էկոլոգիական ու կայուն զարգացման սկզբունքները ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ դպրոցից դուրս: Ուսուցիչների առաջնորդության կարողությունները սոցիալական պատասխանատվության և շրջակա միջավայրի փոփոխության ուղղությամբ մեծապես են ազդում աշակերտների վերաբերմունքի ու վարքի վրա, ինչը ձևավորում է կայուն զարգացման համար կարևոր արժեքներ [4]:

Կայուն զարգացման կրթությունը (ESD) ներառում է կրթական բոլոր այն մոտեցումները, որոնք ուղղված են փոփոխությունների ծավալմանը՝ բնապահպանական, սոցիալական և տնտեսական ասպեկտների համակցված փոփոխությունը [3]: Այս կրթական մոդելին վերաբերող մոտեցումները ցույց են տալիս, որ բոլոր մասնակիցները պետք է ներգրավված լինեն նախագծերի մշակման ու գործողությունների իրականացման մեջ, հատկապես միջավայրի, սոցիալական արդարության և տնտեսական կայունության ոլորտներում:

Կայուն զարգացման կրթության նպատակն է զարգացնել այնպիսի վարք, որն անընդհատ հարմարեցվում է փոփոխվող աշխարհին՝ արձագանքելով ժամանակի մարտահրավերներին և օգտագործելով նորարարական մոտեցումներ, ինչպես, օրինակ, էներգիայի արդյունավետ օգտագործման տեխնոլոգիաների կիրառումը, վերականգնվող էներգիայի աղբյուրները, կլիմայի փոփոխության հետ կապված գիտելիքների տարածումը և այլ միջոցառումներ [6]:

Հայաստանում կայուն զարգացման կրթությունը ձևավորվել է վերջին տասնամյակներում՝ միջազգային պահանջներին համապատասխան: 2010 թվականից հետո, հատկապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ Հայաստանը սկսեց ներդնել էկոլոգիական կրթությունը դպրոցներում, որտեղ աշակերտներին նախապատրաստում են վերանորոգվող էներգիայի կիրառման, շրջակա միջավայրի պաշտպանության և հասարակական պատասխանատվության: Նման նախաձեռնությունները ոչ միայն մղում են երեխաներին մտածել անընդհատ փոփոխվող աշխարհում,

այլև ուղղված են նրանց ակտիվ մասնակցությանը շրջակա միջավայրի պահպանության հարցերում [1, էջ 75-77]:


«Կանաչ դպրոց» և «Էկո դպրոց» ծրագրերը մշտապես ընդգրկում են տարբեր դպրոցներ, որոնք գործում են շրջակա միջավայրի պահպանման և կայուն զարգացման ուղղությամբ: Այս ծրագրերի շրջանակում դպրոցներն իրականացնում են մի շարք կարևոր նախաձեռնություններ՝ աղբի վերամշակման, ջրի խնայողության և էներգաարդյունավետության բարձրացման համար: Դպրոցները դառնում են ուսուցման կենտրոններ, որտեղ աշակերտները ոչ միայն գիտելիքներ են ստանում, այլև մասնակցում են էկոլոգիական նախագծերին: Սա, իհարկե, փոխում է նաև նրանց վարքագիծը՝ նպաստելով շրջակա միջավայրի պահպանության բարձրացմանը [2, էջ 123-124]:

Հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն: Սոցիոլոգիական հարցումների նպատակն է ուսումնասիրել ուսուցիչների առաջնորդության դերը էկո դպրոցների, կանաչ կրթության և կայուն զարգացման խթանման մեջ:

Հարց 1. Ի՞նչ նշանակություն ունի դպրոցի գտնվելու վայրը էկո դպրոց ունենալու հարցում:


Այս հարցի նպատակն է հասկանալ աշխարհագրական գործոնը և դրա ազդեցությունը էկոլոգիական կրթության վրա: Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ ամենաբարձր ներկայացվածությունն ունեցել է Տավուշի մարզը՝ 8.2 %, ինչը վկայում է մարզի ակտիվ մասնակցության մասին էկոլոգիական կրթության նախաձեռնություններին: Արմավիրի մարզը նույնպես աչքի է ընկել ակտիվությամբ՝ 6.1 %: Նույն ցուցանիշն ունի նաև Շիրակի մարզը՝ 6.1 %: Արագածոտնի, Սյունիքի մարզերից, ինչպես նաև որոշ փոքր համայնքներից հարցմանը մասնակցել է 2-ական ներկայացուցիչ (4.1 %): Սա ցույց է տալիս, որ որոշ մարզերում էկոլոգիական կրթության ոլորտում ներգրավվածությունը համեմատաբար ցածր է, կամ տվյալ մարզերում հարցման հասանելիությունը սահմանափակ է եղել: Հարցման մեջ ընդգրկված են նաև մեկական մասնակիցներ (2 %) Գեղարքունիքի ու Լոռու մարզերից: Այս տվյալները վկայում են այն մասին, որ կանաչ կրթության տարածվածությունը տարբեր մարզերում անհավասարաչափ է: Որոշ մարզերում, ինչպիսիք են Տավուշն ու Արմավիրը, նկատվում է ավելի մեծ ներգրավվածություն, մինչդեռ մյուս մարզերում անհրաժեշտ են լրացուցիչ միջոցառումներ՝ ուսուցիչների ներգրավվածությունն ավելացնելու համար: Հետագա քայլերի համար կարևոր կլինի հասկանալ, թե ինչ գործոններ են նպաստում կամ խոչընդոտում մարզային ներգրավվածությանը՝ ապահովելով էկոլոգիական կրթության ավելի լայն ընդգրկում ամբողջ երկրով մեկ:

Աշխարհագրական գործոնը և դրա ազդեցությունը էկոլոգիական կրթության վրա



Հարց 2. Ինչպե՞ս կարող է առաջնորդության փորձն ազդել կանաչ կրթության կազմակերպման ու զարգացման վրա:


Այս հարցի նպատակն է տրամադրել տեղեկություն այն մասին, թե որքան փորձառու են ուսուցիչները առաջնորդության մեջ, և ինչպես դա կարող է ազդել կանաչ կրթության զարգացման վրա: Հարցմանը մասնակցած 52 ուսուցիչների աշխատանքային փորձի բաշխվածությունը ցույց է տալիս, որ ամենամեծ խումբը (36.5 %) կազմված է 2 տարվա փորձ ունեցող ուսուցիչներից, ինչը խոսում է այն մասին, որ էկոլոգիական կրթության և առաջնորդության մեջ ներգրավված ուսուցիչների զգալի մասը համեմատաբար նոր է այս ոլորտում: Մասնակիցների 25 %-ը ունի 6 ամսվա փորձ, ինչը վկայում է, որ կան բազմաթիվ նոր ներգրավված ուսուցիչներ, որոնց համար աջակցությունը կարող է կարևոր դեր ունենալ: 23.1 %-ը նշել է, որ իրենք սկսնակ են, ինչը նշանակում է, որ ուսուցիչների մոտ մեկ քառորդը նոր է սկսում առաջնորդության իր ուղին: Մասնակիցների 15.4 %-ն ունի 1 տարվա աշխատանքային փորձ որպես առաջնորդ ուսուցիչ: Այս տվյալները կարևոր են, քանի որ դրանք մատնանշում են, որ ուսուցիչների մեծ մասը դեռ նոր է առաջնորդական դերում, և նրանց համար անհրաժեշտ կարող են լինել ուսուցողական ծրագրեր, վերապատրաստումներ ու աջակցություն՝ իրենց հմտությունները զարգացնելու համար:



Հարց 3. Ձեր դպրոցում արդյո՞ք իրականացվում են բնապահպանական ծրագրեր:

Այս հարցի նպատակն է, պարզել, թե որքանով է դպրոցն ընդգրկված էկոլոգիական ծրագրերում, և ինչ փուլում է գտնվում այս գործընթացը: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ 52 մասնակիցներից 42.3 %-ը նշել է, որ իրենց դպրոցներում իրականացվում են բնապահպանական միջոցառումներ, սակայն դրանք հիմնականում առանձին նախաձեռնություններ են: Սա վկայում է այն մասին, որ դպրոցներում բնապահպանական կրթությունը մեծապես կախված է ուսուցիչների կամ խմբակների անհատական ջանքերից: Մասնակիցների 44.2 %-ը նշել է, որ դպրոցներում նման ծրագրեր չկան, սակայն պատրաստ են նախաձեռնել դրանք և անգամ որոշ քայլեր արդեն ձեռնարկվում են դրանք ներդնելու ուղղությամբ: Սա ցույց է տալիս հետաքրքրվածության մեծ ներուժ, որը կարելի է օգտագործել կրթական ծրագրերի միջոցով: Միայն 9.6 %-ն է նշել, որ իրենց դպրոցներում կան ամբողջական բնապահպանական բակային նախաձեռնություններ: Այս ցուցանիշը խոսում է այն մասին, որ կանաչ կրթությունը դեռևս համակարգված մոտեցման կարիք ունի: Վերջապես, 3.8 %-ը նշել է, որ իրենց դպրոցում բնապահպանական կրթության որևէ նախաձեռնություն չկա, և նույնիսկ հետաքրքրվածություն չկա նման ծրագրերի նկատմամբ: Այս ստացած արդյունքները վկայում են այն մասին, որ մեծ թվով դպրոցներում էկոլոգիական ծրագրերը դեռևս գտնվում են զարգացման փուլում, և դրանց համակարգված իրականացումը կարիք ունի խթանման: Հետևաբար դպրոցներում կանաչ կրթության զարգացման համար անհրաժեշտ է ոչ միայն առանձին ուսուցիչների ջանքերը, այլ նաև ինստիտուցիոնալ աջակցություն ու կազմակերպված մոտեցում:


Դպրոցների ընդգրկվածությունը էկոլոգիական ծրագրերում



Հարց 4. Որքանո՞վ եք որպես ուսուցիչ ներգրավված էկոլոգիական կրթական ծրագրերում:

Այս հարցի նպատակն է պարզել, թե որքան ակտիվ են մասնակցում ուսուցիչները էկո դպրոցների և կանաչ կրթության նախաձեռնություններին: Հարցին, թե որքանով են ուսուցիչները ներգրավված էկոլոգիական կրթության ոլորտի ծրագրերում, 52 մասնակիցներից 67.3 %-ը նշել է, որ դեռ նոր է սկսում ներգրավվել և ձեռնարկում է քայլեր այս ուղղությամբ: Մասնակիցների 19.2 %-ը նշել է, որ մասնակցում են միջոցառումներին, սակայն ակտիվ ներգրավվածություն չունեն: Միայն 7.7 %-ն է նշել, որ դեկավարում են բնապահպանական ծրագրեր: Այս թվերը ցույց են տալիս, որ ուսուցիչների մեծամասնությունը դեռ նոր է ուսումնասիրում էկոլոգիական կրթության ոլորտը և դեռևս չի ներգրավվել ակտիվ նախաձեռնություններում: Սա կարևոր ցուցանիշ է, որը կարող է ազդել ապագա կրթական քաղաքականության մշակման վրա՝ նպաստելով ուսուցիչների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:


Ուսուցիչների ներգրավվածությունը էկոլոգիական կրթության ծրագրերում



Հարց 5. Որքանով եք կարևորում ուսուցիչների առաջնորդության դերը էկոլոգիական կրթության զարգացման համար:

Այս հարցի նպատակն է պարզել ուսուցիչների ընկալումները, թե արդյոք նրանց առաջնորդությունը կարող է խթանել էկոլոգիական կրթությունը: Հարցին, թե որքանով են ուսուցիչները կարևոր համարում ուսուցիչների առաջնորդությունը էկոլոգիական կրթության զարգացման համար, 52 մասնակիցներից 57.7 %-ը նշել է, որ դա շատ մեծ ազդեցություն ունի: 36.5 %-ը նշել է, որ որոշակի դեր ունի, բայց առաջնային չէ: Միայն 4 %-ն է նշել, որ փոքր դեր ունի կամ կասկածում է, որ էական նշանակությունը ունի: Այս արդյունքները ցույց են տալիս, որ ուսուցիչները ընդհանուր առմամբ ընդունում են իրենց դերը էկոլոգիական կրթության առաջնորդման հարցում, ինչը հնարավորություն է տալիս հետագա նախաձեռնությունների համար:

Ուսուցիչների առաջնորդության ազդեցությունը էկոլոգիական կրթության զարգացման համար



Եզրակացություն: Այսպիսով՝ էկո դպրոցները հանդես են գալիս որպես ուսումնական հաստատություններ, որոնք շրջակա միջավայրի պաշտպանությունը և սոցիալական պատասխանատվությունը համարում են իրենց հիմնական նպատակները: Կանաչ կրթությունն իր հերթին կրթական մոտեցում է, որն ինտեգրում է բնապահպանական գիտակցությունը ուսումնական գործընթացի և դպրոցի առօրյա պրակտիկայի մեջ: Այստեղ հատկանշական է նաև առաջնորդ ուսուցչի դերը ոչ միայն որպես գիտելիքի փոխանցողի, այլև որպես մենթորի ու լիդերի, որը կարողանում է ապահովել դպրոցի ուսուցչակազմի, աշակերտների, ծնողների, համայնքային ներգրավվածությունը շրջակա միջավայրի պահպանման գործում:

THE ROLE OF TEACHER LEADERS IN ORGANIZING AND CREATING ENVIRONMENTALLY FRIENDLY SCHOOLS: THE PATH TO SUSTAINABLE DEVELOPMENT

Hayrapetyan Lusine

*Ph.D. of Pedagogy, Associate Professor,
Yerevan State University, Republic of Armenia
lusine.hayrapetyan@ysu.am*

Avetisyan Meri

*Ph.D. of Pedagogy, Associate Professor
Yerevan State University, Republic of Armenia
mavetisyan@ysu.am*

Abrahamyan Meri

*Teacher of Tairov Secondary School
Republic of Armenia
m.abrahamyan@ysu.am*

Summary

Eco-schools or green schools are not only aimed at protecting the environment, but also contribute to the formation of an educational environment in which students and teachers work together to develop strategies that link social justice, solving environmental problems and economic stability. The importance of environmental education in these schools is inevitably linked to an ecological society, as well as social factors that contribute to the improvement of public relations and progress in transformation. The work explores the role of environmental schools and environmental education in sustainable development education, focusing on the importance of teacher leadership. The article presents the basic principles of eco-schools, their structural models and their impact on.

Keywords: *Eco-schools, green education, sustainable development, environmental education, teacher leadership, community participation, educational policy, social justice, environmental awareness.*

The article was written within the YSU internal grant on the topic "Teachers-leaders as adherents of innovation in Armenian schools".

РОЛЬ УЧИТЕЛЕЙ-ЛИДЕРОВ В ОРГАНИЗАЦИИ И СОЗДАНИИ ЭКОЛОГИЧЕСКИХ ШКОЛ: ПУТЬ К УСТОЙЧИВОМУ РАЗВИТИЮ

Айрапетян Лусине

*Кандидат педагогических наук, доцент
Ереванский государственный университет, Республика Армения
lusine.hayrapetyan@ysu.am*

Аветисян Мери

*Кандидат педагогических наук, доцент
Ереванский государственный университет,
Республика Армения
mavetisyan@ysu.am*

Абрамян Мери

*Учитель средней школы им. Таирова,
Республика Армения
m.abrahamyan@ysu.am*

Аннотация

Открытие эко-школ или зеленых школ не только способствует охране окружающей среды, но и способствуют формированию образовательной среды, в которой учащиеся и учителя вместе разрабатывают стратегии, связывающие общественную справедливость, решение экологических проблем и экономическую стабиль-

ность. Важность «зеленого» образования в этих школах безусловно связана с экологическим воспитанием, включая также социальные факторы, способствующие улучшению общественных отношений и прогрессу в преобразованиях. Данная работа исследует роль эко-школ и экологического образования в образовании устойчивого развития, уделяя особое внимание приоритету педагогического лидерства. В статье представлены основные принципы создания и функционирования эко-школ, их структурные модели и их влияние на формирование экологического сознания учащихся, а также рассматривается роль учителей-лидеров в становлении этих школ.

Ключевые слова: эко-школы, «зеленое» образование, устойчивое развитие, экологическое образование, педагогическое лидерство, участие сообщества, образовательная политика, социальная справедливость, экологическое сознание.

Статья написана в рамках внутреннего гранта ЕГУ на тему «Учителя-лидеры как проводники инноваций в школах РА».

Օգտագործված գրականության ցանկ

1. Gasparyan, N., Kayun zargacman krtuthyan barepokhumner Hayastanum. Hayastani krtuthyun. tesuthyun yev praktika, Yerevan, 2018, 15(3), 112-125:
2. Karapetyan, M.. Hayastanum ekologiakan krtuthyan nerarumy dprotsnerum. Krtuthyun yev ekologia, Yerevan, 2020, 9(4), 67-79:
3. Avila, V., "Sustainable Development in Schools: Educating for a Green Future". Journal of Sustainability Education, 2021, 13(2), 67-82.
4. Herrera, M., "Teacher Leadership in Green Schools: Developing Environmental Awareness". Journal of Environmental Education, 2019, 60(4), 293-308.
5. Rodrigues, C., "The Impact of Eco-Schools on Environmental Education". Environmental Education Journal, 2020, 45(1), 112-124.
6. Sachs, J., "Education for Sustainable Development: Teacher Leadership and Curriculum Integration". Educational Leadership Journal, 2017, 76(2), 35-40.
7. UNESCO, "Green Schools and Sustainable Development Goals", 2022. Retrieved from www.unesco.org
8. <https://www.fee.global/>

Получено: 30.03.2025

Received: 30.03.2025

Рассмотрено: 02.04.2025

Reviewed: 02.04.2025

Принято: 10.04.2025

Accepted: 10.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԱԴՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Պետրոսյան Հայկ

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ

Հայաստանի Հանրապետություն

hahapet@rambler.ru

<https://orcid.org/0000-0002-9850-7867>

Ամփոփում

Ժամանակակից հետազոտողների կողմից ուսումնասիրված ամենահրատապ խնդիրներից են կրթական գործընթացի թվայնացման թեմային նվիրված հարցերը:

Սույն հոդվածում ուսումնասիրվում են կրթության ոլորտում արհեստական բանականության կիրառման հնարավորությունները, վերլուծվում են ուսումնական գործընթացում արհեստական բանականության ներդրման մարտահրավերները և դրա ներուժը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կրթության ոլորտում արհեստական բանականության զարգացման հեռանկարներին ու ուսումնառողների, դասավանդողների և ուսումնական գործընթացի այլ մասնակիցների վրա դրա ազդեցությանը: Վերլուծության հիման վրա կարելի է պնդել, որ արհեստական բանականության կիրառումը կրթության մեջ մեծ ներուժ ունի բարելավելու ուսուցման արդյունքները և ուսումնառողների ձեռքբերումները, սակայն այս տեխնոլոգիայի հաջող ինտեգրումը պահանջում է մի շարք մարտահրավերների լուծում: Միաժամանակ ուսումնասիրվում է դասավանդողների կողմից արհեստական բանականությունը ուսուցման գործընթացում կիրառելու և ինքնազարգացման նպատակով կրթական գործընթացում ներդնելու հնարավորությունը:

Դասավանդողի կողմից արհեստական բանականության օգտագործման էական առավելությունն աշխատանքի վրա ծախսվող ժամանակի կրճատումն ու աշխատանքի արդյունավետության բարձրացումն է: Ուսումնառողների կողմից ուսումնական նյութի յուրացման տվյալների հիման վրա արհեստական բանականության համակարգերը կարող են անհատականացված առաջարկներ ներկայացնել դասավանդման գործընթացի արդյունավետության և ուսուցման որակի զարգացման համար: Տվյալների մեծ ծավալի ավտոմատ վերլուծությունը, որն իրականացվում է արհեստական բանականության միջոցով, դասավանդողին հնարավորություն է ընձեռում արդիականացնել, կատարելագործել և զարգացնել տեղեկույթը:

Արհեստական բանականությանը կարող է նաև օգնել ուսումնական հաստատության կառավարիչներին ստեղծել ժամանակացույցներ և բացահայտել դասավանդման ամենաարդյունավետ ռեսուրսները: Փորձարարական ուսումնասիրությամբ փաստվել է ուսուցման գործունեության մեջ արհեստական բանականության կիրառման արդյունավետության վարկածը, սակայն դասավանդողը պետք է ունենա բավականաչափ լայն աշխարհայացք, պատրաստ լինի բացահայտել անճշտությունները, ուղղել սխալները և չափաբաժնել ուսումնական բովանդակությունը:

Բանալի բառեր՝ ուսումնական գործընթաց, ինքնագարգացում, արհեստական բանականություն, մանկավարժական մասնագիտական գործունեություն, ուսումնական գործունեություն, թվային գործիքներ:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել արհեստական բանականության կիրառման հնարավորություններն ու հեռանկարները դասավանդողների մասնագիտական հմտությունների կատարելագործման բնագավառում:

Հետազոտության արդիականությունը: Արհեստական բանականության կիրառությունը կրթական գործունեության մեջ դառնում է ժամանակակից մանկավարժական գործընթացի կարևոր և անբաժանելի մաս: Արհեստական բանականությունը դասավանդողներին հնարավորություն է ընձեռում ինքնագարգացման և ինքնակատարելագործման, ուսուցման գործընթացում ինքնադրսևորվելու համար: Արհեստական բանականության կիրառմանը տիրապետող դասավանդողները կարող են ուսուցման գործընթացը դարձնել ավելի արդյունավետ՝ լավարկելով իրենց մասնագիտական մանկավարժական գործունեությունը:

Հետազոտության նորույթը: Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ եզրահանգել ենք, որ դասավանդողի կողմից արհեստական բանականության կիրառության կարևոր առավելությունը հետազոտությունների, նյութերի և մեթոդների տվյալների բազայի հասանելիությունն է: Արհեստական բանականության շնորհիվ դասավանդողը կարող է ձեռք բերել կրթության ոլորտի ամենաթարմ տեղեկություն ու ծանոթանալ ուսուցման գործընթացի զարգացման միտումներին, ինչը դասավանդողին անընդհատ ինքնակատարելագործման հնարավորություն է ընձեռում: Նոր գիտելիքների հասանելիությունը դասավանդողներին օգնում է ավելի արդյունավետ պլանավորել ու իրականացնել ուսումնական պարապմունքները և ստեղծել խթանող ուսումնական միջավայր:

Հետազոտության նշանակությունը: Հոդվածը կարող է հետաքրքրել դասավանդողներին, ուսումնական գործընթացի կազմակերպիչներին կրթության բնագավառում արհեստական բանականության համակարգերի կիրառման կարևորությունը հասկանալու համար՝ հաշվի առնելով, որ արհեստական բանականության օգնությամբ հավաքագրվում և վերլուծվում են ուսումնական գործընթացի արդյունավետության վերաբերյալ տվյալներն ու կանխատեսվում ուսուցման հետագա արդյունքները:

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին: Դասավանդողի ինքնագարգացման մեջ արհեստական բանականության կիրառման առավելությունը անհատականացված հետադարձ կապի և տվյալների վերլուծություն ստանալու հնարավորությունն է: Արհեստական բանականությունը կարող է արժևորել ուսումնառողների ուսումնական գործունեության արդյունքները, կատարված առաջադրանքները, բացահայտել խնդրահարույց ոլորտները և դասավանդողին ներկայացնել առաջարկություններ աշխատանքի

քի արդյունավետության ապահովման մասին, ինչը դասավանդողին թույլ կտա յուրաքանչյուր ուսումնառողի համար կառուցել անհատական կրթական հետազիծ և հասնել ավելի նշանակալի արդյունքների:

Դասավանդման մեջ արհեստական բանականության օգտագործման երրորդ առավելությունը սովորական առաջադրանքների ավտոմատացումն է՝ թեստերի ստուգում, հաշվետվությունների կազմում և տվյալների վերլուծություն, որի հետևանքով առաջացած ազատ ժամանակահատվածը դասավանդողը կարող է օգտագործել մասնագիտական հմտությունների կատարելագործման համար: Բացի այդ՝ ավտոմատացումը օգնում է դասավանդողներին ավելի արդյունավետ օգտագործել ուսումնական ռեսուրսները և կենտրոնանալ կրթական գործընթացի ավելի կարևոր կողմերի վրա:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը գործունեությանին մոտեցումն է, որը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու արհեստական բանականության կիրառումը կրթական, դաստիարակչական և հետազոտական գործունեության մեջ (Լ. Ս. Վիգոտսկի, Պ. Յա. Գալպերին, Ա. Ն. Լեոնտև և այլք) և անձնակողմնորոշիչ մոտեցումը, որը արհեստական բանականության օգտագործման համատեքստում ուղեցույց է սահմանում դասավանդողների ինքնագարգացման համար (Վ. Վ. Սերիկով, Վ. Վ. Սոխրանով, Ի. Ս. Յակիմանսկայա և այլք):

Հետազոտության մեթոդները՝ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ գրականության վերլուծության, սոցիոլոգիական հարցման, վիճակագրական մշակման:

Հիմնական մաս

Վերջին ժամանակներում առավել տարածված են ուսուցման այն մեթոդները, որոնց միջոցով դասավանդողները մոտիվացնում են սովորողներին՝ բարելավելով դասավանդման գործընթացը: Հիբրիդային ուսուցման ներդրումն ու թվային տեխնոլոգիաների ակտիվ կիրառությունը նպաստում են ուսուցման գործընթացի փոփոխություններին, ներառյալ թվային գործիքների ակտուալացումը դասավանդման մեթոդների կատարելագործման գործում [1]:

Կրթության ոլորտում արհեստական բանականության նորարարական զարգացումների ներդրումը կրթության կարևոր և զարգացող տեխնոլոգիա է, որը պետք է հանգեցնի կրթության որակի բարելավմանը [2]:

Արհեստական բանականության ներդրումը կրթության այն առանցքային ոլորտներից է, որտեղ ցուցադրվում են արհեստական բանականության հնարավորությունները և կիրառվում արհեստական բանականության ձեռքբերումները:

Արհեստական բանականությունը ներկայումս դառնում է կարևոր թվային գործիք դասավանդողների մասնագիտական գործունեության բարելավման ու ինքնագարգացման համար: Ուշագրավ է դրա կիրառումը դասավանդողի մասնագիտական ինքնագարգացման համատեքստում, որը կարելի է համարել որպես գիտակցված գործընթաց՝ ուղղված սոցիալական պահանջներին և անհա-

տական զարգացման ծրագրին համապատասխան մանկավարժական որակներ ի բարելավմանն ու զարգացմանը [3]:

Սույն հոդվածում դիտարկել ենք արհեստական բանականության հնարավորությունները կրթության ոլորտում և անցկացրել ներդրումային ցանցերի վերլուծություն, որոնք արդեն հաջողությամբ օգտագործվում են ուսուցման գործընթացում:

- Ուսումնական աշխատանքի ծրագրի արդիականացում

Դասավանդողը կարող է արդիականացնել իր աշխատանքային ծրագիրը՝ հաշվի առնելով ժամանակակից իրողությունների փոփոխումը «DreamBox Learning» ներդրումային ցանցի միջոցով:

- Դասավանդողի ինքնակատարելագործում

Արհեստական բանականությունը օգնում է զարգացնել դասավանդողների մասնագիտական կարողություններն ու հմտությունները, ինչպես ստանալ արագ արձագանքներ իրենց աշխատանքի վերաբերյալ: Այստեղ կարելի է առանձնացնել «Edthena» հարթակը, որն ի վիճակի է վերլուծել դասերի տեսագրությունները և ներկայացնել առաջարկություններ ուսումնական գործընթացի բարելավման համար:

- Անհատականացված ուսուցում

Արհեստական բանականության միջոցով հնարավոր է ստեղծել կրթական ծրագրեր, որոնք կբավարարեն յուրաքանչյուր ուսումնառողի անհատական կրթական պահանջմունքները: Նման ծրագրի օրինակ է «Tutor» Tree ծրագիրը, որն օգտագործում է ուսումնական գործընթացի տվյալները՝ առաջադրանքներն անհատականացնելու ու ուսումնական նյութերը յուրաքանչյուր ուսումնառողի գիտելիքների մակարդակին և ուսուցման ռճին համապատասխանեցնելու համար [4]:

- Չափավոր օգնություն յուրաքանչյուր ուսումնառողի

Այս դեպքում ներդրումային ցանցերը կարողանում են դասավանդողի փոխարեն օգնություն ցուցաբերել յուրաքանչյուր ուսումնառողի վիրտուալ տարածքում՝ պատասխանելով հարցերին: Օրինակ՝ «IBM Watson»-ը կարող է հարմարեցնել իր պատասխանները սովորողների ըմբռնման մակարդակին և կարիքներին՝ տրամադրելով անհատականացված օգնություն:

- Գիտելիքների վերահսկման ավտոմատացում

Արհեստական բանականությունն ի վիճակի է ստուգելու տարբեր թեստեր, առաջադրանքներ և անգամ ուսումնառողի գիտելիքները: Ուսումնառողների ուսումնական աշխատանքների ավտոմատ ստուգումն ու արագ գնահատումը գործընթացն ավելի անկախ են դարձնում: Այս դեպքում առաջարկվում է Turnitin համակարգը, որը պատրաստ է բացահայտել տեքստի յուրահատկությունը և հայտնաբերել կեղծման դեպքեր:

- Միավների և ուսուցման արդյունքների կանխատեսում

Արհեստական բանականության օգնությամբ «Brightbetes» հարթակի միջոցով հնարավոր է կանխատեսել ուսումնառողի հնարավոր սխալները, ինչպես

նաև ուսումնառության արդյունքները, բացահայտել հնարավոր խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Արհեստական բանականության կիրառումը նպաստում է դասավանդողի ինքնակատարելագործմանը, թույլ է տալիս թերահավատորեն ընդունել առաջարկվող լուծման ճշտությունը, վերստուգել ընտրված տարբերակներն առաջադեմ նեյրոնային ցանցերի կիրառմամբ: Դասավանդողը կարող է մշտապես թարմացնել իր գիտելիքները, մասնագիտական մանկավարժական կարողություններն ու հմտությունները, որոնք կարող են ապահովել ուսուցման գործընթացի արդյունավետությունը:

Դասավանդողների վերաբերմունքն ուսուցման գործընթացում արհեստական բանականության ներդրման և դասավանդողների ինքնագարգացման ոլորտում կիրառման հնարավոր հեռանկարների վերաբերյալ իրականացվել է սոցիոլոգիական հարցում տարբեր ուսումնական հաստատություններում դասավանդողների շրջանում:

Նշենք, որ մեր Հանրապետությունում ուսուցման գործընթացում քիչ թվով դասավանդողներ են կիրառում արհեստական բանականությունը: Հարցմանը մասնակցել է 20 դասավանդող:

Այն հարցին, թե «Ծանոթ եք արհեստական բանականության ոլորտում տեղի ունեցող զարգացումներին, 16 դասավանդող պատասխանել է՝ այո:

«Ի՞նչ եք կարծում՝ արհեստական բանականության ներդրումն ուսուցման գործընթաց դրական ազդեցություն կունենա ակադեմիական առաջադիմության վրա», և «Կցանկանա՞ք արհեստական բանականությունը կիրառել ձեր ուսումնական հաստատությունում» հարցերին 19 հարցվող պատասխանել է՝ այո:

Հարցին՝ «Ի՞նչ եք կարծում՝ արհեստական բանականությունը կկարողանա օբյեկտիվորեն գնահատել ձեր ուսումնառողների ուսումնական հաջողությունները և լուծել առկա խնդիրները», 16 հարցվող պատասխանել է՝ այո, 4-ը՝ ոչ: Հարցվողների պատասխանները փաստեցին դասավանդողների դրական վերաբերմունքը արհեստական բանականության տարրերն ուսուցման գործընթացում ներդնելու անհրաժեշտությունը:

Դասավանդողների պատասխաններն այն հարցին, թե «Ի՞նչ եք կարծում՝ արհեստական բանականությունն ուսուցման նոր մոտեցումների հարցում կարող է Ձեզ օգտակար ու հետաքրքիր լինել», բոլոր հարցվածները պատասխանել են՝ այո:

Կարելի է եզրակացնել, որ հարցված դասավանդողները ծանոթ են արհեստական բանականության ժամանակակից ծառայություններին, դրա առանձնահատկություններին, ուսուցման գործընթացում դրա արդյունավետությանը և պատրաստակամ են օգտագործել իրենց մասնագիտական գործունեության մեջ: Հարցվածների մեծ մասը գիտակցում է արհեստական բանականության կիրառման կարևորությունը մասնագիտական ինքնագարգացման, առաջարկ-

վող լուծումների վերլուծության և ուղղման համատեքստում արհեստական բանականության կիրառման նոր մոտեցումներ գտնելու համար:

Ժամանակակից կրթական ինտերակտիվ հարթակները հարմարեցված են ուսումնառողների պահանջմունքներին, ինչը ծրագրին օգնում է բացահայտել ուսումնառողի խնդիրներն ու դժվարությունները և առաջարկել նրանց կարողություններն ու հմտությունները կատարելագործելու անհրաժեշտ նյութեր: Ուսումնական հաստատություններում կրթական գործընթացում առկա է արհեստական բանականության լայն ներգրավվածության խնդիր: Արհեստական բանականությունը մշակում է դասընթացի կամ առարկայի նյութերը, ինքնուրույն ստեղծում ուսումնական պլաններ, ինչն առավելություն է ուսումնական հաստատությունների և դասավանդողների համար [5]:

Վերոնշյալ հարթակներն օգտագործում են արհեստական բանականությունը տարբեր ձևերով՝ կախված կրթական միջավայրում սահմանված տարբեր նպատակներից ու խնդիրներից, սակայն նման հավելվածների և հարթակների կիրառումն օգնում է ուսուցման գործընթացը դարձնել ինտերակտիվ, հետաքրքիր և ամենակարևորը՝ արդյունավետ:

Արհեստական բանականության կիրառումն ուսուցման գործընթացում արդյունավետ է և ունի զարգացման հեռանկարներ.

- արհեստական բանականությունը թույլ է տալիս ուսումնառողին ինքնուրույն ընտրել ուսուցման ձևը՝ ելնելով իր պահանջմունքներից, կարողություններից ու ուսուցման գործընթացի ծախսերից,

- արհեստական բանականությունն ավելի արդյունավետ է յուրացրած գիտելիքների արագ և արդյունավետ ստուգման հարցում, ինչը գնահատման գործընթացը դարձնում է դյուրին,

- արհեստական բանականության օգնությամբ ուսումնառողը հնարավորություն ունի զբաղվելու ինքնակրթությամբ, այլ ոչ թե գիտելիքը մարդու կողմից մարդուն փոխանցելու միջոցով,

- արհեստական բանականությունը հնարավորություն է տալիս կիրառելու հանձնարարությունների կատարման, թեստավորման գործիքները և քննությունների ժամանակ վերահսկելու ուսումնառողների ակադեմիական ազնվությունը:

Հարկ է նշել, որ ուսուցման գործընթացում արհեստական բանականության ներդրումը պարունակում է ռիսկեր: Արդեն այս փուլում հայտնի են մարդկային գործունեության ոլորտներում արհեստական բանականության ներդրման մի քանի սպառնալիքներ: Առաջին հերթին, դա վերաբերելու է մարդկանց զբաղվածությանը: Արհեստական բանականության տեխնոլոգիաների օգտագործումը կրթության մեջ կպահանջի ավելի քիչ դասավանդողներ, ինչը կհանգեցնի ավելի քիչ աշխատատեղերի առկայության: Այդուամենայնիվ, որոշ փորձագետներ (Սթիվեն Հոփինգ, Իլոն Մասկ) ենթադրել են, որ արհեստական բանականությամբ մեքենաները կարող են ի վերջո ձեռք բերել իրական բանականություն և

շրջվել մարդկության դեմ, եթե դրանց ծրագրավորումը խաթարվի կամ սխալ օգտագործվի [6]:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ արհեստական բանականությունը, ինչպես տեխնոլոգիայի բոլոր նորամուծությունները, ունի իր առավելություններն ու թերությունները, սակայն ենթադրվում է, որ արհեստական բանականության կիրառությունն ուսուցման գործընթացում կարող է առավել ակտիվանալ, քանի որ զարգանում են տեխնոլոգիաները: Այդ տեխնոլոգիաները կատարելագործվում են հասարակության պահանջներին համապատասխան և ուղղված են ուսուցման գործընթացի արդյունավետությանը «դասավանդող-ուսումնառող» շղթայով: Դասավանդողի համար դժվար է բավարարել մեծ թվով ժամանակակից ուսումնառողներ ունեցող լսարանի պահանջները: Ժամանակակից իրողություններում արհեստական բանականության վրա հիմնված հավելվածների ներմուծումն ուսուցման գործընթաց այլևս երևակայություն չէ: Այս մոտեցումը լուծում է կրթության ցածր որակի, կրթության անմատչելիության խնդիրը, ինչպես նաև նվազագույնի է հասցնում առկա կրթության համակարգի բացերն ու թերությունները:

APPLICATION OF ARTIFICIAL INTELLIGENCE IN THE PROCESS OF LEARNING AND SELF-DEVELOPMENT OF A TEACHER

Petrosyan Hayk

*Doctor of Pedagogical Sciences, Professor
International Scientific Educational Center of the National Academy of Sciences,
Republic of Armenia
hahapet@rambler.ru*

Summary

One of the most pressing issues studied by modern researchers is the challenge of integrating digital technologies into the educational process.

This article explores the potential uses of artificial intelligence in education, analyzing the opportunities and challenges that educational institutions face when integrating AI into teaching and learning processes. Special focus is given to the future prospects of AI in education and its impact on students, teachers, and other stakeholders. Based on the analysis, it is clear that AI has significant potential to enhance learning outcomes and student performance. However, successful integration of this technology will require addressing several key challenges. Additionally, the article examines how teachers can use AI for both educational purposes and personal development, as well as the potential for investment in the educational process.

A significant advantage of using artificial intelligence in education is the reduction of time spent on tasks, leading to increased efficiency for teachers. By analyzing data on students' assimilation of educational material, AI systems can provide personalized recommendations that enhance both the efficiency of the educational process and the quality of education. Additionally, AI's ability to automatically analyze large datasets allows teachers to continuously update, improve, and develop instructional content.

Artificial intelligence can also help administrators of educational institutions create schedules and determine the most effective educational resources.

Experimental studies have proven the hypothesis of the effectiveness of using artificial intelligence in educational activities, but the teacher must have a sufficiently broad outlook, be ready to identify inaccuracies, correct errors, and distribute educational content.

Keywords: *educational process, self-development, artificial intelligence, pedagogical professional activity, educational activity, digital tools.*

ПРИМЕНЕНИЕ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ И САМОРАЗВИТИЯ ПРЕПОДАВАТЕЛЯ

Петросян Гайк

*Доктор педагогических наук, профессор,
Международный научно образовательный центр НАН РА,
Республика Армения
hahapet@rambler.ru*

Аннотация

Одной из наиболее актуальных тем, изучаемых современными исследователями, является проблема внедрения цифровых технологий в образовательный процесс.

В данной статье рассматриваются возможности применения искусственного интеллекта в образовании, анализируются его потенциал и тактика использования, с которыми сталкиваются образовательные учреждения при внедрении искусственного интеллекта в образовательные процессы. Особое внимание уделено перспективам развития искусственного интеллекта в сфере образования и его влиянию на обучающихся, преподавателей и других участников образовательного процесса. На основе проведенного нами анализа можно утверждать, что использование искусственного интеллекта в образовании имеет большой потенциал для улучшения результатов обучения и успеваемости учащихся, но для успешной интеграции этой технологии необходимо решение ряда вызовов. Одновременно нами исследуется использование преподавателями искусственного интеллекта в учебном процессе и возможность его внедрения в образовательный процесс с целью саморазвития.

Существенным преимуществом использования искусственного интеллекта преподавателем является сокращение времени, затрачиваемого на работу, и повышение эффективности труда. На основе данных об усвоении учащимися учебного материала системы искусственного интеллекта могут давать персонализированные рекомендации по повышению эффективности учебного процесса и качества обучения. Автоматический анализ больших объемов данных, осуществляемый с помощью искусственного интеллекта, позволяет преподавателю актуализировать, улучшать и развивать информацию.

Искусственный интеллект также может помочь администраторам образовательных учреждений составлять расписание и определять наиболее эффективные учебные ресурсы. Экспериментальные исследования доказали эффективность использования искусственного интеллекта в учебной деятельности, однако, преподаватель должен иметь достаточно широкий кругозор, быть готовым самостоятельно, отдельно от искусственного интеллекта выявлять неточности, исправлять ошибки и распределять образовательный контент.

Ключевые слова: *образовательный процесс, саморазвитие, искусственный интеллект, профессиональная педагогическая деятельность, образовательная деятельность, цифровые инструменты.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Luchsheva L.V., Sotsial'nye problemy ispol'zovaniya iskusstvennogo intellekta v vysshem obrazovanii: zadachi i perspektivy (L.V. Luchsheva), Nauchnyy Tatarstan. 2020, № 4, s. 84–89. — URL: <https://tatarica.org/application/files/7716/4318/5531/Luchsheva.pdf>.

2. Serikov V.V., Tsarapkina Yu.M., Osobennosti formirovaniya kompetentnosti budushchikh pedagogov professional'nogo obucheniya agrarnogo profilya v usloviyakh tsifrovoy transformatsii obrazovaniya, Vestnik Voronezhskogo gosudarstvennogo universiteta. Seriya: Problemy vysshego obrazovaniya, 2022. № 1, s. 77–81. — URL:

<https://www.elibrary.ru/item.asp?id=48365259>.

3. Tsarapkina Yu.M., Gadzhimetova B.D., Ispol'zovanie tsifrovyykh tekhnologiy v innovatsionnoy obrazovatel'noy srede (na primere mobil'nogo prilozheniya Lecture Racing), Vestnik Rossiyskogo universiteta družby narodov. Seriya: Informatizatsiya obrazovaniya. 2020. t. 17, № 1, s. 63–71. — URL https://www.elibrary.ru/download/elibrary_42834559_99966714.pdf.

4. Uvarov A., Geibl E., Dvoretzkaya I., Trudnosti i perspektivy tsifrovoy transformatsii obrazovaniya, pod red. Uvarova A.Yu., Frumina I.D., M., GU-VShE, 2019, 343 s. DOI: 10.17323/978-5-7598-1990 — URL: <https://www.elibrary.ru/item.asp?edn=anygho>.

5. Chulyukov V.A., Dubov V.M., 2020. Iskusstvennyy intellekt i budushcheye obrazovaniya. Sovremennoe pedagogicheskoe obrazovaniye, 3: 27–31. — URL.

<https://cyberleninka.ru/article/n/iskusstvennyy-intellekt-i-budushee-obrazovaniya/viewer>

6. Preimushchestva i riski iskusstvennogo intellekta [Elektronnyy resurs] //

<https://msuee.ru/2020/02/26/preimushchestva-i-riski-iskusstvennogo-intellekta/#:~:text=-Минусы%20искусственного%20интеллекта%3A%201.%20Уменьшение, выполнения%20работы%20требуется%20меньше%20людей.>

Получено: 04.02.2025

Received: 04.02.2025

Рассмотрено: 04.02.2025

Reviewed: 04.02.2025

Принято: 05.02.2025

Accepted: 05.02.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐԻ («ԴԵԴԵ ՔՈՐՔՈՒԹ» ԵՎ «ՔՅՈՌՕՂԼԻ»)
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՊՀ
ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆՈՒՄ**

Ռամազյան Սամվել

բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ

Երևանի պետական համալսարան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հայաստանի Հանրապետություն

samvel.ramazyan@ysu.am

<https://orcid.org/0009-0007-1782-4777>

Ամփոփում

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում, Թյուրքագիտության ամբիոնի հիմնադրումից սկսած, որոշակի տեղ է հատկացվել թյուրքական էպոսների ուսումնասիրությանն ու ուսուցմանը, ինչն իրականացվել է թյուրքական գրականության դասավանդման շրջանակում:

Որևէ ազգային էպոս վստահաբար կարող է կազմել գրականության հիմքը: Թյուրքական էպոսներն այդ տեսանկյունից բավական մեծ ազդեցություն են ունեցել թյուրքախոս ժողովուրդների գրականության հիմնավորման գործընթացում՝ հաշվի առնելով բանավոր խոսքի ու մշակույթի բազմադարյան ավանդականությունը: Միաժամանակ դրանք տակավին շարունակում են պայմանավորել ազգային մշակույթային ու ինքնության ձևավորման գործընթացը որոշ թյուրքախոս ժողովուրդների շրջանում՝ ընդամին, հանդիսանալով յուրօրինակ ազգային խորհրդանիշներ: Մասնավորապես, «Դեդե Քորքուլը», լինելով թյուրքական տարբեր էթնիկ խմբերի ազգածին էպոսը, մինչ այժմ էլ կարևորագույն դեր է խաղում համաթյուրքականության գաղափարախոսության հանրայնացման առումով, բնականաբար, երբեմն նաև զանազան ազգային տարբերակների արհեստական համահարթեցման ու նույնացման ճանապարհով: Ավելի ուշ ժամանակահատվածում ստեղծված ու ձևավորված «Քյոռոզլի» էպոսն առավել մեծ թվով ազգային տարբերակների առկայության հաշվառմամբ այլևս չունի այն խորհրդանշական համաթյուրքական նշանակությունը, որը վերագրվում է «Դեդե Քորքուլին»: Սակայն որոշ դեպքերում այն իր հերթին ևս պարփակում է ազգային ինքնաճանաչողության տարրեր, իսկ երբեմն՝ նաև դիտարկվում միևնույն հարթությամբ:

Վերոհիշյալ տեսակետներից, մասնավորապես, հայկական թյուրքագիտության համար թյուրքական ոչ միայն նշված, այլև մյուս էպոսների ուսումնասիրությունն ու համապատասխան մեթոդաբանությամբ դասավանդման արմատավորումը ներկայացնում են անհրաժեշտություն, ինչը, վստահաբար, կարող է ունենալ գիտական ու գործնական-կիրառական նշանակություն:

Հոդվածը պատրաստվել է վերջին տարիներին թեմայով իրականացված մեր հետազոտությունների արդյունքների ամփոփման, ընթացքում կատարված եզրահանգումների ու դիտարկումների հիմքով: Թեմայի առնչությամբ նկատելի խնդիրներից է դրա ներկայացումն առանց հայկական միջավայրի և հայկական վիպական ենթաշերտի վերհանման, ինչը բնորոշ է արտերկրի թյուրքագիտական կենտրոններին, սակայն

մեր դեպքում առկա առանձնահատկությունների և արդեն իսկ արձանագրված արդյունքների հաշվառմամբ միննույն մոտեցման կիրառումն արդարացված ու արդյունավետ չէ: Տվյալ համատեքստում կարևորվում է թյուրքական լեզուների, ինչպես նաև հայ բանահյուսության առնչությամբ որոշակի գիտելիքների իմացությունը: Ըստ այդմ՝ առարկան վստահաբար կարող է ունենալ միջգիտակարգային նշանակություն:

Թեմայի առանձնահատկությունների և արձանագրված խնդիրների վերհանմամբ ներկայացվում են դասընթացի դասավանդման համար անհրաժեշտ մեթոդական մոտեցումները: Առարկայի դասավանդման վերջնարդյունքում թյուրքագետ ուսանողը կարող է առավել ամրապնդել այնպիսի ունակություններ, ինչպիսիք են թեմայի խորքային իմացությունը, տարաբնույթ տվյալների համակողմանի վերլուծությունն ու համադրումը:

Բանալի բառեր՝ թյուրքական էպոս, թյուրքագիտություն, «Դեդե Քորքուր», «Քյոռոզլի», Հայկական լեռնաշխարհ, դասավանդում, առանձնահատկություններ և մեթոդներ:

Արդիականությունը: Հոդվածի արդիականությունը պայմանավորված է դասընթացի մշակմամբ ու ձևավորմամբ, ինչը հնարավորություն է ընձեռում արդի ժամանակահատվածում արմատավորել թյուրքական էպոսների դասավանդումն ընդհանուր թյուրքագիտության շրջանակում:

Նպատակը: Հոդվածը նպատակ է հետապնդում ներկայացնելու թյուրքական էպոսների, դասավանդման առանձնահատկությունների ու մեթոդների վերլուծությունը՝ հիմնվելով վերջին շրջանում իրականացված հետազոտությունների արդյունքների վրա:

Նորույթը: Հոդվածը դիտարկելի է որպես գիտական նորույթ, քանի որ հետազոտական նման բնույթի աշխատանք հայաստանյան իրականության մեջ մինչ այժմ չի արձանագրվել: Ըստ այդմ՝ առաջին անգամ փորձ է արվել ներկայացնելու և դասակարգելու դասընթացի առանձնահատկություններն ու մեթոդաբանությունը: Վերհանվել են այն կարևոր առանձնահատկությունները, որոնք առավել արդյունավետ կարող են դարձնել թեմայի դասավանդումը ԵՊՀ-ում և, ընդհանրապես, հայկական միջավայրում, ինչպես նաև թեմային հայ թյուրքագիտության համապարփակ մոտեցումների ձևավորումը հետագա ժամանակահատվածում իրականացվելիք ուսումնասիրությունների ու արտաքին լսարանում դրանց հանրայնացման աշխատանքների հաշվառմամբ:

Հիմնախնդրին առնչվող հետազոտությունների համառոտ նկարագիրը: «Դեդե Քորքուր» էպոսի թեմայով աղբյուրագիտական առանձնակի նշանակություն ունեն ռուսական ու խորհրդային թյուրքագիտության դպրոցի նշանավոր ներկայացուցիչների, մասնավորապես, Վ. Վ. Բարտոլդի, Վ. Մ. Ժիրմունսկու և Ա. Ն. Կոնոնովի, ինչպես նաև իտալացի թյուրքագետ Է. Ռոսսիի հետազոտությունները: Կարևոր նշանակություն ունեն նաև Վ.Ա. Գորդլևսկու անդրադարձներն ընդհանուր թեմային, որոնք առավելապես ընդգծում են վիպական ստեղծագործության ձևավորման միջավայրի և ժամանակահատվածի հարցը:

«Քյոռոզլի» էպոսի առնչությամբ աղբյուրագիտական կարևոր արժեք ունեն Ա. Խոճկոյի, Ի. Շոպենի, Ա. Ֆոն Հաքստհաուզենի, Ժ. Դյումեզիլի, Բ. Կ. Կար-

րինի, Փ. Ն. Բորաթավի և Խ. Հ. Կորոզլու հետազոտությունները, Էպոսի զանազան ազգային տարբերակների առնչությամբ օտարազգի մասնագետների իրականացրած ուսումնասիրությունները: Հայկական տարբերակի առնչությամբ կարևորվում է բանահավաք Գ. Թարվերդյանի 1912 թ. գրառած ամբողջական շարքը, այն է՝ Խոյ-Սալմաստի (Ուրմիայի) բարբառով 1941 թ. հրատարակված տարբերակը («Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն»), Խ. Մամուլեյանի ծավալուն վերլուծությամբ [4, էջ 5-23]: Այն իրական ժողովրդական ստեղծագործության նմուշ է՝ անկրկնելի բարբառային լեզվով, որն իր հերթին ստեղծում է յուրահատուկ ազգային միջավայր: Անկախ մյուս ազգային, հատկապես, Էպոսի արևմտյան խմբի տարբերակների հետ ակնառու բովանդակային ընդհանրություններից՝ տարբերակն իր հիմնական բաղադրիչներով, իրավամբ, կարելի է համարել հայ բանահյուսության եզակի ստեղծագործություն: Հայկական պատումների առանձնակի վերլուծությամբ ժամանակին զբաղվել է նաև բանասեր Հ. Հարությունյանը:

Թյուրքական երկու Էպոսների պարագային կարևորվում են հայ բանագետների և թյուրքագետների առանձին անդրադարձները թեմային (Հ. Պերպերյան, Ս. Ահյան, Ա. Պետրոսյան, Ա. Սաֆարյան, Ռ. Մելքոնյան ևն):

ԵՊՀ-ում, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ բոլոր այն բուհերում, որտեղ դասավանդվել են թյուրքագիտական առարկաներ, թյուրքական Էպոսների առումով, դեռևս 1970-ական թվականներից սկսած, կիրառվել է Մոսկվայի պետական համալսարանի հրատարակած «Արևելքի գրականությունը միջին դարերում» դասագրքի 2-րդ հատորը՝ թյուրքագետ-գրականագետ Ի. Վ. Բորովինայի հեղինակած թուրք գրականության բաժնով: Ներկայումս թյուրքական Էպոսների դասավանդում իրականացվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի բակալավրիատի 3-4-րդ կիսամյակներում «Թուրք գրականության և մշակույթի պատմություն. 13-18-րդ դդ.» առարկայի շրջանակում (ժամաքանակը՝ 60 ժամ):

Հիմնական նյութի շարադրանքը: Թյուրքական Էպոսներն անցել են ձևավորման բավական երկար ժամանակահատված, ընդ որում՝ տարբեր աշխարհագրական միջավայրերում:

«Դեդե Քորքուր» («Քիթաբի Դեդեմ Քորքուր» կամ «Քորքուր պապիս գիրքը») Էպոսն սկսել է ձևավորվել Կենտրոնական Ասիայում, ըստ այդմ՝ դրա առաջին 4 գլուխներում գործողություններն ընթանում են զուտ կենտրոնասիական միջավայրում: Սակայն թյուրք-օղուզական ցեղերի՝ դեպի Փոքր Ասիա առաջխաղացման արդյունքում, 5-րդ գլխից սկսած, Էպոսի աշխարհագրական միջավայրը փոխադրվում է Հայկական լեռնաշխարհ, որտեղ էլ ընթացել է դրա վերջնական ձևավորումը: Ակնհայտ է, որ Էպոսում արձանագրված տեղանունները մեծ մասամբ առնչվում են Հայկական լեռնաշխարհին, ըստ այդմ՝ Էպոսը չէր կարող ձևավորվել դրանից դուրս մեկ այլ միջավայրում [8, էջ 115-116]: Մասնավորապես, նշվում են Բայբուրթը (Բաբերդը), Ալընջան (Երնջակը՝ Նախիջևանում),

Շարուրը, Փասենգը (Բասեն), Օնիկը (Ավնիկը՝ Կարնո շրջանում), Սուրմալին (Սուրմառի), Գյանջան (Գանձակ), Բարդան (Պարտավ) ևն:

«Դեղե Քոռքուրթի» կարևոր առանձնահատկությունն է առնվազն երկու գրավոր բնագրով՝ Դրեգդենի ու Վատիկանի ձեռագրերով պահպանված լինելու հանգամանքը, ընդամին, երկուսն էլ թվագրվում են XVI դարավերջով: Ընդհանուր առմամբ, էպոսը բաղկացած է ներածությունից, 12 գլխից կամ օղուզնամեից (չփոթել համանուն այլ արևելյան ստեղծագործությունների հետ): Դրեգդենի ձեռագիրը ներառում է էպոսի ամբողջական շարքը, իսկ Վատիկանի ձեռագիրը՝ ընդամենը 6 գլուխ: Բացի այդ՝ XIX-XX դարերում Կենտրոնական Ասիայում և Թուրքիայում գրառվել են բանավոր ավանդված, էպոսին առնչվող զանազան նյութեր՝ առանձին պատումներ, ավանդազրույցներ, հեքիաթներ:

Էպոսի գլուխներից 9-ը վերաբերում են «անհավատների» քրիստոնյաների դեմ օղուզների մղած պատերազմներին: 5-րդ ու 6-րդ գլուխները հստակորեն առանձնանում են ընդհանուր օղուզական շարքից և վստահաբար ավելի ուշ ծագում ունեն, ձևավորվել են Փոքր Ասիայում օղուզական ցեղերի վերաբնակվելուց հետո [8, էջ 140]: Ակնհայտ է, որ, մասնավորապես, Դոմրուլի (Դելի Դոմրուլ) մասին գլուխը թյուրքական էպոսի հետ օրգանական կապ չունի և ավելի ուշ շրջանի հավելում է [8, էջ 110]: Ընդամին, Դոմրուլի մասին զրույցն իր հիմնական տարրերով կրկնում է «Ասլան-ադա» («Կագուան Ասլան») հայկական միջնադարյան վիպերգի մոտիվները, մասնավորապես, հրեշտակամարտի ու հերոսի կնոջ՝ ամուսնու համար ինքնագոհաբերության մոտիվների առումով: Վերջին մասով առավել դրսևորվում է, այսպես կոչված, «Ալկեստիսի մոտիվը»՝ հայտնի դեռևս հին հունական առասպելաբանությունից (առավել տարածված Եվրիպիդեսի մշակմամբ): Եվրոպական գիտական շրջանակների գնահատմամբ, թյուրքական տարբերակն ամենամոտն է հայկականին, ինչը զարմանալի չէ, քանի որ օղուզներն իրենք վերաբնակվել և հաստատվել են Հայկական լեռնաշխարհում [11, էջ 234]:

Մեկ այլ կարևոր հանգամանք է էպոսի 6-րդ գլխում օղուզների հակառակորդ Տրապիզոնի և Բաբերդի տիրակալ Թագավորի (Tagavor) կերպարի առկայությունը, որը վկայում է հայերի և թյուրքերի վաղ շրջանի շփումների մասին: Միևնույն կերպարն այլ տեղերում հանդիպում է նաև Սև Թագավոր (Kara Tagavor կամ Kara Tekfur) անվամբ, ինչը թյուրքական վիպական ավանդության մեջ հայ իշխանավորի կերպարի արտացոլումն է: Թեման ունի առավել ծավալուն ուսումնասիրման ու լուսաբանման միտումներ ու հեռանկարներ, որոնք առաջիկային կդիտարկվեն այլ գործնական հարթությամբ:

Հայտնի է Կեսարիայում գրառված հայկական պատումն էպոսի հերոսներից Բամսը Բեյրեքի (Բեյբոյրեք) մասին, որը հրատարակվել է դեռևս 1898 թ., իսկ 1928 թ. հայագետ Ֆ. Մակլերի կողմից թարգմանվել և հրատարակվել է ֆրանսերեն որպես հայկական ժողովրդական հեքիաթ: Բամսը Բեյրեքի մասին զրույցները տարածված են եղել նաև Բաբերդի հայերի շրջանում, էպոսի հայկական աղբյուրների մասին են նշել Է. Ռոսսին և Վ. Մ. Ժիրմունսկին [8, էջ 208-

209]: Ըստ ամենայնի, Էպոսի պատումները տարածված են եղել նաև Կոնիայի հայերի շրջանում, մասնավորապես Վ. Ա. Գորդլիսկու հաղորդմամբ, Էպոսի մի տարբերակ գրառվել է Բեյշեհիր քաղաքի բնակիչ հայ բանասացից [5, էջ 127]:

«Քյոռոլլի» («Քյոռոլլու») Էպոսը, XVII դարի ստեղծագործություն լինելով, լայն ընդունելության է արժանացել ոչ միայն թյուրքալեզու, այլև ամենատարբեր ազգերի շրջանում՝ Տյան-Շանից մինչև Բալկաններ, Կասպից ծովից մինչև Սիբիր: Էպոսի ձևավորումն սկսվել է XVII դարից, և մինչև XX դարասկիզբը այն ենթարկվել է գեղարվեստական տարաբնույթ մշակումների ու փոփոխությունների՝ դառնալով լեզվական ու էթնիկ սահմանների հաղթահարման եզակի օրինակ [9, էջ 317]: Հիմնականում ասացողների կողմից ավանդվելով՝ այն սկսել է գրառվել XIX դարի առաջին կեսից մինչև XX դարի սկզբները, իսկ Կենտրոնական Ասիայում տարածված պատումները՝ առավելապես XX դարի կեսերին և ավելի ուշ [7, էջ 43]: Էպոսի բազմաթիվ տարբերակները, ընդհանուր մոտիվներ և խորքային ընդհանրություններ ունենալով հանդերձ զգալիորեն ազգայնացված և տեղայնացված են, ունեն իրենց բնորոշ առանձնահատկություններն ու պոեմատային տարբերակիչ գծերը [6, էջ 217-218]: Մինչ այժմ գրառված և հրատարակված զանազան տարբերակներն ընդունված է բաժանել երկու խմբի՝ արևմտյան ու արևելյան:

Արևմտյան խմբում ընդգրկված տարբերակները (թյուրքական, ադրբեջանական, հայկական, վրացական, դաղստանյան, քրդական ևն) հիմնականում հանգում են ատրպատականյան «Քյոռոլլու» Էպոսին, ինչպես գտնում է հետազոտողների մեծամասնությունը: Դրանք, հիմնավորապես պահպանելով պատմական իրադարձությունների իրական արձագանքները և շերտերը, սկզբնավորվելով անմիջական պատմական հենքից, համեմատաբար ճշմարտացիորեն են վերարտադրել Փոքր Ասիայում XVI- XVII դարերում տեղի ունեցած իրադարձությունները, այն է՝ ջալալիների (ջելալիների) ապստամբությունները, որոնք մոտ 20 տարի ցնցել են Օսմանյան կայսրությունը:

Արևմտյան խմբի բոլոր տարբերակներում «Քյոռոլլի» մականվամբ հայտնի Ռուշանը հանպատրաստից բանաստեղծ-երաժիշտ (աշուղ) է, որը, իր նման վրիժառուների գլուխն անցած, վրեժ է լուծում հորը հանիրավի կուրացրած բռնակալ իշխանավորներից (այստեղից էլ «Քյոռոլլի» մականունը, իմա՝ «կույրի որդի»), վարում Ռոբին Հուդի կարգի «ազնվաբարո ավագակին» բնորոշ կյանք՝ պատուպարվելով լեռնային Չամիբել ամրոցում: Վերոհիշյալ խմբի տարբերակները հիմնականում զերծ են առասպելական ու հեքիաթախառն գծերից, որն էլ ինքնըստինքյան վկայում է կայուն պատմական հիմքի առկայության մասին:

Արևելյան խմբի տարբերակներում (թյուրքմենական, ուզբեկական, տաջիկական, դազախական, կարակալպակյան, Բուխարայի արաբների, տոբոլ-թաթարական, ույդուրական ևն) արևմտյան խմբին բնորոշ պատմավավերական ատաղձն ամբողջությամբ անհետանում է՝ իր տեղը զիջելով վաղնջական հեքիաթախառն ու նախաիսլամական տարրերով հավելված գրույցների շարքին և իրանական առասպելաբանությանը: Ընդամին, եթե արևմտյան խմբի տարբե-

րակներում կույրի որդու առասպելությոն է առաջնային և հիմնարար, ապա արևելյան խմբի տարբերակներում առավելապես գերիշխում է, այսպես կոչված, «գերեզմանի որդու» (Գյոռողլի, Գուրուզլի, Գուրգուլի) առասպելությոնը: Դրանցում Քյոռողլին (Գյոռողլին) արդարության խորհրդանիշ առասպելական Չանդըբիլ երկրի կառավարիչն է (ըստ էության, կելտական-բրիտանական բանահյուսության Արթուր թագավորի կարգի), պատերազմում է դևերի ու վիշապների դեմ, ընկնում ստորգետնյա աշխարհ և դուրս ելնում: Տաջիկական և թուրքմենական պատումների շարքը հինգ տարբեր անվանում ունի, որոնցից երեքը հանգում են «գերեզմանի որդի» տարբերակին, մեկը՝ «կույրի որդի» («Գուրուզլի»), իսկ մյուսը՝ իր նախադեպը չունեցող յուրօրինակ «խուլի որդի» տարբերակին («Գարավլի»): Ղազախական, կարակալպական, տոբոլ-թաթարական (սիբիրյան թաթարների) տարբերակներն ավելի ուշ ժամանակների ծնունդ լինելով՝ ծագումնաբանորեն հանգում են ուզբեկական «Գոռողլուն»: Տաջիկական «Գուրուզլի» («Գուրգուլի») չափածո էպոսն իր ինքնօրինակ հորինվածքով առանձնանում է արևելյան խմբի տարբերակներից: Թուրքմենական «Գյոռողլին», հետազոտողների մի մասի կարծիքով, միջանկյալ օղակ է երկու խմբերի միջև՝ ընդհանուր գծեր ունենալով ինչպես տաջիկական, այնպես էլ ատրպատական տարբերակի հետ:

Հատկանշական է, որ կայուն պատմագրական ավանդույթ ունենալով՝ XVII- XVIII դարերում հայ մատենագրության մեջ պահպանվել են եզակի վկայություններ ինչպես Քյոռողլու, այնպես էլ էպոսի տարբերակներում որպես նրա զինակիցներ հանդես եկող կերպարների պատմական նախատիպերի մասին: Թեմայի շրջանակում արժեքավոր են Առաքել Դավրիժեցու, Գրիգոր Դարանաղցու, Երեմիա Քյոմուրճյանի և մանր ժամանակագիրների հաղորդումները: Համեմատության համար նշենք, որ անհրաժեշտ բավականաչափ տեղեկություններ օտար աղբյուրներում չեն հանդիպում: Նմանապես XVIII դարի մատենագիր Եղիա Մուշեղյանի տաղարանն իր հարակից մեկնաբանություններով և հայատառ թյուրքերեն (թյուրքի) գրառված 13 խաղերով ցայսօր էլ Քյոռողլու մասին գրույցներ և երգեր պարունակող տեքստերից հնագույնն է: Քյոռողլու մասին տեքստերի գրառումն ու ուսումնասիրումը սկզբնավորվում է հենց դրանով [1, էջ 71-93]:

Էպոսի առանձին պատումներ և հատվածներ առաջին անգամ գրառվել են Ռուսական կայսրության տարածքում: Մասնավորապես, հայտնի է Հայկական մարզի տարածքում (Նախիջևան) թյուրքալեզու աշուղից հայ թարգմանչի միջնորդավորմամբ ռուսաստանցի հետազոտող Իվան Շոպենի 1830-ական թթ. կատարած գրառումը [10, էջ 12-25], որը, այնուամենայնիվ, ամբողջական և հավաստի չէ: Էպոսի առաջին ամբողջական տարբերակն Իրանի Ատրպատական (Ադրբեջան) երկրամասում 1830-ական թթ. գրառել է ռուսաստանցի լեհ արևելագետ Ալեքսանդր Խոճկոն [12, էջ 17-344]:

Էպոսի առաջին իսկ հրատարակված և հետագա տարբերակներում ի հայտ են եկել հայկական ենթաշերտին առնչվող դրվագներ, որոնց հիմնավորմամբ

Քյոոռոլին կերպավորվել է որպես հայության նկատմամբ դրական տրամադրված կամ առնվազն քրիստոնյաների պաշտպան: Ընդամին, էպոսի կենտրոնասիական որոշ տարբերակներում էլ Քյոոռոլին հաճախ է հանդես գալիս որպես քրիստոնյաների պաշտպան և բարեկամ: Մեր ուսումնասիրության արդյունքներով, հակառակ Ա. Խոճկոյի հրատարակության համապատասխան հատվածների, հայության հետ կապված եզակի հիշատակությունները, ընդհանրապես, բացակայում են Ս. Ս. Պեննի 1856 թ. ռուսերեն թարգմանության մեջ: Ընդամին, երկու դեպքում դրանք կամայականորեն փոխարինվել են ընդհանուր քրիստոնեական բնույթով, մյուս երկու դեպքում՝ մահմեդական: Ակնհայտ է, որ ռուսերեն թարգմանությունն Ա. Խոճկոյի սկզբնաղբյուր տեքստի ճշգրիտ պատկերը ոչ միայն չի արտացոլում, այլև կրել է իմաստի ու ձևի, ինչպես նաև հայկականության հետ կապված տեղեկատվության կորուստներ: Ըստ այդմ՝ հետագա գիտական ուսումնասիրությունների համար այն առնվազն որպես սկզբնաղբյուր այլևս չի կարող դիտարկվել: Ինչպես հայկական, այնպես էլ Ռուսական կայսրության և ԽՍՀՄ գիտական-գրական շրջանակների համար հակագիտական նման մոտեցումը միանգամայն աննկատ է մնացել, քանի որ ռուսերեն թարգմանված տարբերակը, բնականաբար, առավել հասանելի է եղել և հիմք հանդիսացել հետագա ուսումնասիրությունների համար:

Ի տարբերություն «Դեդե Քորքուրի»՝ «Քյոոռոլու» արևմտյան խմբի հիմնական տարբերակների ձևավորումն ամբողջությամբ ընթացել է Հայկական լեռնաշխարհի տարածքում և որոշ հարակից շրջաններում, ինչի մասին են վկայում զանազան տարբերակներում արձանագրված աշխարհագրական տեղանունները: Հատկանշական է նաև, որ «Քյոոռոլին» միակ թյուրքական էպոսն է, որում գլխավոր հերոսը կրում է հստակ հնդեվրոպական ծագում ունեցող անուն՝ Ռուշան, պրսկ.՝ «լուսավոր», «պայծառ», Առուշան կամ Ուռուշան՝ Խոյ-Մալմաստի բարբառով գրառված և միակ հրատարակված հայկական տարբերակում, Առշամ՝ Վանա բարբառով գրառված անտիպ տարբերակում [4, էջ 19]:

Էպոսի հիմքում ակնհայտ է «կույրի որդու» հնագույն առասպելությի (mythologem) առկայությունը, ինչն արձանագրված է Իլլույանկայի մասին խեթական առասպելում, Հերոդոտոսի կողմից ավանդված կույրերի որդիների մասին սկյութական գրույցում, Փալստոս Բուզանդից ու Մովսես Խորենացուց ավանդված «Պարսից պատերազմ» հերոսավեպում ևն [13, էջ 50-74]: Ակնհայտ է, որ «կույրի որդու» հայկական և թյուրքական տարբերակներում առասպելությի նույնական է. երկու դեպքում էլ գլխավոր հերոսների՝ Արշակ Բ և Ռուշան-Քյոոռոլու հայրերը կուրացվում են հրեղեն նծույգների պատճառով, և երկու դեպքում էլ որդիները մինչև իրենց կյանքի վերջը պայքարում են բռնակալ հակառակորդների դեմ [3, էջ 14-15]:

Հայկական վիպական ենթաշերտը դրսևորվում է նաև էպոսի տարբերակներում որոշ կերպարների առկայությամբ, որոնց որոշակի դեպքերում վերագրվում է հայկական ծագում: Առավել հիշատակելի են Քաչալ Համզայի կերպարը, որն առկա է նաև հայ բանահյուսության մեջ, Ֆրանկի կամ Եվրոպացու

կերպարը, որն ընդհանրապես բնորոշ չէ թյուրք վիպական ավանդույթին և ունի ծագումնաբանական այլ արմատներ: Որոշակիորեն հայոց վիպական ավանդույթի հետ են կապվում նաև հերոսի ձիու և սպառազինության (կայծակե թուր) բաղադրիչները, որոնք դրսևորվում են արևմտյան խմբի տարբերակներում: Տարածաշրջանում XVI-XVII դարերում հայ վաճառականության խաղացած բացառիկ դերակատարությունն է արտացոլվել Էրմենի Բեզիրգենի կամ ուղղակի Բեզիրգենի (վաճառականի) կերպարով, որն առկա է ոչ միայն արևմտյան, այլև արևելյան խմբի տարբերակներում: Վերջին դեպքում, մանավանդ թուրքմենական պատումներում վաճառականի հայկականությունը փոխարինվել է ընդհանուր կովկասյան ծագմամբ: Օսմանյան կայսրությունում, հատկապես քրիստոնյա հպատակների նկատմամբ գործադրված մանկահավաքների (դեշիրմե) իրողություններն են արձանագրված Քյոռոլու կողմից առևանգված (որդեգրված) պատանիների կերպարներով՝ մսագործի որդի Այվազ, դարբնի որդի Հասան, որոնք Արևմտյան Հայաստանի տարածքում գրառված որոշ թուրքական պատումներում որպես հայ են ներկայացվում:

Հայկական կերպարներ են բացահայտվում նաև Թուրքիայում համեմատաբար վերջերս գրառված էպոսի պատումներում, որոնցից հիշատակելի են Հայ թագավորի և Օլթիի կառավարիչ Հայ գորավարի (Էրմենի փաշա) կերպարները: Բոլոր դեպքերում էլ հայկական կերպարներին հակադրվում են սեփական վիպական հերոսները, թեև ակնհայտ է, որ իշխանավորների, իմա՝ պետականության առկայության պայմաններում նրանք բավական խոցելի են դառնում՝ հանդես գալով որպես ավագակապետեր և դրսեկ քոչվոր առաջնորդներ:

Ի վերջո, հայկական գիտական շրջանակների համար ուղենիշային կարող է դիտարկվել ժամանակին ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկու առաջադրած վարկածը, որի համաձայն՝ ուշադիր քննությունը կարող է բացահայտել քրիստոնեական-փոքրասիական (հայկական) պոեզիայի ազդեցությունը Դեդե Քորքուրի և Քյոռոլու մասին ստեղծագործություններում [5, էջ 265]:

Հարկ է նշել, որ 1930-ական թթ. Հայկական ԽՍՀ-ում իրականացվել են «Քյոռոլի» էպոսի հայկական պատումների հայտնաբերման, գրառման և ուսումնասիրման աշխատանքներ, որոնք ակադեմիական մակարդակով են փորձաքննության ենթարկվել: Մինչև 1941 թվականը գրառվել են Խոյ-Սալմաստի (Ուրմիայի), Բաշկալայի, Վանի, Մոկաց, Էրզրումի, Վաղարշապատի, Կոտայքի, Դարալագյազի բարբառներով տարատեսակ պատումներ, որոնց մի մասը պատրաստվել է հրատարակության: Առկա գնահատականների համաձայն՝ առնվազն Վանի և Մոկաց բարբառներով պատումները ամենաընդգծված հայ ազգագրական նյութերն են, որոնցում ընդգրկված են «Մասնա ծոեր» ազգային էպոսին բնորոշ վիպական-բանահյուսական տարրեր [4, էջ 18-19]: «Քյոռոլու» պատումներ գրառվել են նաև արդի ժամանակահատվածում, վերջերս մեր կողմից առանձին ուսումնասիրության առարկա է եղել արցախյան պատումների շարքը: Ընդ որում, պատումների մի մասն Արցախում գրառվել է դեռևս 1963-1964 թթ., իսկ վերջին հայտնաբերվածները՝ 2023 թ.: Ներկայումս

կազմավորված ՀԱԻ գիտական խմբի ուժերով սկսվել են էպոսի հայկական պատումների քննության ու համահավաք ժողովածուի կազմման աշխատանքները:

Ինչպես «Դեղե Բորբորի», այնպես էլ «Քյոռողլու» պարագային պարզորոշ ընդգծվում է դրանց տարածվածության լայն շառավիղը, ինչը մասամբ պայմանավորված է թյուրքական ժողովուրդների աշխարհագրական միջավայրով, ոչ թյուրքական ժողովուրդների հետ կապակցված որոշ պատմամշակութային իրողություններով ու կապերով: Դասընթացի կարևորագույն վերջնարդյունքը պետք է լինի նաև էպոսների ազգային տարբերակների ներկայացումը, մասնավորապես, վերջերս առավել ծավալման միտումներ դրսևորող ծայրահեղ մոտեցումների՝ առնվազն հայկական գիտաուսումնական միջավայրում դրանց գեներացման կանխարգելման նպատակով: Եվրոպական գիտական շրջանակներում ժամանակին քննադատվել են տվյալ էպոսները որևէ թյուրքալեզու ժողովրդի վերագրելու, դրանք որպես «ազգային հանճարի և ոգու» արտահայտություն ներկայացնելու ազգայնական ու ազգայնամոլական փորձերը: Դեռևս Վ. Մ. Ժիրմունսկին է շեշտել, որ «Քյոռողլու» («Գյոռողլու») ազգային տարբերակների համեմատական վերլուծության արդյունքներով բովանդակության ընդհանուր ավանդականության ֆոնին դրանցից յուրաքանչյուրն ունի իր ազգային դեմքը, արտացոլում է այն ստեղծած ժողովրդի պատմականորեն առաջացած ընկերային կենսաձևը, հոգեբանությունն ու հասարակական իդեալները, ըստ այդմ՝ ստեղծագործական ազգային յուրաքանչյուր տարբերակն իրավամբ պատկանում է այն ստեղծած ժողովրդին [6, էջ 217-218]: Բնականաբար, էպոսների ազգայնացման ներկա միտումները դրանց համաթյուրքականության բնույթի՝ դեռևս Զիա Գյոքալփի առաջադրած «օղուզական աշխարհի մատյանների» որոշակիորեն ավանդական ընդգծմանը հակառակ մեկ այլ համեմատաբար նոր ծայրահեղ մոտեցում են արտացոլում՝ այդ առումով կրելով հիմնականում տեղայնացված բնույթ: Մակայն արդի աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված հակագիտական տնաբույս տեսություններն ու առանձին թեզեր արդեն սկսել են ակտիվորեն ներթափանցել և շրջանառվել նաև ժամանակի հռչակավոր եվրոպական ակադեմիական կենտրոններում, ինչը, անշուշտ, գիտությանն ու գիտականությանը որևէ կապ չունեցող լոբբիստական գործունեության արդյունք է:

Միով բանիվ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնում թյուրքական էպոսների դասավանդումն առանց համապատասխան հայկական նյութի վերհանման և հայ-թյուրքական աղերսների ներկայացման չի կարող լիարժեք բնույթ կրել: Միանշանակորեն կարելի է արձանագրել, որ հիմնականում հենց դրանով է պայմանավորված դասընթացի հայաստանյան դասավանդման ամենագլխավոր առանձնահատկությունը, ինչը կարող է կիրառվել նաև արտաքին լսարանում և միջբուհական համագործակցության շրջանակում:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի առնել, որ թյուրքական էպոսները՝ իրենց ամենատարբեր ազգային տարբերակներով ու առանձին պատումներով,

բավականին ճյուղավորված են, հետևաբար պետք է խուսափել կոնկրետ տարբերակներին բնորոշ «հայկական նյութի» անհիմն ընդհանրացումից և հնարավոր տեղական ծայրահեղ այլ մոտեցումներից՝ դասավանդման ընթացքում հիմնական շեշտը դնելով բուն թյուրքական վիպական ստեղծագործությունների ներկայացման ու ուսուցման վրա:

Ակնկալվող դրական վերջնարդյունքը հեռանկարում կարող է կայուն հիմք դառնալ թյուրքական այլ հայտնի էպոսների ուսուցման ու միննույն կրթական ծրագրերում ընդգրկման համար՝ այդպիսի առավել բյուրեղացնելով ու ընդհանրացնելով թեման: Մասնավորապես, առաջին հերթին, կարելի է նկատի առնել «Ասք Մելիք Դանըշմենդի մասին» վիպական ստեղծագործությունը, որն ամբողջությամբ Հայկական լեռնաշխարհում ստեղծված ու ձևավորված թյուրքական էպոս է, պարփակում է առավել շեշտված ու ակնհայտ հայկական ենթաշերտ: Ըստ այդմ՝ հարցի հետագա արծարծումն ու ուսումնասիրությունը կրկին կարող են կրել միջգիտակարգային բնույթ՝ առավել կարևորելով նաև հայագիտության հիմնախնդիրները:

Հեռանկարում կարող է առաջ քաշվել նաև թյուրքական էպոսների մասով առանձին ուսումնական ձեռնարկի կազմման հարցը, ինչն իր հերթին լավագույնս կնպաստի հայկական թյուրքագիտության ծրագրերի իրականացմանը:

Եզրակացություն և եզրահանգիչ դրույթներ: Ընդհանուր առմամբ, դասընթացի նպատակներն են.

- թյուրքագետ ուսանողներին ծանոթացնել թյուրքական և այլ ժողովուրդների շրջանում տարածված վիպական ավանդությանը,

- ծանոթացնել թյուրքական հայտնի էպոսներին, դրանց առանձնահատկություններին, մասնավորապես հայ-թյուրքական աղերսների համատեքստում,

- ցույց տալ տվյալ էպոսների փոխառնչությունները հայոց վիպական ստեղծագործությունների հետ:

Դասընթացը կարող է բաղկանալ հետևյալ հիմնական բաժիններից.

- 1-ին բաժնում ներկայացվում են «Դեղե Քորքուք» թյուրքական էպոսի հիմնական բովանդակությունը, ձևավորման միջավայրը,

- 2-րդ բաժինը վերաբերում է էպոսի հայկական աղերսներին,

- 3-րդ բաժնում ներկայացվում է «Քյոռօղլի» էպոսի արևմտյան խմբի տարբերակների հիմնական բովանդակությունը,

- 4-րդ բաժնում՝ «Քյոռօղլի» էպոսի արևելյան խմբի տարբերակների (թյուրքմենական, ուզբեկական, դազախական, տաջիկական, ույղուրական) հիմնական բովանդակությունը,

- 5-րդ բաժնում՝ էպոսի հայկական պատումների հիմնական բովանդակությունն ու դրանց առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.

- ներկայացնելու առավել հայտնի թյուրքական էպոսների առանձնահատկությունները,
- նշելու հայ-թյուրքական վիպական առնչությունները,
բ. գործնական մասնագիտական կարողություններ.
- տիրապետելու թյուրքական վիպական ավանդության մասին անհրաժեշտ տեղեկատվության,
- ճանաչելու դրան խարսխված թյուրքական ժողովուրդների էթնիկ հոգեկերտվածքի առանձնահատկությունները,
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.
- մասնակցելու համապատասխան թեմաներին առնչվող քննարկումներին:

Դասընթացը կարող է ձևավորել կրթական ծրագրի որոշակի վերջնափուլում, մասնավորապես ծրագրի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

- ներկայացնել տարածաշրջանի հիմնական թյուրքական էպոսները,
- վերլուծել և գնահատել մշակութային փոխառնչությունները, մասնավորապես վիպական բանահյուսության առումով,
- պատրաստել գիտական զեկուցումներ, ներկայացնել հետազոտություններ, վարել գիտական բանավեճեր, տրամադրել մասնագիտական խորհրդատվություն:

Կիրառելի են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝

- դասախոսություն, սեմինար պարապմունքների անցկացում,
- յուրաքանչյուր բաժնի ավարտից հետո քննարկման կազմակերպում,
- ուսանողների կողմից՝ հանձնարարված գրականության ընթերցում, տեսաբանախոսությունների պատրաստում, մասնակցություն քննարկումներին:

Այսպիսով, նկատի առնելով նշված խնդիրները և առկա հանգամանքներով պայմանավորված դասընթացի առանձնահատկությունները՝ հարկ է դասընթացը դիտարկել որպես առանձին թեմա, քանի որ թյուրքագիտության համար այն կրում է կարևոր ու հիմնարար բնույթ:

THE SPECIFICITIES OF TEACHING TURKIC EPICS (“DEDE KORKUT” AND “KOROGLU”) AT THE TURKIC STUDIES DEPARTMENT OF YSU

Ramazyan Samvel

Ph.D. of Philology, Assistant

Yerevan State University

Institute of Archaeology and Ethnography of the NAS,

Republic of Armenia

samvel.ramazyan@ysu.am

Summary

Since the establishment of the Department of Turkic Studies at the Faculty of Oriental Studies of Yerevan State University, a certain place has been devoted to the study and teaching of Turkic epics, which has been carried out within the framework of teaching Turkish literature.

Any national epic can certainly form the basis of literature. From this perspective, Turkic epics have had a significant impact on the process of establishing the literature of the Turkic-

speaking peoples, taking into account the centuries-old tradition of oral speech and culture. At the same time, they still continue to condition the process of national cultural and identity formation among some Turkic-speaking peoples, while serving as unique national symbols. In particular, “Dede Korkut”, being the ethnogenic epic of various Turkic ethnic groups, still plays a crucial role in popularizing the ideology of Pan-Turkism, naturally, sometimes through the artificial equalization and identification of various national versions. The “Koroglu” (“Keroglu”) epic, created and formed in a later period, taking into account the existence of a larger number of national versions, no longer has the symbolic pan-Turkic significance attributed to “Dede Korkut”. However, in some cases, it also contains elements of national self-identity, and is sometimes considered on the same plane.

From the above-mentioned points of view, in particular, for Armenian Turkology, the study of not only the mentioned but also other Turkic epics and the establishment of teaching with the appropriate methodology represent a necessity, which can certainly have scientific and practical significance.

The article was prepared based on a summary of the results of our research conducted on the topic in recent years, as well as the conclusions and observations made during the process. One of the notable problems with the topic is its presentation without highlighting the Armenian environment and Armenian epic substratum, which is typical of foreign Turkic studies centers, but in our case, taking into account the existing peculiarities and already recorded results, the use of the same approach is not correct and effective. In this context, knowledge of Turkic languages, as well as certain knowledge of Armenian folklore, is important. Accordingly, the subject can certainly have interdisciplinary significance.

By highlighting the specificities of the topic and the problems identified, the methodological approaches considered necessary for teaching the course are presented. As a result of teaching the subject, the Turkologist student can further strengthen such skills as deep knowledge of the topic, comprehensive analysis and comparison of various data.

Keywords: *Turkic epic, Turkology, “Dede Korkut”, “Koroglu”, Armenian Highland, teaching, specificities and methods.*

ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ТЮРКСКИХ ЭПОСОВ («ДЕДЕ КОРКУТ» И «КЁРОГЛЫ») НА КАФЕДРЕ ТЮРКОЛОГИИ ЕГУ

Рамазян Самвел

Кандидат филологических наук, ассистент

Ереванский государственный университет

Институт археологии и этнографии НАН

Республика Армения

samvel.ramazyan@ysu.am

Аннотация

С момента основания кафедры тюркологии на факультете востоковедения ЕГУ определенное место отводилось изучению и преподаванию тюркских эпосов, которое осуществлялось в рамках преподавания турецкой литературы.

Любой национальный эпос, безусловно, может быть основой литературы. С этой точки зрения тюркские эпосы оказали большое влияние на процесс становления литературы тюркоязычных народов с учетом многовековой традиции устной речи и культуры. В то же время они продолжают обуславливать процесс формирования национальной культуры и идентичности у некоторых тюркоязычных народов, являясь уникальными национальными символами. В частности, «Деде Коркут», будучи этногоническим эпосом разных тюркских этносов, до сих пор играет важную роль в популяризации идеологии пантюркизма, естественно, иногда и путем искусственного нивелирования и идентификации различных национальных версий. Эпос «Кёроглы», созданный и сформировавшийся в более поздний период, уже не имеет символического пантюркского значения, приписываемого «Деде

Коркут», но в ряде случаев включает в себя и элементы национального самопознания, а иногда рассматривается и на одном уровне.

С вышеизложенных точек зрения, в частности, для армянской тюркологии необходимо изучение не только упомянутых тюркских эпосов, но и других эпосов, и внедрение в преподавание соответствующей методики, что, безусловно, может иметь научное и практическое-прикладное значение.

Статья подготовлена на основе обобщения результатов наших исследований, проведенных по данной теме в последние годы, выводов и наблюдений, сделанных в ходе них. Одной из заметных проблем раскрытия темы является ее подача без освещения армянской среды и армянского эпического субстрата, что характерно для зарубежных тюркологических центров, но в нашем случае, учитывая особенности и уже зафиксированные результаты, использование того же подхода не оправдано и не эффективно. В этом контексте важно знание тюркских языков, а также армянского фольклора. Соответственно, данная тема, безусловно, может иметь междисциплинарное значение.

Учитывая специфику темы и зафиксированных проблем, нами представлены методические подходы, необходимые для преподавания курса. В результате изучения предмета у студента-тюрколога могут укрепиться такие способности, как глубокое знание предмета, умение проводить всесторонний сравнительный анализ различных данных.

Ключевые слова: *тюркский эпос, тюркология, «Деде Коркут», «Кёроглы», Армянское нагорье, преподавание, особенности и методы.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Abrahamyan A., Gabrielyan D., Qyor-Oghlu norahayt yergery // HSSR GA «Teghekgagir hasarakakan gitutyunneri», № 9, Yerevan, 1954, ej 71–93.
2. Perperean H., Arshak B ev Qeoroghlu, Tparan Kh. Mathikean, Pariz, 1938.
3. Petrosyan A., Haykakan eposi hnaguyn akunqnery 2, GAA HAI hrat., Yerevan, 2020.
4. Qyor-Oghli, Zhoghovrdakan vipasanuthyun, havaqec yev gri arav G. Tharverdyan, arajabany: Kh. Samuelyani, ArmFAN, Yerevan, 1941.
5. Gordlevskiy V.A., Izbrannye sochineniya. T. III. Izd-vo Vostochnoy literatury AN SSSR, Moskva, 1962.
6. Zhirmunskiy V.M., Narodnyy geroicheskiy epos. Sravnitel'no-istoricheskie ocherki. Goskhudlitizdat, M.-L., 1962.
7. Karryev B.K., Epicheskie skazaniya o Kyor-ogly u tyurkoyazychnykh narodov. Izd-vo AN SSSR «Nauka», Moskva, 1968.
8. Kniga moego deda Korkuta. Oguzskiy geroicheskiy epos. Perevod V.V. Bartol'da. Izd. AN SSR, M.-L., 1962.
9. Raykhl K., Tyurkskiy epos: traditsii, formy, poeticheskaya struktura. «Vostochnaya literatura», Moskva, 2008.
10. Shopen I.I., Ker-oglu. Tatarskaya legenda // Mayak sovremennogo prosveshcheniya i obrazovannosti. Trudy uchenykh i literatorov, russkikh i inostrannykh, ch. I–II, SPb, 1840, s. 127–182.
11. Beekes R.S.P., «You Can Get New Children...». Turkish and Other Parallels to Ancient Greek Ideas in Herodotus, Thucydides, Sophocles and Euripides // Mnemosyne, No. 39, Brill, 1986, p. 225–239.
12. Chodzko A., Popular Poetry of Persia as Found in the Adventures and Improvisations of Kurroglou, the Bandit-Minstrel of Northern Persia, and in the Songs of the People

Inhabiting the Stories of the Caspian Sea. Harrison and Co., Printers, St. Martin's Lane, London, 1842.

13. Dumézil G., Les légendes de «Fils d'aveugles» au Caucase et autour du Caucase // Revue de l'Histoire des Religions, vol. 117, Paris, 1938, p. 50–74

Получено: 25.03.2025

Received: 25.03.2025

Рассмотрено: 28.03.2025

Reviewed: 28.03.2025

Принято: 07.05.2025

Accepted: 07.05.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

ПРИМЕНЕНИЕ ДАННЫХ ЯЗЫКОВЫХ КОРПУСОВ НА ПРАКТИКЕ ПРЕПОДАВАНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Ангурян Сусанна

Кандидат педагогических наук, доцент

Европейский Университет Армении

Республика Армения

susanna.anguryan@mail.ru

<https://orcid.org/0000-0002-8328-762X>

Аннотация

В данной статье рассматриваются некоторые особенности использования электронного языкового корпуса в преподавании иностранного (английского) языка, представляются преимущества обращения к корпусным данным в процессе изучения языка, его лексико-грамматических особенностей. Указаны те практические задачи, которые помогает решить регулярная работа с корпусными данными, в их числе не только чисто предметные и методические, но и педагогические, переводческие и некоторые другие. Описан наш опыт использования данных корпусов в практике преподавания английского языка. Дана краткая характеристика Корпуса современного американского варианта английского языка Марка Дэвиса (Corpus of Contemporary American English) как наиболее многочисленного и затребованного корпуса, находящегося в открытом доступе. Определено место данного корпуса в рамках разработанной классификации языковых корпусов. Представлены некоторые рекомендации по использованию корпусных данных современного американского варианта английского языка в преподавании английского языка.

Ключевые слова: *языковой корпус, поисковая работа, аутентичные тексты, обучение иностранному языку, лексико-грамматические характеристики.*

Проблема. Внедрение современных технологий в образовательный процесс – одна из ключевых задач методики преподавания иностранных языков. Несмотря на широкое распространение цифровых ресурсов в изучении языков, применение электронных языковых корпусов в преподавании английского как иностранного остается недостаточно освоенной областью. Основная проблема заключается в нехватке методических разработок, обучающих материалов и опыта работы преподавателей с корпусными данными. Кроме того, существуют вопросы, связанные с адаптацией корпусного подхода к разным уровням владения языком и его интеграцией в традиционные образовательные методы.

Краткий анализ исследований и публикаций, связанных с проблемой.

Исследования в области использования языковых корпусов в преподавании иностранного языка получили развитие в последние десятилетия. Одним из основоположников корпусной лингвистики считается Джон Синклер (John Sinclair), который разработал концепцию корпусного анализа и показал его значимость для лексикографии и методики обучения языкам.

Большой вклад в изучение применения корпусов в образовании внес Павел Сысоев. В своих работах он подчеркивает важную роль корпусных технологий в развитие языковой компетенции студентов и обучение грамматике на основе реальных примеров словоупотребления (П.В.Сысоев, Лингвистический корпус в методике обучения иностранным языкам, 2010).

Тони МакЭнери, Эндрю Хардии и Пол Бейкер в книге *Glossary of Corpus Linguistics* (2006) подробно рассматривают основные понятия корпусной лингвистики и принципы работы с корпусами, что делает этот труд важным методологическим источником для преподавателей.

Одним из наиболее востребованных ресурсов является *Corpus of Contemporary American English (COCA)*, созданный Марком Дэвисом. В статье *The Corpus of Contemporary American English* он описывает структуру корпуса и его применение при изучении английского языка. COCA является ценным инструментом для анализа аутентичных примеров словоупотребления и частотных характеристик лексических единиц (Davies M., *The Corpus of Contemporary American English*).

В контексте практического использования корпусов в образовательной среде значимы исследования Йоне Григалиониене (*Corpora in the Classroom*, 2013), где рассматриваются методики преподавания с применением корпусных данных в вузах Европы. Автор отмечает, что, несмотря на высокую эффективность корпусных технологий, их внедрение требует дополнительной подготовки как преподавателей, так и студентов.

Таким образом, данная статья опирается на труды ведущих специалистов в области корпусной лингвистики и методики преподавания, предлагая дальнейшее исследование возможностей использования языковых корпусов в образовательном процессе.

Цель исследования – рассмотреть особенности использования электронных языковых корпусов в преподавании английского языка как иностранного, а также продемонстрировать преимущества применения корпусных данных для изучения лексико-грамматических особенностей языка.

Научная новизна исследования заключается в том, что в результате проведенного исследования нами предлагается современный подход к преподаванию английского языка через использование корпусных данных, что позволяет работать с аутентичными языковыми примерами и улучшать понимание лексико-грамматических структур.

Компьютерные технологии уже давно используются практически во всех областях нашей жизни и стали незаменимым инструментом для осуществления любого типа деятельности человеком в быту и в профессиональной сфере, в частности, в преподавании языков. Закономерно поэтому, что во все современные образовательные стандарты разных уровней включены дисциплины по овладению навыками использования соответствующих электронных источников информации как дидактического материала, который необходим и обучаемым, и обучающим.

Таким действенным инструментом при изучении конкретного иностранного языка может стать соответствующий электронный лингвистический корпус, который наряду с такими уже ставшими привычными средствами, как электронные словари, различные интернет-ресурсы, диски и другие технические достижения призван модернизировать учебный процесс, сделать его эффективнее и разнообразнее. К тому же, поскольку корпусные данные – это аутентичные материалы, то они значительно повышают интерес учащихся к предмету, поскольку обеспечивают доступ к образцам сегодняшней речи (письменной и устной), дают возможность познать современные закономерности сочетаемости слов, реально представить частотность конкретных словоупотреблений в текстах разных стилей.

Что касается преподавателя, то, учитывая возможности современных компьютерных технологий и потребности учащихся, он должен владеть навыками работы с корпусными данными и в какой-либо форме использовать их в процессе обучения языку. В его методическом арсенале должна сформироваться готовность к работе с лингвистическим корпусом, а для этого нужны специальные системы тренингов, обмена опытом и разработок в рамках программ повышения квалификации, целью которых и является свободное владение корпусными технологиями как современным и эффективным методическим «оружием», незаменимым сегодня в процессе изучения иностранного языка.

В сети и в научной литературе есть много определений термина *языковой корпус*. Подытоживая их, в наиболее обобщенном виде сегодня этот термин можно охарактеризовать следующим образом: языковой корпус – это собрание (большое количество) систематизированных по определенным критериям (жанру, времени написания и т.д.) аутентичных текстов (фрагментов текстов), доступное в электронном формате, снабженное поисковой системой и предназначенное для использования в качестве иллюстративного материала и/или анализа содержащегося в представленных текстах конкретного лексико-грамматического материала.

Первый лингвистический корпус появился ещё в 60-ых гг. прошлого века. Это был Brown University Standard Corpus of Present-Day American English (500 текстов по 2000 слов), созданный Н. Фрэнсисом и Г. Кучерой, и уже он, хотя и отличался от своих последователей и по охвату материала, и по способам его предоставления, и по многим другим параметрам, внес неоценимый вклад в развитие исследовательской мысли, в формирование и развитие нового лингвистического направления – корпусной лингвистики.

Со временем появились новые языковые корпуса, такие как корпус университетов Ланкастера, Осло и Бергена (The Lancaster-Oslo-Bergen corpus (LOB), корпус Австралийской английской речи (The Australian Corpus of English – ACE), Веллингтонский корпус новозеландской английской речи (The Wellington Written English - WWE), корпус американской английской речи университетов Фрайбурга и Брауна, BNC (British National Corpus), Collins Cobuild (Bank of English, Birmingham), ВАНК (восточноармянский национальный корпус), НКРЯ (Национальный корпус русского языка) и т.д.

Сначала данные корпусов использовались только в исследовательской деятельности как убедительный эмпирический материал, достаточный для аргументации каких-либо теоретических положений, таких как статистическое доказательство правильности определенной научной гипотезы и под. Но, когда в ходе исследовательских изысканий на основе данных корпусов учёные-лингвисты начали создавать списки активно используемой лексики, когда они начали группировать тексты по стилистической принадлежности и на этой основе формировать списки соответствующих терминов и частотных слов, то всем стало понятно, что корпусные данные могут оказать неоценимую помощь при решении прикладных задач, в частности, в сфере изучения языка, поскольку на большом по объёму материале можно определить закономерности его функционирования в реальных ситуациях, в аутентичных текстах разного типа.

Иными словами, одни и те же данные могут использоваться и в исследовательских, и в учебных целях. Известно, например, что все современные учебные словари английского языка (Cambridge Advanced Learner's Dictionary Longman

Dictionary of Contemporary English, Oxford Collocations Dictionary for students of English, Collins English Language Dictionary и т.д.), созданные для изучения этого языка, основаны на корпусных данных (corpus based), т.е. в состав словарной статьи включаются не искусственно созданные лексикографами с определенной целью примеры, не отрывки из классической художественной литературы (порой устаревшие), а образцы современной речи, те лексико-грамматические единицы, которые наиболее часто используются реальными носителями языка в повседневной жизни и/или в процессе соответствующей профессиональной деятельности.

Так что с годами методическая мысль стала активно развиваться именно в этом направлении: данные корпусов стали успешно использоваться при создании учебных пособий и экзаменационных материалов, в практике преподавания для иллюстрации лексических и грамматических правил, составления текстов и т.д. В качестве преимуществ корпусного подхода как дидактического метода методисты называют аутентичность (authenticity) текстов, т.е. эмпирического материала, объективность (objectivity) информации, поскольку точно указываются все выходные данные, тем самым повышается мотивация учащихся (enhance learner motivation), поскольку учащийся сам ищет и находит то, что ему нужно, сам делает выводы на основе анализа полученных данных, сам определяет глубину и направленность своей языковой компетенции и др. [4, 1]

Стали очевидными преимущества работы с корпусными данными и для педагогов, поскольку они лучше и быстрее развивают такие профессиональные качества, как постоянный самоконтроль, усидчивость, трудолюбие и правильная самооценка, прививают привычку обращаться к поисковым системами, и с их помощью терпеливо искать нужное, формируют умение чётко формулировать конечную цель и конкретные задачи, обосновывать свои выводы и т.д.

Однако, несмотря на все достоинства корпусного подхода, несмотря на то что корпусные данные могут оказать действенную помощь при решении многих задач, связанных с изучением языка, в том числе помощь и воспитательного характера, многие специалисты замечают, что внедрение корпусных технологий в учебный процесс (процесс изучения и преподавания иностранного языка) – это сложный и многоаспектный труд и для преподавателей, и для учащихся. Так, например, известный методист из Вильнюсского университета Йоне Григалиониене (Jonė Grigaliūnienė) отмечает, что даже в вузах, где чаще и больше используются новые, как правило, эффективные методы, довольно редко можно констатировать факт использования данных корпусов при преподавании иностранного языка, что и говорить о школе, где чаще всего просто царят традиционные методы. Автор статьи считает, что учащихся всех уровней нужно познакомить с корпусами разных типов, научить их пользоваться поисковыми системами и извлекать нужную информацию, с помощью специальных упражнений и заданий нужно тренировать их в соответствующем направлении и только тогда сформируется их мнение о том, насколько могут быть им полезны корпусные данные при изучении иностранного языка, как можно использовать полученные таким образом знания и под. [4]

В Армении в области изучения языка происходит, примерно, то же самое. В вузах на языковых уроках редко используются тексты из соответствующих корпусов, но наша практика преподавания показывает, что к этому типу работы нужно просто привыкнуть. Например, когда объясняется новое правило, обязательно нужно закрепить пройденное на языковом материале. Конечно, его можно

взять из учебника или придумать, но лучше найти в корпусе, можно адаптировать или поручить это учащимся (мы используем и то, и другое) – важно выработать привычку обращения к данным корпусов, поскольку именно они, с одной стороны, интересны учащимся, а с другой стороны, облегчают труд преподавателя.

В настоящее время в сети и в специальной литературе можно найти множество примеров заданий, в которых используются данные лингвистических корпусов, и все они могут стать для преподавателя той самой основой, на базе которой можно разработать собственные задания, соответствующие уровню языковых знаний конкретных учащихся, характеристикам учебного времени и др. показателям.

Далее мы расскажем о своём опыте работы (преподавание английского языка).

Сначала поговорим об источниках информации, которые мы используем: один корпус общего наполнения (хотя их много в сети) и учебные корпуса. [7]

Сразу отметим, что в настоящее время самым многочисленным (560 млн. словоупотреблений) и затребованным электронным корпусом английского языка, находящимся в открытом доступе, является Корпус современного американского варианта английского языка (Corpus of Contemporary American English – COCA), созданный профессором университета Янга Марком Дэвисом, который постоянно пополняется. [3] Выбор этого источника информации обусловлен и тем, что именно этот (американский) вариант, согласно статистическим данным, является наиболее популярным среди армянских учащихся разных типов и уровней.

Изначально внимание учащихся обращается нами на тот важный (и для исследовательской деятельности, и для учебной) факт, что с учетом огромного объема и значительного хронологического охвата (с 1990 г. по 2017 г.) корпус COCA разбит на жанрово-тематические подкорпусы (устная речь, художественная литература, пресса, спорт, искусство и т.д.), а каждый подкорпус определенным образом охарактеризован, указаны источники информации, которые тоже можно систематизировать выбрать нужные или отсеять ненужные. Например, подкорпус «Популярные журналы (Popular Magazines)» содержит 118 млн. текстов, что составляет 20,5% от всего количества текстов. В него включены материалы из 100 различных журналов (общественно-политических, экономических, женских, детских, спортивных, религиозных и др.), среди них Cosmopolitan, Time, People, Fortune, Men's Health, Christian Century, ESPN, Good Housekeeping и др. Можно проанализировать только корпусные данные из журнала Time как наиболее популярного издания, скажем, за один год, последний. Есть подкорпус «Научные журналы» (Academic Journals), материалы которого составляют 19,5% и который включает текстовые фрагменты из 100 авторитетных журналов по психологии, истории, философии, праву, религии, образованию, медицине, технологии и т.д. Можно проанализировать, скажем, только тексты по истории. Такая конкретизация заданий значительно облегчает поисково-аналитическую работу и уменьшает временные затраты на её осуществление. Учащийся должен учитывать тот факт, что характеристика каждого текста должна быть отражена в результатах поиска, т.е. результаты поиска не могут предстать в виде сухих цифр, поскольку они сразу обретают множество показателей, которые очень важны для учащихся во всех аспектах и, в первую очередь, в плане правильного употребления в своей речи эталонных образцов.

Мы также иногда в своей практике используем так называемые учебные корпуса (learner corpus), где представлены тексты (фрагменты сочинений,

экзаменационные материалы и т.д.), написанные не носителями языка, а теми, кто изучает данный язык как второй и предположительно будет использовать английский язык в переводах, в контрастивных исследованиях, при сравнительном анализе. [2, с. 103] Обращение к учебным словарям, на наш взгляд, наиболее эффективно в среде тех учащихся, которые достаточно хорошо знают изучаемый язык. В этом случае ставятся другие задачи, например, выявления в тексте лексических и синтаксических ошибок, возникших на определенном этапе в процессе освоения иностранного языка или установление частотности тех или иных типов лексико-грамматических ошибок и под. В любом случае важно, что наши студенты знают о существовании таких корпусов и понимают, что при необходимости можно обратиться к их материалам, можно производить поисково-аналитическую работу любого типа и результаты её могут быть использованы не только самим учащимся в учебном процессе/для совершенствования изучаемого языка, но и в других целях.

Наиболее эффективно, частотно, полезно и интересно происходит обращение к корпусным данным при изучении лексики. Анализ конкретных словоупотреблений в аутентичных текстах дает возможность уточнить значения полисемичных слов, выявить клишированные словосочетания с изучаемым словом, определить возможность использования того или иного близкого по значению слова в определенной речевой ситуации, выяснить закономерности лексической сочетаемости слов, в частности, управления глаголов и т.д.

Кроме получения лексических знаний, корпусные данные можно использовать и для расширения совершенствования навыков учащихся в областях словообразовательного моделирования и лексико-грамматической классификации слов, что особенно важно при изучении английского языка, где частеречная маркированность не является обязательной и соответствующие показатели слова проявляются только в контексте, в конкретном лексическом окружении. [5] Конечно, можно просто сказать о возможности использования данной леммы в роли разных частей речи, а можно почерпнуть эти знания из анализа конкретных современных текстов. На наш взгляд второй вариант имеет много преимуществ для решения задач педагогического и методического характера, ибо становится элементом поисково-аналитической работы, дает возможность учащимся делать самостоятельные и обоснованные выводы и т.д.

Из-за нехватки учебного времени обращение к корпусным данным многим преподавателям иностранного (английского) языка представляется нереальным, а нам кажется, что такая работа очень полезна, поскольку позволяет одновременно (комплексно) решить сразу несколько задач методического, педагогического и предметного характера. Однако мы считаем, что только в сочетании с традиционными методами, в основе которых лежат материалы учебников, корпусный подход можно применять в настоящее время в Армении. Что касается чрезмерной затраты времени на подготовку материалов, подходящих и нужных данной группе в соответствии с уровнем знания языка, трудоспособности учащихся и др. Показателями, то все подобные проблемы можно решить путем обмена опытом передачи своих материалов другим преподавателям и получения от них уже готовых разработок.

Особо отметим те важнейшие задачи, которые при обучении иностранному (английскому) языку эффективно помогает решить систематическая работа с данными корпусов. В первую очередь она, на наш взгляд, позволяет значительно активизировать два аспекта учебной деятельности:

1) самостоятельную работу обучающихся, т.е. работу без руководителя, в удобное для них время;

2) продуктивную речевую деятельность, т.е. умение строить письменную и устную речь, соответствующую конкретной речевой ситуации, сфере общения.

Есть разные варианты использования корпусных данных в практике преподавания иностранных языков. Мы считаем наиболее эффективным (особенно при нехватке учебных часов) такой способ, который позволяет в максимальной степени рационально, с минимальной затратой аудиторного времени выявлять и усваивать конкретные корпусные материалы. Схематично этот самый частотный в нашей практике вариант, где прекрасно сочетаются традиционный и корпусный подходы, можно представить следующим образом:

1) объяснение и первичное закрепление (с помощью заданий и упражнений учебника) новых слов, фразеологизмов, клишированных фраз, лексико-грамматических конструкций и т.д.;

2) домашняя работа нацелена на то, чтобы углубить и окончательно закрепить то, что прозвучало в аудитории; в качестве конкретного задания – анализ соответствующих корпусных данных с точки зрения выявления наиболее частотных фактов лексической сочетаемости, стилистической допустимости и частотности в них найденных вариантов, фиксации деривационных особенностей, возможностей синонимической замены и т.д.;

3) а) производство устных и/или письменных текстов, разыгрывание сценок, построение диалогов, в которых в той или иной форме воспроизведены лексико-грамматические единицы, соответствующие современным нормам и предпочтениям носителей языка, т.е. использованы знания, полученные при работе с корпусными данными [6];

б) переводческая деятельность (что очень актуально в наши дни), основанная на использовании корпусных данных (самый трудный или интересный текст, клишированные словосочетания, фразеологизмы, синонимические замены и т.д.

Чтобы проверить уровень остаточных знаний, мы обычно возвращаемся к пройденным лексико-грамматическим единицам, стараясь использовать их в новых и/или соответствующим образом расширенных контекстах, и такие «возвращения» показывают, что материалы корпуса, найденные и проанализированные самостоятельно усваиваются лучше и запоминаются дольше, чем те, которые предоставляет учебник. В этой связи нам немаловажной представляется и возможность сохранить не использованную по какой-то причине информацию или скачать нужную в данный момент, что значительно облегчает и разнообразит сам процесс повторения; еще больше расширяет имеющуюся языковую базу.

Заключение. В заключение хотим отметить, что и для преподавателей иностранного языка, и для учащихся основным преимуществом использования в учебном процессе данных корпусов является возможность доступа к аутентичным текстам с различными стилистическими характеристиками, к лексико-грамматическим формам современного «живого» языка. При анализе этих текстов из них можно извлечь огромное количество примеров словоупотребления, закономерностей лексической сочетаемости того или иного слова, особенностей использования того или иного грамматического правила, правил построения клишированных фраз и т.д. Для преподавателей работа с корпусами – это шаг вперед в развитии профессиональных навыков и умений, а для учащихся – это уникальная возмож-

ность самим находить ответы на поставленные вопросы, развивать у себя навыки поисковой работы, анализа полученной информации и умения четко формулировать выводы на основании полученных результатов.

Выводы содержат подтверждение эффективности использования корпусных данных в преподавании английского языка. Автор статьи подчеркивает, что регулярная работа с корпусами помогает решать не только методические, но и педагогические, переводческие и другие задачи.

APPLICATION OF CORPUS DATA IN ENGLISH LANGUAGE TEACHING

Anguryan Susanna

Ph.D. of Pedagogy, Associate Professor

European University of Armenia

Republic of Armenia susanna.anguyan@mail.ru

Summary

This article examines certain aspects of using an electronic language corpus in foreign language teaching. It highlights the advantages of utilizing corpus data in the process of language learning, particularly in studying its lexical and grammatical features. The article identifies practical tasks that regular work with corpus data helps to address, including not only subject-specific and methodological issues but also pedagogical, translation-related, and other challenges. The author shares their experience in using corpus data in English language teaching.

A brief overview of Mark Davies' Corpus of Contemporary American English (COCA) is provided as the most extensive and widely used corpus available in open access. Additionally, the author presents recommendations for using corpus data of contemporary American English in teaching English.

Research Objective is to explore the features of using electronic language corpora in teaching English as a foreign language and to demonstrate the advantages of applying corpus data for studying the lexical and grammatical characteristics of the language.

Relevance and Scientific Novelty: This study presents a modern approach to teaching English through the use of corpus data, enabling work with authentic language examples and enhancing the understanding of lexical and grammatical structures.

Keywords: *language corpus, search work, authentic texts, foreign language learning, lexical and grammatical characteristics.*

ԼԵԶԻԿԱԲԱՆԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՐԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՅՈՒՄ

Անգուրյան Սուսաննա

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Հայաստանի Եվրոպական Համալսարան

Հայաստանի Հանրապետություն

susanna.anguyan@mail.ru

Ամփոփում

Հոդվածում քննարկվում են էլեկտրոնային լեզվաբանական կորպուսի օգտագործման որոշ առանձնահատկություններ օտար (անգլերեն) լեզվի դասավանդման գործընթացում: Ներկայացվում են կորպուսային տվյալների կիրառման առավելությունները լեզվի բառապաշարային քերականական առանձնահատկությունների ուսումնասիրության գործընթացում: Առաջարկվում են կորպուսային տվյալների կանոնավոր կիրառման արդյունավետ մեթոդներ՝ ոչ միայն բուն առարկայական ու մեթոդական, այլև մանկավարժական, թարգմանչական և որոշ այլ գործնական խնդիրներ լուծելու համար:

Հողվածում հեղինակը ներկայացնում է իր փորձը՝ կորպուսային տվյալների կիրառման վերաբերյալ: Տրվում է Մարկ Դելվիսի Ժամանակակից ամերիկյան անգլերենի կորպուսի համառոտ բնութագիրը (Corpus of Contemporary American English - COCA), որը հանրային ամենամեծ և ամենապահանջված կորպուսներից մեկն է:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել էլեկտրոնային լեզվաբանական կորպուսների օգտագործման առանձնահատկությունները անգլերենի դասավանդման գործընթացում, ինչպես նաև ցույց տալ կորպուսային տվյալների կիրառման առավելությունները լեզվի բառապաշարային ու քերականական առանձնահատկությունների ուսումնասիրության համար:

Հետազոտության արդիականությունն ու գիտական նորությունը: Այս ուսումնասիրությունը ներկայացնում է անգլերենի ուսուցման ժամանակակից մոտեցում՝ կորպուսային տվյալների օգտագործման միջոցով, ինչը հնարավորություն է տալիս աշխատելու իսկական լեզվական օրինակների հետ և բարելավելու լեզվաբանական կառույցների ըմբռնումը:

Հեղինակը հաստատում է կորպուսային տվյալների կիրառման արդյունավետությունը անգլերենի ուսուցման գործընթացում: Ընդգծվում է, որ կորպուսների հետ կանոնավոր աշխատանքը նպաստում է ոչ միայն մեթոդական, այլև մանկավարժական, թարգմանչական և գործնական այլ խնդիրների լուծմանը:

Բանալի բառեր լեզվաբանական կորպուս, որոնողական աշխատանք, իսկական տեքստեր, օտար լեզվի ուսուցում, լեքսիկական, քերականական հատկանիշներ:

Список использованной литературы

1. Sysoev P. V. Lingvisticheskiy korpus v metodike obucheniya inostrannym yazykam // Yazyk i kul'tura. 2010. № 1 (9). S. 99–111, a takzhe Sysoev, P. V. Lingvisticheskiy korpus v metodike obucheniya inostrannym yazykam / P. V. Sysoev. —<https://cyberleninka.ru/article/-n/lingvisticheskiy-korpus-v-metodike-obucheniya-inostrannym-yazykam/viewer> и др. работы etogo avtora.
2. Baker P., Hardie A., McEnery T.A. Glossary of Corpus Linguistics. Edinburgh University Press, 2006. 187 p.
3. Davies M. The Corpus of Contemporary American English. URL: <https://www.english-corpora.org/coca/> (дата обращения: 22.01.2020).
4. Grigaliuniene J. Corpora in the classroom. Vilnius University, 2013. 81 p.
5. Biber, D., Conrad, S., & Reppen, R. (1998). Corpus Linguistics: Investigating Language Structure and Use. Cambridge University Press, 112–113.
6. Hunston, S. (2002). Corpora in Applied Linguistics. Cambridge University Press, 204.
7. Starostin S. A. Korpusnaya lingvistika: Printsipy i metody. Izdatel'stvo MGU, 2007, s. 90–91.

Получено: 01.02.2025

Рассмотрено: 04.02.2025

Принято: 24.02.2025

Received: 01.02.2025

Reviewed: 04.02.2025

Accepted: 24.02.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

THE ASSESSMENT ISSUES OF EDUCATION BY LEARNING OUTCOMES AND CREDIT MEASUREMENT

Tshughuryan Armen

*Doctor of Economic Sciences, Professor
Armenian State University of Economics
Republic of Armenia
jarmen2005@gmail.com
<https://orcid.org/0000-0002-9244-9280>*

Khachatryan Nonna

*Ph.D. of Economics, Associate Professor
Yerevan State University,
Republic of Armenia
nonnakhachatryan@ysu.am
<https://orcid.org/0009-0000-3916-6735>*

Karapetyan Svetlana

*Ph.D. of Pedagogy, Associate Professor
Northern University
Republic of Armenia
sveta.karapetyan@yahoo.com
<https://orcid.org/0009-0004-2249-6948>*

Summary

The use of an effective assessment system in the educational process has always been a major issue in universities. By assessing the results of learning, universities solve the problems of providing competitive scholarships, analyze the quality of educational services, and in conclusion, measure the backup of knowledge and professional competences, acquired by students. Therefore, assessments given to learning, play an important role in evaluating the quality of education. However, currently, there is no unambiguous approach to the study of assessment systems used in universities, since the “center of gravity” of assessment is gradually shifting from the field of knowledge acquisition to the field of career abilities and skills of students. Furthermore, in the current era of digitalization, the acquisition of knowledge by a student does not encounter particularly great difficulties, since various knowledge-based information sources are becoming available and open access on the Internet Network. Besides, today the existence of a competitive market employers are considered a priority to hire university graduates, who are mostly distinguished not by the knowledge they have accumulated during university study, but by their professional skills.

The purpose of the research is to propose a methodology for assessing learning at universities that would take into account not only the perception of knowledge, but first of all, the level of acquisition of professional skills by the graduate. Therefore, the use of assessment approaches based on the learning outcomes presented by professional educational programs is emphasized here. Moreover, questions arise regarding the approaches to assessing learning outcomes, since they are measured, on the one hand, by the student's academic workload, and, on the other hand, by the knowledge accumulated during the course of study or the acquisition of professional skills. In our days, the labor market is more valuating not only the accumulated knowledge of graduate students, but more their abilities and skills in working practice. Consequently, it is coming essential to answers a question “What you can do”, but not “What you distinguish and know”.

The novelty of the research is the proposal of a methodology for assessing study at universities by learning outcomes and academic credit dimensions. The presented methodology is distinguished by the fact, that the grading system takes into account not only the performance of achieving the outcomes provided by the vocational educational program, but also the degree of academic workload of the student during the study period. Moreover, this combination also implies a system of task diversification, taking into account the educational workload (credit distribution) according to the required study tasks.

Keywords: *learning outcomes, vocational educational program, multifactor grading, assessment credit distribution, quality of education.*

Presentation of the main material

The higher professional education market has become highly competitive today. On the one hand, there is an overload of domestic and international institutions providing professional educational services in the market, on the other hand, the employer's requirements for the qualitative characteristics of a specialist graduate are constantly changing, due to the sharp socio-economic progress of society [8, page 40]. And the problem is not only that universities are able to keep up with the changing developments in the labor market requirements with the qualitative results of their activities, but also to review the quality of educational services. The competitive environment of the labor market is subject to a review of the approaches to the priority of quality management of graduates with higher education [9, page 12]. If not long ago, the humanitarian nature of education, the priority of universal values, human life and health, free and comprehensive development of the individual, the education of civic consciousness, national dignity, patriotism, exemplary behavior and an environmental worldview were traditionally emphasized, then currently the qualitative characteristics of the university cycle are targeted at the employer requirements and the labor market [2, page 37]. It is in this regard that the university system is currently facing the problems of effective management of professional educational programs, which require urgent solutions [4, page 62]. And the objects of management are the outcomes of education, which ultimately satisfy the qualitative requirements of the labor market for the environment. Let us schematically present the roadmap for the formation of professional education outcomes (see Figure 1).

Certainly, universities, striving for high employment rates for graduates, try to have a direct impact on this process. This is especially successful for universities that have established alumni associations and receive the support of employers in the issue of employment for university graduates [7, page 44]. Relatively small educational institutions that have a small number of alumni themselves establish direct contact with employers and make joint efforts to place graduates in employment [12, page 35]. However, the transition of graduates to employment is considered more effective, when the natural law of market supply and demand and the qualitative characteristics of university graduates in the labor market are in effect constantly in competitive positions [1, page 73]. And for this reason, there is a need to effectively manage the expected outcomes of vocational educational programs (VEP) in universities [3, page 62]. It is also considered important to determine the goals of VEP management for learning outcomes and credit-based learning assessment, which should take place at three levels: in subject programs, in learning outcomes specified by VEP, as well as within the framework of labor market demand [5, page 47].




Figure 1. Roadmap for developing a vocational educational program (VEP) with educational outcomes¹

Therefore, a hierarchy of objectives is formed in the management system on a “bottom-up” basis, where subject programs are considered as objects of assessment that contribute to the formation of learning outcomes. It turns out that the main task of learning assessment at this stage is the integration of the “subject programs-educational complex-general results” chain in such a way that when studying the subject, the student forms not only knowledge, but also skills and abilities targeted at the educational outcomes envisaged by the VEP [6, pages 112-113]. The next stage of VEP management is the coordination of the student’s professional abilities and their presentation in subject programs in such a way, that all this is aimed at the needs of the labor market. Here, the benchmarking and comparative analysis of the outcomes envisaged by the VEP with the leading experience available in the educational market are emphasized. At this stage of management, resource constraints for the implementation of the VEP are also revealed and decisions are made on the possibilities of attracting additional resources that contribute to the formation of competitive outcomes [13, page 63].

The important stage of VEP management, the qualitative level of learning outcomes is the object of study (see Table 1). In the post-industrial era, the employer's requirements for the capabilities of the workforce are undergoing rapid changes [11]. In this regard, the

¹ Created by authors.

management faces the problem of adopting such administrative decisions, that will contribute to the achievement of VEP outcomes, qualitative advancement of the level of education from the requirements of the educational market. It is currently necessary to provide a student still in the first year of undergraduate studies with such skills and abilities that, perhaps, after four years they will not be “outdated” for the graduate and will not become uncompetitive in the educational Market [10, page 11]. Therefore, the most important stage of VEP management is the creation of an effective management structure, that combines the professional abilities, envisaged by the National Qualifications Framework (NQF) and the dynamically changing expectations of the employer in the labor market.

Table 1 Matrix of interconnection between learning outcomes and taught subjects

Subjects taught	Learning outcomes			
	LO1	LO2	LO3	LO4
	A	B	C	D
e	22%	3%	0%	20%
f	15%	22%	15%	12%
k	31%	0%	35%	3%
r	16%	21%	0%	19%
p	5%	16%	24%	8%
m	7%	8%	6%	17%
n	4%	30%	20%	21%
	100%	100%	100%	100%

Table 2
Characterization of learning components

	Learning Objectives Components
A	The student has mastered the theoretical material
B	The student has completed an online extracurricular electronic exercise
C	The student has solved the test
D	The student has performed a self-analysis of the test results
E	The student has compiled and demonstrated the assigned slide presentation in the classroom
F	The student has made suggestions when organizing group work

G	Analyzed the assigned situational analysis (case study)
H	Presented conclusions on the assigned scientific article
I	The student has presented the assigned abstract
J	The student has conducted empirical research
K	The student has presented analytical calculations
L	The student has solved practical assignment problems

The professional abilities of a graduate are not given to him from above, but are formed gradually during the university years of study. We propose to present the anatomy of the management of a professional educational program using the approach of “complementation of the barrel and buckets”. The barrel, which will conventionally be considered a combination of competitive abilities of graduates, is gradually filled with buckets during the years of university study, each of which is represented as a specific ability of the profession A, B, C, D. And each bucket, in turn, is “filled” with professional knowledge, skills and abilities arising from the vocational programs. And if the management system of the VEP is designed in such a way that the interconnected chain of "filling the buckets" and the resulting "filling of the barrel" during the graduate's studies is monitored, then the process of forming competitive outcomes becomes manageable.

Currently, the implementation of competency-based learning assessment, which also takes into account the process of accumulating academic credits, is also being emphasized. In particular, the diversity of assessed tasks is preferable in the assessment system (see Table 2).

Table 3

Distribution of credits and grades for assessed assignments in a 4-credit subject taught by topic and learning outcomes (LOs)

Topics and tasks	Distribution of credits according to the outcomes of the VEP					
	LO1	LO2	LO3	LO4	LO5	LO6
Topic 1 a. d. f.			0.5 credit 4 point 3 point 3 point			
Topic 2 a. g f. l						0.5 credit 3 point 5 point 3 point 4 point
Topic 3 b. c. h. k.		0.5 credit 3 point 6 point 3 point 5 point				
Topic 4 a.	0.5 credit 6 point					

j. h.	3 point 10 point					
Topic 5 a. b. d.				0.5 credit 3 point 3 point 3 point		
Topic 6 a j. k.			0.5 credit 3 point 3 point 3 point			
Topic 7 a l. e.				0.5 credit 3 point 3 point 3 point		
Topic 8 b. c. f. j.			0.5 credit 3 point 3 point 3 point 3 point			
Total credits	0.5	0.5	1.5	1.0	0	0.5
Σ4 credits						
Total grading	19 point	17 point	31 point	18 point	X	15 point
Σ100 points						

Thus, the university's academic department develops a learning assessment procedure with learning outcomes and a credit scale, where a system of task diversity is applied and taking into account the educational workload (credit distribution) according to the required tasks.

The completeness of the assessment scale is ensured by the following steps (see Figure 2):

Step one: the subject being taught is separated from the curriculum with its corresponding credit (in a specific situation, 4 credits).

Step two: credits are distributed according to the topics of the course, which is correlated with the VEP outcomes (see Table 3).

Step three: components of learning assignments are attached to each topic with their clear characteristics (see Table 2), which are given the corresponding points for assessment with the maximum mark.

Step four: The components of the student's learning are actually evaluated, with the corresponding scores attached to them.

Step Five: The final grade for the subject is formed using a cumulative approach, summing the scores of all components of learning on a scale of 0-100.




Figure 2 The proposed steps of implementation grading system based on learning outcomes and academic credits distribution¹

Conclusion

Evaluation of learning outcomes is a complex process and requires a comprehensive approach. In this regard, it becomes expedient for us to demonstrate a multi-factor assessment approach, but primarily taking into account the accessibility of learning outcomes, which are recorded in universities' vocational educational programs. This approach primarily answers the question of what a graduate can do in the labor market, leaving in the background the question of what a graduate knows after university study. The assessment of learning through the acquisition of employment abilities most clearly expresses the degree of competitiveness of a graduate in the labor market, especially when this assessment takes into account the student's academic workload (distribution of credits). Therefore, we consider the use of such an approach to university education, which is based on the combined format of "competence learning outcomes + academic workload + multi-factor assessment".

This purpose methodology is giving us more comprehensive opportunities in the students' grading process because it's taking into account multifactor factors influencing learning outcomes, especially from you of quality, but not quantity. Thus, considering academic workload level is giving us the opportunity to measure learning outcomes by credits, which was not used in previous practices.

¹ Created by authors.

**ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՎ ԿՐԵՂԻՏԱՅԻՆ
ՉԱՓԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ճուղության Արմեն

*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Հայաստանի Հանրապետություն
Jarmen2005@gmail.com*

Խաչատրյան Նոննա

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան
Հայաստանի Հանրապետություն
nonnakhachatryan@ysu.am*

Կարապետյան Սվետլանա

*Մանկավարժական գիտությունների թեկնածու
Հյուսիսային համալսարան
Հայաստանի Հանրապետություն
sveta.karapetyan@yahoo.com*

Ամփոփում

Ուսումնական գործընթացում արդյունավետ գնահատման համակարգի կիրառումը միշտ էլ հիմնախնդիր է եղել համալսարաններում: Գնահատելով ուսումնառության արդյունքները՝ համալսարանները լուծում են մրցակցային կրթավճարների տրամադրման խնդիրներ, վերլուծում են կրթական ծառայությունների մատուցման որակը և, վի վերջո, չափում են շրջանավարտների ձեռք բերած գիտելիքների ու մասնագիտական կարողությունների պաշարը: Հետևաբար ուսումնառությանը տրվող գնահատականները կարևոր դերակատարում ունեն կրթության որակի գնահատման գործում: Սակայն ներկայումս համալսարաններում կիրառվող գնահատման համակարգերին միանշանակ մոտեցում չի ցուցաբերվում, քանի որ գնահատման ծանրության կենտրոնը գիտելիքների ձեռքբերման դաշտից աստիճանաբար տեղափոխվում է մասնագիտական կարողությունների և հմտությունների ոլորտ: Թվայնացման արդի դարաշրջանում ուսումնառուի կողմից գիտելիքի ձեռքբերումը առանձնապես մեծ դժվարությունների չի հանդիպում, քանի որ համացանցում հասանելի են դառնում բազմաբնույթ գիտելիքահենք տեղեղեկատվական աղբյուրներ: Ավելին, այսօր մրցակցային շուկայի առկայությունը ստիպում է գործատուներին աշխատանքի ընդունել համալսարանական այնպիսի շրջանավարտների, որոնք առավելապես առանձնանում են ոչ թե իրենց կողմից կուտակած գիտելիքներով, այլ հենց մասնագիտական կարողություններով:

Հետազոտության նպատակն է առաջարկել համալսարաններում ուսումնառության գնահատման այնպիսի մեթոդաբանություն, որը հաշվի կառնեք ոչ միայն գիտելիքի ընկալումը, այլև առաջնահերթորեն շրջանավարտի մասնագիտական կարողությունների ձեռքբերման աստիճանը: Հետևաբար այստեղ կարևորվում է մասնագիտական կրթական ծրագրերով ներկայացվող ուսումնառության վերջնարդյունքների հիման վրա գնահատման մոտեցումների կիրառումը: Ընդ որում, հարցադրումներ են ծագում ուսումնառության վերջնարդյունքների գնահատման մոտեցումների վերաբերյալ, քանի որ ուսումնառության արդյունքները, մի կողմից, չափվում են ուսանողի ակադեմիական ծանրաբեռնվածությամբ, մյուս կողմից՝ սովորելու ընթացքում կուտակած գիտելիքներով կամ մասնագիտական կարողությունների ձեռքբերումներով:

Հետազոտության նորույթն է համալսարաններում ուսումնառության վերջնարդյունքներով ու կրեդիտային չափայնությամբ ուսումնառության գնահատման մեթոդա-

բանության առաջարկումը: Ներկայացվող մեթոդաբանությունը առանձնանում է նրանով, որ գնահատման համակարգում հաշվի են առնվում ոչ միայն մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերման կատարողականը, այլև ուսումնառության ընթացքում ուսանողի ակադեմիական ծանրաբեռնվածության աստիճանը: Ընդ որում, այս համակցումը ենթադրում է նաև առաջադրանքների բազմազանության համակարգ՝ հաշվի առնելով ուսումնական ծանրաբեռնվածությունը (կրեդիտային բաշխվածությունը) ըստ պահանջվող առաջադրանքների:

Բանալի բառեր՝ ուսումնառության վերջնարդյունքներ, մասնագիտական կրթական ծրագիր, բազմազործոն գնահատում, գնահատման կրեդիտային բաշխվածություն, կրթության որակ:

ВОПРОСЫ ОЦЕНКИ КАЧЕСТВА ОБРАЗОВАНИЯ ПО КОНЕЧНЫМ РЕЗУЛЬТАТАМ ОБУЧЕНИЯ И ИЗМЕРЕНИЯ КРЕДИТОВ

Джугурян Армен

*Доктор экономических наук, профессор,
Армянский государственный экономический университет,
Республика Армения
Jarmen2005@gmail.com*

Хачатрян Нонна

*Кандидат экономических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения
nonnakhachatryan@ysu.am*

Карапetyan Светлана

*Кандидат педагогических наук,
Северный университет,
Республика Армения
sveta.karapetyan@yahoo.com*

Аннотация

Внедрение эффективной системы оценки в образовательный процесс всегда было актуальной проблемой в вузах. Оценивая результаты обучения, вузы решают задачи обеспечения конкурентоспособной платы за обучение, анализируют качество образовательных услуг и, наконец, измеряют запас накопленных знаний и профессиональных навыков, приобретенных выпускниками. Поэтому измерение успеваемости играет важную роль в оценке качества образования. Однако однозначного подхода к системам оценки, используемым в настоящее время в вузах, практически не существует, поскольку центр тяжести оценки постепенно смещается из области получения знаний в область профессиональных умений и навыков. В современную эпоху цифровизации получение знаний обучающимся не встречает особых трудностей, поскольку в сети Интернет множество источников доступной информации для приобретения знаний. Более того, наличие конкурентного рынка сегодня вынуждает работодателей нанимать выпускников вузов, которые в первую очередь ценятся не за накопленные знания, а за профессиональные способности.

Цель исследования – предложить методику оценки обучения в вузе, которая учитывала бы не только степень приобретения знаний, но и, в первую очередь, степень освоения выпускником профессиональных навыков. Поэтому здесь особое внимание уделяется подходам к оценке, основанным на результатах обучения, представленных в профессиональных образовательных программах. Кроме того, возникают вопросы относительно подходов к оценке результатов обучения, поскольку результаты обучения измеряются, с одной стороны, учебной нагрузкой студента, а с другой стороны, знаниями, накопленными в ходе обучения или в процессе приобретения профессиональных навыков.

Новизна исследования заключалась в предложении использования новой методологии оценки обучения в вузах по показателям результатов обучения и кредитов. Представленная методика отличается от предыдущей тем, что новая система оценки учитывает не только результативность достижения конечных результатов, предусмотренных профессиональной образовательной программой, но и степень учебной нагрузки студента в период обучения. Более того, данное сочетание подразумевает и использование системы диверсификации заданий, учитывающей учебную нагрузку (распределение кредитов) в соответствии с заданиями.

Ключевые слова: результаты обучения, профессиональная образовательная программа, многофакторная оценка, распределение оценочных кредитов, качество образования.

References

1. Karapetyan S., Khachatryan, «Kanach krtuthyan martahravernery», // Krtuthyuny 21-rd darum, #11/1, ej 68–74, 2024:
2. Chughuryan A., Khachatryan N., «Krtakan tcarayutyunneri yekamutneri karavarman himnakhndirnery buherum», Hanrayin karavarum gitakan handes, Yerevan, 2013, 3–4, ej 36–44:
3. Chughuryan A., Khachatryan N., Unakuthyunneri henqov hamalsaranakan krtuthyan apagan, «Aylyntranq» yeramsya gitakan handes, Yerevan, 2020, april–hunis, ej 144–152:
4. Chughuryan A., Kirakosyan N., Khachatryan N., Masnagitakan krtakan tsragreri karavarman himnakhndirnery, «Evropakan akademiayi taregirq», Yerevan, 2019, ej 59–69:
5. Chughuryan A., Mkhitarian A., Aspiranturayits doktorantura, Hyusisayin hamalsaran, Yerevan, 2016, ej 47:
6. Chughuryan A., Mkhitarian A., Avetisyan A., Masnagitakan krtuthyan karavarman, «Gituthyun» hrat., Yer. 2024, ej 112–113:
7. Alex, P. (2022). Time to Pull the Plug on Traditional Grading? Supporters of mastery-based grading say it could promote equity. *Education Next*, 22(4), pp:38–43.
8. Feldman, J. (2019). Equitable Grading Tales of Three Districts: How can educators more equitably and accurately report student achievement? *School Administrator*, 76(5), pp: 38-41.
9. Hicks, E.T., Alvarez, M. de la C., & Domenech Rodriguez, M, M. (2024) Shifting student attitudes while minimizing grading bias: Pedagogical considerations in a multicultural psychology course. *Translational Issues in Psychological Science*. <https://doi.org.proxy.library.stonybrook.edu/10.1037/tps0000390>
10. Hunt, M.W. (2019)/ Going “gradeless” in a CTE classroom. *Techniques: Connecting Education & Careers*, 94(2), pp: 10-13.
11. Kohn, A. (2011). The case against grades. *Educational Leadership*. <https://www.alfiekohm.org/article/case-grades/>
12. Marzano, R.J., & Heflebower, T. (2011). Grades that Show What Students Know. *Educational Leadership*, 69(3), pp:34-39.
13. Ou Lydia Liu, Brent Bridgeman and Rachel M. Adler (2012). Measuring Learning Outcomes in Higher Education: Motivation Matters, *Educational Researcher*, pp: 352-361 DOI: 10.3102/0013189X12459679
14. Winger, T. (2005) Grading to Communicate. *Educational Leadership*, 63(3), pp: 61-65.

Получено: 10.02.2025

Рассмотрено: 11.02.2025

Принято: 16.04.2025

Received: 10.02.2025

Reviewed: 11.02.2025

Accepted: 16.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

ԲԱԺԻՆ 3. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ
РАЗДЕЛ 3: МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ
SECTION 3: TEACHING METHODICS

UDC 371. 315

DOI 10.46991/educ-21st-century.v7.i1.177

**«ՇՐՋՎԱԾ ԴԱՍԱՐԱՆ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄ
ՍԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Արզումանյան Արմենուհի

*բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
armenuhiarzumanyan@mail.ru
<https://orcid.org/0000-0002-8482-7683>*

Ամփոփում

«Շրջված դասարան» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառումը գրականության դասավանդման գործընթացում վերտառությամբ հողվածում փորձել ենք ցույց տալ վերոնշյալ մեթոդի կիրառման յուրահատկությունները՝ պայմանավորված ուսուցանվող նյութի բնույթով և գաղափարագեղագիտական համակարգով, ուսուցանվող նյութին հատկացված ժամաքանակով: Դիտարկել ենք մեթոդի կիրառման մի քանի մոտեցումներ՝ ըստ մեթոդի սկզբունքային առանձնահատկությունների: Հետաքրքիր շեշտադրումներով բացահայտվել են վերոնշյալ մեթոդի էությունը, տվյալ ձևաչափով նյութի ուսուցման սկզբունքները՝ մատնանշելով ու հիմնավորելով դասավանդման այդ եղանակի համապատասխան առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, ուսուցման նպատակից բխող յուրահատկությունները:

«Շրջված դասարան» մեթոդի տարբեր մոտեցումների կիրառմամբ շեշտադրվել են որոշ գրական երկերի ուսուցման առանձնահատկությունները: Վերոնշյալ ուսուցման եղանակով քննաբանվել են գրական երկի վերլուծության արդյունավետ միջոցները, որոնք նպաստում են ուսուցչի կողմից պատրաստված տեսադասերից սովորած հարցադրումները հաջորդ դասին աշակերտների հետ ավելի մեծ ժամանակահատվածում քննարկել՝ կատարելով ավելի խորքային վերլուծություններ:

Շեշտադրվել են մեթոդի կիրառման մի շարք առավելությունները՝ տեսադասի միջոցով ներկայացված նյութերի՝ տանը մի քանի անգամ դիտելու ու ավելի լավ հասկանալու հնարավորություն, անհրաժեշտության դեպքում անցած տեսադասերի նորից վերանայում ու վերհիշում, մինչև դասաժամը ընկերների և ուսուցչի հետ որոշակի հարցերի քննարկում, նոր տեղեկատվության համակարգում, ինչը կնպաստի ուսուցանվող նյութի ավելի խորքային իմացությանը:

***Բանալի բառեր և բառակապակցություններ՝** շրջում դաս, տեսադաս, տեսաձայնագրություն, վերլուծական մտածողություն, գաղափարական հարցադրումներ, խոհափիլիսոփայական շերտեր:*

Հոդվածի նպատակն է հետաքրքիր դիտարկումներով բացահայտել «Շրջված դասարան» ուսուցման մեթոդի էությունը, դրա՝ տարբեր մոտեցումներ-

րով կիրառման հնարավորությունները, որոնք պայմանավորում են ուսուցանվող նյութի բազմաշերտ ուսումնասիրություն:

Հետազոտության նորույթը: Բացահայտվել են «Շրջված դասարան» ուսուցման մեթոդի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի՝ որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ նյութի առավել խորքային վերլուծության հնարավորություն, մատուցվող նյութի բացատրություն ուսուցչի կողմից պատրաստված տեսադասերի միջոցով, որոնք աշակերտները դիտում և սովորում են տանը, հետո դասի ընթացքում, ժամանակ խնայելով, քննարկում, համակարգում ու ամփոփում:

Հետազոտության արդիականությունը պայմանավորում է ուսուցման ժամանակակից մեթոդաբանության պահանջներով դիտարկել գրական երկերի ուսուցման գործընթացը՝ այն դարձնելով ժամանակակից կրթական ծրագրերին համահունչ: Հոդվածում ցույց ենք տվել «Շրջված դասարան» ուսուցման մեթոդի՝ տարբեր մոտեցումներով կիրառման արդյունավետությունը, դրանց օգնությամբ գեղարվեստական ստեղծագործության առավել բովանդակային և բազմաշերտ ուսումնասիրության հնարավորությունները:

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումների. «Շրջված դասարան» ուսուցման մեթոդը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային վերլուծությանը, նյութի նախապես իմացությամբ պայմանավորված՝ աշակերտների՝ ուսուցանվող թեմայի առավել ընդգրկուն քննարկումներին, առաջադրված խնդրի համակարգման հմտությունների ձևավորմանը, գեղարվեստական ստեղծագործության լայնածավալ ներկայացմանը, դասը առավել հետաքրքիր ու բովանդակալից դարձնելուն:

Հիմնական նյութի շարադրանք: «Շրջված դասարան» ուսուցման ժամանակակից մեթոդի հիմնադիրներ Ջոնաթան Բերգմանն ու Աարոն Սամսը պատահականորեն բացահայտեցին դասընթացների տեսանյութեր ստեղծելու հեշտ միջոց, որը նրանց վերոնշյալ մեթոդի կիրառման հնարավորություն տվեց: Սա համեմատաբար պարզ գործիք է, որը տեղադրված է համակարգիչներից մեծ մասի վրա: Խոսքը «PowerPoint» ծրագրի մասին է: 2006 թ., անշուշտ, գոյություն ունեին տարբեր ծրագրեր՝ տեսաձայնագրություններ պատրաստելու համար, բայց հենց այս ծրագիրը տարածում գտավ, քանի որ մատչելի էր և հեշտ գործածելի, և ուսուցիչները հաճախ էին օգտվում դրանից նյութեր պատրաստելու համար: Առաջին ուսումնական տեսանյութերից հետո տեխնոլոգիաները շատ են զարգացել: Այսօր հատկապես կրթական նյութերի հիման վրա կազմված տեսանյութերի առցանց տեղադրման գործիքներն ու կրթական նյութերը բազմաթիվ են, և նրանց հասանելիությունը՝ ավելի ու ավելի հեշտըմբռնելի [5, էջ 87]: «Սկզբնապես ձևավորվելով որպես մեթոդ՝ այն վերածվել է մանկավարժական նոր մոտեցման՝ ներառելով անհատական, ծրագրավորված, պրոբլեմային, համագործակցային ուսուցման առանձին տարրեր» [1, էջ 544]:

Ուսուցման այս եղանակը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման վրա, որոնց շնորհիվ իրականացվում է

դասարանի շրջումը: Հիմնականում ուսուցիչները ուսուցանվող նյութերից կազմում են փոքր տեսադասեր՝ այնտեղ շեշտադրելով ուսուցանվող գրական ստեղծագործության գեղարվեստական արժեքը, գաղափարական հարցադրումները, պատկերակերտման առանձնահատկությունները: Աշակերտները առկա դասընթացից առաջ դրանք ինքնուրույն ուսումնասիրում են տանը՝ հնարավորություն ունենալով ավելի երկար ժամանակահատվածում սովորել հանձնարարված դասը և կատարել ավելի խորքային վերլուծություններ: Եթե ուսուցանվող թեմային հատկացված դասաժամերը համեմատաբար քիչ են, կարելի է տեսական նյութի հետ հանձնարարել տնային առաջադրանքներ՝ նոր նյութը ավելի լավ հասկանալու ու ամրապնդելու համար:

Բարբարա Վոլվուդն ու Վիրջինիա Ջոնսոն Անդերսենը այս մոտեցումը զարգացրել են «Արդյունավետ գնահատում» (1998) գրքում: Նրանք մի մոդել են առաջարկում, որով սովորողները սկզբնական գիտելիքը ստանում են նախքան դասը, իսկ դասի ընթացքում կենտրոնանում են համադրման, վերլուծության, խնդիրների լուծման և այլնի վրա: Համոզված լինելու համար, որ սովորողներն իրոք անում են անհրաժեշտ նախադասարանային աշխատանքը տանը, Վոլվուդն ու Անդերսենը նոր նյութի հետ առաջարկում են նաև այդ նյութի վրա հիմնված որոշ տնային առաջադրանք՝ գրավոր շարադրանք, ոչ բարդ խնդիրներ» [6]:

Ժամանակակից կրթական գործընթացում ուսուցման հետաքրքիր ձև է շրջուն դասը (շրջված դասարան): Ըստ ավանդական մեթոդների՝ դասը կառուցվում է տվյալ դասաժամին նոր նյութի բացատրության, դրան առնչվող տնային առաջադրանքների հանձնարարման հերթականությամբ: Հաջորդ դասին աշակերտները պատմում են հին դասը, քննարկում են առաջադրված թեմային առնչվող հարցադրումները, բացահայտում առաջադրված նյութի գաղափարական հարցադրումները, այնուհետև ուսուցիչը հանձնարարում է նոր թեման՝ բացատրելով դրա հետ կապված հիմնախնդիրները: «Շրջված դասարան» ուսուցման ժամանակակից մեթոդի հիմքում դասի այս ավանդական կառուցվածքի հակառակ ընթացքն է. ուսուցանվող նյութի տեսական մասը աշակերտը ուսումնասիրում է տանը ուսուցչի կողմից պատրաստված տեսադասերի օգնությամբ, իսկ դասարանում աշակերտների պատասխանների հիման վրա առավել խորքային վերլուծություններ են կատարվում: Ի տարբերություն նոր նյութի մատուցման ավանդական մոտեցումների, երբ ուսուցիչը ամբողջ նյութը նախապես բացատրում է դասարանում, և աշակերտները հաջորդ դասին նույնությամբ դասագրքային վերլուծության շրջանակում պատմում են հանձնարարված թեման, ուսուցման ժամանակակից մեթոդները հնարավորություն են տալիս ուսուցանվող նոր նյութը նախապես ամբողջությամբ չբացատրելու աշակերտներին, այլ հետո միայն հիմնական ելակետային հարցադրումները քննարկելու՝ թողնելով, որ աշակերտը ինքնուրույն գտնի և համակարգի թեմային առնչվող մի շարք հարցեր: «Շրջված դասարան» ուսուցման մեթոդը լա-

վագույն միջոցներից է աշակերտի՝ ստեղծագործական, վերլուծական խոսք կառուցելու հմտությունները զարգացնելու համար:

«Շրջված դասարան» մեթոդի կիրառման համար անհրաժեշտ են հետևյալ քայլերը՝

- ստեղծել կարճ կրթական դաս-տեսանյութեր, որոնք կներկայացնեն ուսուցանվող թեմայի հիմնադրությունները,

- պատրաստել հարց-առաջադրանքներ՝ հիմնված ուսումնական կամ նմանատիպ տեսանյութերի վրա, որոնք օգնում են ստուգել, թե ինչքանով են աշակերտները հասկացել դասանյութը,

- համակարգել կրթական նյութերը առցանց տեղադրելու և փոխանակելու գործիքներ, որոնք առցանց ծառայություններ են և հնարավորություն են տալիս ստեղծելու աշակերտների խմբեր, հետևելու նրանց կատարած աշխատանքներին ու գնահատելու աշակերտների կողմից կատարված հետազոտությունների վերջնարդյունքները,

- ստեղծել բոլորին հասանելի ծրագրեր, որոնց միջոցով ուսուցիչը կարող է տարբեր տեսակի նյութեր առցանց տեղադրել և աշակերտների հետ քննարկումներ կազմակերպել:

«Շրջված դասարան» մեթոդի կիրառմամբ տեսադասերի օգնությամբ տնային հանձնարարության կատարումը և նոր նյութի յուրացման որոշ մակարդակի իրականացումը տանը սովորողներին տալիս են մի քանի առավելություններ:

ա) Աշակերտը կարող է սովորել նյութը տանը հանգիստ պայմաններում, երբեմն նաև որոշակի դադարներով, ամբողջական նյութի մաս-մաս յուրացումով, ինչը կնպաստի ավելի լավ ամրապնդել հանձնարարված թեման:

բ) Եթե աշակերտը հանձնարարված նյութի ինչ-որ հատված չի մտապահել, մոռացել է, կրկին կարող է միացնել տեսադասը ու վերհիշել: Երբ նոր նյութի մաստուցումն իրականացվում է դասարանում, այն կրկին ետ բերելու հնարավորություն չի լինում:

Ուսուցիչը պետք է աշակերտներին հանձնարարի, որ տանը նյութի ուսումնասիրության ընթացքում առաջացած անհասկանալի հարցերը գրեն, որպեսզի դասարանում դրանց խորքային բացատրություն տրվի: Ուսուցիչը, համոզվելու համար՝ աշակերտները ուշադիր են լսել տեսանյութը, կարող է կիրառել «սատանայի վկա» հնարը: Այս դեպքում ուսուցիչը միտումնավոր սխալ միտք է ասում, որ ստուգի, թե արդյոք ուշադիր են աշակերտները հետևել իր խոսքին: Իհարկե, սխալը պետք է լինի աշակերտների արդեն իմացած նյութի շրջանակում: Հաճախ ուսուցիչներին թվում է, թե այդ դեպքում աշակերտները կարող են մտածել, որ իրենց ուսուցիչը չի տիրապետում նյութին և սխալ բաներ է ասում: Բայց մի քանի անգամ կիրառելուց հետո աշակերտները կհասկանան, որ դա մանկավարժական հնար է: «Սատանայի վկա» հնարի կիրառումը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու լավ մեթոդ է [2, էջ 29]:

«Շրջված դասարան» ուսուցման մեթոդը կարել է կիրառել մի քանի մոտեցումներով:

1. Կենսագրական նյութի ուսուցման ժամանակ կարելի է երեխաներին հանձնարարել ուսուցչի կողմից նախապես պատրաստված տեսադասի հիման վրա սովորել գրողի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը ընդհանրացնող նյութերը: Կարելի է աշակերտներին հանձնարարել, որ իրենք էլ ինքնուրույն փնտրեն գրողի կյանքի մասին հետաքրքիր տեղեկություններ, նրանց ժամանակակիցների հուշերից առանձնացնեն ինքնատիպ դրվագներ, ծանոթանան գրողի նամակներին և ուշագրավ մտքեր ու տեղեկություններ համակարգեն և հաջորդ դասին դրանք ներկայացնեն իրենց դասընկերներին:

«Կենսագրական նյութի ճանաչողական ընդգրկումների անհրաժեշտ չափի պակասը կենսագրական նյութը գրկում է ազդելու, ներգործելու վիթխարի ուժից, նվազեցնում գրականության դասընթացի կրթադաստիարակչական արժեքը» [3, էջ 5]: Աշխատանքային այս կարգը, անշուշտ, հնարավորություն կտա այդ բացը լրացնելու, դասի ժամանակ ավելի խորքային ուսումնասիրություն կատարելու, աշակերտների համակարգած նյութերի հիման վրա ավելի լավ ճանաչելու գրողին, նրա ապրած ժամանակաշրջանը:

2. Բանավիճային հարցադրումներ պարունակող ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, կիրառելով վերոնշյալ մեթոդը, կարելի է նյութի ուսուցումը կատարել հետևյալ կերպ. ուսուցիչը նախօրոք պատրաստում է հետաքրքիր տեսադաս տվյալ գրական երկի սյուժետային զարգացումների հենքի վրա՝ ընդգծելով այն հիմնական պատկերային շերտերը, որոնք կարող են աշակերտների կողմից միակերպ գնահատումների չարժանանալ: Աշակերտները տանը ուսուցչի կողմից պատրաստված տեսանյութը դիտելուց հետո գեղարվեստական երկի՝ վիճահարույց հարցադրումներ, մտքեր, հանգուցալուծումներ պարունակող հատվածները ինքնուրույն վերլուծում են ըստ իրենց անձնական կարծիքների: Հաջորդ դասին՝ ստեղծագործության քննարկման ժամանակ, յուրաքանչյուր աշակերտ հիմնավորում է իր մոտեցումները, երևույթի՝ իր համար ընդունելի տարբերակները: Արդյունքում աշակերտները լսում են տարբեր գնահատումներ, որոնք դասի ավարտին ուսուցչի օգնությամբ հստակեցվում են բոլորի համար: Օրինակ՝ Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի ուսուցման ժամանակ ուսուցիչն իր պատրաստած տեսադասում կարող է ներկայացնել դրամայի ժանրային առանձնահատկությունները, հեղինակի պատկերակերտման արվեստի ինքնատիպությունը, կերպարակերտման միջոցները, դրամայի գաղափարական շեշտադրումները: Տանը ընդհանուր նյութը սովորելուց հետո աշակերտներից յուրաքանչյուրը պետք է հիմնավորի գրական հերոսների՝ իր համար ընդունելի կամ մերժելի քայլերը: Բնականաբար, կլինեն տարբեր հետաքրքիր դիտարկումներ և կերպարների գործողությունների գնահատումներ՝ ըստ աշակերտների՝ մարդկային հարաբերությունների արժևորման տեսանկյունների: Հաջորդ դասի համար ուսուցիչը պետք է պատրաստի հարցադրումներ՝ կերպարների հոգեբանական, բարոյական նկարագիրը ամբողջացնելու հա-

մար, օրինակ՝ ինչո՞ւ Անդրեաս Էլիզբարովը սեփական պատիվը ավելի բարձր դասեց, քան աղջկա երջանկությունը, ինչո՞ւ Արտաշես Օթարյանը չընդունեց Էլիզբարովի՝ իրեն ուղղված առաջարկը՝ լռել, չբարձրաձայնել ճշմարտությունը, վերցնել գումարը և երջանկանալ իր աղջկա հետ, ճի՞շտ էր արդյոք Մարգարիտի ինքնասպանությունը: Քանի որ աշակերտները նյութի բովանդակության մեկնաբանության հարցերը լսել էին տեսադասի ընթացքում, հաջորդ դասին ավելի շատ ժամանակ կունենան հետաքրքիր բանավեճ կազմակերպելու, միմյանց կարծիքները լսելու, կերպարները ավելի խորքային վերլուծությամբ ուսումնասիրելու, դրամայի գաղափարական հարցադրումները շեշտադրելու և մեկնաբանելու համար: «Շրջված դասարան» մեթոդի կիրառումը հնարավորություն կտա կատարելու ավելի ընդգրկուն քննարկումներ և բացահայտելու բազմաբովանդակ հարցադրումներ, որոնք կնպաստեն աշակերտների կենսամտածողության ու արժեհամակարգի ճիշտ զարգացումներին:

3. «Շրջված դասարան» ուսուցման եղանակին կարելի է գուգադրել «Մանրապատում» մեթոդը: Ուսուցիչը կարող է աշակերտներին հանձնարարել, որ գրական երկի հանգուցալուծումը իրենք գրեն տանը՝ չիմանալով տվյալ ստեղծագործության սյուժետային ավարտը: Դրա համար ցանկալի է, որ ուսուցիչը նախօրոք երեխաներին տեսադասի ձևաչափով տա որևէ գրական երկի բովանդակային հիմնախնդիրները, ներկայացնի ստեղծագործության նկարագրությունը մինչև հանգուցալուծում՝ ավարտը թողնելով աշակերտներին: Տանը նրանք շարադրում են գործողությունների զարգացման՝ իրենց համար ընդունելի ավարտը: Բնականաբար, կլինեն տարբեր հանգուցալուծումներ, որոնք աշակերտներին մտորելու տեղիք կտան՝ գտնելով ամենահետաքրքիր տարբերակը: Օրինակ՝ Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի ուսուցման ժամանակ կարելի է պատրաստված տեսադասում ներկայացնել պատմվածքի բովանդակային մի հատվածը՝ հանգուցալուծումը թողնելով աշակերտների հայեցողությանը: Բնականաբար, աշակերտներից շատերը մայր ձիու և մայր գայլի կռիվը կավարտեն ոչ թե մայր ձիու սատկելու դրվագով, այլ մայր գայլի, որովհետև ձի ու գայլ կենդանիների ընտրության մեջ աշակերտների նախապատվությունը կտրվի ձիուն:

Հաջորդ դասին ուսուցիչը, լսելով աշակերտների տարբեր պատասխանները, պետք է նշի, որ մայր ձիու և մայր գայլի պայքարը իրենց ձագերի համար սկսվում և զարգանում է ոչ այնքան գիտակցության, որքան մայրական բնագոյների, դրանցից բխող վիճակների, ենթագիտակցականից մղվող ներքին փոթորկումների հյուսվածքներով: Ներքին անհանգստությունը և թշնամուց եկող անընդհատ ուժգնացող վտանգը մայրերից յուրաքանչյուրի ամբողջ մարմինը համակում են անբացատրելի զգացողությամբ. պոթկում է մայրական հոգին, և հնչում է մայրական սիրո կանչը՝ որպես աղոթք առ Աստված... «Երբ ձին ահա-ահա պիտի ծնկեր, գայլը հեռվում, կարծես երագում, շների հաչոց լսեց: Գայլը չուզեց հավատալ, թե շները հաչելով իր վրա են գալիս. բախտը հո չէր կարող լինել այնքան անողորմ, որ իր մեկ լրիվ օրվա չարչարանքն անտեղի անցներ, և ինքը

իր երեք ձագի մոտ դառնար քաղցած ու դատարկ»[4, էջ 577]: «Երբ իր մեջ այլևս ուժ չկար, և ռունգերի ցավերը բթանում էին, և աչքերը բոլորովին մթնել էին, և ականջները լիովին խլացել էին, մայր ձին հեռու-հեռվում շների հաչոց լսեց և հավատաց, որ շները հաչում են իր քուռակի համար և իր համար. **բախտը հոչեր կարող լինել այնքան դաժան, որ նրա քուռակն ապրեր ընդամենը մի հունիս»**[4, էջ 577] (ընդգծումները՝ Ա.Ա.): Այնուամենայնիվ, հետաքրքիր է մաթևոսյանական պատումում տիեզերական տարածքներից եկող խորհուրդը՝ որոշման ինքնատիպ դրսևորումներով: Ինչո՞ւ է պատմվածքում այուժետային հանգուցալուծման ընթացքում կենդանի մնում մայր գայլը: Այստեղ մաթևոսյանական կենսափիլիսոփայության յուրօրինակ շեշտադրումն է, որը հյուսվում է կյանքի գրված ու չգրված օրենքների հենքի վրա: Գուցե ճիշտ էր տիեզերական որոշումը. մայր ձիու հեռացումից հետո փոքրիկ քուռակը պաշտպանված էր, նրա տերերը հոգալու էին նրա ապրելու խնդիրները: Իսկ գայլի ձագուկները մայր գայլի սատկելուց հետո մնալու էին լրիվ մենակ ու անպաշտպան: Այդպիսին էր բնության օրենքը. այլ են մարդ-ձի և մարդ-գայլ հարաբերությունները: Ձին մարդու բարեկամն է, և նրանց գոյատևումի ճանապարհին փոխադարձ կապվածությունը միշտ եղել է: Այլ է գայլ-մարդ կապը. գայլը միշտ եղել է մարդու թշնամին. ուրեմն ճիշտ էր տիեզերական լուծումը... Լսելի է առավել դժվարին վիճակի մեջ գտնվողի աղոթքը, և տիեզերական անհունությունից եկող խորհուրդը գուցե ամենաճիշտն է...

Ուսուցիչը պետք է բացատրի, որ այուժետային նման հանգուցալուծումը պայմանավորված էր նաև երկու մայրերի հոգեվիճակով: Հույզերի գերլարման այդ կետում նրանք հոգեբանական տարբեր հարթություններում էին. մայր ձին իր աչքի առջև ուներ իր ձագուկին, և նրան սպառնացող անմիջական վտանգը նրան ավելի էր ճնշում, այլ էր մայր գայլի վիճակը. նրա ձագուկները այդ պահին անմիջական վտանգ չէին զգում. նրանք ապահով վայրում էին, և այդ պահին նա հոգեբանորեն ավելի կայուն էր և անխոցելի: Մայր ձիու՝ քուռակին սպառնացող անընդհատ ուժգնացող վտանգից եկող ներքին տագնապները նրան դարձնում են էլ ավելի փխրուն, և մայրական սիրտը չի դիմանում նման հոգեցունց զգացողություններին. «Երբ ես նստած էի պառավ կարմիր ձիու մարմնի մոտ, ծեր հովիվը փոքրիկ հովվին ասաց, որ ձիու սիրտը պայթել է քուռակի համար վախենալուց, և զգվանքից ու կատաղությունից»[4, էջ 581]:

Նյութի նման խորքային վերլուծությունը կնպաստի, որ աշակերտները հասկանան մաթևոսյանական կենսափիլիսոփայության խորախորհուրդ շերտերը, պատկերակերտման արվեստի ինքնատիպությունը:

4. «Շրջված դասարան» մեթոդին զուգահեռ կարելի է կիրառել նաև ներառարկայական կապեր: Նյութի ամփոփման փուլում ուսուցիչը կարող է պարաստել հետաքրքիր տեսադաս՝ ընդգրկելով տվյալ հեղինակի ստեղծագործությունների թեմատիկ տրոհումներն ընդհանրացնող բնութագրումները, դրանց գաղափարական հարցադրումների շեշտադրումները, կերպարակերտման արվեստի առանձնահատկությունների դիտարկումները: Կարելի է աշակերտնե-

րին հանձնարարել տանը տեսադասը սովորելուց հետո անցած հեղինակների ստեղծագործություններից ընտրել թեմատիկ ու գաղափարական ընդհանրություններ ունեցող գրական երկեր և կազմել երկու տարբեր հեղինակների՝ նույն թեման պարունակող ստեղծագործությունների համեմատական-վերլուծական աշխատանք՝ ցույց տալով այդ հեղինակների գրական երկերի ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Օրինակ՝ Ա. Իսահակյանի ստեղծագործությունների ուսումնասիրության ավարտին՝ նյութի ամփոփման փուլում, ուսուցչի կողմից պատրաստված հետաքրքիր տեսադասով նորից համակարգելով Իսահակյանի գրական ճանապարհը, աշակերտները կարող են ներառարկայական կապերի կիրառմամբ հետաքրքիր զուգահեռներ գտնել արդեն իրենց կողմից ուսումնասիրված հեղինակների՝ Հ. Թումանյանի, Վ. Տերյանի՝ թեմատիկ ընդհանրություններ ունեցող երկերի միջև:

Ուսուցանվող թեմայի նման ամփոփումը կնպաստի ոչ միայն նոր նյութի ամբողջական ու համակարգված արժևորմանը, այլև անցած նյութի վերհիշեցմանը, աշակերտների համեմատական-վերլուծական մտածողության զարգացմանը:

Եզրակացություն: «Շրջված դասարան» ուսուցման ժամանակակից մեթոդը փոխում է ուսուցման եղանակների ավանդական գործընթացը: Ըստ ուսուցման ավանդական մեթոդների՝ ուսուցանվող նյութի տեսական մասը ուսուցիչը բացատրում է դասարանում՝ ընդգծելով ուսումնասիրվող թեմայի ելակետային դրույթները, գաղափարական հարցադրումները, իսկ գործնական մասը աշակերտը կատարում է տանը՝ հիմնականում առաջնորդվելով դասագրքային վերլուծություններով: Վերոնշյալ մեթոդի կիրառման ժամանակ ուսուցանվող նյութի տեսական մասի յուրացումը կատարվում է տանը ուսուցչի կողմից մշակված առավել վերլուծական-բացատրական ընդգծվածություն ունեցող տեսադասերի օգնությամբ: Ուսուցման այս ձևը դասարանի հետ ավելի համագործակցային աշխատանք և աշակերտների հետ ընդհանուր քննարկումներ կատարելու ժամանակային ավելի մեծ հնարավորություն է տալիս, ինչն էլ նպաստում է նյութի առավել խորքային ուսումնասիրությանը, կերպարների հուզաշխարհի բացահայտմանը, գրական երկի գաղափարական շեշտադրումների քննարկմանը:

APPLICATION OF THE MODERN METHOD OF FLIPPED CLASSROOM IN THE PROCESS OF TEACHING LITERATURE

Arzumanyan Armenuhi

*Ph.D. of Philology, Associate Professor,
Yerevan State University,
Republic of Armenia
armenuhiarzumanyan@mail.ru*

Summary

In the article entitled “APPLICATION OF THE MODERN METHOD OF “FLIPPED CLASSROOM” IN THE PROCESS OF TEACHING LITERATURE,” we aimed to highlight the distinctive features of this teaching method, shaped by the nature of the subject matter, the

ideological and aesthetic framework, and the number of instructional hours allocated. We examined several approaches to implementing the method, aligning with its core principles. The essence of the flipped classroom method and its fundamental teaching principles were explored, with particular emphasis on its advantages, which stemmed from its unique characteristics and the specific educational objectives it served.

By applying different approaches within the “FLIPPED CLASSROOM” framework, we underscored the particularities of teaching certain literary works. This method proved to be an effective tool for analyzing literature, as it allowed for extended in-class discussions on key topics introduced in teacher-prepared video lessons. This, in turn, facilitated more in-depth analysis.

Several advantages of the method were highlighted, including the ability for students to rewatch video lessons multiple times at home, review and reinforce previous lessons as needed, engage in pre-class discussions with peers and teachers, and systematically organize new information. These elements contribute to a deeper and more comprehensive understanding of the material.

Keywords and word combinations: *FLIPPED CLASSROOM, video lesson, video recording, analytical thinking, ideological issues, philosophical dimensions.*

ПРИМЕНЕНИЕ СОВРЕМЕННОГО МЕТОДА «ПЕРЕВЕРНУТОГО КЛАССА» В ПРЕПОДАВАНИИ ЛИТЕРАТУРЫ

Арзумянн Арменуи

*Кандидат филологических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения
armenuhiarzumanyan@mail.ru*

Аннотация

В статье под названием «Применение современного метода «Перевернутого класса» в преподавании литературы» мы стремились выделить особенности этого метода обучения, обусловленные спецификой предмета, его идеологической и эстетической основой, а также количеством учебных часов, отведенных на изучение материала. Мы рассмотрели несколько подходов к внедрению данного метода, исходя из его основных принципов. Исследовались сущность метода «перевернутого класса» и его ключевые принципы с акцентом на его преимущества, вытекающие из уникальных характеристик этого подхода и образовательных целей, которым он служит.

Используя различные подходы в рамках метода «Перевернутый класс», мы изучили особенности преподавания отдельных литературных произведений. Данный метод оказался эффективным инструментом при анализе литературных произведений, поскольку позволяет организовывать расширенные дискуссии в классе по ключевым вопросам, представленным в видеоуроках, подготовленных учителем. Это, в свою очередь, способствовало более глубокому изучению материала.

В статье нами выделены несколько преимуществ метода, включая возможность учащихся неоднократно просматривать видеоуроки дома, при необходимости возвращаться к предыдущему материалу, участвовать в предварительных обсуждениях с одноклассниками и учителем, а также систематизировать новую информацию. Все эти элементы способствуют более глубокому и всестороннему пониманию изучаемого материала.

Ключевые слова и слововыражения: *«перевернутый класс», видеоурок, видеозапись, аналитическое мышление, идеологические вопросы, философские аспекты.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Aghajanyan Z., Hayots lezvi usutsman yev khosqi mshakuthyan dzevavorman metodika, Er., «Nairi» hrat., 2021 th., 570 ej.

2. Khachatryan S., Usutsman ardyunavet hnarner, Yer. F. Ebert himnadram, Hayastan, 2020 th., 73 ej.
3. Kirakosyan G.H., Hay grakanuthyan dasavandman metodika, Yer., HAAH, 2015 th., 199 ej.
4. Mathevossyan Hrant, Erker, 1-in h., «Sovetakan grogh» hrat., Yerevan, 1985 th., 580 ej.
5. Ryback, D., & Sanders, J. (1980), Humanistic versus traditional teaching styles and student satisfaction. Journal of Humanistic Psychology, 20(87), str. 90.
6. <https://dpir.am/?p=1795>.

Получено: 23.02.2025

Received: 23.02.2025

Рассмотрено: 24.02.2025

Reviewed: 24.02.2025

Принято: 19.03.2025

Accepted: 19.03.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License

ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵԶՐՈՒԹԱՅԻՆ ԲԱՌԱՇԵՐՏԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԸՍՏ «ԳՈՒՄ» ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ

Միքայելյան Կարինե

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
karinemiqayelyan1963@gmail.com
<https://orcid.org/0000-0001-7445-4003>*

Ամփոփում

Համառոտ ներածական: Արդի արևելահայերենի եզրությային բառաշերտի ուսուցման հիմնահարցերը բուհական կրթության առաջնահերթություններից են: Մասնագիտական առարկաների ուսուցումն առավել արդյունավետ և նպատակային է դառնում նախ և առաջ եզրությային բառաշերտի յուրացման շնորհիվ: Ուստի ոչ միայն մասնագիտական առարկաների, այլև հայերեն դասավանդողների համար ըստ մասնագիտացումների եզրությային բառաշերտի ուսուցման մեթոդաբանության հիմնահարցերը, մասնավորապես դրանց արդյունավետ մատուցման եղանակների ընտրությունը, դեռևս մնում են խնդրահարույց:

Բանալի բառեր՝ *եզրությունների ուսուցում, ԳՈՒՄ ուսուցման մեթոդ, գրաբարի եզրությային բառաշերտ, արդի արևելահայերենի եզրությային բառաշերտ, իմաստավորվածություն, եզրութացում, եզրութային նորաբանություններ:*

Հիմնախնդիրը

Արդի արևելահայերենի գրեթե բոլոր գիտաճյուղերի եզրությային՝ բառաշերտերի համար գրաբարյան բառապաշարը հիմնական աղբյուրներից է: Իհարկե, դարերի ընթացքում ներքին փոխառության ճանապարհով հնդեվրոպական բառապաշարի մի մասն անցել է վաղնջահայերենին, հնագույն, հին հայերենին, այնուհետև գրաբարյան բառաշերտին: Հնագույն փոխառությունների շնորհիվ գրաբարյան եզրությային բառապաշարը հարստացել է, փոխանցվել միջին հայերենին, բառիմաստների փոփոխության հետևանքով դրանց մի մասն էլ եզրութացել է նաև արևելահայերենում: Այս առումով եզրությունների բուհական ուսուցումը առավել նպատակահարմար ենք համարում ստուգաբանական, ծագումնաբանական, բառակազմական, իմաստաբանական զուգընթաց քննությամբ մատուցել: Այս խնդիրը լավագույնս լուծելի է ԳՈՒՄ ժամանակակից մեթոդի կիրառմամբ:

* Կարծում ենք՝ տերմինային հոմանիշությունից խուսափելու համար **գիտաբառեր** կարելի է համարել գիտության լեզվում առավել հաճախ կիրառվող հասկացական բառերն ու բառակապակցությունները, իսկ **եզրություններ**՝ մասնագիտական ստույգ հասկացությունների անվանումները: Դրանց սահմանազատումը երբեմն այնքան էլ հստակ չէ, ուստի հողվածում մենք դրանք քննել ենք չտարանջատված:

Հոդվածի թեմայի **արդիականությունը** պայմանավորված է բուհական կրթության ոլորտում ըստ մասնագիտացումների եզրութային բառապաշարի ուսուցման արդյունավետ մեթոդների մշակման, մատուցման նպատակահարմար ուղիների որոնման անհրաժեշտությամբ:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների հակիրճ վերլուծություն: Գիտական գրավոր և բանավոր խոսքի մշակույթի, մասնավորապես եզրութաբանության, ուսուցմանը մեծապես նպաստում են այդ հիմնախնդիրներին առնչվող աշխարհի տարբեր երկրների արդիական հետազոտությունները, մասնագիտական բառարանները, բուհական դասագրքերը (Ավետիսյան Յու. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2019, Սուքիասյան Ա. Մ. և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2017, Տիոյան Ս., Հայերենի տերմինագիտության հարցեր, Երևան, 2016, Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Երևան, 2021, Խաչատրյան Լ. Մ., Միրումյան Մ. Վ., Հայրենագիտական տերմինների ուսումնական բառարան, Երևան, 2020, Գալստյան Ա., Լեզվաբանական տերմինների ուսումնասիրության մի քանի հարցեր, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2011, Ա. Արզումանյան, ԳՈՒՍ ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները, «Կրթությունը 21-րդ դարում», թիվ 2(2), Երևան, 2020, Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Հայաստան, 2020, Սարուխանյան Ս. և այլք, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, Միքայելյան Կ. Ռ., Եզրութների դասակարգումն ըստ խոսքիմասային պատկանելության, Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն, Երևան, 2022, Տերմինային բառապաշարի բուհական ուսուցման հիմնախնդրի շուրջ, «Կրթությունը 21-րդ դարում», Թիվ 2(8), Երևան, 2022, Գրաբարը ժամանակակից արևելահայերենի եզրութային բառաշերտի աղբյուր, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», հատուկ թողարկում №2, Երևան, 2024: Allington R., Cunningham P., Classrooms that work, Boston, 2004, Jack C., Richards W., Renandya A. Methodology in Language Teaching. An Anthology of Current practice. Cambridge, New York: Cambridge University Press, 2006, Балаев А.А. Активные методы обучения. М., 2006 և այլն):

Հետազոտության նպատակը: Սույն ուսումնասիրության նպատակը այն դրույթը հիմնավորելն է, որ բուհական արդյունավետ ուսուցումը կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են ժամանակակից որոշակի նոր մեթոդներ, հնարներ և ձևեր:

Հետազոտության նորույթը: Տվյալ հետազոտության **նորույթը** պայմանավորված է նրանով, որ հիմնավորվել և առաջարկվել է ըստ մասնագիտացումների եզրութային բառապաշարի բուհական ուսուցումը հայերենի դասաժամերին առավել արդյունավետ և նպատակային դարձնելու համար առաջնորդվել նաև մեր կողմից առաջարկվող նոր մոտեցմամբ՝ եզրութային բառաշերտի ուսուցումն իրականացնելով ըստ ԳՈՒՍ ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառ-

ման. այն է՝ մասնագիտական եզրույթների բառակազմական, ծագումնաբանական, ստուգաբանական և իմաստաբանական զուգընթաց քննության:

Հետազոտության գործնական նշանակությունը: Սույն հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունն այն է, որ ուսուցողական նպատակից բացի, կարող է օգտակար լինել եզրութաբանական, որևէ եզրութահամակարգի հետագա ուսումնասիրությունների համար:

Եզրութաբանության ուսուցման մեթոդները բուհական համակարգում ընդգրկում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական բաղադրիչներ՝ ներառելով ավանդական ձևեր՝ դասախոսություններ, սեմինարներ, գործնական պարամունքներ, տեխնոլոգիաների կիրառություն, խմբային աշխատանքներ և գիտահետազոտական գործունեություն: Ուսուցման նոր ու նորագույն մեթոդները նպաստում են ուսանողների համապարփակ գիտելիքների և հմտությունների ձևավորմանը՝ պատրաստելով նրանց հաջողության հասնելու եզրութաբանական աշխատանքների և հետազոտության ոլորտներում:

Հիմնական նյութի շարադրանքը

Բուհական կրթության՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» կրթական ծրագրով դասընթացում «Եզրութաբանություն» թեմայի ուսուցումը հատկապես նպաստում է ուսանողների կողմից գիտական խոսքի մշակույթին տիրապետելուն: Սույն հոդվածում հումանիտար, բնագիտական և տեխնիկական մասնագիտացմամբ ուսանողների կողմից իրենց ոլորտի եզրութային բառապաշարի ծագումնաբանական, իմաստաբանական-տիպաբանական ընդհանրություններն ու յուրահատկությունները յուրացնելը հատկապես կարևորում ենք:

Բուհական համակարգում եզրութաբանության ուսուցման մի քանի եղանակներ են կիրառվում, որոնք նպատակ ունեն այս կարևոր ոլորտում ապահովելու ուսանողների խորքային գիտելիքները և կիրառական հմտությունները: Այդ հիմնական եղանակներից են դասախոսությունները, սեմինարները և գործնական պարամունքները: Դասախոսությունների ժամանակ ներկայացվում են եզրութաբանության տեսական հիմքերը, առաջացման պատմությունը, զարգացման ուղիները, ինչպես նաև եզրույթների միօրինականացման և համակարգման գործընթացները, ինչը նպաստում է ուսանողների նոր գիտելիքի ձեռքբերմանն ու իմաստավորմանը, կիրառման նոր հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, ամրակայմանը, մտածողության զարգացմանը: Սեմինարները ավելի ինտերակտիվ են. ուսանողները մասնակցում են քննարկումների, վերլուծում եզրութաբանական տարբեր հարցեր, ներկայացնում և քննարկում են իրենց նախագծերը: Գործնական աշխատանքների դասաժամերին նախ կատարվում են վարժություններ, ապա տրվում են առաջադրանքներ: Օգտվելով եզրութային բառարաններից, տվյալների բազաներից՝ ուսումնասիրում են մասնագիտական եզրույթների կառուցվածքը, կազմության սկզբունքները, կիրառության հնարավորությունները: Իրականացվում են խմբային նախագծեր: Ուսումնասիրելով և վերլուծելով որոշակի եզրութաբանական համակարգեր՝ մշակվում են առաջարկներ եզրույթների բարելավման կամ հայերեն

համարժեքների ստեղծման համար: Մասնագիտական դասաժամերին փորձում են ապահովել նաև համագործակցությունը ոլորտի մասնագետների հետ:

Բանասիրական ֆակուլտետի ուսանողներին հանձնարարվում են գիտահետազոտական աշխատանքներ: Կատարվում են ավարտական և մագիստրոսական թեզեր: Ուսանողները կատարում են անկախ հետազոտություններ եզրութաբանության տարբեր հարցերի շուրջ, վերլուծում են տվյալների բազաներ, առաջարկում նոր մոտեցումներ և լուծումներ: Ասպիրանտները սովորում են գրել և հրապարակել գիտական հոդվածներ եզրութաբանության արդի խնդիրների շուրջ, ինչը նպաստում է հետազոտական հմտությունների զարգացմանը: Կարևորում ենք միջազգային ծրագրերին, սեմինարներին և գիտաժողովներին մասնակցությունը, ինչը թույլ է տալիս ծանոթանալ այլ լեզուների տերմինաբանական համակարգերին և փոխանակել փորձը: Հաճախ եզրութաբանության ուսուցումը ներառում է նաև օտար լեզուների ուսումնասիրություն, ինչը թույլ է տալիս ուսանողներին վերլուծել և համեմատել տարբեր լեզուների եզրութային համակարգերը:

Այսուհանդերձ, ներքոշարադրյալ հետազոտության արդյունքում առաջարկվում է եզրութային բառապաշարի քննության նոր մոտեցում, այն է՝ արդի հայերենի եզրութային բառապաշարն ուսուցանել ծագումնաբանական, ստուգաբանական և իմաստաբանական զուգընթաց քննությամբ՝ ըստ ԳՈՒՍ ուսուցման մեթոդի:

Ըստ ակադ. Գ. Զահուկյանի՝ դեռևս հնդեվրոպական նախալեզվում «սկսել էին...սաղմնավորվել այնպիսի բնագավառների տերմինաբանական համակարգեր, ինչպիսիք են երկրագործությունը, անասնապահությունը և ձկնորսությունը, հաղորդակցման միջոցներն ու նավագնացությունը, արվեստը և արհեստագործությունը, քաղաքական հարաբերությունները, ռազմական գործը և հավատալիքները և այլն» [10, էջ 50]: Բնականաբար, հնդեվրոպական նախալեզվից դրանց մի մասը անցել է վաղնջահայերենին, այնուհետև գրաբարյան բառաշերտ, որը հարստացել է նաև նորակազմություններով, հնագույն փոխառություններով:

Արդի հայերենը հնդեվրոպական նախալեզվից գրաբարի միջոցով ժառանգել է մաթեմատիկական, երկրաչափական, բժշկագիտական, դիվանագիտական, փիլիսոփայական, լեզվաբանական, գրականագիտական, բուսաբանական, կենդանաբանական և այլ բնագավառների որոշակի չափով եզրութային բառաշերտ [9, էջ 160-165]: Ուստի արդի արևելահայերենի եզրութային բառաշերտի համար հիմնական աղբյուրներից մեկը այսօր էլ մնում է գրաբարյան բառապաշարը, որը, ըստ բնագրային աղբյուրների, ամրագրված է մասնավորապես գրաբարի բառարաններում: Դրանցում, բացի լեզվական իմաստներից, հաճախ վկայված են նաև տվյալ բառային միավորների եզրութային նշանակությունները՝ լեզուաբ., աստղգ., կրօն., եկեղ., կենդր., բար., կզմիս., ճարտ. ևն նշումներով, նաև փոխառության աղբյուրները՝ եբր., յուն., ասոր., վրաց., պիլ., պրսկ. ևն: Գիտության սրընթաց զարգացմամբ պայմանավորված՝ բացի գրա-

բարյան բառապաշարից՝ արդի հայերենի եզրութային համակարգերը համալրվում են նաև նոր և նորագույն փոխառություններով:

Արդի արևելահայերենի եզրութային բառապաշարի ծագման, իմաստափոխության հետևանքով եզրութային համակարգում դրանց ամրագրվելու գործընթացն ուսումնասիրելու համար առաջնորդվել ենք գրաբարի, արդի հայերենի բացատրական, եզրութային բառարանների զուգադրական քննությամբ:

Հոդվածում քննել ենք գրաբարյան համագործածական որոշակի բառաշերտի՝ իմաստափոխության հետևանքով արդի արևելահայերենի եզրութային բառապաշար ներթափանցման երևույթը, ինչն էլ նպաստել է գրաբարյան համագործածական բառերի **եզրութացմանը** ժամանակակից արևելահայերենում: Այս միջոցով գրաբարյան համագործածական բառը ձեռք է բերում նոր, մասնագիտական իմաստ, ներմուծվում համապատասխան եզրութային համակարգ: Սրա առավելությունն այն է, որ արդի բառապաշարը չի համալրվում նոր անհարկի եզրությոներով: Այսպես՝ գրաբարում՝

եկամուտ – 1. **Դրսից եկած մարդ, օտարական, նորեկ, նորահաւատ:**
2. **Դրսից մուծուած, օտարամուտ, նորամուտ, ձեռք բերովի, ոչ բնական, խորթ:**

Եկամուտէլ – Գալ մտնել, աւելանալ, աճել [7, էջ 388]:

Արդի հայերենում՝

եկամուտ – 1. Որևէ տնտեսական ձեռնարկությունից՝ գործունեությունից ստացվող նյութական արժեքների ամբողջությունը, հասույթ: *Պետական՝ ազգային ե.:* 2. Օգուտ, շահ: 3. ած. Դրսից մուծված, օտարամուտ, օտար, խորթ:

Բարդվել, ածանցվել է՝ եկամտահարկ, եկամտային, եկամտաշատ, եկամտավոր [1, էջ 321]:

Եզրութաբանական բառարանում՝

եկամուտ – Ընկերությունների ակտիվների ավելացում կամ պարտավորությունների նվազում, որ ձեռնարկության սովորական տնտեսական գործունեության արդյունք է և հանգեցնում է սեփական կապիտալի մեծացման: Եկամտի մեջ ներառվում են հասույթը արտադրանքի իրացումից կամ ցուցաբերած ծառայություններից. շահաբաժինները. ռոյալտին. ռենտան: Միջնորդական գործառնությունների դեպքում եկամուտ է հանդիսանում կոմիսիոն վճարումների գումարը:

Եզրութային բառակապակցություններ՝ եկամտաբերության ցուցանիշ, եկամտահարկ բացասական, եկամտի անհատական բաշխում, եկամտի արդյունք, եկամտի հետ չկապված վճարումներ, եկամտի շրջապտույտ, եկամտի ֆունկցիոնալ բաշխում, եկամուտ անձնական, եկամուտ բրուտո, եկամուտ ժամանակավոր, եկամուտ հարկերը վճարելուց հետո, եկամուտների անհավասարություն, եկամուտների բացասական կոր, եկամուտների դրական կոր, եկամուտների հետ չկապված սպառման և խնայողությունների գործոններ, եկամուտների մակարդակի պաշտպանության համակարգ, եկամուտներ իրական, եկամուտների և արդյունքների շրջապտույտ, եկամուտներ (մուտքեր),

եկամուտներ / վնասներ արտակարգ, եկամուտներ / վնասներ բազիսային, եկամուտներ / վնասներ կուրսային, եկամուտ տոկոսի տեսքով [5, էջ 139-141]:

Ակնհայտ է, որ գրաբարյան իմաստն արդի հայերենում գրեթե մարել է: Բացատրական բառարանն արդեն արձանագրել է եզրութային նշանակությունը, թեև եզրութային արժեքի նշումը բացակայում է: Արձանագրված է բառի եզրութացումը: Մասնագիտական բառարանը տվել է եզրութային նշանակությունը, բառակապակցական տարբերակները:

Մեկ այլ պարագայում գրաբարյան եզրությունների մի մասը արդի հայերենի բառապաշարից դուրս են մնացել կամ դարձել են հնաբանություններ՝ պատմաբառեր, և կամ դրանց իմաստներից մեկը մնում է գործունե եզրությ: Այսպես՝

բդեշխ, բդեշխ (պիլ.) – 1. Մեծ իշխան, կուսակալ, կողմնապետ, կողմնակալ: 2. **Հիւպատոս:**

Փոխանակ բդեշխի – Հիւպատոսի փոխանորդ կամ տեղակալ, **փոխհիւպատոս:**

Բդեշխութիւն – Բդեշխի աստիճանը՝ իշխանութիւնը, կուսակալութիւն, կողմնակալութիւն, հիւպատոսութիւն [7, էջ 281]: : Սակայն գրաբարում կիրառվել է նաև՝

Հիւպատոս (յուն.) – Հին Հռոմում՝ բարձրագոյն ընտրովի պետական պաշտօնեայ, փոխարքայ, կուսակալ:

Հիւպատոսական – Հիւպատոսին յատուկ՝ վերաբերող, հիւպատոսի:

Հիւպատոսութիւն, հիւպատոսութիւն – 1. Հիւպատոսի աստիճանը՝ իշխանութիւնը: 2. Հիւպատոսութեան ժամանակաշրջանը [8, էջ 74]:

Արդի հայերենում գրաբարյան բառապաշարի մի զգալի մասն էլ իմաստի ընդլայնման շնորհիվ եզրութային նոր նշանակություն է ձեռք բերել: Այսպես՝

Համար (պիլ.) – 1. **Թիւ, գումար, քանակ:** 2. **Թուարկում, հաշում, հաշուելը, հաշիւ:** 3. Հաշուետոթիւն, հաշիւների քննութիւն, պատասխանատուութիւն: 4. Ինչ որ հաշուի պէտք է առնել, բանի տեղ դնելը, համարում, յարգ, վարկ, արժեք: 5. Համեմատութիւն, կարգ, դաս [8, էջ 24]:

Արդի հայերենում՝

1. **Թիվ կամ թվանշան, որը ցույց է տալիս առարկայի հաջորդական կարգը նմանների շարքում:** 2. Առարկայի՝ հագուստի ևն չափսը, որ արտահայտվում է թվով: 3. Պարբերական հրատարակության առանձին հատոր, պրակ կամ թերթ, որ կրում է հերթականություն ցույց տվող թվանշան: 4. Հյուրանոցի առանձին սենյակ կամ բնակարան: 5. Բաղնիքի առանձին լողասենյակ: 6. Համերգի՝ ներկայացման ևն առանձին կատարվող մաս: 7. Նույնն է՝ Համարանիշ: 8. **(ռազմ.)** Հրետանային՝ զնդացրորդային ևն անձնակազմի զինվոր: 9. **(խսկց.)** Անսպասելի՝ տարօրինակ արարք՝ արտահայտություն՝ վարմունք: 10. **(հնգ.)** Թիվ: 11. **(հնգ.)** Համրանք: 12. **(հնգ.)** Հաշիվ, պատասխան, հաշվետվություն [1, էջ 805]:

Գրաբարում՝

թիւ – 1. Քանակ արտայայտող հասկացութիւն, որի օգնութեամբ հաշուումներ են կատարում: 2. Հաշիւ, համրանք: 3. Թուանշան: 4. յոգն. Թուարանութիւն:

5. Գրքի գլուխ: 6. (լեզուար.) Քերականական կարգ, որն արտայայտում է առարկայի եզակիություն կամ յոգնակիություն [7, էջ 489]:

Արդի հայերենում՝

թիվ – 1. Քանակ արտահայտող հասկացություն, որի օգնությամբ հաշվումներ են կատարում: 2. Հաշիվ, համբանք.... 3. Քանակություն, քանակ: 4. Տարերիվ, թվական: 5. Թվանշան, թվի գրային նշան: 6. Ամսաթիվ: 7. (արևմտ.) Հաջորդական կարգ, համար.... 8. Շարք, խումբ, որոշ կարգ կազմող մարդկանց կամ առարկաների դաս.... 9. Որևէ թվականի ծնունդը կազմող երիտասարդությունը որպես հերթական գորակոչի հասակ: 10. (լեզվբ.) Քերականական կարգ, որը ձևաբանական միջոցներով արտահայտում է առարկայի եզակիություն կամ հոգնակիություն: 11. (**եկեղ.**) Միայն արտասանվող, չերգվող [1, էջ 444]:

Եզրութային բառակապակցություններում՝ ամբողջ / բնական / պարզ / բաղադրյալ / բացասական / ոչ բացասական ամբողջ / ռացիոնալ / իռացիոնալ / իրական թվեր. թվային մեծություն / արժեք / առանցք. թվերի գումար. թվի բացարձակ արժեք՝ մոդուլ. թվերի տեսություն / գումար / արտադրյալ / հարաբերություն / տարբերություն են:

Նկատելի է, որ մաթեմատիկական, լեզվաբանական եզրութային իմաստներին ավելացել է նաև եկեղեցականը:

Այլ օրինակներ՝

գումար – Խումբ, խմբուելը, մի տեղ հաւաքուելը, հաւաքուած բազմութիւն [7, էջ 340]:

Արդի հայերենում՝

գումար – 1. (**թվաբ.**) Երկու կամ ավելի թվերի գումարումից ստացված քանակը: 2. Որևէ բանի ընդհանուր քանակությունը: 3. Դրամի որոշ քանակությունը: 4. ած. (հզվդ.) Ամբողջ, հանուր [1, էջ 267]:

Բարդված, ածանցված օրինակները՝ գումարահատկացում, գումարագիր, գումարային, գումարատեր են: Եզրութային բառակապակցություններում՝ հանրահաշվական / ընդհանուր / վեկտորական գումար. եռանկյան կողմերի / եռանկյան անկյունների / ուռուցիկ քառանկյան անկյունների գումար են:

Գումարել – 1. Հաւաքել, ժողովել, խմբել, կուտակել: 2. Համախմբել մէկի դէմ, զօրք հաւաքելով կռուի պատրաստուել: 3. Հաւաքուած զօրքի հրամանատարութիւնը մէկին յանձնել, զօրքի հրամանատար կամ գաւառի կառավարիչ նշանակել: 4. Հաշուել (ժամանակը, տարիները): 5. Հաւաքուել: 6. Կռուի պատրաստուել: 7. Կռուի գնալ մէկի դէմ: 8. Կռուել, բախուել, ընդդիմանալ [7, էջ 340]:

Արդի հայերենում՝

Գումարել – 1. Հավաքել, ժողովել, համախմբել: 2. Ի մի բերել, ամբողջացնել, միացնել իրար: 3. Հրավիրել, կայացնել: *Տողով գ.*: 4. (**մաթ.**) Մեկ կամ մի քանի թիվ միասին ավելացնել, գումարում կատարել: 5. փխր. Ավելացնել, հավելել, մեծացնել: *Եվ դարձյալ քիչ կլինի, եթե սրան գումարենք այդ մի փշուր տեղեկությունը* (Վ. Խեչումյան): Նաև՝ ի մի գումարել, գումարելի, գումարկել, գումարվել, գումարում են [1, էջ 267]:

Այլ օրինակներ՝

Արմատ - 1. Բույսի այն մասը, որն ամրանում է հողում՝ ստանալով հանքային նիւթեր և ջուր: 2. փխր. Նախահայր, սերունդների՝ ցեղի՝ տոհմի սկիզբը: 3. փխր. Սկզբնապատճառ, առիթ: 4. Որևէ բանի ստորին մասը՝ ծայրը, հիմք, խորք, հետք [7, էջ 217]:

Արդի հայերենում՝

1. Բույսի՝ հողի մեջ նստած մասը, որով նա ամրանում է գետնի մեջ և ստանում հանքային լուծույթներ պարունակող ջուր: 2. Բույսի այդ մասը որպէս փայտ կամ հումք: 3. Որոշ կարգերի բույսերի՝ հողում գտնվող ուտելի մասը՝ կոճղեզր՝ պալարը մանր արմատաթելերով հանդերձ: 4. (կզմխս.) Ատամների, մազերի, եղունգների ևն մարմնի մաշկի մեջ գտնվող մասը: 5. (կզմխս.) Որևէ գործարանի հիմքի՝ ուրիշ գործարաններին միանալու տեղը՝ կոթ: 6. (փխր.) Նախահայր, տոհմի, ցեղի, ընտանիքի սկիզբը: 7. (փխր.) Հիմք, սկիզբ, պատճառ: 8. (լեզվբ.) Բառի հիմնական ձևույթը: 9. (մաթ.) Ինքն իր վրա բազմապատկվելով աստիճան տվող թիվը: 10. (մաթ.) Արմատի գրային նշանը, արմատանշանով [1, էջ 136]:

Եզրութային բարդություններում, բառակապակցություններում՝ արմատակրկնություն, արմատահնչյուն. անվանական / բայական / ստուգաբանական / փոխառյալ / բնիկ հայերեն / ձայնադարձով / կախյալ արմատ. արմատական բառ / բառարան / լեզուներ / հիմք / ձևույթ / մակբայ ևն (լեզվ.). արմատ հանել, քառակուսի արմատ, ենթաարմատային արտահայտություն, արմատի ցուցիչ, թվաբանական արմատ ևն (մաթ.):

Մեկ այլ օրինակ՝

Աստիճան - 1. Սանդուղքի ամեն մի ոտքը, սանդղարմատ: 2. Սանդուղք: 3. Բեմ: 4. Որևէ բանի զարգացման՝ ընթացքի իւրաքանչիւր մասը՝ փուլը, վիճակ: 5. Տան յարկ, դստիկոն: 6. Առաջադիմութիւն: 7. Բարձրութիւն, բարձր դիրք՝ աստիճան: 8. Եկեղեցական կարգ [7, էջ 188]:

Արդի հայերենում, ըստ Է. Աղայանի, բառն ունի 17 իմաստ՝

1. Սանդուղքի ամեն մի ոտքը, սանդղարմատ: 2. հոգն. Սանդուղք: 3. Բարձրություն, բարձր դիրք աշխատանքում, հասարակական կյանքում: 4. Ջարգացման, շարժման, շարունակաբար կատարվող, տեղի ունեցող պրոցեսի յուրաքանչյուր մասը, փուլը, էտապը: 5. Որևէ բանի հաջորդական կարգերից յուրաքանչյուրը: Օր.՝ առաջին աստիճանի կրթանշան: 6. Որևէ բան բնութագրող համեմատական մեծությունը, մակարդակը, որևէ բանի չափը. Օր.՝ զարգացման աստիճան: 7. Նույնն է՝ Գիտական աստիճան: 8. (երկրչ.) Անկյան կամ աղեղի չափման միավոր = շրջանի 1/360-ին: 9. Ջերմության չափման միավոր: 10. Ջերմաչափի, ծանրաչափի ամեն մի բաժանմունքը: 11. Հեղուկի խտության, սպիրտի թնդության չափման միավոր: 12. (մաթ.) Միևնույն արտադրիչների արտադրյալ: 13. Տե՛ս Համեմատության աստիճաններ: 14. (հնց.) Ազգակցական մերձավորության չափը, պորտ: 15. (երաժշտ.) Հիմնական ձայնի համեմատությամբ

ձայնի բարձրադման կամ իջեցման չափը: 16. (հնգ.) Պաշտոնի հերթական կարգը: 17. (կպբո.) Չափ [1, էջ 113]:

Դիտարկել ենք նաև գրաբարյան բառապաշարում ամրագրված եզրութային բառաշերտ, որը հետագայում դուրս է մղվել գործուն բառապաշարից տեղը զիջելով փոխառյալ, մեր կարծիքով, անհարկի համարժեքին: Այսպես՝

Թանչ, թանչ -Dysenterya – Խիթք աղեաց. որովայնալուծուի ծիրիչ արեամբ չափ. ախտ ընդերաց և երաստանի: *Թանչ, ի փորին ցաւ [4, ց. 1, էջ 797]: Ըստ Հ. Աճառյանի՝ թանչ – «փորհարութիւն, փորհարինք»: Բնիկ հայ բառ՝ հնիւ. t ā-n «հալիլ, լուծուիլ» արմատից՝ չ մասնիկով [3, էջ 150, 153]: Դիզենտերիա [*< дизентерия >* հուն. dysenterya< dys խանգարում + entron աղիք], (բժշկ.): Թանչ – սուր վարակիչ հիվանդություն. արտահայտվում է արյունալուծությամբ [6, էջ 151]: Արդի հայերենում մնացել է միայն բառարանային արձանագրությամբ տեղը զիջելով անհարկի փոխառությանը: Բժշկագիտական բառապաշարից լիովին դուրս է մղվել:

Կարևորելով եզրութային բառաշերտի բուհական ուսուցման խնդիրը՝ նպատակահարմար ենք համարում համադրել ուսուցման ավանդական ու ժամանակակից գործուն մեթոդները, որոնք մեծապես նպաստում են նոր և խորը գիտելիքների ձեռքբերմանն ու իմաստավորմանը, հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, ամրակայմանը, մասնավորապես քննադատական մտածողության զարգացմանը: Բուհական բոլոր մասնագիտությունների գծով եզրութային բառաշերտի հիմնական մասը ծանոթ է ուսանողներին դեռևս դպրոցից, ուստի մեթոդական գործուն և արդյունավետ հնար է ԳՈՒՄ-ը (**գիտեմ՝ դպրոցական ծրագրի շրջանակում մասնագիտական եզրութների իմացությունը, ուզում եմ իմանալ՝** եզրութային նորակազմությունները ու իմաստային նորաբանությունները, **սովորեցի՝** տվյալ եզրութների բառակազմական, ստուգաբանական, իմաստաբանական քննությունը): Այս առումով բուհական ուսուցման խնդիրն է իրականացնել եզրութների ծագումնաբանական՝ ստուգաբանական, իմաստաբանական՝ իմաստափոխական, բառակազմական գույքնաբանական քննությունը:

Կառուցողական ուսուցման մեթոդի բաղադրիչներից մեկն է ԳՈՒՄ-ը, որը հայտնի է երեք սյունակներից կազմված աղյուսակով: Այն ստեղծվել է Դոննա Օլգի կողմից 1986 թ.: «ԳՈՒՄ ռազմավարությունը ներառում է երեք հիմնական հասկացություններ՝ իմանալ, ցանկանալ և սովորել.... լավ սովորողները իրենց նախկին գիտելիքները կապում են նոր տեղեկատվությանը, վերակազմակերպում այն և ստեղծում իրենցը.... Բացի այդ՝ ռազմավարությունը նախատեսված է օգտագործվելու դասավանդողի և միասին աշխատող ուսանողների խմբի կողմից.... Ռազմավարությունն իրականացնելիս դասավանդողը սկզբում անցկացնում է բանավոր քննարկում դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ...., թո՛ւյլ տվեք, որ գործընթացը շարունակվի ուսանողների անհատական գաղափարների և հարցեր գրելու համար անձնական աշխատանքային թերթիկի վրա» [11, էջ 478]:

Գրատախտակին գծվում է այսպիսի աղյուսակ և մտագրոհի միջոցով խնդրում ենք ուսանողներին լրացնել այն:

ԳՈՒՍ ռազմավարության աղյուսակ 1

Գ – ԻՆՉ ԳԻՏԵՄ	ՈՒ – ԻՆՉ ԵՄ ՈՒԶՈՒՄ ԻՄԱՆԱԼ	Ս – ԻՆՉ ՍՈՎՈՐԵՑԻ ԵՎ ԴԵՌ ԿՍՈՎՈՐԵՄ

Աղյուսակ 1-ը լրացնելուց հետո առաջարկվում է լրացնել Աղյուսակ 2-ը:

ԳՈՒՍ ռազմավարության իրականացման Աղյուսակ 2

Դասախոսի գործունեությունը	Ուսանողի գործունեությունը
• Ի՞նչ է եզրույթը: Թվել եզրույթի և բառի նմանություններն ու տարբերությունները: • Գրել նոր սովորած եզրույթներ: • Գրել եզրույթների արևմտահայերեն համարժեքները: • Կազմել եզրույթային ենթահամակարգեր՝ ըստ մասնագիտական ոլորտների, բաժինների: • Գրել եզրույթների տարբերակային ձևերը, նույնանիշներն ու հականիշները: • Դրանք ենթարկել բառակազմական վերլուծության՝ ըստ կաղապարների: • Կատարել եզրույթների ստուգաբանական քննություն՝ օգտվելով համապատասխան բառարաններից: • Կատարել եզրույթների իմաստաբանական քննություն՝ ըստ համապատասխան բառարանների: • Կառուցել Վենի դիագրամ՝ մատնանշելով ընդհանրական եզրույթները: • Դասակարգել եզրույթները՝ ըստ հնաբանությունների ու նորաբանությունների:	

Շղթան բաց է. առաջադրանքները կարող են փոփոխվել, խորացվել:

«Մեթոդի առավելություններն են

ա. ուսուցչին թույլ է տալիս պատկերացում կազմել աշակերտների՝ տվյալ թեմայի վերաբերյալ ունեցած նախնական գիտելիքների մասին,

բ. աշակերտների համար որոշակի համակարգ է ապահովվում, որի շրջանակներում նրանք կարողանում են կարդացվելիք նյութի մասին ենթադրություններ անել,

գ. զարգանում են ինքնուրույնության, ինքնահարցման, ինքնավերլուծության հմտությունները. նրանք սովորում են ակտիվորեն կարդալ, լարել, սրել

ուշադրությունը՝ թեմային վերաբերող հարցերի պատասխանները գտնելու համար,

դ. աշակերտներին ուղղություն է տրվում, թե ինչպես նպատակային կերպով դասակարգեն արդեն ունեցած և նոր տեղեկատվությունը,

ե. ի հայտ են գալիս թեմայի վերաբերյալ սխալ պատկերացումները, թերմբոնումները, որոնք շտկվում են մեթոդի գործադրման ընթացքում» [2, էջ 550]:

Կատարված քննությամբ մենք հանգել ենք այն **եզրակացության**, որ ԳՈՒՄ-ի կիրառման առանձնահատկությունն այս պարագայում այն է, որ **գիտեմ** բաղադրիչը ապահովված է դպրոցական ուսուցմամբ, իսկ **ուզում եմ իմանալ, սովորեցի** բաղադրիչները լրացնում է բուհական ուսուցման համակարգը:

Այսպիսով՝ 1. ուսուցման ժամանակակից մեթոդների իմացությամբ և դրանց ճիշտ կիրառելու հմտությամբ է պայմանավորված մասնագիտական բառաշերտի քննության և արդյունավետ ուսուցման գործընթացի կազմակերպումը. ԳՈՒՄ-ը այս պարագայում արդյունավետ է: 2. Հնդեվրոպական նախալեզվում սաղմնավորված եզրութային բառապաշարը ներքին փոխառության ճանապարհով անցել է գրաբարյան բառաշերտ, որը հարստացել է նորաստեղծ եզրութներով, համալրվել հայերենին հատուկ բառաձանցման, բառաբարդման օրինաչափություններով, նաև արտաքին հնագույն փոխառություններով: 3. Գրաբարյան բառապաշարի մի մասը վերաիմաստավորմամբ, եզրութացման միջոցով ձևավորել է արդի հայերենի եզրութային համակարգի միջուկը: 4. Գիտության զարգացմանը զուգընթաց՝ նոր ու նորագույն եզրութների արտաքին փոխառությունները ևս համալրում են հայերենի բառապաշարը:

TEACHING TERMINAL VOCABULARY OF MODERN EASTERN ARMENIAN DUE TO THE APPLICATION OF MODERN METHOD GUS

Miqayelyan Karine

Ph.D. of Philology, Associate Professor,

Yerevan State University,

Republic of Armenia

karinemiqayelyan1963@gmail.com

Summary

The present article aims at substantiating the thesis that the vocabulary of Grabar is one of the main sources for almost all the terminological vocabulary layers. There is no doubt that over the centuries some words have penetrated into the early Armenian language from the Indo-European vocabulary through internal borrowings, which have later passed into the Grabar vocabulary. Thanks to the ancient borrowings, the vocabulary of Grabar terms was enriched and switched to the Middle Armenian language, and as a result of changing phrases, some of them were translated into Eastern Armenian. Therefore, the novelty of this study is due to the fact that it is justified and proposed in order to make the university study of terminological vocabulary by specialization more effective and purposeful at the Armenian language classes, also to be guided by a new approach proposed by us, that is, to conduct the study of the terminological vocabulary in accordance with an up-to-date GUS method, which supposes a study parallel with their word formulating, genealogical, etymological and semantic research.

The relevance of the article is due to the expedient development of effective methods for studying terminological vocabulary in the field of higher education and the need of seeking new ways to submit them.

As a result of the investigation, we came to the conclusion that the terminological vocabulary originated in the Indo-European proto-language passed into the Grabar vocabulary through internal borrowing, which was enriched with newly created terms, supplemented with lexical turns specific to the Armenian language, patterns of word complexity, as well as ancient external borrowings. A certain part of the vocabulary of Grabar formed the core of the terminological system of the modern Armenian language through reinterpretation and generalization. With the development of science, new and newest terminological borrowings also replenish the terminological dictionary of the modern Eastern Armenian language. The peculiarity of applying the GUS method in this very case is that the component “**know**” is provided by school education, and the component “**I want to know, I have learnt**” is replenished by the higher educational system.

The teaching methods of terminology in the field of higher education system include both theoretical and practical components, including lectures, seminars, practical classes, application of different technologies, group work and scientific research activity. Teaching methods contribute to the development of students' comprehensive knowledge and skills, enhancing their success in the fields of terminological studies and research work.

Keywords: *study of terms, teaching method GUS (KWL table or KWL chart), Grabar's vocabulary, terminological dictionary of the modern Eastern Armenian language, change of meaning, termination, neologisms of terms.*

ИЗУЧЕНИЕ ТЕРМИНОЛОГИЧЕСКОГО СЛОВАРЯ СОВРЕМЕННОГО ВОСТОЧНОАРМЯНСКОГО ЯЗЫКА В РАМКАХ ИССЛЕДОВАНИЯ ГУС

Микаелян Карине

*Кандидат филологических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения
karinemiqayelyan1963@gmail.com*

Аннотация

Цель этой статьи – обосновать положение о том, что словарный запас грабара является одним из основных источников для терминологического слоя почти всех современных научных дисциплин восточноармянского языка. Конечно, на протяжении веков путем внутреннего заимствования часть их перешла из индоевропейской лексики в раннеармянский язык, а затем в лексику грабара. Благодаря древним заимствованиям, термины из лексического фонда грабара обогатились, перешли в среднеармянский язык, а в результате изменений часть их была переведена и на восточноармянский язык. Следовательно, новизна данного исследования обусловлена внедрением предложенного нами нового метода – проводить изучение терминологического словарного запаса параллельно с генеалогическим, этимологическим и семантическим его исследованием для того, чтобы сделать вузовское изучение терминологической лексики по специальности на уроках армянского языка более эффективным и целенаправленным.

При этом преподавание предлагается осуществлять с помощью применения современного метода обучения – ГУС (ЗХУ – знаю, хочу знать, умею).

Актуальность статьи обусловлена целесообразностью разработки эффективных методов изучения терминологической лексики по специальности в сфере вузовского образования, необходимостью поиска новых путей подачи учебного материала.

В результате проведенного исследования мы пришли к выводу, что зародившийся в индоевропейском языке терминологический словарный запас перешел в словарь грабара путем внутреннего заимствования. Он обогатился вновь созданными терминами, пополнил

нился специфическими для армянского языка лексическими оборотами, образцами моделями сложных слов, а также древними внешними заимствованиями. Часть словаря грабара путем переосмысления и обобщения сформировала ядро терминологической системы современного армянского языка. По мере развития науки новые и новейшие терминологические заимствования также пополняют терминологический словарь современного восточноармянского языка. Особенность применения метода ГУС (ЗХУ) в данном случае заключается в том, что компонент «знаю» обеспечен школьным обучением, а компоненты «хочу знать, умею» дополняются системой высшего образования.

Методы обучения терминологии в университетской системе обучения имеют теоретическую и практическую составляющие, включая лекции, семинары, практические занятия, использование технологий, групповую работу и научно-исследовательскую деятельность. Методы обучения способствуют освоению учащимися всесторонних знаний и навыков, готовят их к участию в различных работах и исследованиях по изучению терминологической базы.

Ключевые слова: изучение терминов, метод обучения ГУС (ЗХУ – знаю, хочу знать, умею), словарный запас грабара, терминологический словарь современного восточноармянского языка, смысловые изменения, формирование терминов, терминологические неологизмы.

Օգտագործված գրականության ցանկ

1. Aghayan E. B., Ardi hayereni batsatrakan bararan, hator A, Yerevan, 1976.
2. Aghajanyan Z. Kh., Hayots lezvi usutsman yev khosqi mshakuthyan dzevavorman metodika, Yerevan, 2021.
3. Acharyan Hr., Hayeren armatakan bararan, Yerevan, hator B, 1926.
4. Avetikeyan hayr Gabriel yev aylq, Nor bargirq haykazean lezui, Venetik, 1836.
5. Kirakosyan G. E. yev urishner, Tntesagitakan batsatrakan bararan, Yerevan, 1999.
6. Hayrapetyan A., Otari bareri bararan, Yerevan, 2011.
7. Ghazarean R. S., Grabari bararan, hator A, Yerevan, 2000.
8. Ghazarean R. S., Grabari bararan, hator B, Yerevan, 2000.
9. Petrosyan H. Ts., Terminagituthyan himunqner. dasagirq, Yerevan, 2010.
10. Jahukyan G. B., Hayots lezvi patmuthyun. nakhagrayin zhamanakashrjan, Yerevan, 1987, ej 50.11.
11. Atiqah N. A., Implementing KWL strategy in teaching reading for non-English department students, View metadata, citation and similar papers at cor.ac.uk. The 61st TEFLIN International Conference, UNS Solo 2014, p. 477-480.

Получено: 29.03.2025

Рассмотрено: 01.04.2025

Принято: 11.04.2025

Received: 29.03.2025

Reviewed: 01.04.2025

Accepted: 11.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**ԲՈՒՀԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՎԻՐՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Փանոսյան Հովիկ

կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն

hpanosyan@ysu.am

<https://orcid.org/0000-0002-4891-0922>

Ամփոփում

Հետազոտության նպատակը բուհերում դասավանդվող վիրուսաբանության դասընթացի տեսության ու պրակտիկայի ուսուցման մեթոդների առանձնահատկությունների և առկա խնդիրների վերհանումն ու վերլուծությունն է: Ուսումնասիրվել է թեմային առնչվող մասնագիտական գրականություն, ներկայացվել են բուհական համակարգում վիրուսաբանության դասավանդման մեթոդների բովանդակային վերանայման անհրաժեշտությունն ու կարևորությունը, առաջարկվել է առկա դժվարությունները հաղթահարելու ուղիներ: Հիմնավորվել է վիրուսաբանության դասընթացի մատուցումը ավանդական դասախոսակենտրոն ու նորարար ուսանողակենտրոն փոխներգործուն մոտեցումների համադրմամբ: Դասընթացի նպատակից բխող վերջնարդյունքներն ապահովելու համար առաջարկվել է առարկայի տեսության ուսուցումը համադրել ժամանակակից նորարար տեխնոլոգիաների հիմքով զգայուն և ճշգրիտ մեթոդներ ներառող լաբորատոր աշխատանքներով: Այս մոտեցմամբ դասընթացի վերջնարդյունքները կապահովեն վիրուսների վերաբերյալ ուսանողի պատշաճ գիտելիք ու իմացություն, վերլուծության ու համադրության ունակություն, առաջադրված մասնագիտական խնդիրները գնահատելու և համակողմանի լուծում տալու հմտություն:

Բանալի բառեր *վիրուսաբանություն, ուսուցման առանձնահատկությունները բուհերում, նորարար տեխնոլոգիաներով ուսուցում, դասախոսակենտրոն և ուսանողակենտրոն ուսուցում, դասավանդման ժամանակակից մեթոդներ:*

Համառոտ ներածություն: Կորոնավիրուսային համավարակից հետո վիրուսների նկատմամբ հարաճուն հետաքրքրությունը հրատապ է դարձնում բուհերում վիրուսաբանության ուսուցման մեթոդների լավարկումը: Վիրուսաբանությունը համալիր և միջգիտակարգային ուղղություն է, որի արդյունավետ դասավանդումը բուհերում ունի մի շարք առանձնահատկություններ: Ճիշտ և մեթոդապես հիմնավորված ուսուցումը կնպաստի ուսանողների վերլուծական մտածողության, համադրության ունակության ու գնահատողական հմտությունների զարգացմանը, ինչը կարևոր է վիրուսաբանության ոլորտում մասնագիտական զարգացումն ապահովելու համար:

Հիմնախնդիրը: Վիրուսաբանության ուսումնասիրության օբյեկտները՝ վիրուսները, անգեն աչքով անտեսանելի էակներ են, որոնց գերակշիռ մեծամասնությունը ունի ախտածին բնույթ, ինչը խոչընդոտ է ուսուցումը պատշաճ կազ-

մակերպելու համար: Այդ խնդիրն հաղթահարելու համար առաջարկվում է դասավանդման մեթոդներում համադրել դասընթացի մատուցման ավանդական ու նորարար փոխներգործուն մոտեցումները: Վարակի ռիսկը բացառող մոդելային (ոչ ախտածին) վիրուսային մասնիկների կիրառմամբ և նորարար տեխնոլոգիաների հիմքով մոլեկուլային մեթոդների ներդրմամբ լաբորատոր պարապմունքների կազմակերպումը դիտարկվում է հիմնախնդրի լուծման հնարավորություն:

Հիմնախնդրի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է վերհանել վիրուսաբանության դասընթացի ուսուցման դժվարություններն ու առանձնահատկությունները: Հետազոտության խնդիրն է եղել վերլուծաբար ներկայացնելու բուհերում վիրուսաբանության դասընթացի տեսության ու պրակտիկայի ուսուցման առանձնահատկությունները և առաջարկել առկա դժվարությունները հաղթահարելու ուղիներ:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների հակիրճ վերլուծություն: Վիրուսաբանության տեսական նյութը և մեթոդապես հիմնավորված հաջորդականությամբ ներկայացված թեմաները, ինչպես նաև վիրուսների ուսումնասիրության արդիական մեթոդները նկարագրված են մանրէաբանության և վիրուսաբանության մի քանի դասագրքերում և ձեռնարկներում [2, 3, 4, 6, 11]: Կրթական տարբեր մակարդակներում վիրուսաբանության դասավանդման մեթոդաբանության առանձնահատկությունները ամփոփված են ակնարկային և հետազոտական մի շարք հոդվածներում [7, 8, 9, 10, 13]: Ա. Բուդադյանի եւ Ա. Գրիգորյանի հեղինակած դասախոսի ձեռնարկը ուղեցույց է եղել առարկայական ծրագրի ու մասնագրի մշակման համար [1]:

Հետազոտության նորույթը: Նոր լույսի ներքո է ներկայացվում վիրուսաբանության դասընթացի տեսական և գործնական բաղադրիչների ուսուցումը՝ վերհանելով առարկայի դասավանդման խնդիրներն ու առանձնահատկությունները բուհերում:

Հետազոտության տեսական նշանակություն: Հետազոտության տեսական նորույթը վիրուսաբանության դասընթացի կրթական ծրագրի բովանդակային մշակումն է՝ ուսուցման ավանդական և ժամանակակից փոխներգործուն մեթոդների համադրմամբ և կրթական վերջնարդյունքներն ապահովելու համար գործնական հմտությունների ուսուցանմամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Վիրուսաբանության դասընթացի կազմակերպման դժվարությունների և հիմնախնդիրների վերհանումը ու հետազոտության արդյունքում ձևակերպված առաջարկությունները կարող են օգտակար լինել նմանատիպ կամ հարակից դասընթացների կրթական ծրագրերի վերանայման և բովանդակային փոփոխությունների համար:

Հիմնական նյութի շարադրանքը: Վիրուսաբանությունը կյանքի ոչ բջջային ձևերի՝ վիրուսների կառուցվածքը, վիրուս-բջիջ փոխհարաբերությունը, վերարտադրությունը, վիրուսային մասնիկների հայտնաբերման մեթոդները, դրանց ծագումը, էվոլյուցիան, տարածվածությունը, դասակարգումը, մեկուսացման և

աճեցման մեթոդները, ինչպես նաև բնության, տնտեսության և բժշկագիտության մեջ դրանց դերը ուսումնասիրող գիտություն է: Վիրուսների ուսումնասիրության կարևորությունը հատկապես նկատելի դարձավ կորոնավիրուսային համավարակից հետո: Մարդկության առջև ծառացած այդ մարտահրավերն ու կանխատեսվող վիրուսային նոր համաճարակների վտանգը ստիպում են առողջապահական, գիտական և ուսումնական կենտրոններին պատշաճ ուշադրություն հատկացնել վիրուսների ուսումնասիրությանը, ախտորոշիչ մեթոդների կատարելագործմանը, կանխարգելմանը, բուժմանը և դրանց վերաբերյալ տեղեկատվության հանրայնացմանն ու ուսուցման մեթոդների վերանայմանը: Ուսուցման մեթոդների նորարար մոտեցումներով բովանդակային լավարկումն ու պատշաճ մասնագիտական գիտելիքներով զինված կադրերի պատրաստումը բուհական կրթության բարեփոխումների առաջնահերթություններ են:

Վիրուսաբանությունը՝ որպես առանձին դասընթաց կամ որպես ընդհանուր մանրէաբանության դասընթացում ընդգրկված բաժին, դասավանդվում է ՀՀ մի շարք բարձրագույն կրթական հաստատությունների կրթական ծրագրերում: Վիրուսաբանությունը՝ սկզբում որպես ինքնուրույն մասնագիտական դասընթաց, ապա՝ վերջին տարիներին՝ որպես «Մանրէաբանություն 1, 2» (Ֆարմացիայի ինստիտուտ) «Մանրէաբանություն և վիրուսաբանություն 1, 2» (Կենսաբանության ֆակուլտետ) դասընթացների մաս, տարիներ շարունակ դասավանդվում է ԵՊՀ-ում բակալավրի կրթական ծրագրերում: Այդ դասընթացը մշակվել է՝ խստորեն հետևելով Ամերիկյան մանրէաբանական ընկերության մշակած վիրուսաբանության ուսուցման ծրագրի կազմման ուղեցույցին [5], ու իր գիտագործնական հիմքերը լավարկել է բարձրագույն կրթության զարգացման միջազգային համագործակցության շրջանակներում («Ընդհանուր և կիրառական մանրէաբանության բնագավառում գիտահեն բարձրագույն կրթության կատարելագործման եվրասիական ցանց» (CPEA-LT-2016/10095 և CPEA-LT-2017/10061), «Ծովային, քաղցրահամ և երկրաջերմային ջրային էկոհամակարգերում ֆագով պայմանավորված հակաբիոտիկների նկատմամբ կայուն գեների տեղափոխումը» (CRDF&GRDF#A60920) և «OpenWHO դասընթացների ներառմամբ Հայաստանում իմունաբանության, պատվաստանյութերի ստեղծման և իմունիզացիայի ոլորտում կենսաբանական/կենսաբժշկական մասնագիտացմամբ բուհական և հետբուհական կրթության համապարփակ մասնագիտական վերապատրաստման ծրագրի մշակում» դրամաշնորհային գիտակրթական ծրագրերի շրջանակում:

Դասընթացի առանցքն են կազմում վիրուսաբանության, որպես առարկայի, նպատակները, խնդիրները, մեթոդաբանությունը, վիրուսների ուսումնասիրության անհրաժեշտությունը, վիրուսների բազմազանության ճանաչումը և դրանց հետագա էվոլյուցիայի կանխատեսումը, վիրուսային մասնիկի կառուցվածքային և վերարտադրողական առանձնահատկությունները [5, 9]: Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել պատշաճ գիտելիք վիրուսների կառուցվածքի, քիմիական կազմության, ձևաբանության, վերարտադրության,

բազմազանության, դասակարգման, ախտաճնության, բջջային օրգանիզմների հետ դրանց փոխհարաբերության, էվոլյուցիայի, բնության մեջ և մարդու կյանքում դրանց դերի և նշանակության, կիրառական հեռանկարների մասին, ուսուցանել վիրուսների ուսումնասիրության մեթոդները, ստացած գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ:

Տեսական նյութը ուսանողներին սովորաբար ներկայացվում է դասախոսություններով: Վիրուսաբանության դասավանդումը պահանջում է լավ ուսումնական նյութերի՝ տեսանյութերի, գրքերի, ատլասների առկայություն, որոնց կիրառումը նյութը դարձնում են ավելի դյուրին ընկալելի: Վիրուսները՝ որպես ուսումնասիրման օբյեկտներ, անզեն աչքով անտեսանելի են, շատ բազմազան են և տարբերվում են իրենց կառուցվածքով, կազմությամբ, վերարտադրության տիպով, ինչը դժվարացնում է ուսանողների ընկալումը: Դրվագների ցուցադրությունը, մուլտիմեդիայի գործիքների կիրառմամբ տեսանյութերի, անիմացիաների կիրառումը, վիրուսների վերարտադրության բարդ սխեմաներ պատկերող դիագրամների կիրառումը օգնում է ուսանողին ճիշտ պատկերացնել քննարկվող նյութը: Առավել արդյունավետ է դասընթացի մատուցման ավանդական դասախոսակենտրոն ու արդյունահեն ուսանողակենտրոն մոտեցումների համադրումը: Այս մոտեցմամբ ուսուցման ընկալում-յուրացում-վերարտադրություն շղթան դառնում է ավելի վերահսկելի: Դասախոսը ներկայացնում է ուսուցման նյութն ու դասընթացի բովանդակությունը, մատնանշում ուղիները, որով ուսանողները պետք է յուրացնեն մատուցված նյութը: Այս մոտեցմամբ ուսուցման ընթացքում ուսանողը ստանում է համապարփակ տեղեկատվություն տվյալ թեմայի վերաբերյալ, հետևում է դասախոսի մեկնաբանություններին, խոսքը կառուցելու տրամաբանությանը, դասախոսության ավարտին քննարկվող թեմայի ամփոփմանն ու կատարվող եզրահանգումներին: Սա հնարավոր է դարձնում ուսանողների կողմից նյութի ընկալումը՝ հարցադրում, մեկնաբանություն և եզրահանգում շղթայում, որն իր հերթին հեշտացնում է յուրացումը: Օրինակ՝ վիրուսների կառուցվածքը և կապսիդի համաչափությունը ուսուցանելիս դասախոսը նախ ներկայացնում է թեմայի հարցադրումը, ապա նկարագրում վիրիոնային մասնիկի կառուցվածքային տարրերը և դրանց տարածական դասավորվածությունը, որից բխեցնում է կապսիդի պարուրաձև կամ խորանարդային համաչափությունը, իսկ դա իր հերթին թույլ է տալիս եզրակացնել, թե վիրիոնային մասնիկը ինչ մորֆոտիպ կունենա:

Ուսուցման գործընթացի մյուս և ամենակարևոր բաղադրիչը՝ վերարտադրությունը, իրացվում է ուսանողակենտրոն փոխներգործուն մոտեցմամբ, երբ ուսանողը ուղղակի ունկդրից դառնում է ակտիվ մասնակից: Դասախոսի հարցադրումներն օգնում են ուսանողներին ինքնուրույն մեկնաբանել կամ եզրահանգում կատարել դասի ընթացքում ներկայացված թեմայի շրջանակում որևէ հարցի առնչությամբ: Օրինակ՝ երբ ներկայացվում է մերկ և սուպերկապսիդային վիրուսների կառուցվածքային առանձնահատկությունները, ուսանողին հարց է ուղղվում ինքնուրույն եզրահանգելու այդ կառուցվածքի հիման վրա

ախտահանիչ նյութերի նկատմամբ վիրուսների զգայունության վերաբերյալ: Կամ նկարագրելով –ՌՆԹ և +ՌՆԹ վիրուսների վերարտադրության առանձնահատկությունները՝ դասախոսը հարցադրումով փորձում է պարզել ուսանողների մեկնաբանությունը, թե վերոհիշյալ որ վիրուսները կարող են վերարտադրվել բջջում մերկ վիճակում: Դա օգնում է ուսանողին կենսաբանական բարդ, երբեմն շփոթեցնող տերմինաբանությունը, բարդ մեխանիզմները տեղում յուրացնելու ու միտքը ճիշտ վերարտադրելու: Հաճախ արդյունավետ է ստացվում իրավիճակային խնդրի վրա հիմնված ուսուցումը, երբ ուսանողներից պահանջվում է տեսական գիտելիքները կիրառել իրական կյանքում որևէ իրավիճակի, օրինակ՝ նոր վիրուսներով համաճարակների բռնկման սցենարի վերլուծում: Իրավիճակային խնդիրների վրա հիմնված ուսուցումն օգնում է զարգացնել ուսանողների քննադատական մտածողություն և վերլուծական հմտություններ: Արդյունահեշտ այս մոտեցումը հստակորեն սահմանում է դասընթացի ավարտին ուսանողի ձեռքբերվելիք ունակություններն ու կարողությունները: Ուսանողի համար հստակ են դառնում թե՛ մասնագիտական գիտելիքը, թե՛ ընդհանրական ու փոխանցելի կարողությունները:

8. Khutorskoy A. V. "Heuristic methods as a tool for innovative learning". [Text] / A. V. Khutorskoy // Innovations in comprehensive school. Teaching methods. Collection of scientific papers / ed.-in-chief A. V. Khutorskoy. GNU ISMO RAO, Moscow. 2006. - pp. 108-118.
9. Khutorskoy A. V. "Heuristic learning: theory, methodology, practice". [Text] / A. V. Khutorskoy. - International Pedagogical Academy. Moscow. 1998. - p.266
10. Kapterev P. F. "Heuristic form of teaching in public school". [Text] // Anthology of pedagogical thought of Russia in the second half of the XIX – early XX centuries / P. F. Kapterev. Pedagogy, Moscow. 1990. - 307 p.
11. Friedman L. M. "Psychological handbook of the teacher". [Text] / L. M. Friedman, I. Yu. Kulagina. Education, Moscow. 1991. - 288 p.

Получено: 27.02.2025

Received: 27.02.2025

Рассмотрено: 27.02.2025

Reviewed: 27.02.2025

Принято: 27.03.2025

Accepted: 27.03.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

ԲԱԺԻՆ 4. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՃՅՈՒՂԵՐ
РАЗДЕЛ 4: НАУЧНЫЕ ОТРАСЛИ ПЕДАГОГИКИ
SECTION 4: SCIENTIFIC BRANCHES OF PEDAGOGY

UDC 37. 323

DOI 10.46991/educ-21st-century.v7.i1.239

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱԿՄԵՈԼՈԳԻԱՅԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ XXI ԴԱՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ալեքսանյան Մանե

Հայցորդ

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն

mane.alexanyan@ysu.am

<https://orcid.org/0009-0001-4869-6137>

Ամփոփում

Համառոտ ներածական: Յուրաքանչյուր գիտության մեջ կարևորվում է տվյալ ոլորտի մասնագետի մասնագիտական աճին, ինքնագարգացմանն ու ինքնաիրացմանն ուղղված պայմանների ապահովումը: Այդ պայմաններին նպաստող կամ խոչընդոտող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ուսումնասիրությունն էլ հիմք հանդիսացավ նոր գիտության ձևավորման և զարգացման համար:

Ակմեոլոգիան հանդիսանում է այն գիտությունը, որն ուսումնասիրում է մասնագետի անձնային ու մասնագիտական աճը, նրա պրոֆեսոգրամմայի և պսիխոգրամմայի աստիճանական զարգացումն ու կատարելագործումը:

Ակմեոլոգիայի ուսումնասիրության առանցքում մարդու ոչ միայն անհատական, այլև մասնագիտական զարգացումն է, ուստի այն ընդհանուր աղերսներ ունի նաև մանկավարժության հետ, քանի որ մանկավարժների մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացումն է ապահովում կրթության ոլորտի հետագա զարգացումն ու առաջխաղացումը:

Սույն հոդվածը միտված է ուսումնասիրելու մանկավարժական ակմեոլոգիայի մոտեցումները XXI դարի մանկավարժի մասնագիտական զարգացման գործում:

Բանալի բառեր: *Ակմեոլոգիա, ակմե, ակմեոգրամմա, մանկավարժական ակմեոլոգիա, անձնային և մասնագիտական զարգացում, ինքնակրթություն:*

Հիմնախնդիրը: Հետազոտության հիմնախնդիրը մանկավարժական ակմեոլոգիայի մոտեցումների ուսումնասիրությունն ու վերլուծությունն է XXI դարի մանկավարժի մասնագիտական զարգացման գործում:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Հիմնախնդրին անդրադարձել են տարբեր գիտնականներ և հեղինակներ իրենց համապատասխան հետազոտություններում (Ա. Ա. Դերկաչ, Ն. Վ. Կուզմինա, Ա.Վ. Պետրովսկի, Բ.Գ.Անանև, Ա.Ա.Բոդալև) Հայաստանում մանկավարժական ակմեոլոգիան ուսումնասիրվել, հետազոտվել և որպես գիտություն ներմուծվել է մանկավարժական գիտությունների դոկ-

տոր, պրոֆեսոր Ն. Կ. Հարությունյանի կողմից, որի գիտական հոդվածները հիմք են հանդիսացել սույն հետազոտության ուսումնասիրության համար:

Հետազոտության նպատակն է վերլուծության ենթարկել Մանկավարժական ակադեմիայի մոտեցումները XXI դարի մանկավարժի մասնագիտական զարգացման գործում:

Հետազոտության նորույթը ժամանակակից մանկավարժի մասնագիտական զարգացմանն ուղղված գործոնների և պայմանների ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, ինչպես նաև տարբեր գիտնական-հետազոտողների կողմից իրականացված ուսումնասիրություններում նրանց տեսակետների մեկնաբանությունները:

Հիմնական շարադրանք:

Ակադեմիայի (*հուն.՝ ակմե – զագաթ, լոգոս – գիտություն*) մասնագիտական գործունեության բարձունքին հասնելու մասին գիտություն է (ակմե – ինչ-որ բանի բարձրագույն աստիճան, զագաթնակետ, ծաղկող ուժ – լոգո – խոսք, ուսմունք) [7,2]:

«Ակմեն» մասնագիտական գործունեության մեջ նշանակում է խնդիրների լուծման համեմատականորեն հաջողված բարձր մակարդակ, որոնք կազմում են որոշակի ոլորտում մասնագետի գործունեության բովանդակությունը՝ հիմնված ստացված արդյունքների վրա [1,6]:

Անձի ստեղծագործական ներուժի ինքնաիրացման մասին հիմնական ակադեմիական հայեցակարգը սերտորեն առնչվում է «ինքնաշարժում» հասկացությանը, որը ներկայացրել է Պլատոնը: Մասնագիտական տերմինաբանության մեջ այն ներմուծվել է Ն. Ա. Ռիբնիկովի կողմից 1928 թվականին: Ակադեմիայի՝ որպես գիտության զարգացմանը հետազայում նպաստել են հատկապես Բ. Գ. Անանևի «Մարդը որպես գիտության առարկա» (1929), Ա. Ա. Բոդալևի՝ «Աքադեմիայի որպես կրթական և գիտական դիսցիպլինա» (1993) աշխատությունները:

Հույները գործածել են «ակմե» բառը՝ սահմանելու մարդու կյանքի տարիքային այն շրջանը, երբ լիովին դրսևորվում են մարդու հնարավորությունները և նրա ուժերը ծաղկում՝ հասնելով իր ներուժի զագաթնակետին»:

Ակադեմիայի **օբյեկտը** զարգացող անհատականությունն է հասունության մակարդակում:

Ակադեմիայի **առարկան** լայն իմաստով և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ գործոններն են, որոնք նպաստում կամ խոչընդոտում են հասուն անհատականության առաջանցիկ զարգացմանը, պայմաններ, որոնց դեպքում չափահաս մարդը կարող է հասնել իր մասնագիտական գործունեության, ստեղծագործության, հարաբերությունների և զարգացման ամենաբարձր արտադրողականության:

Մանկավարժություն գիտությունը, ձևավորված լինելով XVII դարում, իր զարգացումն է ապրել և շարունակում է զարգանալ մինչև օրս: Դարեր շարունակ ձևավորվել և զարգացել են մանկավարժության տարբեր գիտաճյուղեր՝

հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները:

Մանկավարժության ժամանակակից գիտաճյուղերից է մանկավարժական ակմեոլոգիան:

Ակմեոլոգիան կենտրոնանում է անձնական և մասնագիտական զարգացման ամենաբարձր մակարդակին հասնելու ուսումնասիրության վրա, և այն միանշանակ ունի կիրառություն տարբեր ոլորտներում, ներառյալ կրթությունը: Եվ քանի որ ակմեոլոգիան ընդհանրական գիտություն է և ուսումնասիրում է մարդուն ոչ միայն անհատական զարգացման, այլև մասնագիտական զարգացման տեսանկյունից, հետևաբար մասնագիտական զարգացման հայեցակարգերով այն, անկասկած, հետաքրքրում է նաև մանկավարժությանը: Մանկավարժական ակմեոլոգիան գիտություն է մանկավարժի աշխատանքում պրոֆեսիոնալիզմի և կոմպետենտության հասնելու ուղիների մասին [2, 40-46]:

Ըստ պրոֆ. Ն. Կ. Հարությունյանի և դոցենտ Ի. Վարդանյանի՝ մանկավարժի ակմեոգրաման բացահայտում է մանկավարժի պրոֆեսիոնալիզմի առավել բարձր մակարդակների առաջխաղացման հնարավորությունները: Հետևաբար ակմեոգրաման իր կառուցվածքում կարող է ներառել մանկավարժի մասնագիտական զարգացման ուղիները (օրինակ՝ ուսուցման նոր մեթոդների յուրացում, սեփական անհատական ոճի ձևավորում և այլն), պրոֆեսիոնալիզմի նշված մակարդակի յուրացման մեթոդներ և տեխնոլոգիաներ (փոխադարձ դասասուսումներ, այդ դասերի վերլուծություններ, քննարկումներ, սեփական մանկավարժական մեթոդների վերլուծություն և այլն) [3, 185-189]:

Մանկավարժական ակմեոլոգիան, հաշվի առնելով վերոնշյալը, ուսումնասիրում է մանկավարժի մասնագիտական զարգացման և կատարելագործման գործընթացը, դրան նպաստող կամ խոչընդոտող օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները, մոտեցումներն ու պայմանները:

Ներկայացնենք այն գործոններն ու պայմանները, որոնք կարող են նպաստել կամ խոչընդոտել մանկավարժի մասնագիտական աճին:

1. Մարդաբանական (անտրոպոլոգիական) գործոն

Մանկավարժի մասնագիտական աճի ապահովման մարդաբանական գործոնը վերաբերում է մարդու կենսաբանական և սոցիալական առանձնահատկություններին, նրա գենետիկական, ժառանգական տվյալների և սոցիալական պայմանների ամբողջությանը:

Մարդաբանական գործոնը բնութագրվում է **ֆիզիոլոգիական/կենսաբանական** բաղադրիչով, որը ներառում է մանկավարժի սեռը, տարիքը, առողջական վիճակը, գենետիկական առանձնահատկությունները, հասարակության մեջ նրա ունեցած կենսական պայմանների ապահովումը, որոնց լիարժեք առկայությունը կնպաստի մանկավարժի մասնագիտական աճին:

2. Առողջապահական (վալեոլոգիական) գործոն

Առողջապահական գործոնը սերտորեն առնչվում է մարդաբանական գործոնին և վերաբերում է մանկավարժի ֆիզիկական և հոգեկան առողջությանը:

Մարդը եռամիասնության ամբողջությունն է՝ մարմին, միտք, հոգի, ուստի այս գործոնը ենթադրում է մարդու ամբողջությունն ինչպես ֆիզիկական՝ մարմնական, այնպես էլ՝ հոգևոր ու մտավոր ասպեկտներով:

Վալեոլոգիական գործոնը ներառում է նաև մանկավարժի ամբողջ ապրելակերպի, աշխատաժամանակի և սթրեսի կառավարումը՝ ամբողջության պարբերաբար հսկողություն, սթրեսային իրավիճակներից խուսափելու կարողություն, աշխատանք բարենպաստ հոգեբանական մթնոլորտում:

Այս գործոնը կարևորվում է մանկավարժի մասնագիտական կայացման, արդյունավետ աշխատանքի և շարունակական զարգացման գործընթացում, քանի որ ֆիզիկապես ու հոգեպես ամբողջ մանկավարժի աշխատունակությունն առավել բարձր է, նա ավելի հեշտ կարող է հետևել իր մասնագիտական աճին ու ինքնազարգացմանը:

3. Արժեքաբանական (արքեոլոգիական) գործոն

Արժեքաբանական գործոնը վերաբերում է մանկավարժի էթնիկական, մշակութային, կրթական ու սոցիալական արժեքներին, որոնք ազդում են նրա անձնային որակների, սոցիալական փոխհարաբերությունների և մասնագիտական գործունեության վրա: Մարդու կողմից ընդունելի արժեքներն են ապահովում նրա անձնային որակները, ներքին համոզմունքներն ու աշխարհայացքը: Եթե մանկավարժի համար արժեք հանդիսանան ազնվությունը, պատասխանատվությունը, հայրենասիրությունը, բարությունը, համերաշխությունը, ապա նա նույն արժեքները կձևավորի նաև իր սաների մոտ:

Արժեքաբանական գործոնը միանշանակ ազդում է մանկավարժի մասնագիտական աճի ու կատարելագործման վրա:

4. Հոգեբանական գործոն

Հոգեբանական գործոնն ապահովում է մանկավարժի հոգեբանական բնութագիրը, էմոցիոնալ վիճակը, հուզական ինտելեկտը, հոգեկան ամբողջությունը, անձնային և կամային որակները: Հոգեբանական գործոնը ներառում է նաև մանկավարժի՝ սեփական «ԵՄ»-ի հետ հաշտ և ներդաշնակ կենսագործունեությունը:

Հոգեբանական գործոնը մեծ դեր է խաղում մանկավարժի՝ մասնագիտական աճի ու կատարելագործման գործում, քանի որ հոգեկան կայունությունը, հուզական ինտելեկտը, ինքնագնահատականն ու սթրեսի կառավարումը ձևավորում են մանկավարժի աշխատանքային մոտեցումները, բարեխղճությունը և սովորողների հետ հարաբերությունների որակը:

Ամերիկացի հոգեբան Դանիել Գոլմանը, որ հայտնի է հուզական ինտելեկտի մասին իր աշխատություններով, իր «Emotional Intelligence: Why It Can Matter More Than IQ» (1995) գրքում ներկայացնում է հուզական ինտելեկտի ազդեցությունը մարդու մասնագիտական աճի զարգացման համար՝ հատկապես ընդգծելով անձի զգացմունքների և դրանց կառավարման կարողությունների կարևորությունը աշխատանքում [9, 43-45]:

Այս հիմնախնդրին անդրադարձել է նաև ամերիկացի հոգեբան Աբրահամ Մասլոուն, որն իր «*A Theory of Human Motivation*» (1943) աշխատությունում շեշտում է մարդու պահանջմունքների աստիճանական համակարգը, որում հատկապես նշվում է, որ մարդու ինքնագարգացման և ինքնակատարելագործման համար մեծ նշանակություն ունի ֆիզիկական, կենսաբանական ու հոգեբանական պահանջմունքների բավարարումը, իսկ հակառակ պարագայում մարդն այդպես էլ չի հասնի իր անձնային և մասնագիտական ինքնագարգացմանը [10, 380-382]:

Փաստելով մանկավարժի մասնագիտական աճին նպաստող կամ խոչընդոտող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների մեծ դերակատարությունը՝ նշենք, որ այդ գործոնները սերտորեն փոխկապակցված են և մեկի բացակայությունը կարող է խնդիր հանդիսանալ մանկավարժի մասնագիտական աճի համար, անգամ մնացած գործոնների առկայության դեպքում:

Մանկավարժական ակմեոլոգիայում առանձնացվում են մի քանի հիմնական մոտեցումներ, որոնցից յուրաքանչյուրը ընդգծում է XXI դարի մանկավարժի մասնագիտական զարգացման որոշակի ասպեկտներ:

- **Անհատական մոտեցում.** այս մոտեցումը հիմնված է մանկավարժի անհատական և հոգեբանական առանձնահատկությունների, կարողությունների և հմտությունների վրա: Այն դիտարկում է մանկավարժին որպես ինքնուրույն մասնագիտական կատարելագործման ձգտող անձի, որը չի դադարում զարգանալ և կատարելագործվել իր մասնագիտության մեջ [4, 98-102]:

Կարծում ենք, որ անհատական մոտեցումը կարևորվում է նրանով, որ յուրաքանչյուր մանկավարժ պետք է գիտակցի իր մասնագիտական աճի և կատարելագործման կարևորությունն իր աշխատանքում:

- **Ինքնակառավարման ակմեոլոգիական մոտեցում.** այս մոտեցումը ենթադրում է, որ մանկավարժը պետք է դառնա փոփոխությունների նախաձեռնող, ոչ թե արձագանքող:

Ըստ Ա. Դերկաչի՝ մանկավարժը դառնում է իր սեփական զարգացումն ապահովող սուբյեկտը, որը պետք է կառավարի իր կարողությունների և հմտությունների ձևավորումը՝ մասնագիտական աճին հասնելու համար [6, 142-148]:

- **Նորարարական մոտեցում.** այս մոտեցման դեպքում շեշտը դրվում է նորարարական (ինովացիոն) կարողությունների վրա՝ ընդգրկելով թվային գրագիտությունը, մեթոդական ստեղծագործությունը, միջառարկայական կապերի ստեղծման կարողությունը:

«Մոտեցման նպատակն է,– գրում է Վ. Պետրուխինը, ապահովել մանկավարժի մրցունակության ձգտումը և ժամանակին համընթաց գնալու կարողությունը» [8, 119-123]:

Մանկավարժն իր աշխատանքին զուգահեռ պետք է մշտապես ուսումնասիրի առաջավոր փորձը, կիրառի դրանք իր աշխատանքային գործունեության մեջ, տիրապետի ժամանակակից կրթական տեխնոլոգիաներին:

• **Հոգեբանական կայունության մոտեցում.** Ըստ Ա. Դերկաչի՝ այս մոտեցումը ենթադրում է մանկավարժի՝ հուզական այրումից խուսափելու և մշտապես աշխատանքային մոտիվացիա գտնելու կարողությունը, նրա հոգեբանական կայունությունը, սթրեսի և հույզերի կառավարումը և հոգեկան բարեկեցությունը [5, 132–137]:

Կարծում ենք, որ հատկապես մանկավարժության ոլորտում հուզական ինքնակառավարումը մասնագիտական աճի ապահովման կարևոր գործոններից է, քանի որ հոգեբանորեն անկայուն մարդը չի կարող աշխատել երեխաների, երիտասարդների հետ, որոնց համար նա պետք է հեղինակություն հանդիսանա և փոխանցի ոչ միայն գիտելիքներ, այլև պատրաստի նրանց կյանքի ամենատարբեր իրավիճակներին:

Մանկավարժական ակնեոլոգիայի ժամանակակից մոտեցումները կարևոր հիմք են XXI դարի մանկավարժի մասնագիտական աճի զարգացման ու կատարելագործման համար: Այդ մոտեցումները չեն սահմանափակվում միայն մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմամբ, այլև ընդգրկում են մանկավարժի անհատական և հոգեբանական առանձնահատկությունների զարգացումը:

Եզրակացություն

XXI դարի մանկավարժի մասնագիտական աճի, նրա զարգացման և կատարելագործման հիմքում ընկած են մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններ, ժամանակակից մոտեցումներ, որոնց իմացությունը կնպաստի մանկավարժի ինքնակատարելագործմանը:

APPROACHES OF PEDAGOGICAL ACMEOLOGY IN THE PROFESSIONAL DEVELOPMENT OF PEDAGOGUE IN THE 21ST CENTURY

Aleksanyan Mane

*Ph.D, student, Yerevan State University,
Republic of Armenia
mane.alexanyan@ysu.am*

Summary

In every science, it is important to provide the conditions for the professional growth, self-development and self-realization of the specialist in the given field. The study of those conditions, the objective and subjective factors contributing to or hindering them was also the basis for the formation and development of the new science.

Acmeology is the science that studies the personal and professional growth of a specialist, the gradual development and improvement of his professionogram and psychogram.

At the core of the study of acmeology is not only individual, but also professional development of a person, so it has common appeals with Pedagogy science, because the development of professional knowledge, abilities and skills of educators ensures the further development and advancement of the field of education.

This article aims to study the approaches of Pedagogical Acmeology in the professional development of the pedagogue of the 21st century.

Keywords: *Acmeology, acme, acmeogram, pedagogical acmeology, personal and professional development, self-education.*

ПОДХОДЫ ПЕДАГОГИЧЕСКОЙ АКМЕОЛОГИИ В ПРОФЕССИОНАЛЬНОМ РАЗВИТИИ ПЕДАГОГА В XXI В.

Алексанян Мане

Соискатель,

Ереванский государственный университет,

Республика Армения

mane.alexanyan@ysu.am

Аннотация

Для каждого специалиста важно обеспечить условия для профессионального роста, саморазвития и самореализации в данной области. Изучение этих условий, объективных и субъективных факторов, способствующих или препятствующих этому, также явилось основой становления и развития новой науки.

Акмеология – наука, изучающая личностный и профессиональный рост специалиста, постепенное развитие и совершенствование его профессиограммы и психограммы.

В основе изучения акмеологии лежит не только индивидуальное, но и профессиональное развитие человека, поэтому эта наука имеет много общего с педагогической наукой, поскольку развитие профессиональных знаний, умений и навыков педагогов обеспечивает дальнейшее развитие и совершенствование педагогов в сфере образования.

Целью данной статьи является исследование подходов педагогической акмеологии в профессиональном развитии педагога в XXI в.

Ключевые слова: акмеология, акме, акмеограмма, педагогическая акмеология, личностно-профессиональное развитие, самообразование.

Օգտագործված գրականության ցանկ

1. Akimova O. B., Solomina G. M., Fran A. S. i drugie. Pedagogicheskaya akmeologiya. Kollektivnaya monografiya. Ministerstvo obrazovaniya i nauki Rossiyskoy Federatsii, FGAOU VPO «Rossiyskiy gosudarstvennyy professional'no-pedagogicheskiy universitet», Yekaterinburg, 2012, 251 str.

2. Arutyunyan N.K., Vardanyan I.K. Pedagogicheskaya akmeologiya: poiski 21-go veka. YePH, «Krtuthyan himnaharcery 21-rd darum» mijazgayin gitakan gitazhoghovi nyutheri zhoghovatcu, Yerevan, 2017, 480 ej.

3. Arutyunyan N.K. Akmeologicheskiy podkhod k professional'noy deyatel'nosti sovremennogo pedagoga // Nauchnyy vesnik lyotnoy akademii, vyp. 3, 2018

4. Bodalev A.A. Akmeologiya. Izdatel'stvo «Piter», 2001, 544 str.

5. Derkach A.A. Psikhologicheskaya akmeologiya. RAGS, 2004, 299 str.

6. Derkach A.A., Isaev E.I. Akmeologiya. Rostov-na-Donu: Feniks, 2000, 416 str.

7. Medvedev D.A. (predsedatel'), Egorov V.K. (sopredsedatel'), Boykov V.E., Grigor'ev V.V. i drugie. Akmeologiya. Mezhdunarodnyy akmeologicheskiy institut, Rossiyskaya akademiya gosudarstvennoy sluzhby pri Prezidente RF. Uchebnik pod obshchey redaktsiyey d.p.n., professora, akademika RAO A.A. Derkacha. Moskva: Izdatel'stvo RAGS, 2004, 299 str.

8. Petrukhin V.V. Pedagogicheskaya akmeologiya: vyzovy XXI veka. Moskva, 2015, 416 str.

9. Goleman, D. (1995). Emotional Intelligence: Why It Can Matter More Than IQ. Bantam Books, 1995, 661 p.

10. Maslow, A. H. (1943). A theory of human motivation. Psychological Review, 50(4), 1943.

Получено: 18.04.2025

Рассмотрено: 29.04.2025

Принято: 06.05.2025

Received: 18.04.2025

Reviewed: 29.04.2025

Accepted: 06.05.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Ղազարյան Արևիկ

*մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
arev.ghazaryan@ysu.am
<https://orcid.org/0000-0003-0231-2844>*

Ամփոփում

Համառոտ ներածական: Ոլորտային թվայնացման պայմաններում ժամանակի մարտահրավերներին դիմագրավելու տեսանկյունից կարևորվում է հանրակրթության ոլորտում իրավիճակին համապատասխան հիբրիդային ուսուցումը: Համավարակի ընթացքում իրավիճակային մոտեցմամբ հիբրիդային ուսուցումը հնարավորություն տվեց հիմնականում անխափան իրականացնելու գործընթացը, սակայն սոցիալական մանկավարժը դեռևս պատրաստ չէր իրականացնել իր գործառույթները, երբ իրավիճակային առանձնահատկություններից ելնելով՝ կիրառվեցին հիբրիդային ուսուցման տարբեր մոդելներ: Երկու միջավայրերում (առցանց և առդեմ) աշխատելու կարողությունը սոցիալական մանկավարժից պահանջում են մասնագիտական նոր կոմպետենցիաներ, որոնք պետք է համապատասխանեն առկա և հիբրիդային ուսուցման առանձնահատկություններին: Այս համատեքստում փոխվում և լրացվում են սոցիալական մանկավարժի գործառույթները՝ հիմք ընդունելով հիբրիդային ուսուցման սկզբունքները, մեթոդաբանությունը: Սոցիալական մանկավարժի գործունեությունը վերախմաստավորվում է իրավիճակային ուսուցման պահանջներին համահունչ:

Բանալի բառեր՝ *իրավիճակային փոփոխություն, հիբրիդային ուսուցում, սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկություններ, սոցիալական մեկուսացում, ֆիզիկական միջավայր:*

Հիմնախնդիրն է ուսումնասիրել և վերլուծել սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները իրավիճակային ուսուցման համատեքստում:

Հիմնախնդիրն առնչվող արդիական հետազոտությունների ու հրատարակությունների վերլուծություն: Իրավիճակային, հիբրիդային ուսուցման հիմնախնդիրը դիտարկվել է տարբեր մոտեցումներում Անդերսոնը, Մ. Ռիվերան քննարկել են հիբրիդային ուսուցման նոր չափանիշները՝ շեշտադրելով առավելություններն ու սահմանափակումները: Ա.Բռաունն ու Թ.Գրինը վերլուծել են անհատական և թիմային աշխատանքի սոցիալական փոխազդեցությունների դինամիկան: Ջ. Սմիթը, Ք. Ջոնսոնը և Պ. Թեյլորը ուսումնասիրել և վերլուծել են սոցիալական հմտությունների անհավասարությունները առդեմ և առցանց միջավայրերում:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները իրավիճակային հիբրիդային ուսուցման պայմաններում:

Հետազոտության նորույթը: Հանգամանորեն ուսումնասիրվել և քննվել են սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկություններն իրավիճակային ուսուցման պայմաններում:

Հիմնական նյութի շարադրանքը: Կրթության ոլորտի մարտահրավերներին դիմագրավելու յուրօրինակ մեխանիզմներից մեկն է իրավիճակային հիբրիդային ուսուցումը, որի անհրաժեշտությունը փաստարկվեց համավարակի պայմաններում: Հիբրիդային ուսուցման մշակված տարբեր մոդելների կիրառության ընթացում բացահայտվում են յուրաքանչյուր մոդելի առավելություններն ու սահմանափակումները [6], [8]: Թվայնացման պայմաններում, երբ նոր պահանջներ են ներկայացվում սովորողների սոցիալականացմանը, կրթական կարիքները բավարարելու համար անհրաժեշտություն է առաջանում վերամաստավորելու սոցիալական մանկավարժի գործունեությունը: Քանի որ իրավիճակային ուսուցումը համատեղում է առկա և հեռավար ուսուցման տարբերը, մոդելը հնարավորություն է տալիս սովորողներին ինքնուրույն սովորելու օգտվելով առցանց հարթակներից, ինչպես նաև պահպանել ուսուցչի և սոցիալական մանկավարժի հետ անմիջական շփումը: Իրավիճակային ուսուցումը ստեղծում է նոր միջավայր, որտեղ սոցիալական մանկավարժը պետք է գործունեություն ծավալի ինչպես դասարանում, այնպես էլ առցանց հարթակներում: Իրավիճակային ուսուցման պայմաններում սովորողների սոցիալականացման գործընթացը ձեռք է բերում նոր առանձնահատկություններ, որոնց մասին պետք է իրազեկված լինի սոցիալական մանկավարժը և դրանց հիման վրա ծավալի իր գործունեությունը:

1.Թվային հաղորդակցության գերակայություն – Հիբրիդային ուսուցման պայմաններում աշակերտների հիմնական շփումն իրականացվում է առցանց հարթակների (Zoom, Microsoft Teams, Google Classroom) միջոցով: Արդյունքում զարգանում են թվային հաղորդակցության հմտությունները, սակայն երբեմն խոչընդոտվում է ոչ վերբալ շփման հմտությունների ձևավորումը [2,21]:

2.Անձնական և խմբային փոխազդեցությունների փոփոխված դինամիկա–Աշակերտները հաճախ շփվում են առանձին, այլ ոչ թե խմբում, ինչը կարող է ազդել թիմային աշխատանքի և սոցիալական համագործակցության հմտությունների վրա[4,58]: Հիբրիդային համակարգում անհրաժեշտ է հատուկ մեթոդներ մշակել, որոնք կխթանեն թիմային աշխատանքը ինչպես առցանց, այնպես էլ առդեմ միջավայրում:

3.Սոցիալական հմտությունների ձևավորման անհավասարություն– Իրավիճակային ուսուցումը կարող է տարբեր ազդեցություն ունենալ աշակերտների սոցիալականացման վրա՝ կախված նրանց նյարդային համակարգից, խառնվածքից, բնավորության գծերից: Ավելի ինքնուրույն և տեխնոլոգիապես հմուտ աշակերտները կարող են հեշտությամբ հարմարվել նոր միջավայրին, մինչդեռ մյուսները կարող են ունենալ հաղորդակցման դժվարություններ [8,34]:

4. Սոցիալական մեկուսացման ռիսկ – Առցանց ուսուցման պայմաններում աշակերտները կարող են զգալ մեկուսացվածություն և շփման պակաս, ինչը կարող է հանգեցնել սոցիալական պասիվության, անհանգստության կամ ինքնավստահության նվազման [10]: Այս խնդրի լուծման համար կարևոր է խրախուսել դասարանային քննարկումները, խմբային աշխատանքը և առկա դասերին մասնակցությունը [3,36]:

5. Սոցիալականացման նոր հարթակների և մշակութային փոփոխությունների զարգացում –Աշակերտները սկսում են օգտագործել սոցիալական ցանցերը և առցանց հարթակները որպես հիմնական շփման միջոցներ: Սա նոր հնարավորություն է ստեղծում թվային միջավայրում սոցիալական կապերի ամրապնդման համար, սակայն նաև պարունակում է նոր ռիսկեր՝ պայմանավորված առցանց միջավայրի ազդեցություններով: Իրավիճակային ուսուցման ընթացքում աշակերտները հարմարվում են փոփոխվող պայմաններին, ինչը կարող է նպաստել ճկունության, ինքնակարգավորման և նոր միջավայրերում ինտեգրվելու հմտությունների զարգացմանը: Ակնառու է, որ համավարակի ընթացքում թվարկված առանձնահատկությունները ցույց են տալիս, որ իրավիճակային ուսուցումն առաջ է բերում հաղորդակցման պակասի հետ կապված մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարեն ինչպես սովորողներն ու ուսուցիչները, այնպես էլ սոցիալական մանկավարժը: Իրավիճակային ուսուցման պայմաններում սոցիալական մանկավարժի դերը դառնում է առավել թիրախավորված և պահանջում է նոր մոտեցումներ: Սոցիալական մանկավարժի գործառույթները մոդելավորվում են հետևյալ քայլերին համապատասխան:

1. Ուսումնական տարվա ընթացքում կապի հաստատում և պահպանություն

- Օգտագործում է առցանց հարթակները (Zoom, Google Meet, Microsoft Teams) անհատական և խմբային հանդիպումների համար:
- Ստեղծում է ուսուցիչների, ծնողների և աշակերտների հետ ակտիվ շփման հարթակներ (WhatsApp, Google Classroom):
- Հոգեբանական աջակցություն է ցուցաբերում երեխաներին առցանց՝ դաստիարակչական խորհրդատվությունների միջոցով:

2. Սոցիալական հմտությունների զարգացում

- Կազմակերպում է առցանց և առդեմ քննարկումներ, թիմային աշխատանքներ՝ սովորողների հաղորդակցման և սոցիալական հմտությունների զարգացումը խթանելու նպատակով:

- Իրականացնում է ինտերակտիվ վարժություններ, խաղեր և քննարկումներ՝ օգնելու սովորողներին հաղթահարել հաղորդակցման դժվարությունները:

3. Հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն

- Իրականացնում է մշտադիտարկում՝ աշակերտների հուզական վիճակը գնահատելու համար:

- Անհրաժեշտության դեպքում անհատական հանդիպումներ է կազմակերպում՝ համագործակցելով հոգեբանների ու ծնողների հետ:

- Աջակցում է ուսուցիչներին աշակերտների սոցիալական և հոգեբանական կարիքները գնահատելու և լուծելու հարցում:

4. Խնդիրների հայտնաբերում և լուծումների առաջարկում

- Վերլուծում է առկա խնդիրները՝ պայմանավորված սովորողների սոցիալական հարմարման, կոնֆլիկտների կամ ընտանիքին առնչվող դժվարություններով:

- Իրականացնում է շտկողական ծրագրեր՝ ինչպես առցանց, այնպես էլ առդեմ ձևաչափով:

- Ըստ անհրաժեշտության կազմակերպում է սեմինարներ, քննարկումներ՝ ծնողների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

- Աջակցում է ծնող-երեխա հաղորդակցման համապատասխան մոդելի ձևավորմանը իրավիճակային ուսուցման պայմաններում:

6. Մշակութային և կրթական ծրագրերի իրականացում

- Արտալսարանային պայմաններում կազմակերպում է առցանց միջոցառումներ, մշակութային ծրագրեր, վեբինարներ և սեմինարներ:

- Խթանում է կամավորական ծրագրերի իրականացմանը՝ աշակերտներին ներգրավելով տարբեր սոցիալական նախագծերում:

Քննված քայլերի արդյունքում սոցիալական մանկավարժը հնարավորություն է ունենում արդյունավետ աշխատելու իրավիճակային ուսուցման պայմաններում՝ աջակցելով ինչպես աշակերտներին, այնպես էլ ուսուցիչներին, ծնողներին:

Իրավիճակային ուսուցման պայմաններում սոցիալական մանկավարժի գործունեության արդյունավետության հիմքում ընկած են մի շարք սկզբունքներ, դրանք են.

1.Անհատական մոտեցման սկզբունք–Յուրաքանչյուր աշակերտի սոցիալականացման, հուզական ու հոգեբանական կարիքները տարբեր են, հատկապես իրավիճակային ուսուցման պայմաններում: Սոցիալական մանկավարժը պետք է մշակի անհատական աջակցման մեթոդներ՝ հաշվի առնելով աշակերտի սոցիալական միջավայրը, կրթական հնարավորությունները և հոգեբանական առանձնահատկությունները:

2. Հասանելիության և ընդգրկվածության սկզբունք–Բոլոր աշակերտները, անկախ սոցիալական կամ տեխնոլոգիաների տիրապետման հնարավորություններից, պետք է ունենան հավասար պայմաններ՝ ուսուցման և սոցիալական աջակցության համար: Ասվածը վերաբերում է հավելյալ ռեսուրսների տրամադրմանը սոցիալապես խոցելի խմբերին, տեխնոլոգիական աջակցության կազմակերպմանը, ուսումնական ներառականության ապահովմանը:

3. Համագործակցության սկզբունք–Իրավիճակային ուսուցումը պահանջում է սերտ համագործակցություն բոլոր շահագրգիռ կողմերի՝ ուսուցիչների, ծնողների, աշակերտների և սոցիալական մանկավարժների միջև: Սոցիալական մանկավարժը պետք է ապահովի կրթական հաղորդակցությունը՝ հաշվի առնելով ինչպես հիբրիդային ուսուցման առանձնահատկությունները, այնպես էլ սո-

վորողների տարիքային, հոգեբանական, անհատական, սեռային առանձնահատկությունները:

4. Տեխնոլոգիական հարմարավետության սկզբունք– Քանի որ հիբրիդային ուսուցումը մեծապես հիմնված է թվային տեխնոլոգիաների կիրառության վրա, սոցիալական մանկավարժը պետք է տիրապետի նորագույն հարթակներին (Google Classroom, Microsoft Teams, Zoom) և կարողանա դրանք կիրառել երեխաների հետ աշխատելիս:

5. Գաղտնիության սկզբունք– Առցանց հարթակներում աշխատելիս կարևոր է պահպանել աշակերտների անձնական տվյալների գաղտնիությունը և պահպանել էթիկայի նորմերը: Սոցիալական մանկավարժը պետք է ապահովի, որ աշակերտների անձնական հարցերը չքննարկվեն հանրային հարթակներում և երրորդ անձանց հետ:

6. Սոցիալականացման և հուզական աջակցության սկզբունք– Իրավիճակային ուսուցման պայմաններում երեխաների հաղորդակցման մակարդակը կարող է փոփոխվել, բացասաբար ազդել նրանց հուզական վիճակի վրա: Այս իրավիճակում սոցիալական մանկավարժը պետք է կազմակերպի խմբային խաղեր, քննարկումներ, առցանց և առդեմ հանդիպումներ, որոնք կխթանեն հաղորդակցման մակարդակի բարձրացմանը և թիմային աշխատանքին:

7. Ճկունության և հարմարվողականության սկզբունք– Իրավիճակային՝ հիբրիդային ուսուցումը կարող է փոփոխվել տարբեր հանգամանքների ազդեցությամբ (օրինակ՝ համավարակ, արտակարգ իրավիճակներ, կրթական համակարգի փոփոխություններ): Սոցիալական մանկավարժը պետք է ունենա ճկուն մոտեցում, արագ արձագանքի փոփոխություններին և մշակի նոր մոտեցումներ, մարտավարություններ՝ աշակերտների կարիքները բավարարելու համար:

Իրավիճակային ուսուցման պայմաններում սոցիալական մանկավարժը բախվում է երկու խումբ խնդիրների, որոնք պայմանավորված են հիբրիդային ուսուցման ու սովորողների սոցիալականացման առանձնահատկություններով: Իրավիճակային ուսուցման պայմաններում սոցիալական մանկավարժի աշխատանքի ընթացքում կարող են առաջանալ խնդիրներ, որոնք կարելի է դասակարգել հետևյալ խմբերում՝ **տեխնոլոգիական դժվարություններ**. ոչ բոլոր աշակերտներն ունեն համապատասխան տեխնիկա և հնարավորություններ, ինչը կարող է խոչընդոտել իրականացվող աշխատանքը: Սոցիալական մանկավարժի աշխատանքի արդյունավետությունը կարող է խոչընդոտել նաև աշակերտների թվային գիտելիքների, կարողությունների պակասը: **Ներգրավվածության ցածր մակարդակը**. առցանց հանդիպումների, քննարկումների, խորհրդատվության ընթացքում սոցիալական մանկավարժը պետք է ապահովի մոտիվացիա, որը կնպաստի ակտիվ մասնակցությանը՝ երկու միջավայրերի մեկտեղմամբ: Իրավիճակային ուսուցման ընթացքում աշակերտների մոտ նկատվում են **հոգեբանական խնդիրների աճ**՝ պայմանավորված մեկուսացման և կենդանի հաղորդակցման, սոցիալական հմտությունների սահմանափակմամբ: Սոցիալական մանկավարժը պետք է կիրառի այնպիսի մեթոդներ, որոնք

կօզնեն սովորողներին հաղթահարել սոցիալական մեկուսացումը և պահպանել սոցիալական կապերը: **Սոցիալական անարդարության խնդիրները.** տարբեր ընտանիքներ ունեն տարբեր հնարավորություններ տեխնոլոգիական և կրթական ռեսուրսների հասանելիության տեսանկյունից: Սոցիալական մանկավարժը պետք է օգնի նվազեցնել կրթական անհավասարությունը՝ ապահովելով հարմարեցված մոտեցումներ տարբեր սոցիալական խմբերի համար: Իրավիճակային ուսուցման համատեքստում սովորողների սոցիալականացումը նույնպես ունի առանձնահատկություններ: Հիմնական առանձնահատկություններն են. **տեխնոլոգիական կախվածություն** - իրավիճակային ուսուցումը մեծապես հիմնված է թվային տեխնոլոգիաների վրա, ինչը կարող է ազդել աշակերտների հաղորդակցման հմտությունների զարգացման վրա՝ սահմանափակելով սոցիալական պահանջմունքների բավարարման ցանկությունը: Թվային միջավայրում սոցիալական փոխազդեցությունը հաճախ տարբերվում է իրական շփումներից. կարող է լինել ավելի ֆորմալ կամ հակառակը՝ ոչ ֆորմալ: Նոր սոցիալական հարթակների տիրապետումը (առցանց ուսուցման հարթակները՝ Zoom, Google Classroom, Microsoft Teams), դառնալով աշակերտների շփման հիմնական միջոցը, վերափոխում է հաղորդակցման մոդելներն ու մշակույթը: Սոցիալական ցանցերը դառնում են ոչ միայն ժամանցային, այլև ուսումնական փոխազդեցության միջավայր: Իրավիճակային ուսուցման պայմաններում կարող են առաջանալ սոցիալականացման խնդիրներ: Աշակերտների մի մասն ավելի հեշտությամբ են հարմարվում առցանց ուսուցմանը, մինչդեռ մյուսների համար սոցիալական մեկուսացումն ավելի ուժեղ է արտահայտվում: Իրավիճակային ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է նաև ընտանիքի սոցիալական-տնտեսական պայմաններով (օրինակ՝ համացանցի հասանելիություն, որակ, անհատական սարքերի առկայություն), որոնք ազդում են սոցիալականացման մակարդակի վրա: Ուսումնառության ընթացքում վերափոխվում են աշակերտների հաղորդակցման հմտությունները: Իրավիճակային պայմաններում ուսուցումը զարգացնում է գրավոր խոսքի նոր ձևաչափ, հաղորդակցման հմտություններ: Գրավոր հաղորդակցման կարևորությունը ընդգծվում է (էլ. նամակներ, չատեր, ֆորումներ): Ի հակակշիռ թվարկվածի՝ կարող են նվազել մարմնի լեզվի և հուզական արտահայտումները, որոնք, իրենց հերթին, կարող են ազդել դեմ առ դեմ հաղորդակցման կարողությունների վրա: Ֆիզիկական միջավայրում և առցանց հարթակում տարբեր են ուսուցիչ-աշակերտ-սոցիալական մանկավարժ միջանձնային հաղորդակցման ձևերն ու հոգեբանական ազդեցությունները: Սոցիալական մեկուսացումը կամ առցանց միջավայրի գերակշռումը կարող է ազդել աշակերտների ինքնագնահատականի և հոգեբանական, հուզականային որակների վրա: Միևնույն ժամանակ որոշ ինտրովերտ աշակերտների համար առցանց ուսուցումը կարող է ավելի հարմարավետ լինել, քանի որ նվազում է «սոցիալական ճնշումը»: Իրավիճակային ուսուցման պայմաններում ինտերակտիվ հաղորդակցման ընթացքում փոխվում են նաև սոցիալական մանկավարժի կողմից խմբային աշ-

խատանք կազմակերպելու հնարավորությունները: Թիմային աշխատանքը տեղափոխվում է առցանց հարթակներ, ինչը երբեմն նվազեցնում է համագործակցության արդյունավետությունը: Աշակերտների մի մասի համար առցանց համագործակցությունը կարող է լինել ավելի հեշտ, քանի որ հնարավոր է աշխատել ավելի ճկուն գրաֆիկով, իսկ մյուս մասը տարբեր պատճառականությամբ կարող է դժվարանալ արդյունավետ աշխատել թիմում: Սոցիալական մանկավարժը պետք է կարողանա համադրելի դարձնել առդեմ և առցանց հարթակում աշխատանքի արդյունավետությունը: Հատկապես կարևոր է սովորողների անձնական և խմբային փոխազդեցությունների փոփոխված դինամիկայի կառավարումը[4]: Սոցիալական մանկավարժը, աշխատանքի ընթացքում նկատի ունենալով թվային հաղորդակցման գերակայությունը, սոցիալական հմտությունների ձևավորման անհավասարությունը, սոցիալական մեկուսացման ռիսկը, սոցիալականացման նոր հարթակների և մշակութային փոփոխությունների զարգացման առանձնահատկությունները, կիրառում է տարբեր մեթոդախմբեր:

1. *Կոմունիկացիոն մեթոդախումբ* – մեթոդները նախատեսված են աշակերտների, ծնողների և ուսուցիչների հետ արդյունավետ հաղորդակցություն ապահովելու համար:

- Առցանց խորհրդատվություններ՝ անհատական կամ խմբային հանդիպումներ (Zoom, Google Meet, Microsoft Teams):

- Հաղորդագրությունների միջոցով կապի պահպանում՝ WhatsApp, Google Classroom, էլ. փոստ:

- Հետադարձ կապի մեթոդներ՝ հարցումների, ֆոկլուս խմբերի և քննարկումների կիրառմամբ [3], [7]:

2. *Սոցիալ-հոգեբանական մեթոդախումբ*–մեթոդները նպատակ ունեն խթանելու աշակերտների հուզական կայունությունը և սոցիալական հարմարվողականությունը:

- Մանկավարժական աջակցման մեթոդներ՝ խաղաթերապիա, արվեստաթերապիայի տարաբնույթ տեխնոլոգիաներ, ավագաթերապիա, մանդալաթերապիա (առցանց և առդեմ միջավայրում):

- Աշակերտների հուզական վիճակի մշտադիտարկում՝ ինքնագնահատման հարցումներ, դիտարկումներ:

- Սթրեսի կառավարման տեխնիկա՝ մեղիտացիա, շնչառական վարժություններ [3], [8]:

3. *Խմբային ուսուցման և համագործակցության մեթոդախումբ* –նպատակ ունի զարգացնելու աշակերտների համագործակցային ու սոցիալական հմտությունները:

- Թիմային խաղեր և նախագծային ուսուցում առցանց հարթակներում (Padlet, Miro) կամ ֆիզիկական միջավայրում:

- Դերային խաղեր՝ աշակերտները հանդես են գալիս սոցիալական տարբեր իրավիճակներում և սոցիալական տարբեր դերերում [5,12]:

- Խմբային քննարկումներ ու երկխոսություններ՝ սոցիալական խնդիրների վերաբերյալ [4]:

4. *Տեխնոլոգիական մեթոդախումբ* – կիրառվում են թվային տեխնոլոգիաներ:

- Վիրտուալ սոցիալական տարածքներ՝ Facebook խմբեր, Google Classroom ֆորումներ:

- Gamification (խաղայնացում)՝ Kahoot, Quizizz՝ սոցիալական հմտությունների զարգացման համար:

- Մուլտիմեդիա նյութերի ստեղծում՝ տեսանյութեր:

5. *Ներառական և անհատական մոտեցման մեթոդախումբ* – Նպատակ ունի աջակցելու հատուկ կարիքներ ունեցող և ռիսկային խմբում գտնվող երեխաներին:

- Մենթորություն և անհատական խորհրդատվություններ:

- Հատուկ կրթական ռեսուրսների տրամադրում՝ առցանց ու տպագիր նյութեր:

- Ծնողների ներգրավման մեթոդներ՝ հանդիպումներ, խորհրդատվություններ, քննարկումներ, սեմինարներ:

Իրավիճակային ուսուցման պայմաններում թվարկված մեթոդախմբերի կիրառության ընթացքում սոցիալական մանկավարժի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է առաջացող ռիսկերի գնահատմամբ և դրանց հաղթահարմամբ ներքոհիշյալ քայլերին համապատասխան:

1. *Կապի և հաղորդակցման դժվարություններ* – Իրավիճակային ուսուցման պայմաններում աշակերտների հետ մշտական կապի պահպանումը բարդանում է տեխնիկական և սոցիալական խոչընդոտների պատճառով: Անդերսոնի և Ռիվերայի հետազոտությունները ցույց են տալիս, որ առցանց ուսուցման ժամանակ աշակերտների ներգրավվածությունը նվազում է [5,12]:

2. *Հոգեբանական և էմոցիոնալ ռիսկեր* – Հոգեբանները նշում են, որ սոցիալական մեկուսացումը և առցանց ուսուցման սթրեսը կարող են բացասաբար ազդել աշակերտների հոգեբանական վիճակի վրա [3]: Սոցիալական մանկավարժները պետք է ունենան մեխանիզմներ՝ այս խնդիրները ժամանակին հայտնաբերելու և կանխելու համար:

3. *Խոցելի խմբերի հետ աշխատելու դժվարություններ* – Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, թիրախային խմբի երեխաները հաճախ բխվում են կրթական անհավասարության խնդիրների: UNESCO-ի գեկույցի համաձայն (2021)՝ առցանց կրթության հասանելիության բացակայությունը խորացնում է սոցիալական անարդարությունը:

4. *Տեխնիկական ռիսկեր*–Տեխնոլոգիական հարթակների խափանումներն ու անբավարար տիրապետումը կարող են խոչընդոտել ուսումնական գործընթացը [7]: Ուսուցիչների և սոցիալական մանկավարժների համար կարևոր է ունենալ տեխնիկական անհրաժեշտ հմտություններ:

5. *Գաղտնիություն և անձնական տվյալների պաշտպանություն* – *Առցանց հարթակներում աշակերտների անձնական տվյալների պաշտպանությունը առանցքային խնդիր է: Սոցիալական մանկավարժները պետք է վստահ լինեն,*

որ իրենց աշխատանքային մեթոդները համապատասխանում են գաղտնիության պահանջներին:

6. Ուսումնական գործընթացի անհամաչափություն – Իրավիճակային ուսուցումը կարող է առաջացնել անհավասար կրթական պայմաններ՝ կախված ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակից: Սա հատկապես վտանգավոր է տարիքով փոքր երեխաների համար, որոնք ավելի շատ կարիք ունեն ուղղակի շփման:

Եզրակացություններ: Իրավիճակային ուսուցման պայմաններում սոցիալական մանկավարժի մասնագիտական գործունեությունը ենթարկվում է էական վերաիմաստավորման: Հիմնվելով ժամանակակից կրթական իրականության վրա՝ անհրաժեշտ է արձանագրել, որ սոցիալական մանկավարժի դերը դառնում է ոչ միայն արդիական, այլև կենսական կրթական գործընթացի ամբողջականության, սովորողների սոցիալ-հոգեբանական բարեկեցության և հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից: Տվյալ մոդելի գործնական կիրառման ընթացքում ի հայտ են գալիս մի շարք ռիսկեր, որոնցից հատկապես արժի ընդգծել հաղորդակցման սահմանափակ հնարավորությունները, հոգեբանական մեկուսացվածության խորացումը, ինչպես նաև սոցիալապես անապահով սովորողների՝ տեխնիկական միջոցների սահմանափակ հասանելիությունը: Միևնույն ժամանակ իրավիճակային ուսուցումը պարունակում է զգալի հնարավորություններ՝ ուղղված կրթական գործընթացի անհատականացմանը, ժամանակի և տարածության առումով ճկուն կազմակերպմանը, ինչպես նաև նորարարական մեթոդների ու տեխնոլոգիական գործիքների ինտեգրմանը: Այս համատեքստում սոցիալական մանկավարժի աշխատանքը նպաստում է կրթական միջավայրի հարմարեցմանը՝ հաշվի առնելով սովորողների սոցիալական, հոգեբանական և մշակութային առանձնահատկությունները: Սոցիալական մանկավարժի արդյունավետ գործունեությունը հիփրիդային միջավայրում պայմանավորված է մի շարք չափանիշներով, այդ թվում՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման կարողությամբ, մասնագիտական հուզական ինտելեկտով, համագործակցության բարձր հմտություններով և կրթական ռիսկերի կառավարման կարողությամբ:

PECULIARITIES OF A SOCIAL PEDAGOGUE'S PROFESSIONAL ACTIVITY IN THE CONTEXT OF SITUATIONAL LEARNING

Ghazaryan Arevik

*Ph.D. of Pedagogy, Associate Professor
Yerevan State University,
Republic of Armenia
arev.ghazaryan@ysu.am*

Summary

In the context of sectoral digitalization and the necessity to respond to contemporary challenges, the implementation of situationally adapted hybrid learning in the field of general education has become increasingly significant. During the pandemic, the application of hybrid education through a situational approach enabled the relatively uninterrupted continuation of the educational process. However, it should be noted that social pedagogues were not adequately

prepared to carry out their professional functions, especially when different models of hybrid learning were implemented in response to specific situational features.

Working across two environments—online and physical—requires social pedagogues to possess new professional competencies that align with the characteristics and demands of both traditional and hybrid learning formats. In this context, the functions of the social pedagogue are being redefined and supplemented, based on the principles and methodology of hybrid learning. The professional activity of the social pedagogue is undergoing a process of reinterpretation in accordance with the requirements of situational learning.

Keywords: *situational change, hybrid learning, peculiarities of social pedagogue's activity, social isolation, physical environment.*

ОСОБЕННОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ СОЦИАЛЬНОГО ПЕДАГОГА В КОНТЕКСТЕ СИТУАТИВНОГО ОБУЧЕНИЯ

Казарян Аревик

*Кандидат педагогических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения
arev.ghazaryan@ysu.am*

Аннотация

Краткое введение. В условиях отраслевой цифровизации и необходимости реагирования на вызовы времени всё большую значимость приобретает ситуативно адаптированное гибридное обучение в системе общего образования. В период пандемии применение гибридных форм обучения с опорой на ситуативный подход позволило обеспечить относительно бесперебойное продолжение образовательного процесса. Однако следует отметить, что социальные педагоги оказались недостаточно подготовленными к выполнению своих профессиональных функций, особенно в условиях применения различных моделей гибридного обучения, продиктованных спецификой конкретных ситуаций. Работа в двух средах – онлайн и офлайн – требует от социального педагога новых профессиональных компетенций, соответствующих особенностям и требованиям как традиционного, так и гибридного форматов обучения. В данном контексте функции социального педагога подвергаются переосмыслению и дополняются на основе изучения и применения принципов и методологии гибридного обучения. Деятельность социального педагога претерпевает трансформацию в соответствии с требованиями ситуативного обучения.

Ключевые слова: *ситуативные изменения, гибридное обучение, особенности деятельности социального педагога, социальная изоляция, физическая среда.*

References

1. **Abrahamyan S.**, *Challenges and Opportunities of Hybrid Learning*. Yerevan, 2021
2. **Anderson T., Rivera J.**, *Exploring online learning through the lens of student engagement and motivation*. Educational Media International, 2021
3. **Brown A., Green, T. D.** *The role of technology in supporting student engagement and social learning*. Journal of Technology in Education, 2020
4. **Deterding S., Dixon, D., Khaled, R., Nacke, L.** *From game design elements to gamification: defining "gamification"*, 2011
5. **Garrison D. R., Kanuka, H.**, *Blended learning: Uncovering its transformative potential in higher education*. The Internet and Higher Education, 2004
6. **Moore M. G.**, *Handbook of distance education*. Routledge., 2013
7. **Smith J., Johnson M., Taylor P.**, *Digital communication in hybrid learning environments: A case study*. International Journal of Education and Social Science, 2021

8. **UNESCO.** *Building education back better: The impact of digital learning during COVID-19.* UNESCO, 2021.

Получено: 18.04.2025

Рассмотрено: 21.04.2025

Принято: 28.04.2025

Received: 18.04.2025

Reviewed: 21.04.2025

Accepted: 28.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License

К ПРОБЛЕМЕ РАЗВИТИЯ УРОВНЯ ИНФОРМИРОВАННОСТИ УЧИТЕЛЕЙ НАЧАЛЬНЫХ КЛАССОВ В ВОПРОСАХ ОБУЧЕНИЯ И ВОСПИТАНИЯ ДЕТЕЙ С НАРУШЕНИЕМ ЗРЕНИЯ

Азарян Роберт

*Доктор педагогических наук, профессор,
Ереванский государственный университет,
Республика Армения
r.azaryan@ysu.am*

<https://orcid.org/0000-0003-0120-338X>

Меликян Лусине

*Ширакский государственный университет,
Республика Армения
meliqyan76lusine@gmail.com*

Аннотация

Литературные данные и практика свидетельствуют, что нарушения зрения у детей значительно затрудняют их игровую, двигательную, трудовую деятельность, ориентацию в пространстве. Глубокое и частичное нарушение зрения особенно усложняет организацию и проведение учебной работы и внеклассных занятий с этими детьми в общеобразовательной школе. Поэтому знания учителей, работающих с подобными детьми, степень и характер зрительных нарушений у этих учащихся, информированности в вопросах организации и проведения учебных занятий и профилактики вторичных отклонений в развитии незрячих и слабовидящих учащихся станет основой для оказания им своевременной эффективной помощи в учебе и в приобретении жизненно важных практических умений и навыков.

Учитывая важность обсуждаемой проблемы в статье рассматриваются вопросы и представлены аспекты развития уровня информированности учителей начальных классов в вопросах обучения детей с нарушением зрения в общих классах массовой школы. На основе представленного материала проведен теоретический анализ рассматриваемых вопросов и даны практические рекомендации, необходимые учителям начальных классов, осуществляющих обучения и воспитания детей с нарушением зрения в классе, где обучаются и нормально видящие сверстники.

Ключевые слова: дети с нарушением зрения, слабовидящие, учителя, начальные классы, проблема, учащиеся, обучение, учебный процесс.

Краткое введение. В статье представлены важные аспекты проблемы развития уровня информированности учителей начальных классов о вопросах обучения детей с нарушением зрения. На основе представленного нами материала проведен теоретический анализ рассматриваемых вопросов, сделаны выводы и даны практические рекомендации.

Проблема. Известно, что нарушение зрения у ребенка значительно затрудняет организацию и проведение с ним учебных занятий в общеобразовательной школе. Учебный процесс с этими детьми требует специального педагогического сопровождения, учета характера и степени нарушения зрения, применение специальных педагогических средств, методов и условий их использования. Литературные данные и практика работы в массовых школах свидетельствуют, что зачастую учителя начальных классов не имеют достаточного уровня информированности в вопросах работы с этими детьми.

Поэтому развитие уровня информированности у учителей в вопросах организации и проведения учебных занятий с детьми, имеющими нарушения зрения, в классе с нормально видящими сверстниками станет основой эффективного построения обучения, воспитания и развития этих детей.

Анализ актуальных исследований и публикаций, связанных с проблемой.

В общей системе обучения, воспитания и развития детей с нарушением зрения сегодня неизмеримо возрастает роль и значение массового образования и информированности учителей в вопросах организации и проведения учебных занятий с этими детьми, обучающимися с нормально видящими сверстниками.

Обучение, воспитание и развитие детей, имеющих различные отклонения в развитии, в том числе и детей с нарушением зрения, как педагогическая проблема была в центре внимания многих выдающихся педагогов и психологов: Л.С. Выготского, В.В. Давыдова, Д.И. Элконина, М.И. Земцовой и др.

Л.И. Солнцева, 1980; А.Н. Гнеушева, 1990; Б.К. Тупоногов, 2001; Д.З. Денискина, 2012; Р.Н. Азарян, А.В. Авакян, 2016 и др. подчеркивают особую значимость развития уровня информированности учителей и воспитателей в вопросах организации и проведения учебной работы с детьми, имеющими нарушения зрения, общения их с нормально видящие одноклассниками. [8, с. 148] Вместе с тем, недостаточная изученность и разработанность данной проблемы, низкий уровень информированности учителей в вопросах организации и проведения учебной работы с детьми, имеющими нарушения зрения, обучающихся в классе с нормально видящими учениками значительно затрудняет эффективное построение и проведение всей учебно-воспитательной и коррекционно-развивающей работы. [8, с. 136-141]

Поэтому в последние годы в специальной научно-методической литературе (Л.И. Плаксина, 2005; А.А. Любимов, М.П. Любимова, 2013; В.З. Денискина, 2012; Р.Н. Азарян, 2016; М. Zejmis, 2017; М.И. Тихонов, 2019; Г.А. Баласанян, 2022 и др.) уделяется внимание изучению этой проблемы, формированию и развитию уровня информированности учителей, работающих с детьми, имеющими нарушения зрения в вопросах их обучения и общения с нормально видящими одноклассниками. Вместе с тем, многие вопросы этой проблемы требуют глубокого и разностороннего изучения, поскольку решение этой проблемы является весьма существенным, имеющим важное практическое значение для этих детей, что и определяет актуальность настоящего исследования, ее теоретическую и жизненно важную практическую значимость. [12, с. 180-194]

Цель исследования – определение аспектов развития уровня информированности учителей массовых школ в вопросах обучения и развития детей с нарушением зрения.

Новизна настоящего исследования определяется как теоретической и практической значимостью изучаемой проблемы, так и недостаточной изученностью и разработанностью многих вопросов этой проблемы.

Рассмотрение и обсуждение вопросов обучения детей с нарушением зрения в классе массовой школы вместе с нормально видящими учащимися осуществляется в основном по следующим направлениям: совместное обучение, обеспечение разного доступа к школьному образованию, подбору и применению специальных средств, методов и условий обучения, учета учебных, воспитательных коррекционно-развивающих и др. потребностей и индивидуальных возможностей этих детей.

Особую значимость имеет постоянное повышение уровня информированности учителей в вопросах обучения и развития этих детей с нарушениями зрения,

В настоящее время интеграция детей, имеющих различные отклонения в развитии, в том числе и зрения, в обычные массовые школы и осуществление обучения совместно с нормально видящими учениками имеет широкие перспективы.

Сегодня особую актуальность приобретают вопросы социальной адаптации детей с нарушениями развития, в том числе детей, имеющих нарушения зрения, в частности, их социальной компетентности наряду с приобретением жизненно важных практических и профилактических навыков, определяющих возможность их трудоустройства.

This article reveals the basic factors, signs, and indicators of tiredness to be obligatory considerations in the process of organizing and conducting physical activities with students with different types of visual impairment. As the different forms and degrees of visual impairment, psychophysical peculiarities of development, and lack of development of motor skills and orientations in space of those students determine the importance and necessity of using protective means and mobilizing stand-by resources at gym classes. It has been established that deep and partial visual impairment significantly impedes the motor possibilities of students, their orientation in macro- and micro-spaces, their understanding of the teaching material of physical education programs, and their participation in physical and sport activities. Therefore, in order to prevent injuries and further visual impairments in students during physical activities in school, university, and gyms, we have to take into account the gender, form, and degree of visual impairment; the availability of concomitant diseases; secondary developmental deviations; the level of physical preparedness of students; and many other factors. This will serve as the basis for health strengthening in students with different types of visual impairment. The abovementioned points define the relevant, theoretical, and practical significance of the present research theme.

Keywords: *students, special education department, education, physical load, forms and degrees of developmental disorders, load regulation.*

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏԵՐՏՆԵՐԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Բարսեղյան Արման

*մանկավարժական զիտությունների թեկնածու, դոցենտ
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
armbarseghyan1974@gmail.com*

Ամփոփում

Հոդվածում քննվում են հոգնածության այն հիմնական հատկանիշները, գործոններն ու ցուցանիշները, որոնք պետք է հաշվի առնել աշակերտների հետ ֆիզիկական

պարապմունքների կազմակերպման ու անցկացման ընթացքում: Այդ երեխաներին բնորոշ են զարգացման տարբեր խանգարումներ, որոնք բավականին դժվարացնում են նրանց շարժողական հնարավորություններն ու ֆիզիկական կուլտուրայի ծրագրի ուսումնական նյութերի յուրացումը: Այդ պատճառով ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների ծրագրավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել աշակերտների սեռը, զարգացման խանգարման ձևը, բնույթն ու աստիճանը, ուղեկցող հիվանդությունների առկայությունը, ֆիզիկական պատրաստվածությունը և բազմաթիվ այլ գործոններ: Այս կապակցությամբ աշակերտների ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների կազմակերպման ու անցկացման արդյունավետ ուղիների որոշման համապատասխան ֆիզիկական բեռնվածության կազմակերպումը միշտ եղել է մասնագետների ուշադրության կենտրոնում: Նրանց ֆիզիկական դաստիարակության խնդիրների վերաբերյալ գիտամեթոդական հատուկ գրականությունում ընդգծվում է պաշտպանական միջոցների ու պահուստների մոբիլիզացիայի կիրառման հարցերի ուսումնական կարևորությունը աշակերտների հետ անցկացվող ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներում բեռնվածության պլանավորման ժամանակ: Ֆիզիկական կուլտուրայի ուսումնական պարապմունքների ժամանակ չափավոր բեռնվածությունն ու դիֆերենցված մոտեցումը տեսողության խանգարում ունեցող աշակերտների նկատմամբ նախատեսում են որոշ սահմանափակումներ՝ կտրուկ թեքումներ, ցատկեր, ծանրություններով վարժություններ, երկարատև անշարժ վարժություններ, երկարատև մկանային լարվածություն և այլն: Այդ պատճառով ֆիզիկական դաստիարակության գործընթացում խորհուրդ է տրվում օգտվել հետևյալ արտաքին նշաններից ու հոգնածության աստիճանից՝ մաշկի գույն (ոչ շատ կարմրություն, նշանակալի կարմրություն, շատ կարմրություն), շնչառություն (հաճախակիացած, անհավասար հաճախակիացած, խորը ներշնչումներ, շնչարգելություն), շարժումներ (մարմնի ճոճում, ոչ համակարգված շարժումներ), ուշադրություն (հրահանգների կատարման անճշտություններ, ընկալվում է միայն բարձրագույն հրահանգը), ինքնազգացողություն (ոչ մի բողոք չկա, բողոք հոգնածությունից, սրտխափոց, շնչարգելություն, գլխացավ, սրտխառնոց ու փսխում):

Բանալի բաներ՝ աշակերտներ, կրթություն, ֆիզիկական ակտիվություն, զարգացման խանգարումների ձևեր և աստիճան, ծանրաբեռնվածության կարգավորում:

Список использованной литературы

1. Azaryan R.N. Teoreticheskie osnovy i sistema vneklassnoy raboty po fizicheskomu vospitaniyu slepykh slabovidyashchikh shkolnikov. / Avtoref. diss. dokt. ped. nauk. - M., 1990, 43 s.
2. Azaryan R.N. Zrenie rebyenka. / Metodicheskoe posobie. - Yerevan, 2008, 110 s.
3. Azaryan R.N. Vidy narusheniya zreniya i prichiny vozniknoveniya // Spetsial'naya pedagogika: uchebnik dlya studentov pedagogicheskikh vuzov. - Yerevan, 2016, 92 s.
4. Aleksandrov B.T. Fizicheskoe vospitanie detey s narusheniem zreniya. Lipetsk, 2018, 120 s.
5. Afanasyev V.F. Vozrastnye izmeneniya fizicheskogo razvitiya i dvigatel'nykh funktsiy u shkolnikov s narusheniem zreniya i korrektsionno-vospitatelnaya rabota na urokakh fizicheskoy kultury. / Avtoref. diss. kand. ped. nauk. M., 1971, 18 s.
6. Gneusheva A.N. Okhrana zreniya u detey shkol'nogo vozrasta. - M.: Prosveshchenie, 1982, 160 s.
7. Zemtsova M.I. Uchitelyu o detyakh s narusheniem zreniya. - Moskva: Prosveshchenie, 1973, 59 s.
8. Kuramshin Yu.F. Metody obucheniya dvigatel'nyim deystviyam i razvitiyu fizicheskikh kachestv: teoriya i tekhnicheskie primeneniya. // Uchebnoe posobie, SPb., 1998, 247 s.

9. Lyubimov A.A. Povyshenie kvalifikatsii pedagogov kak faktor vliyaniya slabovidjashchikh // Mezhdunarodnaya nauchno-prakticheskaya konferentsiya. Yerevan, 2016, 276 s.

10. Melikyan L.G. K probleme profilaktiki blizorukosti u uchashchikhsya obshcheobrazovatel'nykh shkol. // V sb. «Uchyenye zapiski», AGPU im. Kh. Abovyana, Yerevan, 2018, 54 s.

11. Mishin M.I. Vtorichnye otkloneniya v razvitii detey shkol'nogo vozrasta. // V mat. dokl. Nauchno-metodicheskoy konf. - Saratov, 2008, 19 s.

12. Povalyaeva M.A. Korrektsionnaya pedagogika. Vzaimodeystvie spetsialistov // Rostov na Donu, 2002, Izdatel'stvo «Feniks», 156 s.

13. Psikhologo-pedagogicheskaya kharakteristika detey s narusheniem zreniya. V kn. Spetsial'naya pedagogika. / Pod red. L.V. Mardakhaeva, E.A. Orlova. – M.: 2012, 124 s.

14. Sermeev B.V. K probleme fizicheskogo vospitaniya uchashchikhsya. Odessa, 1980, 158 s.

15. Tuponogov B.K. Soderzhanie i metody obucheniya detey s narusheniem zreniya. - M., 2020, 145 s.

Получено: 28.03.2025

Received: 28.03.2025

Рассмотрено: 01.04.2025

Reviewed: 01.04.2025

Принято: 07.04.2025

Accepted: 07.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԴԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱ-
ՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Տոնոյան Տաթևիկ

հայցորդ

Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն

tateviktonoyan1994@gmail.com

<https://orcid.org/0009-0009-7894-0792>

Ամփոփում

Հետազոտությունը նպատակ ունի բացահայտելու կառավարման էթիկայի դերը բարձրագույն ուսումնական հաստատություններում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման համատեքստում: Բարձրագույն կրթության կառավարման ոլորտում էթիկական խնդիրների առկայությունը բացասաբար է անդրադառնում ինչպես կազմակերպության ներքին, այնպես էլ արտաքին գործընթացների վրա:

Կառավարման էթիկան բարձրագույն ուսումնական հաստատություններում ոչ միայն ակադեմիական մշակույթի ձևավորման առանցքային գործոն է, այլև ռազմավարական ռեսուրս, որն ուղղակիորեն ազդում է մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման, կազմակերպական մշակույթի կայացման և բարձրագույն ուսումնական հաստատությունների երկարաժամկետ կայունության վրա:

Հոդվածը ներկայացնում է կառավարման էթիկայի հիմնարար սկզբունքները, դրանց կիրառման առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների արդյունավետության վրա:

Ուսումնասիրությունը հիմնված է միջազգային և տեղական գիտական աղբյուրների վերլուծության վրա, ինչպես նաև էմպիրիկ հետազոտության, որը ներառում է սոցիոլոգիական հարցման արդյունքներ:

Արդյունքները վկայում են, որ կառավարման էթիկայի համակարգի բացերը խորացնում են բուհերի կառավարման թափանցիկության, կադրային քաղաքականության արդարության ու ակադեմիական ազնվության խնդիրները: Հարցման տվյալների համաձայն՝ ուսումնական հաստատություններում էթիկական խախտումների նվազեցման հիմնական ուղիները ներառում են կառավարման էթիկական չափանիշների վերանայում, վերահսկողական մեխանիզմների ներդրում և կառավարման գործընթացների թափանցիկության ապահովում:

Հոդվածում վերլուծվել են կառավարման տարբեր ոճերը (ավտորիտար, ժողովրդավարական, ազատական և խառը) և դրանց ազդեցությունը կառավարման էթիկական միջավայրի ձևավորման վրա:

Հետազոտության հիմնական եզրահանգումները փաստում են, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում կառավարման էթիկական չափանիշների հստակեցումը, բարոյական արժեքների պահպանման նկատմամբ հետևողական մոտեցումն ու արդյունավետ վերահսկողական համակարգերի ներդրումը կարող են ոչ միայն բարելավել բարձրագույն ուսումնական հաստատությունների ներքին գործառնությունները, այլև բարձրացնել դրանց նկատմամբ հանրային վստահությունը:

Ընդհանուր առմամբ, կառավարման էթիկայի ամրապնդումը պետք է դիտարկվի որպես բարձրագույն կրթության բարեփոխումների առաջնահերթություն, քանի որ առանց էթիկական սկզբունքների ամուր պահպանման անհնար է ապահովել բուհերի երկարաժամկետ կայունություն, մրցունակություն և կրթության բարձր որակ:

Բանալի բառեր: *գործարար էթիկա, գործարար էթիկետ, սէթիկետ ակադեմիական ազնվություն, կառավարման ոճեր, վերահսկողական մեխանիզմներ, կոնֆլիկտների կառավարում, էթիկական վարքականոններ, բարեփոխումներ:*

Հիմնախնդիրը: Կրթված անձը միշտ էլ առանձնացել է իր բարեվարքությամբ, կարողություններով ու հմտություններով: Տեղեկատվական հասարակության ներկայիս դարաշրջանում կրթական ներուժն արդեն իսկ մարդկության անբաժանելի մասն է, որով անձերը ձեռք են բերում ոչ միայն ազգային ու համամարդկային արժեքներ, այլև մասնագիտական կարողություններ՝ դիրքավորվելով մրցակցային աշխատաշուկայում:

Որակյալ մասնագիտական կրթության նկատմամբ անհերքելի պահանջմունքն իր հերթին ձևավորում է կրթական ծառայությունների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը, որի կիզակետում է հայտնվում մարդկային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրը, որի «առաջնահերթություններն են՝ աշխատակիցների ներգրավվածության բարձրացումը, մասնագիտական զարգացման խթանումն ու արդյունավետ աշխատանքային միջավայրի ապահովումը» [7, էջ 217]: Ըստ Մ. Ֆոլլետիի (մարդկային հարաբերությունների դպրոցի հիմնադիր)՝ կառավարումը ուրիշ մարդկանց միջոցով հանձնարարված աշխատանքների կամ խնդիրների հաջող կատարման միջոց է:

Մարդկային ռեսուրսների կառավարումը ցանկացած կազմակերպության, այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման առանցքային համակարգերից է: Ներկայիս սուր մրցակցային պայմաններում այն կառավարելը դարձել է ամենաբարդ խնդիրներից մեկը: Այս պայմաններում յուրաքանչյուր կազմակերպություն, ներառյալ նաև բարձրագույն ուսումնական հաստատությունները, կարիք ունեն մարդկային ռեսուրսների ճիշտ և արդյունավետ կառավարման՝ ապահովելով ոչ միայն արժանապատիվ վարձատրություն, այլև արժանապատիվ աշխատանքային միջավայր ու պայմաններ:

Կառավարման էթիկան մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման համատեքստում ձեռք է բերում առանցքային նշանակություն՝ որպես ղեկավարների վարքագիծն ու աշխատանքային մի շարք գործընթացներ ուղղորդող սկզբունք: Այն ցույց է տալիս լիազորությունների սոցիալապես արդարացված կամ ոչ արդարացված կիրառումը, ինչը հատկապես կարևոր է որո-

շումների կայացման, քաղաքականության իրականացման, ռեսուրսների բաշխման, անձնակազմի ընտրության և մի շարք այլ գործընթացներում:

«Կառավարման էթիկան ապահովում է արդարություն, թափանցիկություն, պատասխանատվություն, ինչն էլ նպաստում է կազմակերպության ներքին ու արտաքին աշխատանքային միջավայրի բարելավմանը, աշխատակիցների, շահառուների բավարարվածության բարձրացմանը, ընդհանուր ռազմավարական նպատակների իրականացմանը» [7, էջ 179]: Վարչական ու ակադեմիական անձնակազմի էթիկական իրազեկվածությունը կարևոր գործոն է ակադեմիական կոմպետենտության զարգացման համար՝ նպաստելով ոչ միայն ուսանողների, այլև համալսարանի կայուն և ներդաշնակ զարգացմանը՝ թույլ տալով հաղթահարել կազմակերպչական կոնֆլիկտները, բարելավել որոշումների կայացման գործընթացը և ապահովել երկարաժամկետ կայունություն:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջնահերթությունն է դարձել գործել՝ հիմնվելով համամարդկային արժեքների, էթիկական կանոնների, նորմերի, ներքին ու արտաքին միջավայրի նկատմամբ պատասխանատու գործելաճով:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատակությունների հակիրճ վերլուծություն: Թեմային անդրադարձել են բազմաթիվ փիլիսոփաներ, այդ թվում՝ Կոնֆուցիոսը (Ք.ա. 551-479) և Արիստոտելը (Ք.ա. 384-322)), կառավարման մասնագետներ (Պ.Դրաքեր, Մ. Պ. Ֆոլետ, Հ. Մինցբերգ), հոգեբաններ (Դ. Գոլմեն, Կ. Ռոջերս, Ա. Մալոու), մանկավարժներ (Ջ. Դյուի, Յ. Հ. Պեստալոցի, Մակարենկո), հոգևորականներ (Պ. Ալֆոնսո, 1204թ.), իրենց աշխատություններում՝ ընդգծելով մարդկանց միջև հարաբերությունների և բարոյական սկզբունքների պահպանման կարևորությունը:

Հետազոտության նպատակ: Այս ուսումնասիրությունն ուղղված է բարձրագույն կրթության կառավարման համակարգում էթիկայի կարևորության բացահայտմանը, ինչպես նաև դասախոսների կողմից էթիկական հիմնախնդրի գնահատմանը, կառավարման էթիկայի դերի կարևորությանը, որոշ հարցերի շուրջ անհատական էթիկական դիրքորոշումների բացահայտմանը:

Հետազոտության նորայթը: Առաջին անգամ գիտատեսական և գիտահետազոտական վերլուծությամբ անդրադարձ է կատարվել կառավարման էթիկայի կարևորությանը՝ որպես մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման գործոնի:

Հետազոտության գործնական նշանակությունը: Սույն աշխատանքը հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմելու, թե ինչ է էթիկան, որպես էթիկայի վարքագծային դրսևորում՝ էթիկետը, սէթիկետը, գործարար էթիկան ու էթիկետը, ինչպես է բարձրագույն ուսումնական հաստատություններում կառավարման էթիկան նպաստում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, ինչպես է այն ազդում աշխատանքային մշակույթի ձևավորման վրա, ինչ խնդիրներ են առաջանում այս սկզբունքները պահպանելու դեպքում: Այն կարող է օգտակար լինել բարձրագույն կրթության համակարգում

մարդկային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների և մասնագիտական ամբիոններում սովորող ուսանողների համար:

Հիմնական նյութի շարադրանք: Հին ժամանակներից սկսած բարոյական արժեքների և նորմերի պահպանումը կարևոր նշանակություն է ունեցել: Հին հույն իմաստասեր Սոկրատեսը Ք.ա. V դարում ասել է. «Նա, ով կարողանում է մարդկանց հետ լավ վարվել, ճիշտ է վարում իր անձնական և հասարակական գործերը, իսկ նա, ով չի կարողանում նորմալ վարվել մարդկանց հետ, տուժում է թե՛ անձնական, թե՛ հասարակական գործերում» [2, էջ 151]: Բարեկիրթ վարվեցողությունը մարդկությանը հուզել է դարեր շարունակ:

Բարոյականության և վարվեցողության հարցերին նվիրված առաջին գրական աշխատությունները հայտնվել են դեռևս միջնադարում: 1204 թվականին իսպանացի քահանա Պ. Ալֆոնսոն հրատարակել է «Կղերական կարգապահություն» գիրքը, որը նվիրված է դաստիարակության և քաղաքավարության հարցերին: Ավելի ուշ՝ 1716 թվականին, լույս տեսավ «Պատշաճ ու հարգալից զրույցի և կյանքի, բարձրաստիճան և ազնվական անձերի, քեզ հավասարի և կանանց հետ վարվելակերպի, ինչպես նաև կանանց գեղեցիկ վարվելաձևեր ուսուցանելու կանոններ» գիրքը, որը մեծ տարածում գտավ ՌԴ-ում Պետրոս I-ի օրոք: Այս աշխատությունները հիմք դրեցին բարոյականության և վարվեցողության մասին ժամանակակից պատկերացումների ձևավորման համար:

Էթիկա (բարոյագիտություն) բառն առաջացել է հունարեն «էթիկոս» (ἠθικός-ēthikos) և «էթոս» (ἦθος-ēthos) բառերից, որոնք թարգմանաբար նշանակում են «սովորություն», «բնավորություն» և կապված են մեր արժեքների ու առաքինությունների հետ՝ օգնելով ճիշտ որոշումներ կայացնելու հարցում: «Էթիկա» բառը նշանակում է «բարոյական օրենք, գիտություն բարոյականության մասին»:

Էթիկան փիլիսոփայական ուսմունք է բարոյականության էության, նրա ծագման, զարգացման, կառուցվածքի, գործառնությունների, օրենքների և հասարակության մեջ նրա ունեցած դերի մասին: «Էթիկա» տերմինն առաջին անգամ կիրառել է հին հույն փիլիսոփա Արիստոտելը (Ք.ա. 384-322 թթ.) պրակտիկ փիլիսոփայության մատնանշման համատեքստում (որի գլխավոր հարցախնդիրն է՝ ի՞նչ և ինչպե՞ս պետք է անել ճշմարիտ, բարոյական գործողություններ, քայլեր կատարելու համար):


Էթիկան բաժանվում է երկու հիմնական մասի՝ տեսական էթիկա և կիրառական էթիկա: Տեսական էթիկան ունի երեք տարատեսակ (տե՛ս Գծապատկեր 1):

➤ «Նորմատիվ (սահմանող) էթիկան (Normative ethics) **զբաղվում է բարոյական գործողությունների, վարքագծի և որոշումների սկզբունքների ու չափանիշների սահմանմամբ** (այն փորձում է պատասխանել այն հարցին, թե ինչն է ճիշտ կամ սխալ, լավ կամ վատ, բարոյական կամ անբարոյական)» [12, էջ 27]: Նորմատիվ էթիկան կարևոր դեր է խաղում բարոյական որոշումների կայացման և հասարակության մեջ բարոյական սկզբունքների հաստատման գործում:

➤ «Մետաէթիկան (Meta-ethics) ուսումնասիրում է բարոյական հայեցակարգերի, դատողությունների և սկզբունքների բնույթը, ծագումը, իմաստը և հիմնավորումը (օրինակ՝ ի՞նչ է բարոյականությունը)» [12, էջ 29]:

➤ «Նկարագրական էթիկան (Descriptive ethics), **ուսումնասիրում է մարդկանց բարոյական համոզմունքները, արժեքները, վարքագիծը և բարոյական որոշումները՝ առանց դրանք գնահատելու կամ դրանց մասին դատողություններ անելու**» (օրինակ՝ նկարագրական էթիկան կարող է ուսումնասիրել տարբեր մշակույթներում ինչպես են ընկալվում արդարությունը, պատժամիջոցները և այլն)» [12, էջ 25]:

➤ «Կիրառական էթիկան (Applied ethics) **կենտրոնանում է իրական կյանքի բարոյական հարցերի ու խնդիրների վրա**: Այն փորձում է կիրառել բարոյական սկզբունքները և տեսությունները գործնական իրավիճակներում՝ օգնելով կայացնել բարոյական որոշումներ կամ լուծել բարոյական երկընտրանքները: Կիրառական էթիկան ուսումնասիրում է բարոյական հարցեր, որոնք առաջանում են տարբեր ոլորտներում, ինչպիսիք են բժշկական, գործարար կամ մասնագիտական, տեխնոլոգիական, քաղաքական և այլն)» [12, էջ 46]:



Գծապատկեր 1.
«Էթիկայի տեսակները»

Ընդհանուր առմամբ, էթիկան ուրվագծում է այնպիսի վարքականոններ, որոնք պարտադիր են բոլոր մարդկանց համար՝ անկախ նրանց սոցիալական գործառույթներից կամ մասնագիտական պատկանելիությունից: Էթիկայի կանոններն արգելում են խտրականությունն ամենատարբեր ասպարեզներում, ինչպիսիք են՝ ռասան, մաշկի գույնը, կրոնական պատկանելիությունը, տարիքը, սեռը, ազգային պատկանելիությունը, հաշմանդամությունը և այլն:

«Մասնագիտական էթիկան կամ գործարար էթիկան մասնագետի բարոյական սկզբունքների, վարքի կանոնների և նորմերի համակարգ է, որը համապատասխանում է հստակ իրավիճակներին և մասնագիտական գործունեությանը» [12, էջ 52]: Բազմաթիվ մասնագետներ են փորձել տալ գործարար էթիկայի սահմանումները, որոնցից, մեր կարծիքով, առավել ամբողջականը հետևյալն է. «Գործարար հարաբերությունների էթիկան գործարար աշխարհում հռչակված և պաշտոնապես հայտարարված բարոյական նորմերի ու օրենքների համա-

կարգ է, որը որոշում է մարդկանց գործարար վարքագիծն ու շփման ձևերը» [2, էջ 150]:

«Գործարար էթիկա» տերմինը ի հայտ է եկել XVIII դարում, սակայն դրա արմատները կարող ենք գտնել պատմության մեջ գոյություն ունեցող տարբեր օրենքներում ու կանոններում, ինչպիսիք են Համնուրաբի օրենսգիրքը (ստեղծվել է Բաբելոնում, Ք.ա. 1970 թ., օրենքների առաջին հավաքածուն, բաղկացած՝ 282 օրենքից), Աստվածաշունչը (Աստծո տասը պատվիրանները), Թալմուդը (ստեղծվել է Ք.ա. I-III-րդ դարերում, հրեական քաղաքացիական և կրոնական իրավունքի, բարոյական նորմերի ժողովածու) և այլն: Այստեղ ուշագրավ է նշել Խրատարարում ներկայացված հետևյալ դիտողությունը. «Մեծ զգուշություն է պետք իշխանների որդիներին դաստիարակելիս՝ ի նկատի ունենալով, որ նրանք պատրաստվում են հասարակության ղեկավար դառնալ» [3, էջ 69]: Ասացվածքն այսօր էլ արդիական է և հավաստում է, որ թեև այս հիմնախնդիրը արդի ժամանակների հրատապ խնդիր է, սակայն դրան անդրադարձել և կարևորել են դեռևս հին ժամանակներից սկսած:

Որպես առանձին գիտության ճյուղ ձևավորվել է վերջին տասնամյակների ընթացքում՝ հատկապես զարգանալով ԱՄՆ-ում 1960-ական թվականների 2-րդ կեսին, Եվրոպայում՝ 1980-ականներին: Ժամանակակից աշխարհում այն արագորեն ընդլայնվում է՝ դառնալով արդի կառավարման և կազմակերպական մշակույթի անբաժանելի մասը:

Գործարար էթիկայի համընդհանուր սկզբունքները հիմնված են համաշխարհային փիլիսոփայական մտքի աքսիոմների վրա և ստուգված են գործարար հարաբերությունների բազմադարյան պրակտիկայում: Դրանք ներառում են ***իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն՝ պարտականությունները չկատարելու կամ լիազորությունները չարաշահելու դեպքում:*** Ժամանակի ընթացքում այս սկզբունքները ձևակերպվել և համակարգվել են տարբեր մասնագետների կողմից՝ համապատասխանեցվելով սոցիալ-տնտեսական արդի պահանջներին:

Ամերիկացի սոցիոլոգ Լ. Հոսմերը ձևակերպել է գործարար ոլորտում կիրառելի մի շարք սկզբունքներ, որոնք հիմնված են բարոյականության, արդարության ու հասարակական շահերի պահպանման վրա: Այս սկզբունքները կիրառելի են ինչպես գործարար ոլորտում, այնպես էլ կրթության կառավարման ոլորտում՝ ապահովելով կառավարման արդյունավետությունն ու էթիկական բարձր մակարդակը: Դիտարկենք այդ սկզբունքները:

1. ***«Երբեք մի՛ արա այն, ինչը չի բխում քո կամ քո ընկերության երկարաժամկետ շահերից:*** Սկզբունքը հիմնված է հին հույն փիլիսոփա Պրոտագորասի ուսմունքի վրա, որն ընդգծում է անձնական շահերի և հասարակական բարօրության հավասարակշռությունը» [5, էջ 7]: Հետևապես յուրաքանչյուր որոշում պետք է կայացվի՝ հաշվի առնելով ուսումնական հաստատության երկարաժամկետ զարգացումը, ինչպե՛ս աշխատակիցների, այնպե՛ս էլ ուսանողների շահերը):

2. «Երբեք մի՛ արա այն, ինչի մասին հետագայում չես կարող բարձրաձայնել: Սկզբունքը հիմնված է հին հույն փիլիսոփաներ Արիստոտելի և Պլատոնի ուսմունքների վրա, որոնք ընդգծում են ազնվությունը և թափանցիկությունը» [5, էջ 7]: Հետևապես, բոլոր գործողությունները պետք է լինեն բաց և հասանելի քննարկման համար, ինչը կնպաստի ղեկավարի և հաստատության նկատմամբ վստահության ձևավորմանը:

3. «Երբեք մի՛ արա այն, ինչը բարիք չէ և չի նպաստում համախմբվածությանն ու համագործակցությանը (համընդհանրության զգացմանը)՝ միտված ընդհանուր նպատակի իրագործմանը: Ընդհանուր նպատակի ձևավորմանը միտված սկզբունքը հիմնված է համաշխարհային կրոնների պատվիրանների վրա, որոնք կոչ են անում լինել բարի, գիտակցել փոխօգնության կարևորությունը և գործել ի նպաստ ընդհանուր նպատակների իրագործմանը» [5, էջ 7]: Այն խթանում է համագործակցությունը, ակադեմիական բարոյականությունը, ձևավորում է սոցիալական պատասխանատվություն՝ նպաստելով ուսանողների և դասախոսների բարոյական ու քաղաքացիական գիտակցության ձևավորմանը):

4. «Երբեք մի՛ արա այն, ինչը խախտում է օրենքը, քանի որ օրենքը ներկայացնում է հասարակության նվազագույն բարոյական նորմը: Սկզբունքը հիմնված է անգլիացի փիլիսոփաներ Թ. Հոբսի և Ջ. Լոկի դրույթների վրա, որոնք ընդգծում են օրենքի կարևորությունը հասարակության կայունության համար» [5, էջ 7]: Հետևապես՝ ըստ օրենքի գործելը պարտադիր է՝ ապահովելով արդարությունն ու կարգապահությունը բուհում:

5. «Երբեք մի՛ արա այն, ինչը հասարակությանը ավելի շատ վնաս կհասցնի, քան օգուտ: Սկզբունքը հիմնված է ուտիլիտարիզմի էթիկայի վրա. վերաբերում է բարոյական վարքագծի գործնական օգուտին (օգուտապաշտության)՝ ուղղված հասարակության բարօրությանը, որը մշակվել է անգլիացի փիլիսոփաներ Ջ.Բենթամի ու Ջ.Միլի կողմից» [5, էջ 7]: Բուհի կողմից իրականացված յուրաքանչյուր գործողություն և որոշում պետք է հիմնված լինի հասարակության ընդհանուր շահի վրա: Եթե համալսարանները առաջնորդվեն ոչ միայն ակադեմիական, այլև սոցիալական պատասխանատվության բարձր գիտակցությամբ, ապա կարող են դառնալ հասարակական բարեփոխումների ու բարօրության կարևորագույն շարժիչ ուժը:

6. «Երբեք մի՛ արա այն, ինչը չէիր ցանկանա խրախուսել մեկ այլ մարդու՝ նմանատիպ իրավիճակում: Սկզբունքը հիմնված է գերմանացի փիլիսոփա Ի. Կանտի համընդհանուր նորմայի վրա, որը ընդգծում է բարոյականության օբյեկտիվությունը» [5, էջ 7]: Ուստի յուրաքանչյուր գործողություն պետք է համապատասխանի բարոյական ընդհանուր սկզբունքներին:

7. «Երբեք մի՛ արա այն, ինչը խախտում է այլ մարդկանց հաստատված իրավունքները: Սկզբունքը հիմնված է Ժ. Ռուսոյի (շվեյցարացի փիլիսոփա, գրող և քաղաքական մտածող) և Թ. Ջեֆերսոնի (ամերիկացի պետական գործիչ, փիլիսոփա, ԱՄՆ երրորդ նախագահը) տեսակետների վրա, որոնք ընդ-

գծում են մարդու իրավունքների կարևորությունը» [5, էջ 8]: Այսպիսով՝ յուրաքանչյուր գործողություն պետք է հարգի ուսանողների և աշխատակիցների սահմանված իրավունքները:

8. «Միշտ վարվի՛ր այնպես, որ հնարավոր լինի առավելագույնի հասցնել օգուտը՝ շահը օրենքի շրջանակներում: Սկզբունքը հիմնված է Ա. Սմիթի (շոտլանդացի տնտեսագետ, փիլիսոփա) և Վ. Պարետոյի (իտալացի տնտեսագետ, սոցիոլոգ և քաղաքական գիտնական) տնտեսագիտական տեսությունների վրա» [5, էջ 8]: Բուհին պատկանող ռեսուրսները (և՛ նյութական, և՛ մարդկային) պետք է օգտագործվեն առավելագույն արդյունավետությամբ՝ ապահովելով կրթության բարձր որակը:

9. «Երբեք մի՛ արա այն, ինչը կարող է վնաս հասցնել հասարակության ամենաթույլ օղակին: Սկզբունքը հիմնված է ամերիկացի փիլիսոփա Ջ. Ռոլսի արդարության տեսության վրա» [5, էջ 8]: Ուստի հատուկ ուշադրություն պետք է դարձնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներին, խոցելի խմբին պատկանող աշխատակիցներին/ ուսանողներին՝ ապահովելով նրանց համար հավասար հնարավորություններ կրթության և աշխատանքային գործընթացի մեջ:

10. «Երբեք մի՛ արա այն, ինչը կարող է խոչընդոտել այլ մարդու ինքնագարգացմանն ու ինքնաիրացմանը: Այս սկզբունքը հիմնված է ամերիկացի փիլիսոփա Ռ. Նոզիկի տեսության վրա, որը ընդգծում է անհատի ազատության կարևորությունը» [5, էջ 7]: Յուրաքանչյուր աշխատակից կամ ուսանող պետք է ունենա հնարավորություն ինքնագարգացմանն ու ինքնաիրացման համար:

Այսպիսով՝ գործարար էթիկայի համընդհանուր սկզբունքները, որոնք ձևակերպվել են փիլիսոփայական և սոցիալական տարբեր տեսությունների հիման վրա, կարևոր դեր ունեն ոչ միայն գործարար ոլորտում, այլև բարձրագույն կրթության կառավարման համակարգում: Լ. Հոսմերի սկզբունքները, որոնք հիմնված են ազնվության, արդարության, օրենքի պահպանման և հասարակական շահերի պաշտպանության վրա, ապահովում են ուսումնական հաստատությունների արդյունավետ կառավարումը և բարձր էթիկական մակարդակը: Սկզբունքների պահպանումը ոչ միայն աշխատակիցների, այլև ուսումնական հաստատության մասնագիտական բարձր որակի ցուցանիշն է: Հետևապես առաջնորդվելով այս սկզբունքներով՝ ուսումնական հաստատությունները կարող են դառնալ ոչ միայն գիտելիքի փոխանցման կենտրոններ, այլ նաև հասարակական բարեփոխումների համար կարևոր շարժիչ ուժեր՝ նպաստելով ոչ միայն մասնագիտական, այլև բարոյական արժեքների ձևավորմանն ու զարգացմանը:

Բարոյական սկզբունքների պահպանման հետ մեկտեղ կարևոր դեր ունեն նաև գործարար վարվեցողության կանոնները (էթիկետը)՝ որպես բարոյական արժեքների գործնական դրսևորումներ կարգավորելով մարդկային հարաբերությունները ուսումնական հաստատություններում և դրանց սահմաններից դուրս:

Էթիկետը (վարվեցողություն) սահմանված որոշակի նորմերի համակարգ է, որը կանոնակարգում է մարդկային փոխհարաբերությունների վարքային դրսևորումները (ներառում է հասարակական վայրերում այլ մարդկանց հետ շփման կանոնները՝ ծանոթություն, դիմելաձև, վարվելաձև և այլն):

«Վարվեցողություն» բառն առաջացել է ֆրանսերեն «էթիկետ» (ethiquette – պիտակ, քարտ) բառից, որը նշանակում է վարքի սահմանված կարգ [11, էջ 223]: «Էթիկետ» բառն իր ժամանակակից նշանակությամբ առաջին անգամ կիրառվել է Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ի օրոք՝ XVII դարում: Նրա պալատական ճոխ ընդունելություններից մեկի ժամանակ հյուրերին բաժանվել են հատուկ քարտեր, որոնցում նշված են եղել պահանջվող վարքի կանոնները: Այստեղից էլ ֆրանսիական «էթիկետ» բառից առաջացել է միջազգային եզրը, որը նշանակում է դաստիարակվածություն, հղկված շարժում և հասարակության մեջ ինքն իրեն դրսևորելու կարողություն: «Էթիկետը վարքի կանոնների ամբողջությունն է, որը վերաբերում է այլ մարդկանց հետ հարաբերություններին» [11, էջ 225]:

«**Գործարար Էթիկետը** վարվելակերպի կանոնակարգված նորմերի համակարգ է, որը կիրառվում է գործարար աշխարհում՝ գործարար շփումների ժամանակ, ներառում է ներկայանալու, ծանոթանալու պաշտոնական ձևերը, ծառայողական էթիկետը և այլն» [2, էջ 160-161]: Գործարար էթիկետի նորմերի պահպանումը յուրահատուկ շուք է հաղորդում գործարար մարդուն, բարձրացնում նրա հեղինակությունն ու վարկը: Դեռևս 1936 թ. Դ. Քարնեգին գրել է. «Մարդու ֆինանսական հաջողությունների միայն 15 %-ն է կախված նրա մասնագիտական գիտելիքներից ու կարողություններից, 85 %-ը կախված է այլ մարդկանց հետ շփվելու վարվելու հմտությունից» [2, էջ 161]: Արտասահմանյան զարգացած մի շարք երկրներում հսկայական ֆինանսական ներդրումներ են կատարվում գործարար ոլորտի մասնագետներին գործարար հաղորդակցության հմտություններ, էթիկայի ու էթիկետի նորմեր ուսուցանելու նպատակով: Օրինակ՝ «Ճապոնացիները տարեկան ավելի քան հարյուր մլն ամերիկյան դոլար են տրամադրում գեղեցիկ վարվելակերպի և գործարար էթիկետի դասընթացների համար» [2, էջ 161]:

Գործարար էթիկետի խախտումները, ինչպիսիք են կոպտությունը, մարդկանց շահագործումը, գոռոգամտությունը, սուտը, ոչ հավաստի տեղեկատվության տրամադրումը կամ այլոց հաջողությունները սեփականացնելը, կարող են հանգեցնել վստահության կորստի և հաստատության հեղինակության անկման: Ժամանակակից վարվեցողության կանոնները հիմնվում են բարոյական նորմերի վրա, սակայն չեն նույնացվում դրանց հետ՝ կարգավորելով մարդկային հարաբերությունների վարքային դրսևորումները:

Հետևաբար, ինչպես ցանկացած ոլորտում, այնպես էլ բարձրագույն կրթության կառավարման համակարգում, գործարար հարաբերությունների արդյունավետ ձևավորման համար կարևորվում են ոչ միայն էթիկական սկզբունքները, այլ նաև գործարար վարվեցողության կանոնների պահպանումը և կարևոր

են ոչ միայն ղեկավար կազմի, այլև աշխատակիցների և ուսանողների համար՝ նպաստելով փոխադարձ հարգանքի, վստահության և հաստատության դրական իմիջի ձևավորմանը:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացմանը զուգընթաց նոր հնարավորություններ են ստեղծվում բարձրագույն կրթության ոլորտում՝ ապահովելով բաց և հեռավար ուսուցման նոր հեռանկարներ: Ուստի կարևոր է ուշադրություն դարձնել նաև գործարար էթիկետի բաղկացուցիչ մաս հանդիսացող էլեկտրոնային էթիկետին (սէթիկետ), որը սահմանում է թվային միջավայրում հաղորդակցության էթիկական նորմերը, ներառյալ էլեկտրոնային պաշտոնական նամակագրության կանոնները, պաշտոնական կայքէջերում հրապարակումները և այլն: Էլեկտրոնային էթիկետի պահպանումը հատկապես կարևոր է ուսումնական հաստատություններում, որտեղ ուսանողները և աշխատակիցները լայնորեն օգտագործում են թվային բազմաթիվ տեխնոլոգիաներ:

Հետևաբար, ինչպես ավանդական, այնպես էլ թվային միջավայրում, կառավարման էթիկան ձևավորում է ոչ միայն կազմակերպության արժեքային համակարգը, այլև աշխատանքային ու ակադեմիական հարաբերությունների որակը: Էթիկական սկզբունքների պահպանումը խթանում է վստահության, փոխադարձ հարգանքի և սոցիալական արդարության բարձր մակարդակի ապահովումը, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար:

Այս համատեքստում կառավարման էթիկայի առանցքային գործոններից է **ղեկավարի կողմից ընտրված կառավարման ոճը**, որն ուսումնական հաստատության էթիկական միջավայրի ձևավորման հիմնական լծակներից մեկն է: Ղեկավարի ոճը կանխորոշում է ոչ միայն որոշումների ընդունման գործընթացը, այլև աշխատակիցների ներգրավվածության, հաղորդակցման գործընթացի և էթիկական սկզբունքների գործնական կիրառման մակարդակը: «Մոտեցումը, որն օգտագործում են ղեկավարները մարդկանց հետ գործ ունենալու համար, իրենց կառավարման կամ առաջնորդության ոճը կազմակերպության մշակույթի զգալի մասն է» [7, էջ 195]: Ընդհանուր առմամբ, տարբերում ենք **կառավարման չորս հիմնական ոճ**՝ ավտորիտար, ժողովրդավարական, ազատական և խառը, որոնցից յուրաքանչյուրը տարբերվում է թե՛ կառավարման մեթոդներով, թե՛ մարդկային հարաբերությունների ձևավորմամբ: Այս ամենը պայմանավորում է այն, թե ինչպես կարող են համադրվել էթիկական սկզբունքները և կառավարման ոճը՝ ստեղծելով կամ բարենպաստ կամ անբարենպաստ աշխատանքային պայմաններ (տե՛ս Հավելված 1-4):

Ավտորիտար (հրամայական) ոճ: Ղեկավարը կենտրոնացնում է բոլոր որոշումներն իր ձեռքում՝ առանց աշխատակիցների ներգրավման: Սահմանում է խիստ կանոններ ու վերահսկում դրանց կատարումը: Այս մոտեցումը կարող է արդյունավետ լինել ճգնաժամային իրավիճակներում կամ արագ որոշումներ կայացնելու անհրաժեշտության պարագայում, սակայն երկարաժամկետ դրս-

նորման դեպքում կարող է հանգեցնել աշխատակիցների դժգոհության և ստեղծագործականության նվազման [9, էջ 127] (տե՛ս Հավելված 1):

Դեմոկրատական/ժողովրդավարական (մասնակցային) ոճ: Ղեկավարը խրախուսում է աշխատակիցների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: Լսում է նրանց կարծիքները և առաջարկությունները՝ ստեղծելով համագործակցային միջավայր: Այս մոտեցումը նպաստում է աշխատակիցների ներգրավվածության, բավարարվածության և ստեղծագործականության բարձրացմանը, սակայն որոշումների կայացման գործընթացը կարող է ավելի դանդաղ լինել [9, էջ 311] (տե՛ս հավելված 2):

Լիբերալ (ազատական) ոճ: Ղեկավարը աշխատակիցներին տալիս է մեծ ազատություն իրենց աշխատանքը կազմակերպելու և որոշումներ կայացնելու համար: Կատարում է նվազագույն միջամտություն՝ վստահելով թիմի մասնագիտակցվածությունը: Այս մոտեցումը կարող է խթանել ինքնուրույնությունը և պատասխանատվությունը, սակայն կարող է նաև հանգեցնել կազմակերպչական խնդիրների, եթե աշխատակիցները չունեն բավարար ինքնակարգապահություն [9, էջ 328], (տե՛ս հավելված 3):

Խստը ոճ: Ղեկավարը ոգեշնչում է աշխատակիցներին՝ ներկայացնելով կազմակերպության տեսլականն ու նպատակը՝ խրախուսելով անձնական ու մասնագիտական աճը, ստեղծագործականությունն ու նորարարությունը: Այս մոտեցումը նպաստում է բարձր մոտիվացիայի և արդյունավետության, սակայն ղեկավարից պահանջում է մասնագիտական բարձր հմտություններ և ժամանակ [9, էջ 328] (տե՛ս Հավելված 4):

Այսպիսով, ինչպես յուրաքանչյուր կազմակերպությունում, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատություններում կառավարման ոճերը որոշիչ ազդեցություն ունեն թե՛ կրթական միջավայրի ձևավորման, թե՛ արդյունավետ ու բարենպաստ աշխատանքային պայմանների ստեղծման վրա: Արդյունավետ կառավարման համար կարևոր է ոչ միայն ընտրել համապատասխան ղեկավարման ոճը, այլև ապահովել կառավարման էթիկական սկզբունքների պահպանումը, ինչը նպաստում է հաստատության կայուն զարգացմանը: Որպես արդյունք ղեկավարի կողմից ընտրված կառավարման ոճը ոչ միայն կազմակերպության աշխատանքի կազմակերպման միջոց է, այլև էթիկական արժեքների պահպանման և ամրապնդման գործուն միջոց:

ԱՄՆ ու Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացված ուսումնասիրությունները, մասնավորապես՝ Միացյալ Նահանգների համալսարանական պրոֆեսորների ասոցիացիայի (AAUP), Եվրոպական համալսարանների ասոցիացիայի (EUA) կողմից կատարված վերլուծությունները վկայում են, որ կառավարման էթիկան ոչ միայն բարելավում է կրթական հաստատությունների աշխատանքը, այլև մեծացնում է դրանց մրցունակությունը: Կառավարման էթիկական սկզբունքների պահպանումն անբաժանելի է կայուն զարգացող բուհերի ձևավորման գործընթացում: Այսպես՝ ԱՄՆ բարձրագույն ուսումնական հաստատություններում պրոֆեսորների և

ակադեմիական աշխատողների մասնագիտական կազմակերպությունը՝ Միացյալ Նահանգների համալսարանական պրոֆեսորների ասոցիացիան (American Association of University Professors, AAUP), հիմնադրված՝ 1915 թվականին, անդրադարձ է կատարել պրոֆեսորների աշխատանքային պայմաններին և էթիկական նորմերին: Համաձայն AAUP հետազոտությունների՝ պրոֆեսորների 70 %-ը էթիկական համարում է առաջնային խնդիր, հատկապես բուհերի արդյունավետ կառավարման համատեքստում (զեկույց՝ «The Importance of Academic Freedom and Responsibility»):

Կառավարման էթիկայի կարևորության վրա ուշադրություն է հրավիրում նաև բարձրագույն կրթության չափորոշիչների բարձրացման խորհուրդը (Council for the Advancement of Standards in Higher Education, CAS), որի զեկույցներում (օրինակ՝ «CAS Standards for Higher Education») անդրադարձ է կատարվում էթիկական սկզբունքների պահպանմանը կրթական հաստատությունների զարգացման և բարձր արդյունավետության նպատակով:

Եվրոպայում նույնպես կառավարման էթիկան դիտարկվում է որպես բուհերի կայուն զարգացման կարևոր գործոն: Եվրոպական համալսարանների ասոցիացիայի (European University Association, EUA) ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եվրոպական համալսարանների 60 %-ը վերջին տարիներին ակտիվ քայլեր է ձեռնարկում էթիկական մշակույթի ամրապնդման ուղղությամբ: Այնուամենայնիվ, այս գործընթացում դեռ առկա են մի շարք խոչընդոտներ, այդ թվում՝ առաջնորդության պակասը, ռեսուրսների սահմանափակությունը և կառավարման էթիկական չափանիշների հստակեցման անհրաժեշտությունը: Այս մարտահրավերները փաստում են, որ էթիկական սկզբունքների արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է ոչ միայն առանձին նախաձեռնություններ, այլև համալիր, համակարգային մոտեցում, որը բարձրագույն կրթության որակի ապահովման կարևորագույն պայմաններից է:

EUA զեկույցները հիմնականում ընդգծում են հետևյալ առանցքային կետերը, որոնք կարևոր են բարձրագույն ուսումնական հաստատություններում էթիկական մշակույթի ձևավորման և ամրապնդման համար.

1. **Էթիկական մշակույթի կարևորությունը.** համալսարանները ձգտում են ստեղծել միջավայր, որտեղ արդարությունը, ազնվությունն ու պատասխանատվությունը կդառնան կրթական գործընթացի հիմնապունքներ:

2. **Առաջնորդության դերակատարումը.** առաջնորդության պակասը հաճախ խոչընդոտում է էթիկական սկզբունքների ներդրմանն ու պահպանմանը, ինչը ցույց է տալիս կառավարման հստակ տեսլականի առկայության անհրաժեշտությունը:

3. **Ռեսուրսների և ուսուցման անհրաժեշտությունը.** համալսարանները պետք է ապահովեն բավարար ռեսուրսներ էթիկայի ուսուցման և դրա գործնական կիրառման համար, որպեսզի ապահովեն երկարաժամկետ և կայուն բարեփոխումներ (զեկույց՝ «Trends 2018: Learning and Teaching in the European Higher Education Area») [10, էջ 11]:

Եվրոպական հանձնաժողովի «The Future of Higher Education: Impact on Students» զեկույցում կարևորվում են էթիկական սկզբունքների պահպանումը և դրա ազդեցությունը ուսանողների կրթական և մասնագիտական գործընթացի վրա [10, էջ 11]:

Այսպիսով՝ ուսումնասիրությունները վկայում են խնդրի հրատապության և կարևորության մասին՝ ընդգծելով, որ կառավարման էթիկայի համակարգված զարգացումը կարող է նպաստել ոչ միայն կրթական հաստատությունների ներքին կայունությանը, այլև դրանց մրցունակության բարձրացմանը: Չնայած գործադրվող ջանքերին՝ էթիկական մշակույթի ամրապնդման գործընթացը շարունակում է հանդիպել մի շարք մարտահրավերների: Օրինակ՝ որոշ բուհեր կարող են իջեցնել ընդունելության շեմը՝ ուսանողների մեծ թիվ ապահովելու և համալսարանի եկամուտներն ավելացնելու նպատակով: Ձևավորված կատարողականության մթնոլորտը, որը պահանջում է տեսանելի արդյունք՝ ֆինանսական շահույթի տեսքով, վտանգի տակ է դնում ակադեմիական գործընթացը: Ֆինանսական ճնշումների առկայության պայմաններում բարոյական սկզբունքներից շեղվելու հավանականությունը առավելապես մեծանում է: Շատ երկրներում ակադեմիական անձնակազմը ստանում է համեմատաբար ցածր աշխատավարձ՝ մասնավոր հատվածի աշխատողների համեմատ: Նվազագույն եկամուտի պայմաններում դասախոսները երբեմն կարող են լրացուցիչ եկամուտ ստանալու համար անօրինակ գումար վերցնել: Սա շարունակաբար սնուցում է կոռուպցիայի, ցածր արդյունավետության և մրցունակության պակասը, որը կարող է մի շարք մասնագիտությունների (բժիշկները, ինժեներները և այլն) դեպքում անգամ մարդկանց կյանքեր վտանգել, եթե շրջանավարտը ունի դիպլոմ, բայց չունի մասնագիտական գիտելիքներ:


Այս և մի շարք այլ խնդիրներ հատկապես արդիական են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում, որտեղ կառավարման էթիկայի մակարդակը դեռևս ձևավորման փուլում է: Մեզանում ևս պատշաճ ուշադրություն չի դարձվել կառավարման, գրեթե բոլոր ոլորտներում՝ գործարար էթիկայի կարևորությանը, առանձնապես կրթական համակարգում, որտեղ այն խիստ կարևոր է, քանի որ ենթադրում է հաղորդակցման բազմաբովանդակ համակարգ միտված առողջ, գրագետ, հաղորդունակ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը, որից կախված է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը:

Միջազգային և ազգային փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում առաջարկվել է մշակել «Բարձրագույն ուսումնական հաստատությունների տիպային էթիկայի կանոնագրքեր՝ ուսանողների, վարչական ու ակադեմիական աշխատակազմի համար»[4]: Այս առաջարկի հիմնական նպատակն է աջակցել, նպաստել կրթական հաստատություններում, մասնավորապես բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի որակի բարձրացմանը:

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում, գործարար էթիկայի կանոնների մշակման փորձի համար հիմք են հանդիսացել միջազգային

փորձագետների կողմից հատուկ Հայաստանի համար մշակված 2 փաստաթղթեր, այն է՝ «Բարձրագույն ուսումնական հաստատություններում դերակատարների էթիկայի կանոններ» և «Շրջանային փաստաթղթերի համար էթիկայի կանոնագրքեր կազմելու մասին ուղեցույց»։ Ըստ այդ փաստաթղթում գետեղված նորմերի՝ էթիկայի կանոններն են. «Բարեվարքություն, ազնվություն, ճշմարտություն, թափանցիկություն, հարգանք այլոց հանդեպ, վստահություն, հաշվետվողականություն, արդարացիություն, հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն, կրթական համակարգի և կրթական հաստատությունների ժողովրդավարական ու էթիկական ղեկավարում և կառավարում, որակյալ կրթություն, անձի կատարելագործում և համակարգերի բարելավում, ինստիտուցիոնալ ինքնավարություն, միջազգային համագործակցություն, նվիրվածություն, օբյեկտիվություն, հրապարակայնություն, առաջնորդություն, ակադեմիական ազատություն»[4, 5-7]:

Էթիկական հիմնախնդրի գնահատման, կառավարման էթիկայի դերի կարևորության, անհատական էթիկական դիրքորոշմանն առնչվող ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով մեր կողմից իրականացվել են սոցիոլոգիական հարցումներ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի տարբեր մասնագիտությունների 80 դասախոսների շրջանում: Հարցման գործընթացը կազմակերպելու նպատակով մշակվել է հարցաթերթ՝ բաղկացած 13 հարցից: Հարցմանը մասնակցել է արական սեռի 11, իգական սեռի 69 դասախոս: Հարցվողների 35 %-ը կազմում են 25-35 տարեկան, 40 %-ը՝ 36-50 տարեկան, 15 %-ը՝ 51-60 տարեկան, 10 %-ը՝ 60-ից բարձր տարիք ունեցող դասախոսներ: Հարցմանը մասնակցած դասախոսների աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս Գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2

«Դասախոսների աշխատանքային փորձը բուհում»

Քննվող հարցերից առաջինին՝ «Ըստ Ձեզ, որո՞նք են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ամենակարևոր և հրատապ էթիկական հիմնախնդիրները (համարակալել 1-12 նիշերով՝ ըստ կարևորության. 1-ը ամենակարևորն է)», հարցվողների 16 %-ը առաջնային և հրատապ էթիկական հիմնախնդիր է համարել ակադեմիական անազնվությունը, ըստ աստիճանակարգության՝ 13 %-ը՝ պարտականությունների ոչ բարեխիղճ կատարումը, 11 %-ը

կադրային առաջխաղացման և նշանակումների անարդար գործընթացները, կոնֆլիկտների կառավարման սահմանափակ մեխանիզմները՝ 10 %-ը:


Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ էթիկական հիմնախնդիրների հիմնական առանցքը կապված է կառավարման թափանցիկության, կադրային քաղաքականության արդարության և ակադեմիական ազնվության հետ: Այս խնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ է ամրապնդել ակադեմիական ազնվության սկզբունքները, բարելավել կադրային քաղաքականության թափանցիկությունը և ներդնել կոնֆլիկտների կառավարման մեխանիզմներ, որոնք կնպաստեն ներքին համերաշխության և արդարության բարձրացմանը (տե՛ս Աղյուսակ 1):

Կոռուպցիա	1%
Արդարության և ներառականության պակաս	5%
Հովանավորչություն և կողմնակալություն	9%
Բուհի ռեսուրսների ոչ պատշաճ կառավարում	6%
Թափանցիկության բացակայություն	3%
Խտրական վերաբերմունք	2%
Կադրային առաջխաղացման և նշանակումների անարդար գործընթացներ	11%
Կոնֆլիկտների կառավարման սահմանափակ մեխանիզմներ	10%
Մասնագիտական զարգացման հնարավորությունների անհավասար բաշխում	2%
Շահերի բախում	7%
Պարտականությունների ոչ բարեխիղճ կատարում	13%
Ակադեմիական անազնվություն	16%

Աղյուսակ 1

«ՀՀ բուհերում էթիկական առաջնային հիմնախնդիրները»

Քննարկվող հաջորդ՝ «Ինչպե՞ս եք գնահատում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում էթիկական խնդիրների մակարդակը վերջին տարիներին» հարցին հարցվածների զգալի մասը (75 %) կարծում է, որ էթիկական խնդիրները կամ մնացել են նույն մակարդակի վրա կամ ավելի են խորացել, ինչը ցույց է տալիս բարեփոխումների առավել խորքային անհրաժեշտությունը (տե՛ս Գծապատկեր 3):




Գծապատկեր 3.
«Էթիկական խնդիրների մակարդակը»

Այն հարցին, թե **«Գլխավորապես ո՞ր սկզբունքներն եք առավել կարևորում բարձրագույն ուսումնական հաստատությունում բարոյական անհրաժեշտ մշակույթի և հանրային վստահության ձևավորման համար** (բարեվարքություն, ազնվություն, ճշմարտացիություն, թափանցիկություն, պատասխանատվություն, այլոց նկատմամբ հարգանք, վստահություն, հաշվետվողականություն, արդարացիություն, ազատություն) (նշել հինգ ամենակարևոր սկզբունքները)», հարցվողների մեծամասնությունը՝ 60 %-ը (48 դասախոս), կարևորել է բարեվարքությունը, 55%-ը (44 դասախոս)՝ ազնվությունը, ճշմարտացիությունը՝ 40%-ը (32 դասախոս), թափանցիկությունը՝ 38 %-ը (30 դասախոս), պատասխանատվությունը՝ 35%-ը (28 դասախոս): Բարեվարքության և ազնվության բարձր տոկոսը մատնանշում է գիտական և ուսումնական գործընթացում էթիկական սկզբունքների ամրապնդման անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ պատասխանատվության ընդգծումը շեշտադրում է ուսումնական հաստատություններում հաշվետվողականության և հետևողականության պահանջը: Այս առաջնահերթությունները հիմք են ստեղծում բարձրագույն կրթության համակարգում համապարփակ բարեփոխումների համար:

Հաջորդ հարցին, թե **«Ձեր կարծիքով ի՞նչ միջոցառումներ են անհրաժեշտ բարձրագույն ուսումնական հաստատությունում էթիկական խախտումները նվազեցնելու համար** (խիստ վերահսկողություն և պատժամիջոցներ, էթիկայի վերաբերյալ դասընթացներ ու վերապատրաստումներ, կադրային քաղաքականության բարելավում, գործող էթիկական վարքականոնների կատարելագործում) (նշել երկու տարբերակ)», հարցվողների 60 %-ը (48 դասախոս) կարևորել է խիստ վերահսկողությունն ու պատժամիջոցները, իսկ 76 %-ը (61 դասախոս)՝ գործող էթիկական վարքականոնների կատարելագործումը: Այս տվյալները ենթադրում են, որ արդյունավետ էթիկական կառավարման համար անհրաժեշտ է համադրել իրավական որոշակի գործիքակազմեր:

Հարցին, թե «համաձայն ե՞ք այն պնդմանը, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար էթիկան նույնքան կարևոր է, որքան մասնագիտական հմտությունները»

հարցվածների 65 %-ը պատասխանել է, որ մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար էթիկան նույնքան կարևոր է, որքան մասնագիտական հմտությունները: Հարցումներն ընդգծում են, որ էթիկական չափանիշներն ընկալվում են ոչ միայն որպես լրացուցիչ գործոններ, այլ որպես հիմնարար պայման կառավարման արդյունավետության համար (տե՛ս Գծապատկեր 4):



Գծապատկեր 4.

«Էթիկայի և մասնագիտական հմտությունների համեմատական կարևորությունը»


Այն հարցին, **թե «Ձեր բուհում առկա՞ է որևէ մարմին կամ աշխատակից, որը պատասխանատու է էթիկական քաղաքականության վերահսկման համար», հարցվողների 30 %-ը պատասխանել է՝ այո, 50 %-ը՝ ոչ, 20%-ը՝ չգիտեմ: Հարցվողների 50 %-ը կարծում է, որ բուհում չկա հատուկ մարմին, ինչը ենթադրում է վերահսկողության համակարգի ու մեխանիզմների թույլ զարգացվածության մասին:**

«Որո՞նք են բարձրագույն ուսումնական հաստատություններում արդյունավետ էթիկական քաղաքականության իրականացման հիմնական խոչընդոտները (գործող օրենքների և կարգերի ցածր որակը, օրենքներն ու կարգերը չպահպանելը, կազմակերպական մշակույթը, էթիկական առաջնորդության բացակայությունը, այդ ուղղությամբ վերապատրաստումների բացակայությունը, պատժամիջոցների բացակայությունը, վերահսկողության բացակայությունը, էթիկական քաղաքականության նկատմամբ լուրջ վերաբերմունքի պակասը)» հարցին *պահանջվող երեք տարբերակներից հարցվողների 60 %-ը* առաջնային է համարել օրենքներն ու կարգերը չպահպանելը (ինչը մատնանշում է իրավական դաշտի կիրառելիության խնդիրները), 55 %-ը՝ վերահսկողության բացակայությունը (ինչը վկայում է էթիկական նորմերի իրագործման և խախտումների կանխարգելման մեխանիզմների թերացման մասին), էթիկական քաղաքականության նկատմամբ լուրջ վերաբերմունքի պակասը՝ 45%-ը (բարեվարքության նորմերը հաճախ ընկալվում են որպես ձևական պահանջ, այլ ոչ թե կառավարման կարևոր գործիք):

Այս տվյալները հաստատում են, որ անհրաժեշտ է խստացնել վերահսկողական մեխանիզմները՝ բարձրացնելով պատասխանատվությունը, ձևավորել կազմակերպական մշակույթ, որտեղ էթիկական արժեքներն առարկայական կերպով կընդգրկվեն կառավարման համակարգում:

Հաջորդ հարցին, **թե «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների էթիկական կարգավորման ո՞ր միջոցն էք համարում ամենաարդյունավետը (համարակալել ըստ կարևորության 1-5 նիշերով, 1-ը ամենակարևորն է),** հարցվողների մեծամասնությունը վերոհիշյալ խնդրի կարգավորման համար նախընտրելի է համարում իրավական կարգավորումները՝ 34-ը % (ինչը վկայում է նորմատիվ-իրավական մեխանիզմների առաջնահերթության մասին), էթիկական վարքականոնները՝ 28 % (կարևորելով դրանց նշանակությունը ակադեմիական միջավայրում բարեվարքության մշակույթի ձևավորման գործում), վերահսկողական մարմիններն ու մեխանիզմները՝ 20 % (ինչը մատնանշում է վերահսկման և պատասխանատվության գործիքների դերի կարևորությունը), (տե՛ս Գծապատկեր 5):

Այս տվյալները ենթադրում են, որ էթիկական արդյունավետ կարգավորման համար անհրաժեշտ է համադրել իրավական և ինստիտուցիոնալ մոտեցումները՝ ապահովելով թե՛ հստակ կանոնակարգում, թե՛ դրանց գործնական կիրառման մեխանիզմներ:




Գծապատկեր 5.

ՀՀ բուհերում էթիկական կարգավորման նախընտրելի միջոցները

Այն հարցին, **թե «Բարոյական կոնֆլիկտների դեպքում, երբ հակասող արժեքները հավասարապես կարևոր են անձի համար, ինչպե՞ս պետք է կայացվի որոշումը»,** հարցվողների 58 %-ը կարծում է ընդունված բարոյական սկզբունքների և էթիկական նորմերի հիման վրա, իսկ 42 %-ը կարծում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր տարբերակի հնարավոր հետևանքները: Մա մատնանշում է, որ կազմակերպական մակարդակում անհրաժեշտ է ապահովել ոչ միայն էթիկական որոշումների կայացման ամուր տեսական ու իրավական հիմքեր, այլև գործնական մեխանիզմներ, որոնք կօգնեն ղեկավարներին և աշխատակիցներին ճիշտ կողմնորոշվել էթիկական բարդ իրավիճակներում:

Հաջորդ հարցին, թե «Համաձայն ե՞ք այն պնդմանը, որ համալսարանի ղեկավարը պետք է ունենա ավելի մեծ ազատություն բարոյական կոնֆլիկտների առկայության դեպքում ճիշտ լուծումներ տալու համար», հարցվողների մեծամասնությունը (65%-ը) կարծում է, որ համալսարանի ղեկավարը պետք է ունենա որոշակի ազատություն ու ձկունություն բարոյական կոնֆլիկտների լուծման հարցում: Մա կարող է ցույց տալ վստահություն ղեկավարության նկատմամբ, բայց նաև որոշակի ռիսկեր՝ որոշումների սուբյեկտիվ կայացման համատեքստում (տե՛ս Գծապատկեր 6):



Գծապատկեր 6.

«Բարոյական կոնֆլիկտների առկայության դեպքում առավել մեծ ազատության հնարավորություն»

Հետազոտության արդյունքները վկայում են, որ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում կառավարման էթիկայի հիմնախնդիրը բազմաշերտ է՝ ներառելով ակադեմիական ազնվությունը, կադրային առաջխաղացման գործընթացները, կազմակերպական թափանցիկության, էթիկական վերահսկողության թերությունները և այլն: Ուստի անհրաժեշտ է իրավական կարգավորումների, վերահսկողական մեխանիզմների և էթիկական վարքականոնների համադրությամբ ստեղծել մի համակարգ, որը կաջակցի էթիկական խնդիրների կանխարգելմանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը: Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ առաջարկում ենք.

- ակադեմիական ազնվության խթանման համար ներդնել վերահսկողական մեխանիզմներ, որոնք կբարձրացնեն գիտական և կրթական գործունեության թափանցիկությունը,

- կադրային քաղաքականության արդիականացման համար ապահովել թափանցիկության, հաշվետվողականության և հավասար հնարավորությունների ապահովման մեխանիզմներ,

- բուհերում էթիկական վարքագծի պահպանման համար մշակել կանոնակարգեր կառավարման էթիկայի ազգային չափորոշիչների հիման վրա,

➤ ձևավորել վերահսկողական մարմիններ՝ ստեղծելով անկախ հանձնաժողովներ, որոնք իրապես կիրականացնեն էթիկական կանոնների պահպանման պատշաճ վերահսկողություն ու խորհրդատվություն,

➤ դասախոսական ու վարչական անձնակազմի համար կազմակերպել գործարար/ մասնագիտական էթիկայի և էթիկետի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ, որոնք կբարձրացնեն էթիկական վարքագծի կիրառման արդյունավետությունը:

Հետևապես, այս քայլերի իրականացումը կնպաստի բարձրագույն ուսումնական հաստատություններում կառավարման մշակույթի բարելավմանը, կրթական համակարգի նկատմամբ հանրային վստահության բարձրացմանն ու կրթության որակի ամրապնդմանը:

Եզրակացություններ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կառավարման էթիկան բարձրագույն ուսումնական հաստատություններում առանցքային կարևորություն ունի, հատկապես մարդկային ռեսուրսների կառավարման, կադրային քաղաքականության և կազմակերպական մշակույթի ձևավորման համատեքստում, քանի որ մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը պահանջում է ոչ միայն կառավարման տեխնոլոգիաների կատարելագործում, այլև արժեքային համակարգի ձևավորում, որտեղ էթիկական դեկլարումը առանցքային բաղադրիչ է:

Ի մի բերելով կատարված տեսական ու փորձարարական աշխատանքները՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումների, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում կառավարման էթիկան ոչ միայն բարոյական կատեգորիա է, այլև ռազմավարական գործիք, որը պայմանավորում է բարձրագույն ուսումնական հաստատության արդյունավետությունը, կայունությունն ու մրցունակությունը:

Ժամանակակից համալսարանները, գտնվելով շարունակական զարգացման ու վերափոխման գործընթացում, պահանջում են կառավարման նոր մոդելներ, որոնցում էթիկական նորմերի պահպանումը դառնում է կենսական անհրաժեշտություն:

Կառավարման էթիկայի ձևավորումը անհրաժեշտ է դիտարկել որպես կրթության որակի ապահովման կարևորագույն հիմնասյուներից մեկը, քանի որ առանց բարոյական արժեքների պահպանման հնարավոր չէ ապահովել բարձրագույն կրթության երկարաժամկետ ու արդյունավետ զարգացումը: Հետևապես անհրաժեշտ է պետական, ինստիտուցիոնալ և հասարակական մակարդակներում մշակել ու կիրառել կառավարման էթիկայի նոր գործիքակազմ՝ ապահովելով արդար, թափանցիկ և արդյունավետ կրթական միջավայր:

Այսպիսով՝ համաշխարհայնացման և շարունակական փոփոխությունների պայմաններում միայն ժամանակակից կառավարման սկզբունքներով առաջնորդվող բարձրագույն ուսումնական հաստատությունը, որը գործում է էթի-

կայի նորմերին համապատասխան, կարող է բավարարել միջավայրի պահանջները: Հետևապես, ակադեմիական հանրության վարքագիծը ևս պետք է նպաստի բարձրագույն ուսումնական հաստատություններում էթիկական նորմերի, արժեքների պահպանմանն ու տարածմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի ուսումնական հաստատության հեղինակության ու վարկի բարձրացմանը:

THE ROLE OF MANAGEMENT ETHICS IN EFFECTIVE HUMAN RESOURCE MANAGEMENT IN HIGHER EDUCATION INSTITUTIONS

Tonoyan Tatevik

Ph.D. student

Vanadzor State University after H. Tumanyan,

Republic of Armenia

tateviktonoyan1994@gmail.com

Summary

The study aims to reveal the role of management ethics in higher education institutions within the context of effective human resource management. The presence of ethical issues in higher education governance negatively affects both internal and external organizational processes.

Management ethics in higher education institutions is not only a key factor in shaping academic culture but also a strategic resource that directly influences effective human resource management, the establishment of organizational culture, and the long-term sustainability of universities.

The article presents the fundamental principles of management ethics, their application features, and their impact on the efficiency of higher education institutions. The research is based on an analysis of international and local scholarly sources, as well as empirical research, including the results of a sociological survey.

The findings indicate that gaps in the management ethics system exacerbate issues related to transparency in university governance, fairness in personnel policies, and academic integrity. According to survey data, the main pathways to reducing ethical violations in educational institutions include revising ethical management standards, introducing monitoring mechanisms, and ensuring transparency in governance processes.

The article analyzes different management styles (authoritarian, democratic, liberal, and mixed) and their influence on the formation of an ethical management environment.

The key conclusions of the study confirm that clarifying ethical management standards, maintaining a consistent approach to moral values, and implementing effective monitoring systems can not only improve the internal functions of higher education institutions but also enhance public trust in them.

Overall, strengthening management ethics should be considered a priority in higher education reforms, as ensuring the long-term stability, competitiveness, and high quality of education is impossible without a firm adherence to ethical principles.

Keywords: *Business Ethics, Business Etiquette, Academic Integrity, Management Styles, Monitoring Mechanisms, Conflict Management, Ethical Guidelines, Reforms.*

РОЛЬ УПРАВЛЕНЧЕСКОЙ ЭТИКИ В ЭФФЕКТИВНОМ УПРАВЛЕНИИ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ В ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ

Тоноян Татевик

Аспирант,

Ванадзорский государственный университет им. О. Туманяна,

Республика Армения

tateviktonoyan1994@gmail.com

Аннотация

Исследование направлено на выявление роли управленческой этики в высших учебных заведениях в контексте эффективного управления человеческими ресурсами. Наличие этических проблем в сфере управления высшим образованием негативно сказывается как на внутренних, так и на внешних процессах организации.

Управленческая этика в вузах является не только ключевым фактором в формировании академической культуры, но и стратегическим ресурсом, который напрямую влияет на эффективность управления человеческими ресурсами, становление организационной культуры и долгосрочную устойчивость высших учебных заведений.

В статье представлены фундаментальные принципы управленческой этики, особенности их применения и влияния на эффективность работы высших учебных заведений. Исследование основано на анализе международных и локальных научных источников, а также на результатах эмпирического исследования, включающего и результаты социологического опроса.

Результаты исследования показывают, что пробелы в работе системы управленческой этики усугубляют проблемы прозрачности управления вузами, проведения справедливой кадровой политики и академической честности. Согласно данным опроса основными путями сокращения этических нарушений в учебных заведениях являются пересмотр стандартов управленческой этики, внедрение механизмов контроля и обеспечение прозрачности проведения управленческих процессов.

В статье анализируются различные стили управления (авторитарный, демократический, либеральный и смешанный) и их влияние на формирование этической среды управления.

Основные выводы исследования подтверждают, что четкое определение стандартов управленческой этики, последовательный подход к сохранению моральных ценностей и внедрение эффективных механизмов контроля могут не только обеспечить прозрачность проведения внутренних процессов в вузах, но и повысить общественное доверие к ним.

В целом, укрепление управленческой этики должно рассматриваться как приоритет в реформах системы высшего образования, поскольку без строгого соблюдения этических принципов невозможно обеспечить долгосрочную устойчивость, конкурентоспособность и высокое качество образования.

Ключевые слова: бизнес-этика, деловой этикет, академическая честность, стили управления, контрольные механизмы, управление конфликтами, этические нормы, реформы.

Օգտագործված գրականության ցանկ

1. Delplas S., Markosyan R., Tcaturyan K., «Mardkayin resursneri karavarman thapantsikutyun yev hashvetvoghakanuthyun bardzraguyn usumnakan hastatuthyunnerum», ughetsuys yev gortciqakazm, 2017, 63 ej.
2. Nazaryan A., Gortcarar hakhordakcuthyun, Yerevan, «Zangak-97», 2001, 256 ej
3. Patriarq P. Adranapolsetsi, «Khrahi tangaran», S. Ejmiatsin, 2002, 69 ej.

4. Varrington D., Anapiosyan A., Aleksanyan N., Bardzraguyn usumnakan hastatuthyunneri tipayin etikayi kanonagrqrer` usanoghneri, varchakan yev akademiakan ashkhatakazmi hamar, 2016, 28 ej.

5. Podoprigora M.G., Delovaya etika: uchebnoe posobie. Taganrog: Izd-vo TTI YUFU, 2012, 116 s.

6. Potashnik M., Upravlenie kachestvom obrazovaniya: Praktiko orientirovannaya monografiya i metodicheskoe posobie, Moskva: Pedagogicheskoe obshchestvo Rossii, 2004, 435 s.

7. Armstrong, M., *Armstrong's Handbook of Human Resource Management Practice* (15th ed.). London: Kogan Page., 2020, 792 pp.

8. Austin I. and Jone G. "Governance of Higher Education", Taylor Francis Group, 2015, 67 pp.

9. Austin I. and Jone G. «Governance of Higher Education», Taylor Francis Group, 2015, 67 pp.

10. Gaebel M., Zhang T. Trends 2018 Learning and teaching in the European Higher Education Area, Creative Commons Attribution-NonCommercial CC BY-NC, 2018, 109 pp.

11. Singh Divya / Christoph Stükelberger (Eds.), «Ethics in Higher Education Values-driven Leaders for the Future», Geneva: Globethics.net, 2017, 370 pp.

12. Klimszova S., Business Ehtics: Introduction to the Ethics of Values, 1st edition, Lucjan Klimsza & bookboon.com, 2014, 88 pp.

Հավելվածներ

Հավելված 1	
Ավտորիտար ոճ ունեցող ղեկավարներ	
Կառավարման գործընթացը	Իրականացվող քայլերի ոճային առանձնահատկությունը
Որոշումների ընդունում	Կայացնում է միանձնյա որոշումներ:
Պատասխանատվության բաշխում	Կա մ ինքն է կրում, կա մ փոխանցում ենթականերին:
Վերաբերմունքը նախաձեռնությունների նկատմամբ	Ամբողջովին ճնշում է:
Վերաբերմունքն աշխատակիցների ընտրության նկատմամբ	Վախենում է բարձր որակավորում ունեցող մասնագետներից՝ փորձելով ազատվել նրանցից:
Վերաբերմունքը թերի գիտելիքի նկատմամբ	«Ամեն ինչ գիտի և ամեն ինչ կարող է». հազվադեպ է բարձրացնում իր որակավորումը:
Շփման ոճը	Շփվող չէ, առկա է անջրպետ:
Ենթականների հետ հարաբերությունների բնույթը	Կոպիտ է, երբեմն՝ ըստ տրամադրության:
Վերաբերմունքը կարգապահության նկատմամբ	Խիստ օրակարգի ու պաշտոնական կարգապահության կողմնակից է:
Ենթականների վրա բարոյական ազդեցությունը	Պատիժը դիտարկում է որպես խթանի հիմնական մեթոդ, ընտրյալ աշխատակիցներին խրախուսում է միայն տոնական օրերին:

Հավելված 2 Ժողովրդավարական ոճ ունեցող ղեկավարներ	
Կառավարման գործընթացը	Իրականացվող քայլերի ոճային առանձնահատկությունը
Որոշումների ընդունում	Որոշումներ կայացնելուց առաջ խորհրդակցում է ենթակաների հետ:
Պատասխանատվության բաշխում	Իրականացնում է՝ ըստ նախապես փոխանցված յիսգորությունների:
Վերաբերմունքը նախաձեռնությունների նկատմամբ	Խրախուսում է, կիրառում է ընդհանուր գործի շահերին համապատասխան:
Վերաբերմունքն աշխատակիցների ընտրության նկատմամբ	Նախապատվությունը տալիս է գրագետ, գործարար մարդկանց:
Վերաբերմունքը թերի գիտելիքի նկատմամբ	Հաշվի առնելով քննադատությունը՝ անընդհատ բարձրացնում է որակավորումը:
Շփման ոճը	Սիրում է շփվել, ունի ընկերական տրամադրվածություն:
Ենթակաների հետ հարաբերությունների բնույթը	Վարքագծի կայուն տեսակ, մշտական ինքնավերահսկողություն:
Վերաբերմունքը կարգապահության նկատմամբ	Իրատեսական կարգապահության կողմնակից է, ցուցադրում է տարբերակված վերաբերմունք աշխատակիցների նկատմամբ:
Ենթակաների վրա բարոյական ազդեցություն	Կիրառում է պարզևատրման ու պատժի տարբեր մեթոդներ:

Հավելված 3 Ազատական ոճ ունեցող ղեկավարներ	
Կառավարման գործընթացը	Իրականացվող քայլերի ոճային առանձնահատկությունը
Որոշումներ ընդունելու մեթոդ	Սպասում է խորհրդակցության արդյունքներին
Պատասխանատվության բաշխումը	Իր վրայից հեռացնում է ցանկացած տեսակի պատասխանատվություն
Վերաբերմունքը նախաձեռնությունների նկատմամբ	Նախաձեռնությունը տալիս է ենթականերին:
Վերաբերմունքն աշխատակիցների ընտրության նկատմամբ	Չի զբաղվում հնարավոր աշխատակիցների ընտրությամբ:
Վերաբերմունքը թերի գիտելիքի նկատմամբ	Համալրում է գիտելիքներն ու խրախուսում նույնն իր ենթակաների մոտ:
Շփման ոճը	Սկսում է շփվել ենթակաների հետ՝ միայն վերջիններիս նախահարձակ լինելու պարագայում:
Ենթակաների հետ հարաբերությունների բնույթը	Հաճոյակամ է «փափուկ»:

Վերաբերմունքը կարգապահության նկատմամբ	Հանդուրժող է խախտումների նկատմամբ, չի պահանջում խիստ կարգապահություն:
Ենթականների վրա բարոյական ազդեցություն	Գլխավորապես կիրառում է պարզ-նատրման մեթոդը:

Հավելված 4 Խառը ոճ ունեցող դեկավարներ	
Կառավարման գործընթացը	Իրականացվող քայլերի ոճային առանձնահատկությունը
Որոշումներ ընդունելու մեթոդ	Կայացնում է միանձնյա կամ խմբային որոշումներ՝ կախված իրավիճակից:
Պատասխանատվության բաշխումը	Հաճախ բաշխում է պատասխանատվությունն իր ու ենթակաների միջև:
Վերաբերմունքը նախաձեռնությունների նկատմամբ	• Ընշում է, երբ վստահ է իր ճշմարտացիության մեջ, • խրախուսում է, երբ անհրաժեշտ է խմբային որոշում կայացնել
Վերաբերմունքն աշխատակիցների ընտրության նկատմամբ	Աշխատակիցների ընտրությամբ զբաղվում է ոչ կանոնավոր:
Վերաբերմունքը թերի գիտելիքի նկատմամբ	Փորձում է իրազեկված լինել գործարար ժամանակակից խնդիրների մասին, պարբերաբար բարձրացնում է որակավորումը:
Շփման ոճը	Առավել հաճախ կախված է բնավորությունից, որպես կանոն՝ ակտիվ շփվող է:
Ենթականների հետ հարաբերությունների բնույթը	Առավելապես բարյացակամ է:
Վերաբերմունքը կարգապահության նկատմամբ	Պաշտոնապես կարգապահության կողմնակից է, սակայն երբեմն «աչք է փակում» խախտումների վրա:
Ենթականների վրա բարոյական ազդեցություն	Իրավիճակից կախված ու ենթակաների որակավորմամբ պայմանավորված՝ կիրառում է տարբեր մեթոդներ:

Получено: 06.05.2025
Рассмотрено: 06.05.2025
Принято: 08.05.2025

Received: 06.05.2025
Reviewed: 06.05.2025
Accepted: 08.05.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

UDC 371.1(948.1)

DOI 10.46991/educ-21st-century.v7.i1.305

**ՇՎԵԴԻԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հարությունյան Նազիկ

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն

nazik.harutyunyan@ysu.am

<https://orcid.org/0000-0003-0765-2610>

Ալեքսանյան Մարիամ

Մանկավարժության ամբիոնի հայցորդ

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն

mariam.aleqsanyan@ysu.am

<https://orcid.org/0009-0007-6834-5178>

Ամփոփում

Համառոտ ներածական: Շվեդիայում հանրային դպրոցների կողքին անկախ դպրոցները վերջին տասնամյակների ընթացքում ընդլայնվել են, և այսօր պարտադիր դպրոցի աշակերտների գրեթե 20%-ը հաճախում է անկախ դպրոցներ: Այս հոդվածը ներկայացնում է Շվեդիայի պետական և անկախ դպրոցների կառավարման համակարգերի համեմատական վերլուծություն: Այն ուսումնասիրում է կառավարման, ֆինանսավորման, դպրոցի ղեկավարման, ուսուցիչների հավաքագրման և ակադեմիական արդյունքների տարբերությունները: Թեև երկու դպրոցները հետևում են ազգային չափանիշներին, անկախ դպրոցները գործում են ավելի մեծ ինքնավարությամբ և ճկունությամբ: Հոդվածում ընդգծվում է, թե ինչպես են դպրոցի ընտրությունը և կառավարման մոդելը նպաստում կրթական սեգրեգացիային՝ չնայած ակադեմիական համեմատելի արդյունքներին: Եզրակացություններում շեշտվում է Շվեդիայի կրթության համակարգում ինքնավարության, արդարության և հաշվետվողականության հավասարակշռման անհրաժեշտությունը:

Բանալի բառեր: *Շվեդիա, հանրային դպրոցներ, անկախ դպրոցներ, կառավարման համակարգ, ֆինանսավորում, դպրոցական ղեկավարություն, ակադեմիական արդյունքներ, կրթական սեգրեգացիա, ինքնավարություն, հաշվետվողականություն, կրթական հավասարություն:*

Շվեդիայի հանրակրթության համակարգի հիմնարար սկզբունքներից մեկը երեխաների և երիտասարդների համարժեք կրթության ապահովումն է՝ անկախ սեռից, բնակության վայրից և սոցիալական ու ֆինանսական հնարավոր-

րությունից: Շվեդիայի հանրակրթության կառավարման մոդելը հետաքրքիր է իր կառուցվածքի, մոտեցումների և կազմակերպման տեսանկյունից:

Շվեդիայում հանրակրթության համակարգը անվճար է բոլոր սովորողների համար, ներառյալ դասազրքերը, դպրոցի ճաշերը և անհրաժեշտության դեպքում՝ տրանսպորտը: Կրթությունը պարտադիր է 6-16 տարեկան աշակերտների համար:

Համակարգը բաժանված է հետևյալ փուլերի՝

- Förskoleklass (նախադպրոցական դասարան) – 6 տարեկան (պարտադիր),

- Grundskola (պարտադիր դպրոց) – 7-16 տարեկան (1-9-րդ դասարաններ),

- Gymnasieskola (ավագ դպրոց) – 16-19 տարեկան (ընտրովի):

Պարտադիր դպրոցի ավարտից հետո աշակերտների մեծ մասը շարունակում է ավագ դպրոցում՝ ընտրելով կա՛մ ակադեմիական ծրագրեր (համալսարան ընդունվելու համար), կա՛մ մասնագիտական ծրագրեր (մասնագիտություն ստանալու համար): Շվեդիայի հանրակրթության համակարգը հաճախ ներկայացվում է որպես հաջողակ մոդել:

Շվեդիայի հանրակրթության համակարգը բարեփոխումների և փոփոխությունների երկարատև պատմություն ունի: Վերջին տասնամյակների ամենանշանակալի փոփոխություններից մեկը անկախ դպրոցների ներդրումն է, որոնք ֆինանսավորվում են պետության կողմից, բայց կառավարվում են մասնավոր կերպով: Անկախ դպրոցները վերջին տարիներին արագորեն ընդլայնվել են, և այսօր Շվեդիայում աշակերտների գրեթե 20%-ը հաճախում է անկախ դպրոցներ: Անկախ դպրոցների ընդլայնումը հակասական արձագանք է գտել Շվեդիայի հանրակրթության համակարգն ուսումնասիրող գիտնականների մոտ, որոնք պնդում են, որ դրանք սպառնալիք են հանրային դպրոցական համակարգի համար՝ բերելով սեգրեգացիայի և անհավասարության, մինչդեռ դրանք դիտարկվում են նաև որպես արժեքավոր հավելում Շվեդիայի կրթության համակարգին:

Այս հոդվածում քննվող **հիմնախնդիրը** ղեկավարման տարբեր համակարգերի ազդեցությունն է շվեդական դպրոցական համակարգի կրթական հավասարության ու կառավարման վրա: Մինչդեռ անկախ դպրոցները պետական դպրոցների համեմատ ունեն ավելի մեծ ինքնավարություն և ճկունություն, այս առավելությունները ուղեկցվում են կրթական սեգրեգացիայի ու սոցիալական անհավասարության աճի ռիսկերով: Միևնույն ժամանակ, չնայած կառուցվածքային և կազմակերպչական տարբերություններին, պետական ու անկախ դպրոցների ակադեմիական արդյունքները մեծ մասամբ մնում են համեմատելի: Մա առաջ է քաշում կարևոր հարցեր այն մասին, թե ինչպես են կառավարման մոդելները ազդում ոչ միայն կրթության որակի, այլև Շվեդիայի կրթական ոլորտում արդարության, մատչելիության և հաշվետվողականության ավելի լայն սկզբունքների վրա:

Հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել և համեմատության մեջ դիտարկել Շվեդիայի հանրային ու անկախ դպրոցների կառավարման համակարգերը՝ ներկայացնելով դրանց հիմնական նմանություններն ու տարբերությունները:

Սահմանված նպատակից ելնելով հոդվածում անդրադարձ է կատարվել հետևյալ **խնդիրներին**.

- վերլուծել և համեմատել հանրային և անկախ դպրոցների ֆինանսավորման մոդելները, բյուջետային հատկացման գործընթացներն ու ֆինանսական ինքնավարությունը,

- հետազոտել և համեմատել երկու տեսակի դպրոցներում ակադեմիական առաջադիմությունը, աշակերտների ձեռքբերումների մակարդակն ու ազգային չափանիշները,

- քննել և տարբերակել հանրային ու անկախ դպրոցների տնօրենների ընտրության չափանիշները, որակավորումը, դերերը և պատասխանատվությունները,

- վերլուծել և համեմատել երկու տեսակի դպրոցներում ուսուցիչների հավաքագրումը, վերապատրաստումը, մասնագիտական զարգացումն ու մանկավարժական մոտեցումները:

Սահմանված նպատակին հասնելու համար մեր կողմից իրականացվել է պաշտոնական փաստաթղթերի, կրթության կազմակերպման ուղեցույցների, ուսումնական նյութերի ու ծրագրերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հիմնախնդրին առնչվող հետազոտությունների հակիրճ վերլուծություն:

Վերջին տասնամյակում Շվեդիայի հանրակրթության ոլորտում իրականացված փոփոխությունները, առավելապես անկախ դպրոցների ներդրումը, ակադեմիական դաշտում քննարկումների, հոդվածների և դեբատների առիթ են հանդիսացել: Մեծապես քննվում է անկախ դպրոցների ազդեցությունը կրթական հավասարության ու սեգրեգացիայի տեսանկյուններից: Մի շարք ուսումնասիրողներ, այդ թվում՝ Կ. Յ. Հանսենը, Յ. Է. Գուստաֆսոնը նշում են, որ անկախ դպրոցների աճող մեծ թիվը բերում է կրթական սեգրեգացիայի և բացասական ազդում հանրային դպրոցների վրա: Մյուս կողմից նշվում է (Օ. Հալոնստենի, Է. Սեվելինի և այլոց կողմից), որ անկախ դպրոցները դրականորեն լրացնում են Շվեդիայի կրթության համակարգը, խթանում են կրթական նորարարությունը և ֆինանսավորման այլընտրանքային տարբերակներ են ստեղծում կազմակերպությունների համար: Մոտեցումների նման տարբերությունը վկայում է կրթական հավասարության և դպրոցի ընտրության գաղափարների միջև Շվեդիայում դեռևս գոյություն ունեցող հակասությունների մասին:

Նորություն: Մեր կողմից իրականացված հետազոտությունը տրամադրում է Շվեդիայի պետական և անկախ դպրոցների կառավարման համակարգերի համապարփակ համեմատական վերլուծություն, որը լայնորեն չի քննվել նախորդ ուսումնասիրություններում: Հոդվածում դիտարկվում են կառավարման կառուցվածքները, ֆինանսավորման մոդելները, ղեկավարության ընտրությունն

ու դերերը, ուսուցչական աշխատանքի կառավարումը և ակադեմիական արդյունքները երկու տեսակի դպրոցների համար: Այս ասպեկտները ինտեգրելով՝ ուսումնասիրությունը համապարփակ պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես են պետական և անկախ դպրոցները տարբերվում իրենց կազմակերպչական ու կառավարման գործելակերպով, և ինչ են այդ տարբերությունները նշանակում կրթության որակի ու հավասարության համար: Թարմացված տվյալների (օրինակ՝ աշակերտների վերջին ցուցանիշների վիճակագրությունը) ներառումը և կրթական սեգրեգացիայի հարցի ուսումնասիրությունը դպրոցական կառավարման տեսանկյունից դարձնում են ուսումնասիրությունն արդիական:

Մինչև Շվեդիայի հանրային ու անկախ դպրոցների առանձնահատկությունների քննարկումը ներկայացնենք Շվեդիայի հանրակրթության հիմնական կառուցվածքը և կառավարման ուղղությունները:

1990 թվականից ի վեր Շվեդիայում հանրակրթության համակարգը ենթարկվել է մի շարք բարեփոխումների: Ներդրվել են նոր ուսումնական պլաններ ու ծրագրեր, առաջացել է նոր հանրակրթական օղակ՝ նախադպրոցական դասարան, ինչպես նաև դրամաշնորհային օժանդակությամբ կամ այսպես կոչված անկախ դպրոց ընտրելու իրավունքը:

Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների խնամքի պատասխանատվությունը Առողջապահության և սոցիալական հարցերի նախարարությունից փոխանցվել է Կրթության և հետազոտությունների նախարարությանը:

1991 թվականից առաջին քայլերն են իրականացվել դպրոցների կառավարման ընդհանուր պատասխանատվությունը համայնքներին վերապահելու ուղղությամբ: Միննույն ժամանակ կրթության ոլորտը կարգավորող հիմնական մարմնի՝ Շվեդիայի կրթության ազգային գործակալության դերը մանրամասն կանոններ տրամադրելուց վերածվում է մշտադիտարկման և գնահատման գործառույթներ իրականացնողի:

2003 թվականին հիմնվել է նոր կենտրոնական կրթական մարմին՝ դպրոցների բարելավման Շվեդիայի ազգային գործակալությունը: Այդ պահից սկսած՝ հիմնադրվել է նաև Շվեդիայի դպրոցների տեսչությունը:

Ավագ միջնակարգ դպրոցի նոր համակարգը ներդրվել է 1992 թվականին: Հին «գծային» համակարգը (gymnasielinjer) փոխարինվեց 16 ազգային ծրագրերով (nationella program), որոնք 2000 թվականի աշնանը ավելացան ևս մեկով, իսկ 2011թ. հուլիսի 1-ին ներդրվում է միջնակարգ դպրոցի նոր կառուցվածքը, որը ենթադրում է արդեն 18 ազգային ծրագիր՝ 6 բարձրագույն կրթության նախապատրաստական ծրագիր ու 12 մասնագիտական ծրագիր: Նախկին անհատական ծրագիրը փոխարինվեց է հինգ ներածական ծրագրերով, որոնք անհատապես հարմարեցվում էին աշակերտներին [4,7-8]:

2011 թվականի աշնանային կիսամյակում ուժի մեջ մտան «Շվեդիայի Կրթության նոր օրենքը» (Skollagen) և նոր ուսումնական ծրագրերը, որոնք պարունակում են հիմնական սկզբունքներ ու դրույթներ պարտադիր ու հետագա

կրթության, նախադպրոցական (Förskola), նախադպրոցական դասարանի (Förskoleklass), արտադպրոցական խնամքի և մեծահասակների կրթության կազմակերպման համար:

2011 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ուսումնական ծրագրերը պարունակում են նոր ընդհանուր նպատակներ, ուղեցույցներ ու ուսումնական պլաններ: Նախադպրոցական ուսումնական ծրագիրը ներառում է ավելի հստակ նպատակներ երեխաների լեզվական ու հաղորդակցական զարգացման և գիտության ու տեխնիկայի համար: Հանրապետական առարկայական քննություններն անցկացվում են պարտադիր դպրոցի 3-րդ, 6-րդ ու 9-րդ դասարաններում՝ աշակերտների առաջադիմությունը գնահատելու նպատակով: Շվեդիայում նախկինում գործող գնահատման համակարգին, որը բաղկացած էր չորս գնահատականներից՝ «հանձնել է հատուկ գովեստով»-ից (MVG) մինչև «չի հանձնել (IG), փոխարինելու է գալիս գնահատման նոր սանդղակը՝ A-ից F վեց գնահատականներով: Գնահատականները նշանակվում են ուսումնառության 6-րդ տարվանից:

Շվեդիայում, բացի հիմնական պարտադիր դպրոցներից, գործում են նաև պետական դրամաշնորհով աշխատող անկախ դպրոցներ: Անկախ դպրոցն, ի տարբերություն հանրային դպրոցների, ղեկավարվում է սեփականատիրոջ կողմից: Դպրոցի սեփականատեր կարող է դառնալ որևէ հիմնադրամ, ընկերություն, ասոցիացիա, մասնավոր անձ, կոոպերատիվ կամ կրոնական խումբ: Անկախ դպրոցները աշխատում են հանրակրթության երեք մակարդակներում՝ նախադպրոցական, պարտադիր և միջնակարգ:

1992 թ. դրամաշնորհային աջակցություն ստացող անկախ դպրոցներ հիմնելու վերաբերյալ պահանջների փոփոխությունից հետո անկախ ղեկավարվող միջնակարգ դպրոցների թիվը մեծանում է:

2021/2022 ուսումնական տարվա դրությամբ 4725 պարտադիր դպրոցներից 828-ը (18%), և 1284 ավագ միջնակարգ դպրոցներից 460-ը (36%) անկախ են:

2023/2024 ուսումնական տարում Շվեդիայում 4 667 պարտադիր դպրոցներից 837-ը (18%), իսկ 1296 ավագ միջնակարգ դպրոցներից 466-ը (36%) անկախ դպրոցներ են, մնացած 11-ը ղեկավարվում են համայնքային խորհրդի կողմից (Sveriges kommuner och regioner): Համեմատության համար նշենք նաև 1999 թ. արդյունքները, համաձայն՝ 638 ավագ միջնակարգ դպրոցներից 82-ը անկախ դպրոցներ են [1, 28]:

Շվեդիայի հանրակրթությունը համապարփակ համակարգ է, այն նախատեսված է բոլոր երեխաներին կրթություն տրամադրելու համար՝ անկախ նրանց ծագումից կամ կարողություններից:

Համակարգը նաև ապակենտրոնացված է. դպրոցների կառավարման համար մեծ պատասխանատվություն է պատվիրակված տեղական մակարդակին՝ քաղաքապետարաններին:

Շվեդիայի հանրային և անկախ դպրոցների կառավարման մոդելները

Շվեդիայի հանրային դպրոցներում կառավարումն իրականացվում է քաղաքային իշխանության կողմից, ինչը նշանակում է, որ դպրոցի տնօրենը ընտրվում է քաղաքային իշխանության կողմից հայտարարված թափուր հաստիքին դիմած մասնագետների ընտրության արդյունքում:

Դպրոցի կառավարման տեսանկյունից անկախ դպրոցներում կրթական գործընթացները կառավարվում են անկախ սեփականատիրոջ կողմից:

Ի տարբերություն հանրային դպրոցների՝ անկախ դպրոցները չունեն տեղական քաղաքական նպատակներ կամ որևէ տեղական քաղաքական կառավարում, որին պետք է հետևեն: Դպրոցների գործունեությունն ապահովելու համար կարիք չկա ռեսուրսների համար մրցակցելու քաղաքապետարանների այլ առաջնահերթությունների հետ, ինչպես դա անում են հանրային դպրոցները:

2023-2024 ուսումնական տարում Շվեդիայում գործող անկախ դպրոցներից 515-ը կառավարվում են շահույթ ստանալու նպատակով գործող ընկերությունների (aktiebolag և handelsbolag), 86-ը՝ ոչ առևտրային հիմնադրամների (stiftelser), 4-ը՝ կրոնական կազմակերպությունների (որոնց իրավական անվանումը «գրանցված դավանանք», registrerade trossamfund), 223-ը՝ միությունների (föreningar) կողմից: Շվեդիայում 121 անկախ դպրոցներ կառավարվում են տնտեսական միությունների, իսկ 102-ը՝ ոչ առևտրային միությունների կողմից [1, 35]:

Շահույթ հետապնդող կազմակերպությունները, միությունները և ոչ առևտրային կազմակերպությունները անկախ դպրոցներ կարող են հիմնել մի շարք պատճառներով: Անկախ դպրոցները մեծ մասամբ լուծում են հատուկ կարիքներ և նեղ մասնագիտական հետաքրքրություն ունեցող աշակերտների մարտահրավերները: Ոչ առևտրային ընկերություններն ու հասարակական կազմակերպությունները անկախ դպրոցները դիտարկում են որպես հանրային դպրոցական համակարգում հատուկ կրթական կարիքներ կամ բացեր լուծելու միջոց, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող աշակերտների համար մասնագիտացված ծրագրեր տրամադրելը կամ այլընտրանքային մանկավարժական մոտեցումներ առաջարկելը: Մյուս կողմից անկախ դպրոցները առևտրային կազմակերպությունների կողմից դիտարկվում են որպես եկամտի աղբյուր՝ հաշվի առնելով դրամաշնորհային ծրագրերը, հարկային դաշտի արտոնությունները և սեփական կրթական արտադրանքը կամ մոտեցումը ներկայացնելու հնարավորությունը:

Երկու տեսակի դպրոցները գործում են ազգային կրթական օրենքների և կանոնակարգերի շրջանակներում՝ ապահովելով կրթական գործունեության որոշակի աստիճանի ստանդարտացում: Այնուամենայնիվ, անկախ դպրոցներն ունեն ավելի մեծ ինքնավարություն իրենց ղեկավարման և կառավարման մոտեցումներում՝ թույլ տալով հարմարեցնել իրենց գործունեությունը դպրոցական համայնքի հատուկ կարիքներին ու նպատակներին:

Հանրային դպրոցներում կառավարման համակարգը սովորաբար հիերարխիկ է. տնօրենները նշանակվում են քաղաքային խորհուրդների կողմից և հաշ-

վետու են ինչպես տեղական, այնպես էլ ազգային իշխանություններին: Սա կարող է հանգեցնել որոշումների կայացման ավելի բյուրոկրատական և կենտրոնացված մոտեցման՝ շեշտը դնելով ազգային քաղաքականության և չափանիշներին առավելապես հետևողական լինելու վրա: Ի հակադրություն, անկախ դպրոցները հաճախ ունեն ավելի ուղիղ ու ապակենտրոնացված ղեկավարման կառուցվածք, որտեղ տնօրենները հաշվետու են դպրոցի սեփականատիրոջը կամ տնօրենների խորհրդին: Այս մոտեցումը, մի կողմից, խթանում է ավելի մեծ ճկունություն և արձագանքողականություն դպրոցական համայնքի հատուկ կարիքներին, բայց պահանջում է առաջնորդական, կառավարման և արդյունավետ հաղորդակցության հմտություններ՝ միաժամանակ ապահովելով ազգային չափանիշներին համահունչ նպատակների իրականացում դպրոցում:

Հանրային դպրոցները, իրենց ստանդարտացված կառուցվածքով և ազգային իշխանություններին հաշվետվողականությամբ կարող են ապահովել որոշակի աստիճանի հավասարություն և հետևողականություն տարբեր տարածաշրջաններում ու համայնքներում: Այնուամենայնիվ, նրանց բյուրոկրատական բնույթը երբեմն կարող է հանգեցնել անճկունության և տեղական կարիքներին ու առաջնահերթություններին արձագանքելու բացակայության: Անկախ դպրոցներն իրենց ավելի մեծ ինքնավարությամբ և ճկունությամբ, հաճախ ավելի լավ կարող են հարմարվել իրենց աշակերտների և համայնքների հատուկ կարիքներին՝ խթանելով նորարարություն ու մանկավարժական մոտեցումների բազմազանություն: Մյուս կողմից նրանց ապակենտրոնացված բնույթը կարող է նաև հանգեցնել որակի տատանումների և պոտենցիալ մարտահրավերների՝ համապատասխանություն ազգային չափանիշներին և հաշվետվողականության պահանջներին:

Բավականին ուշագրավ են նաև դպրոցների ինքնավարությունը, դպրոցական առաջնորդությունը ուսուցիչների ու տնօրենի մակարդակներում՝ հանրային ու անկախ դպրոցների համատեքստում:

Պետական դպրոցների տնօրենները սովորաբար նշանակվում են քաղաքային կրթական խորհրդի կողմից, մինչդեռ անկախ դպրոցների տնօրեններն ընտրվում են դպրոցի սեփականատիրոջ կամ խորհրդի կողմից: Ե՛վ հանրային, և՛ անկախ դպրոցների տնօրենների որակավորումը պահանջում է ուսուցչի որակավորում և համապատասխան ղեկավարման փորձ, սակայն անկախ դպրոցները կարող են արժևորել ձեռնարկատիրական հմտությունները և շուկայական ուղղվածություն ունեցող մոտեցումը: Երկու տեսակի դպրոցների տնօրենները պատասխանատու են դպրոցը ղեկավարելու և կառավարելու համար, սակայն անկախ դպրոցների տնօրեններն ունեն ավելի մեծ ինքնավարություն որոշումներ կայացնելու և իրենց տեսլականն իրականացնելու հարցում:

Թեև հանրային և անկախ դպրոցներում տնօրենները դրսևորում են ինքնավարություն մանկավարժական առաջնորդության և դպրոցի բարելավման աշխատանքում, անկախ դպրոցի տնօրենն ավելի մեծ իրավասություններ ու ինքնավարություն ունի դպրոցական առաջնորդության, առաջնորդության ոճի,

դպրոցի նպատակների և մանկավարժական մոտեցումների հարցում: Պետական դպրոցների տնօրենները բախվում են բյուրոկրատական կառուցվածքներում նավարկելու և շահագրգիռ կողմերի բազմազան շահերը հավասարակշռելու մարտահրավերների [2, 17], ինչի պատճառ կարող են հանդիսանալ հանրային դպրոցների կառավարման համակարգի հիերարխիկ բնույթն ու հաշվետվողականության պահանջները: Նման բյուրոկրատական կառուցվածքը պատճառ է դառնում հանրային դպրոցներում գործընթացների դանդաղեցմանը: Որոշումների ընդունումը կախված է ոչ միայն տնօրենից, այլև քաղաքապետարանից:

Ուսուցչական կազմի կառավարում

Պետական դպրոցները հաճախ հետևում են կենտրոնացված հավաքագրման գործընթացներին քաղաքային կրթական խորհուրդների միջոցով, մինչդեռ անկախ դպրոցներն ունեն ավելի մեծ ինքնավարություն ուսուցիչներին ուղղակիորեն հավաքագրելու հարցում:

Երկու տեսակի դպրոցները տրամադրում են ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման հնարավորություններ, սակայն անկախ դպրոցները կարող են առաջարկել ավելի մասնագիտացված վերապատրաստում՝ համահունչ իրենց մանկավարժական մոտեցումներին:

Պետական դպրոցները, որպես կանոն, հետևում են ազգային ուսումնական ծրագրին և ստանդարտացված մանկավարժական մոտեցումներին, մինչդեռ անկախ դպրոցներն ունեն ավելի մեծ ճկունություն՝ իրենց կրթական փիլիսոփայության վրա հիմնված բազմազան մանկավարժական մոտեցումներ ընդունելու համար: Պետական դպրոցները բախվում են որակավորված ուսուցիչներին պահպանելու և մասնագիտական աճի համար համարժեք աջակցություն տրամադրելու մարտահրավերների [2, 20], ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է խիստ ստանդարտացված գործընթացներով և պետական չափանիշներին հետևելու անհրաժեշտությամբ:

Այս հարցում անկախ դպրոցների ուսուցիչների հետ աշխատանքի փորձը բավականին արդյունավետ է. այն ներառում է մենթորական ծրագրեր և անհատականացված մասնագիտական զարգացման ուղիներ, որոնք թույլ են տալիս աշխատել յուրաքանչյուր ուսուցչի բարելավման կողմերի վրա և զարգացնել ուժեղ հմտությունները: Անկախ դպրոցներում ուսուցիչների կողմից մեծ ուշադրություն է դարձվում նորարար մեթոդներին և SS գործիքների կիրառմանը: Այսպիսով՝ նշենք, որ չնայած այն փաստին, որ թե՛ անկախ, թե՛ հանրային դպրոցները վերահսկվում են պետական մարմինների կողմից, բայց ներքին հաղորդակցության ու կառավարման տեսանկյունից գործընթացները անկախ դպրոցներում ավելի պարզեցված են: Անկախ դպրոցները չեն պայքարում քաղաքապետարանի ծրագրային և ֆինանսական առաջնահերթությունների դեմ. դրանք գտնվում են անընդհատ հսկողության տակ և պարբերաբար կարիք են ունենում դիմելու պետական դրամաշնորհների՝ դպրոցների գործունեությունը

պահպանելու նպատակով: Եվ, վերջապես, դպրոցները կառավարման տեսանկյունից տարբերվում են թե՛ տնօրենների ընտրության, թե՛ ուսուցիչների հավաքագրման, և թե՛ մանկավարժական ու դեկավարման ինքնավարության մակարդակով: Կառավարման համակարգերի թվարկված տարբերությունները բերում են մի շարք մարտահրավերներ:

Շվեդիայի հանրային և անկախ դպրոցների ֆինանսավորման մոդելները

Շվեդիայում անկախ դպրոցները ֆինանսավորվում են համայնքային վաուչերներով և պետական դրամաշնորհներով: Արգելվում է գանձել դպրոցական վարձեր կամ դիմումի/գրանցման/սպասման ցուցակի վարձեր: Անկախ դպրոցների հիմնական ֆինանսավորումը կատարվում է դպրոցական վաուչերների միջոցով, որոնք համայնքների կողմից վճարվող ներդրումներն են այն վայրերում, որտեղ աշակերտները բնակվում են: Վաուչերները հաշվարկվում են յուրաքանչյուր աշակերտի համար և համապատասխանում են համայնքի կողմից բյուջեով սահմանված ծախսերին՝ մեկ աշակերտի համար «հիմնական գումար», որը ներառում է ուսուցում, ուսումնական նյութեր, սնունդ, համապատասխան գույք, աշակերտների առողջություն և այլն: Շատ համայնքներում բյուջեի մի մասը նախատեսված է սոցիալ-տնտեսական վերաբաշխման (կառուցվածքային հիմնադրամ) և հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտների համար, ինչպես հանրային դպրոցներում, այնպես էլ հատուկ կրթության կարիքներ ունեցող երեխաների դպրոցներում (լրացուցիչ ֆինանսավորում) [3, 74]: Դպրոցները նաև ստանում են տարբեր տեսակի պետական դրամաշնորհներ, որոնք վերջին տարիներին աճել են: Բազմաթիվ պետական ֆինանսավորման ձևեր հասանելի են տարբեր արտադպրոցական գործունեության և փորձարարական նախագծերի համար: Այս տեսանկյունից կարևոր է քննարկել արդարության սկզբունքը պետական գումարների բաշխման հարցում: Մտացվում է, որ հանրային դպրոցները ստանում են ֆինանսավորում քաղաքապետարանից, որը մի շարք այլ առաջնահերթություններ ունի: Պետական դպրոցներն ունեն պարտավորություններ թե՛ ծրագրային տեսանկյունից, թե՛ դպրոցի կառավարման ու նպատակների, թե՛ ֆինանսական հարցերում և հաշվետու են քաղաքապետարաններին:

Մյուս կողմից անկախ դպրոցներն այս բոլոր պարտավորություններից ազատված են, սակայն գտնվում են Դպրոցների տեսչության խիստ հսկողության տակ, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր տարի իրականացվող ստուգումները չանցնելու դեպքում դպրոցը ենթակա է փակման:

Թեև ֆինանսական տեսանկյունից անկախ դպրոցները ավելի շահեկան դիրքում են, բայց փաստացի հաշվետու են հանրակրթության վերահսկման ավելի բարձր աստիճանին, ինչն իր հերթին նպաստում է ֆինանսական վերաբաշխման խիստ մեխանիզմների մշակմանը և թափանցիկությանը հաշվետվողականության գործընթացում: Պետական դպրոցներն իրենց ուղղակի ֆինանսավորմամբ և կենտրոնացված բյուջետային գործընթացներով կարող են ապա-

հովել ֆինանսական կայունություն և արդարություն ռեսուրսների հատկացման հարցում տարբեր դպրոցների ու տարածաշրջանների միջև: Այնուամենայնիվ, նրանց սահմանափակ ֆինանսական ինքնավարությունը երբեմն կարող է խոչընդոտել հատուկ կարիքներին արձագանքելուն կամ նորարարական ծրագրերում ներդրումներ կատարելուն: Անկախ դպրոցները՝ իրենց վաուչերային հիմքով ֆինանսավորմամբ և ավելի մեծ ֆինանսական ինքնավարությամբ, հաճախ կարող են ավելի ճկուն ու արձագանքող լինել տեղական կարիքներին և առաջնահերթություններին: Այնուամենայնիվ, խիստ վերահսկողությունը անկախ դպրոցների համար բաց է պահում երկարաժամկետ կայունության հարցը:

Շվեդիայի հանրային և անկախ դպրոցների կրթական արդյունքները

Շվեդիայի հանրային և անկախ դպրոցները պարտավոր են հետևել ազգային կրթական չափանիշներին ու ուսումնական ծրագրերին՝ ապահովելով կրթական հիմնարար մակարդակ բոլոր աշակերտների համար: Այնուամենայնիվ, անկախ դպրոցներն ունեն ավելի մեծ ճկունություն ուսումնական ծրագրերի մշակման և մանկավարժական մոտեցումների հարցում՝ թույլ տալով նրանց մշակել մասնագիտացված ծրագրեր և բավարարել հատուկ ուսումնական կարիքներն ու հետաքրքրությունները [5, 81]:

Հանրային դպրոցները, որպես կանոն, հետևում են ստանդարտացված ազգային ուսումնական ծրագրին, որտեղ դասագրքերը և ուսումնական նյութերը համապատասխանում են ազգային ուղեցույցներին: Մի կողմից այս մոտեցումը խթանում է հետևողականություն և արդարություն տարբեր դպրոցներում և տարածաշրջաններում, մյուս կողմից՝ այն կարող է նաև սահմանափակել դպրոցների կարողությունները հարմարեցնելու ուսումնական ծրագիրը տեղական պայմաններին կամ իրականացնելու մանկավարժական նորարարական մոտեցումներ: Ի տարբերություն հանրային դպրոցների՝ անկախ դպրոցները հաճախ ունեն ավելի շատ ազատություն իրենց ուսումնական ծրագիրը մշակելու և մասնագիտացված կամ մանկավարժական այլընտրանքային մոտեցումներ ներառելու համար՝ խթանելով ավելի մեծ բազմազանություն և արձագանք աշակերտների կարիքներին ու հետաքրքրություններին: Այս ճկունությունը նաև պահանջում է որակի ապահովման ուժեղ մեխանիզմներ՝ ապահովելով բոլոր անկախ դպրոցների համապատասխանությունը ազգային չափանիշներին:

Անդրադառնալով ծնողների կողմից անկախ դպրոցներ ընտրելու դրդապատճառներին և քննենք դրանք ակադեմիական արդյունքների համատեքստում: Ծնողների կողմից անկախ դպրոց ընտրելու հիմնական պատճառները հետևյալն են.

- բոնության/բուլինգի բացակայությունն ավելի բարձր է գնահատվում անկախ դպրոց ընտրած ծնողների կողմից, քան համայնքային դպրոցում երեխաներ ունեցող ծնողների կողմից: Բոնության/բուլինգի բացակայությունը և

դասարանում կարգուկանոնի առկայությունը այն կարևորագույն գործոններն են, որոնք ուղղորդում են ծնողներին դպրոց ընտրելու ժամանակ,

- դասավանդման մեթոդները մեծ կարևորություն ունեն անկախ դպրոցներում սովորող երեխաների ծնողների համար, և այն, որ դպրոցը հոգ է տանում աշակերտների մասին, և առաջարկվում է աջակցություն խնդիրների դեպքում: «Դպրոցի ուսուցման մեթոդը համապատասխանում է իմ երեխայի ուսուցման ձևին» պնդումը ավելի բարձր գնահատական է ստացել անկախ դպրոցներում սովորող երեխաների ծնողների կողմից (8.0՝ համեմատած 7.0-ի հանրային դպրոցների համար 1-10 սանդղակով իրականացված գնահատման դեպքում),

- անկախ դպրոցներում սովորող երեխաների ծնողները դպրոցին մոտ լինելու հանգամանքը այնքան էլ բարձր չեն գնահատում, որքան հանրային դպրոցներում սովորող երեխաների ծնողները: Նրանք նաև ավելի քիչ կարևորություն են տալիս իրենց երեխայի ընկերների ընտրությանը դպրոցի հարցում, քան հանրային դպրոցներում սովորող երեխաների ծնողները:

- Ջ. Գիոտայի, Դ. Բեռգբի և Ի. Էմանուելսոնայի հետազոտությունների համաձայն՝ սոցիալ-տնտեսական ցածր պայմաններ ունեցող ծնողները դպրոց ընտրելիս ավելի մեծ ուշադրություն են դարձնում ակադեմիական որակին, քան այնպիսի գործոններին, ինչպիսիք են բարօրությունը, մինչդեռ ավելի բարձր վարձատրվող ծնողները հակված են առաջնահերթություն տալու միջավայրի գործոններին, ինչպես, օրինակ, աշակերտների միջև հարաբերությունները, բարօրությունը և այլն [5, 87-88]:

Անկախ կամ հանրային դպրոց ընտրելու պատճառները կարող են հիմնված լինել նաև աշակերտների առանձնահատկությունների, հատուկ կարիքների առկայության և նեղ մասնագիտական հետաքրքրությունների վրա: Անկախ դպրոցները, ունենալով ավելի մեծ ճկունություն կրթական ծրագրի և հավելյալ ծրագրերի իրականացման մեջ, ակադեմիական արդյունքների տեսանկյունից մեծ տարբերություն չեն գրանցում հատկապես ազգային ավարտական ու միջազգային քննություններում:

Մեր կողմից դիտարկվել են անկախ դպրոցների ակադեմիական արդյունքները, որոնք ներկայացված են 2021-2022 ուսումնական տարվա համար: Այս տվյալները դիտարկել ենք հանրային դպրոցների նույն ուսումնական տարվա տվյալների հետ համեմատության մեջ [1, 46]: Տվյալների վերլուծությունը ավագ դպրոցի աշակերտների շրջանում, որոնք քննություն են հանձնել «Շվեդերեն», «Անգլերեն», «Մաթեմատիկա» առարկաներից, ցույց է տալիս չնչին տարբերություն՝ հոգուտ անկախ դպրոցների: Այսպես, օրինակ, անկախ դպրոցների աշակերտների 89.6 %-ը ստացել է «Մաթեմատիկա» առարկայի անցողիկ գնահատական, ինչը հանրային դպրոցների դեպքում կազմում է 82.9%: «Անգլերեն» առարկայի դեպքում ցուցանիշը անցողիկ գնահատական ստացող աշակերտների համար անկախ դպրոցների դեպքում կազմում է 98.8 %, իսկ հանրային

դպրոցների համար 96.5 %-ն է ստացել անցողիկ գնահատական, իսկ հանրային դպրոցների պարագայում՝ աշակերտների 94 %-ը:

Թեև հանրային դպրոցներում աշակերտների թիվն ավելի փոքր է, կրթական ծրագիրը հարմարեցված է աշակերտներին, ուսուցիչների վերապատրաստումները նույնպես անհատականացված են, դպրոցներում լայնորեն կիրառվում են նորարար մոտեցումներ ու տեխնոլոգիաներ, սակայն ակադեմիական արդյունքի վրա մեծ ազդեցություն չի գրանցվում: Մի կողմից այս իրավիճակի բացատրություն կարող են դառնալ անկախ դպրոցների խիստ վերահսկողությունն ու պետական չափանիշներին հետևելը հավելյալ կրթական ծանրաբեռնվածությանը զուգահեռ: Մյուս կողմից պատճառ կարող է լինել չափից շատ նորարար մեթոդների ու նոր մոտեցումների վրա ուշադրությունը դպրոցների ու ուսուցիչների կողմից: Հանրային ու անկախ դպրոցների ընտրությունն ու ակադեմիական արդյունքների ցուցիչները համեմատության մեջ դիտարկելով՝ առանձնացնեք սեգրեգացիայի առկայությունը Շվեդիայի հանրակրթության համակարգում: Դպրոցի ընտրության իրավունքը և անկախ դպրոցների կառավարման ու բովանդակային ոլորտներում ճկունությունը Կայսա Յանգ Հանսենի և Յան-Էրի Գուստաֆսոնի կողմից նշվում են որպես կրթական սեգրեգացիայի պատճառ [6, 3]: Մեր համոզմամբ Շվեդիայի հանրակրթության ոլորտում, չնայած կրթական չափանիշների համարժեքությանը անկախ ու հանրային դպրոցների համար, տարածաշրջանային սեգրեգացիան մեծ տեղ ունի: Այն պայմանավորված է հանրային դպրոցներում սոցիալ-տնտեսական տարբեր իրավիճակ ունեցող ընտանիքների երեխաների ներգրավմամբ, որոնք բնակվում են դպրոցին մոտ: Անկախ դպրոցի պարագայում չկա աշխարհագրական սեգրեգացիա, բայց արտահայտված է սոցիալ-տնտեսական սեգրեգացիան: Անկախ և հանրային դպրոցների ակադեմիական տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Շվեդիայի հանրակրթության մոդելում ակադեմիական չափանիշների և վերջնարդյունքների տեսանկյունից հավասարություն կա, ինչը դժվար է ասել աշխարհագրական, սոցիալ-տնտեսական և միջավայրային տեսանկյունից:

Մյուս տեսանկյունից անկախ դպրոցները ավելի մեծ հնարավորություն ունեն սեգրեգացիայի հետ աշխատելու, քանի որ տարածաշրջանային և պետական կախվածություն չունեն այն համայնքներից, որտեղ գտնվում են և հավելյալ ծրագրերի իրականացման հնարավորություն ունեն՝ ի տարբերություն հանրային դպրոցների, որոնց շնորհիվ կարող են նպաստել սոցիալ-տնտեսական և միջավայրային սեգրեգացիայի վերացմանը:

Եզրակացություններ

Իրականացնելով Շվեդիայի հանրային և անկախ դպրոցների կառավարման համակարգերի համեմատական վերլուծություն՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

1. Հանրային դպրոցներն իրենց ստանդարտացված կառուցվածքով և ազգային իշխանություններին հաշվետվողականությամբ կարող են ապահովել որոշակի աստիճանի հավասարություն և հետևողականություն տարբեր տարածաշրջաններում ու համայնքներում: Այնուամենայնիվ, նրանց կառավարման բյուրոկրատական բնույթը երբեմն կարող է հանգեցնել անձկունության և տեղական կարիքներին ու առաջնահերթություններին արձագանքելու բացակայության:

2. Անկախ դպրոցներն իրենց ավելի մեծ ինքնավարությամբ և ճկունությամբ հաճախ ավելի լավ կարող են հարմարվել իրենց աշակերտների ու համայնքների հատուկ կարիքներին՝ խթանելով նորարարություն և մանկավարժական մոտեցումների բազմազանություն: Մյուս կողմից նրանց ապակենտրոնացված բնույթը կարող է նաև հանգեցնել որակի տատանումների ու պոտենցիալ մարտահրավերների՝ համապատասխանություն ազգային չափանիշներին և հաշվետվողականության պահանջներին:

3. Թե՛ անկախ, թե՛ հանրային դպրոցները վերահսկվում են պետական մարմինների կողմից, բայց ներքին հաղորդակցության և կառավարման տեսանկյունից գործընթացները անկախ դպրոցներում ավելի պարզեցված են: Անկախ դպրոցները չեն պայքարում քաղաքապետարանի ծրագրային և ֆինանսական առաջնահերթությունների դեմ. դրանք գտնվում են անընդհատ հսկողության տակ և պարբերաբար կարիք են ունենում դիմելու պետական դրամաշնորհների՝ դպրոցների գործունեությունը պահպանելու նպատակով: Եվ, ի վերջո, դպրոցները կառավարման տեսանկյունից տարբերվում են թե՛ տնօրենների ընտրության, թե՛ ուսուցիչների հավաքագրման և թե՛ ղեկավարման ինքնավարության մակարդակով: Կառավարման համակարգերի թվարկված տարբերությունները բերում են մի շարք մարտահրավերներ:

4. Պետական դպրոցներն իրենց ուղղակի ֆինանսավորմամբ ու կենտրոնացված բյուջետային գործընթացներով կարող են ապահովել ֆինանսական կայունություն և արդարություն ռեսուրսների հատկացման հարցում տարբեր դպրոցների ու տարածաշրջանների միջև: Այնուամենայնիվ, նրանց սահմանափակ ֆինանսական ինքնավարությունը երբեմն կարող է խոչընդոտել հատուկ կարիքներին արձագանքելուն կամ նորարարական ծրագրերում ներդրումներ կատարելուն:

5. Անկախ դպրոցներն իրենց վաուչերային հիմքով ֆինանսավորմամբ և ավելի մեծ ֆինանսական ինքնավարությամբ հաճախ կարող են ավելի ճկուն և արձագանքող լինել տեղական կարիքներին և առաջնահերթություններին:

6. Թեև անկախ դպրոցներում աշակերտների թիվն ավելի փոքր է, կրթական ծրագիրը հարմարեցված է աշակերտներին, ուսուցիչների վերապատրաստումները նույնպես անհատականացված են, դպրոցներում լայնորեն կիրառվում են նորարար մոտեցումներ ու տեխնոլոգիաներ:

7. Կրթության հավասարության և արդյունավետության տեսանկյունից դպրոցի ընտրությունը կարող է ազդեցություն ունենալ ակադեմիական և առ-

հասարակ կրթական վերջնարդյունքների վրա: Այսպիսով՝ կրթական արդյունքները և դպրոցի ընտրությունը մեկը մյուսից բխող երևույթներ են, որոնց ընթացքում հնարավոր է դպրոցների միջև սեգրեգացիայի առաջացում:

COMPARATIVE ANALYSIS OF PUBLIC AND INDEPENDENT SCHOOL MANAGEMENT SYSTEMS IN SWEDEN

Harutyunyan Nazik

*Doctor of Pedagogical Sciences, Professor
Yerevan State University,
Republic of Armenia
nazik.harutyunyan@ysu.am*

Aleksanyan Mariam

*Ph.D. student, Chair of Pedagogy
Yerevan State University,
Republic of Armenia
mariam.aleqsanyan@ysu.am*

Summary

In Sweden, alongside public schools, independent schools have expanded in recent decades, and today nearly 20% of compulsory school students attend independent schools. This article presents a comparative analysis of the management systems of public and independent schools in Sweden. It explores differences in governance, funding, school leadership, teacher recruitment, and academic outcomes. While both school types follow national standards, independent schools operate with greater autonomy and flexibility. The article highlights how school choice and governance structures contribute to educational segregation, despite comparable academic performance. The findings emphasize the need to balance autonomy, equity, and accountability in Sweden's education system.

Keywords: Sweden, public schools, independent schools, management system, funding, school leadership, academic outcomes, educational segregation, autonomy, accountability, educational equity.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СИСТЕМ УПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННЫМИ И НЕЗАВИСИМЫМИ ШКОЛАМИ В ШВЕЦИИ

Арутюнян Назик

*Доктор педагогических наук, профессор
Ереванский государственный университет,
Республика Армения
nazik.harutyunyan@ysu.am*

Александрян Мариам

*Аспирант кафедры педагогики,
Ереванский государственный университет,
Республика Армения
mariam.aleqsanyan@ysu.am*

Аннотация

В Швеции, наряду с государственными школами, в последние десятилетия расширились и независимые школы, и сегодня почти 20% учащихся обязательных школ посещают независимые школы. В этой статье представлен сравнительный анализ систем управления государственными и независимыми школами в Швеции. В ней рассматриваются различия в управлении, финансировании, руководстве школой, наборе учителей и академических результатах. Хотя оба типа школ следуют национальным стандартам, независимые школы работают с большей автономией и гибкостью. В статье подчеркивается, как выбор школы и структуры управления способствуют образовательной сегрегации, несмотря на сопоста-

вимую академическую успеваемость. Результаты подчеркивают необходимость баланса между автономией, равенством и подотчетностью в системе образования Швеции.

Ключевые слова: Швеция, государственные школы, независимые школы, система управления, финансирование, руководство школами, академические результаты, образовательная сегрегация, автономия, подотчетность, образовательное равенство.

Օգտագործված գրականության ցանկ

1. The Independent School Sector. A Report from the Swedish Association of Independent Schools. Lucas Ledin, Stockholm, 2023
2. Regulation and Funding of Independent Schools. Lessons from Sweden, Gabriel Heller Sahlgren, Fraser Institute, Toronto, 2016.
3. Why Do Associations Run Independent Schools in Sweden, and Why Does It Matter? Hallonsten, O., Sevelin, E., Scandinavian Journal of Public Administration, 27(2), Gothenburg 2023
4. Education, equality, and efficiency – An analysis of Swedish school reforms during the 1990s. Anders Björklund, Per-Anders Edin, Peter Fredriksson, Alan Krueger, Uppsala 2004
5. Changes in individualized teaching practices in municipal and independent schools 2003, 2008 and 2014 - student achievement, family background and school choice in Sweden. Joanna Giotaa, Daniel Berghb, Ingemar Emanuelssona, Nordic Journal of Studies in Educational Policy Vol. 5, No. 2, 78–91, Stockholm 2019
6. Causes of educational segregation in Sweden – school choice or residential segregation. Kajsa Yang Hansen, Jan-Eric Gustafsson, Educational Research and Evaluation, New-York 2016

Получено: 02.05.2025

Рассмотрено: 04.05.2025

Принято: 08.05.2025

Received: 02.05.2025

Reviewed: 04.05.2025

Accepted: 08.05.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

АКТУАЛЬНЫЕ ВЫЗОВЫ И ПЕРСПЕКТИВЫ УНИВЕРСИТЕТСКОГО ИСТОРИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ БЕЛАРУСЬ

Скок Вероника

*Кандидат исторических наук, доцент,
Заведующий лабораторией историко-обществоведческого
и социокультурного образования научно-исследовательского центра
Государственного учреждения образования «Академия образования»,
Республика Беларусь
veronikaskok1104@gmail.com
<https://orcid.org/0009-0009-6511-7131>*

Аннотация

Իրանի Իսլամական Հանրապետության կրթադաստիարակչության նախարարության և նրան ենթակա նահանգային ու մայրաքաղաքային համապատասխան կառույցների կողմից կազմակերպվող առարկայական օլիմպիադաները նպատակ ունեն հայտնաբերելու շնորհալի, տաղանդավոր և ստեղծագործական կարողություններ ունեցող սովորողներին, զարգացնելու ուսումնական առարկաների նկատմամբ հետաքրքրությունն ու նպաստելու կայուն գիտելիքների ստացմանը: Դրանք նաև հնարավորություն են ընձեռում հավաստիանալու, որ իրանական, այդ թվում՝ հայկական դպրոցներում ուսանում են, հիրավի, օրինակելի աշակերտներ:

Իր հերթին հայության համար էլ այն դիտարկվում է որպես միջոց վստահելու սեփական համայնքային կառույցների առաջնորդությունը երիտասարդությանը: Այդ առումով գնահատանքի է արժանի մանկավարժների անուրանալի դերը, որոնց անմնացորդ ջանքերով աշակերտները նվաճում են նոր բարձունքներ:

Իրանական կրթական միջավայրում, որտեղ տիրապետող է իսլամական կրոնական գաղափարախոսությունը, դյուրին չէ հայ դպրոցի սեփական ավանդույթները զարգացնելը: Ահա թե ինչու փորձ է արվում սինթեզել հայկական կրթական բաղադրատարրերը իրանականին:

Հայ տաղանդավոր սաների մասնակցությունը դպրոցական առարկայական օլիմպիադաներում և առաջատար տեղեր զբաղեցնելը համայնքի գործունեության համար ունեն կարևոր նշանակություն: Այդկերպ հայությունն ընդգծում է իր ներկայությունը իրանական միջավայրում, ընդհանրապես, և կրթության բնագավառում, մասնավորապես: Ակնհայտ է, որ ոգևորիչ ազդեցությունից բացի՝ առարկայական օլիմպիադաներում հաղթանակները նոր լիցքեր են հաղորդում մատաղ սերնդին, կարևորում համայնքի իրական ներուժը, ինչպես նաև, որ շատ կարևոր է, բացահայտում է աշակերտների մտավոր ընդունակությունները:

Այսպիսով՝ Իրանի ընդհանուր բնակչության, այդ թվում՝ փոքրամասնությունների, կրթության մակարդակի հետ համեմատելու դեպքում 2000-ական թթ. հայ համայնքում տեխնիկական ու բնագիտական մասնագիտություններով դիմորդների թիվը և դպրոցական առարկայական օլիմպիադաներում տաղանդավոր սաների գրանցած արդյունքները վկայում են կրթության բարձր որակի մասին:

Բանալի բառեր՝ առարկայական օլիմպիադաներ, իրանահայ դպրոց, աշակերտ, համալսարան, կրթության որակ, տաղանդավոր սաներ, քննություն, մրցույթ:

Համառոտ ներածական: Դարեր շարունակ իրանահայ համայնքի գոյատևման հարցում իր առանցքային դերն է ունեցել դպրոցը: Հայտնի է, որ իրանահայ բազմաթիվ անվանի գործիչներ իրենց կրթությունը ստացել են ավանդական ուսումնական ծրագրեր ունեցող հայ դպրոցում: Սակայն առանձին պատմափուլերում, իրանական հասարակական-քաղաքական տարբեր հանգամանքներով պայմանավորված, ի հայտ են եկել նոր խնդիրներ, որոնք դարձել են մարտահրավեր, երբեմն էլ նաև նոր հնարավորություն հայ դպրոցի գոյատևման համար:

XXI դարի առաջին տասնամյակում Իրանի հայ համայնքը կանգնեց ժողովրդագրական լուրջ խնդիրների առջև, ինչն էլ առաջնահերթ իր արձագանքները գտավ կրթության բնագավառում: Այդուհանդերձ, իրանահայ դպրոցը փորձում է համաիրանական առարկայական օլիմպիադաներում հայ աշակերտների գրանցած արդյունքները դարձնել իր որակի ցուցիչ:

Ավելին, իսլամական կրոնական գաղափարախոսությամբ առաջնորդվող իրանական կրթական միջավայրում հայ դպրոցը դարձել է նաև, պայմանական ասած, միջկրոնական երկխոսության մի հարթակ, որտեղ սովորում են հայ աշակերտներ՝ սակավաթիվ հայ և հիմնականում պարսիկ ուսուցչական կազմի ու տնօրինության ղեկավարության ներքո:

Հիմնախնդիրը Իրանահայ դպրոցի և նրա տաղանդավոր սաների՝ առարկայական օլիմպիադաներում գրանցած արդյունքների լուսաբանման կարևորությունն է՝ որպես համայնքի կրթության որակի ցուցիչ:

Հետազոտության նպատակն է որոշակիացնել իրանական կրթության բովանդակության տիրույթում հայ տաղանդավոր սաների նվաճումները, դիտարկել նրանց դերակատարությունը հայ համայնքի կրթության զարգացման և առաջադիմության մեջ:

Հետազոտության նորությունը: Վիճակագրական բազմաթիվ տվյալների հիման վրա առաջին անգամ քննվում են առարկայական օլիմպիադաներում հայ շնորհալի աշակերտների գրանցած արդյունքները՝ որպես իրանահայ դպրոցի կրթության որակի ցուցիչ (2000-2008 թթ.):

Ուսումնասիրության տեսական ու գործնական նշանակությունը: Հոդվածը տեսական ծավալուն տեղեկատվություն և վիճակագրական վերլուծություն է պարունակում, այն կարող է ծառայել հիմնախնդրին առնչվող ուսումնասիրությունների համար:

Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն: Հայ տաղանդավոր սաների՝ առարկայական օլիմպիադաներում գրանցած արդյունքները վկայում են իրանահայ դպրոցի կրթության որակի վերաբերյալ, որն արժի ուսումնասիրել որպես առանձին թեմա: Տարբեր հարցերի լուսաբանման շրջանակում հիմնախնդրին առնչվող որոշակի թեմաներ քննության առարկա են դարձրել

պրոֆ. Վ. Բայբուրդյանը, Գ. Իսկանդարյանը, ինչպես նաև Է. Բաղդասարյանը, Գ. Բադալյանը և ուրիշներ:

Հիմնական նյութի շարադրանքը: Ակնարկ իրանական արդի կրթության համակարգի ձևավորման շուրջ: Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարությունը գնահատանքի է արժանացնում Իրանի հայության նվիրվածությունը իրանական հայրենիքին, որի հյուրընկալ հողի վրա հայերն ապրել են դարեր ի վեր, անխաթար պահպանելով իրենց լեզուն, մշակույթը, իրենց ողջ արժեքային համակարգը [8, էջ 59]:

Իրանական արդի կրթության համակարգի ձևավորման հիմքերում ընկած է 1979 թ. Իսլամական հեղափոխության արժեհամակարգը: Իսլամական հեղափոխությունից հետո կրթության մակարդակը զգալիորեն բարձրացել է, բնակչության 90 %-ը գրաճանաչ է [1, էջ 338-339]: Դեռևս Իսլամական հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնին հռչակել է Իրանում բնակվող բոլոր ազգությունների իրավահավասարության և կրոնական կոնֆեսիաների ազատության մասին [12, էջ 28]: Իսկ 1980 թ. զարնանից սկսվեց բուհերի իսլամական ծրագրի իրականացումը [5, էջ 719]: Այդ պայմաններում ԻԻՀ Մահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ընդգծվեց, որ ԻԻՀ կառավարությունը պարտավոր է ապահովել բոլորի համար և բոլոր մակարդակներով անվճար ուսուցում [11, էջ 32, 47]:

Վերոնշյալ գործընթացների համատեքստում հարկ է նշել, որ մի առիթով Խոմեյնին արտահայտվել է կրոնական փոքրամասնությունների՝ ի դեմս հայերի, մասին հետևյալ կերպ. «...*Ես լրիվ երաշխավորում եմ հայերի ապահովությունը որպես Իրանի արժանավոր և իրավահավասար քաղաքացիներ*» [7, էջ 21]: Ակնհայտ է, որ Իրանի երբեմնի հոգևոր առաջնորդի խոսքը հայ համայնքում առաջնահերթ ընկալվում էր ոչ միայն անվտանգային, այլ նաև կրթական միջավայրում բարեփոխումների և սոցիալական արդարության հաստատման կարևոր երաշխիք:

Տասնյակ միլիոնավոր շահառուներ ունեցող իրանական կրթության համակարգում իր համեստ տեղն ունի իրանահայ դպրոցը: Հատկանշական է, որ լինելով կրոնական փոքրամասնության դպրոց, իր թվի համեմատ համաիրանական տիրույթում ժամանակ առ ժամանակ գրանցել է հաջողություններ՝ չնայած այն իրողությանը, որ համայնքի իրավական կարգավիճակը պայմանավորում է որոշակի պայմաններ սոցիալ-կրթական ոլորտում ևս [13, էջ 206-229]: Իրանահայ դպրոցը եղել է նաև հայկական այլ համայնքների ուշադրության կենտրոնում: Հետաքրքրական է, որ դեռևս 1950-ական թթ. մարոկկահայ համայնքի կողմից «Կահիե դյու սյուդին» ամսագրի մեկ տարվա բաժանորդագրություն են ապահովել նաև Թեհրանի հայկական դպրոցներին [2, էջ 67]:

Իրանահայ դպրոցին և նրա սաների առաջադիմությանը անդրադարձ կատարելիս անհրաժեշտ ենք համարում ներկայացնել վիճակագրական որոշ տվյալներ: 2000-ական թթ. կեսերին արտագաղթի պատճառով իրանահայ կրթության համակարգում առաջացան նոր խնդիրներ [14, էջ 159-182]: 2005-

2006 ուսումնական տարում Իրանում դպրոց է հաճախել 15 միլիոն, այդ թվում՝ 8000 իրանահայ աշակերտ: 2005 թ. դրությամբ Թեհրանում որպես իրանահայության խտացված համայնք գործել է 21 հայկական դպրոց (տարրական, ուղեցույց ու միջնակարգ)՝ շուրջ 6000 հայ աշակերտներով: Փաստորեն՝ անգամ մեկ տարվա կտրվածքով տեղի է ունեցել աշակերտների թվի զգալի նվազում:

Թեև ԻԻՀ Մահմանադրությամբ ուսումն անվճար պետք է լինի բոլորի համար, սակայն տնտեսական դժվարությունների պատճառով դա դեռ չի իրականացվում: Թեհրանի Հայոց թեմի կրթական խորհուրդը իր տարեկան բյուջեի և տարբեր հիմնադրամների միջոցներով կարողանում է օգնել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին [15, էջ 193-204]:

Հարկ է նշել, որ իրավական առումով Իրանում «հայկական դպրոց» գոյություն չունի, քանի որ երկրի բոլոր դպրոցները դե յուրե ընդգրկված են ժողովրդական կրթության ընդհանուր համակարգում: Գոյություն ունեն միայն պետական դպրոցներ, որոնցում կազմակերպված է հայ ընտանիքների (որպես կրոնական փոքրամասնություններին պատկանող հավաքականության) երեխաների ուսուցումը: Ընդ որում, հանրակրթական առարկաների գծով ուսուցման ողջ գործընթացը տեղի է ունենում պարսկերենով (ֆարսի) [4, էջ 95]: Ավելին՝ իրականում այդ դպրոցներն այնքանով են հայկական, որ այնտեղ անցնում են հայագիտական մեկ-երկու առարկա [9, էջ 214]:

Իրանահայ համայնքի ներուժը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրա ձեռքբերումները գիտակրթական ոլորտում: 2000 թ. մայիսի 17-19-ին Սպահանի համալսարանի համակարգչագիտության ֆակուլտետում տեղի ունեցած գիտաժողովում 618 գիտական հոդվածից ընդունվել է 302-ը, որից վեցի հեղինակներն են զինծառայող և Օդուժի համալսարանի դասախոս Արթին Տ. Մինասյանը՝ 1, Թեհրանի համալսարանի դասախոս, դոկտոր Կարո Լուկասը՝ 3 և Թեհրանի Պոլիտեխնիկական համալսարանի դասախոս, դոկտոր Գևորգ Մելիք-Կարապետյանը՝ 2 հոդվածներով: Ակնհայտ է, որ հայ աշակերտների համար ուղենշային են դարձել այդ ձեռքբերումները, ինչ-որ տեղ էլ նպաստել մասնագիտական կողմնորոշման համար:

2001-2002 ուսումնական տարում Իրանի քաղաքներում բազմաթիվ մասնաճյուղեր ունեցող Իսլամական Ազատ համալսարան է ընդունվել 300 հայ, որից 68-ը՝ «Հայոց լեզու և գրականություն», 34-ը՝ «Օտար լեզուներ», 12-ը՝ «Հաշվապահություն», «Առևտրի վարչարարություն», 7-ը՝ «Քիմիա», 4-ը՝ «Ֆիզիկա», 2-ը՝ «Քաղաքագիտություն» մասնագիտությամբ: Ակնհայտ է, որ առաջին 68 ընդունվողների դեպքում անհամեմատ մեղմ է եղել մրցույթը, քանի որ նրանք եղել են լեզվակիր, մինչդեռ մրցութային պայմանները փոխվում են մյուս մասնագիտությունների դեպքում:

Առարկայական օլիմպիադաներում հայ աշակերտների գրանցած արդյունքները որպես իրանահայ դպրոցի կրթության որակի ցուցիչ: Գիտության նկատմամբ իրանահայության սերն ու հետաքրքրությունը միշտ էլ տարածված են եղել: Այդ մասին են վկայում գիտության ու կրթության այնպիսի գործիչներ, ինչ-

պիսիք են՝ մաթեմատիկոսներ, պրոֆ. Սմբատ (Ալեքսանդր) Աբյանը, դոկտորներ Վազգեն Ավանեսյանը, Մկրտիչ Թումանյանը, Ալեքսանդր Բաղդյանը, անվանի աստղաֆիզիկոս, պրոֆ. Ալենուշ Տերյանը, սեյսմոլոգ, դոկտոր Մեղրակ Աբդալյանը, Ահարոն Առաքելը և շատ ուրիշներ [3, էջ 214-231: 10, էջ 85-130]:

Դժվարին պայմաններում էլ համայնքը չի կորցրել տաղանդաշատ սաներին, որոնք կարող են հավակնել դառնալու անվանի գիտնականների հետևորդը: 2000 թ. Թեհրանի հայոց «Արաքս» դպրոցի շրջանավարտ և համայնքի հաջողակ 1 ուսանող մասնակցել է «Քիմիա» առարկայի համալսարանական օլիմպիադային և գրավել 3-րդ տեղը, իսկ 2001 թ. գրավել է համաիրանական օլիմպիադայի առաջին տեղը՝ պարզևատրվելով երկու գնահատագրերով:

2003 թ. 14-ամյա 1 աշակերտ Թեհրանի 6-րդ շրջանի միջոցառական օլիմպիադայի մրցույթում գրավել է առաջին տեղը: Տվյալ դեպքում չի հստակեցվում, թե հաղթողը որ առարկայից է հաջողություն գրանցել, սակայն առաջին տեղը զբաղեցնելու փաստն ինքնին խոսուն է:

Միջնակարգ դպրոցներից բացի՝ Իրանի մայրաքաղաքում կամ նահանգների կենտրոններում գոյություն ունեն նաև շնորհալի և տաղանդավոր երեխաների դպրոցներ [6, էջ 224]: 2005 թ. Թեհրան նահանգի նշված դպրոց հաճախելու քննություններում 1 հայ աշակերտուհի հաջողություն է ունեցել: Պետք է նշել, որ այդ քննությունները կազմակերպվում են տարեկան մեկ անգամ՝ 2 փուլով: Ուսումնական տարվա սկզբում դպրոցների կողմից 5-րդ դասարանի 19-ից բարձր միջին ունեցող աշակերտների ցանկը ուղարկվում է Բացառիկ ընդունակությունների զարգացման կազմակերպությանը (առավել հայտնի է «Նոդեթ» (NODET [National organization for development of exceptional talents]) [16] անգլերեն հապավմամբ): 2005 թ. 5-րդ դասարանի ավելի քան 1,5 մլն աշակերտից շուրջ 166 հազարը գրանցվել է 1-ին փուլի քննություններին, որից շուրջ 14 հազարին հաջողվել է անցնել 2-րդ փուլ: Արդյունքում ընտրվել է 5904 սան՝ Իրանի 44 քաղաքների «Նոդեթի» 105 դպրոցներում սովորելու համար: Ընդ որում, Թեհրանի աղջկանց ուղեցույց դպրոցի օղակում 1-ին փուլում հաջողել է 490 աշակերտուհի, որից ընտրությամբ 2-րդ փուլ է անցել 165-ը: Այսպիսով՝ այդ քննությունը կարողացել է հաղթահարել ընդհանուր մասնակիցների միայն 4 %-ը: Ընդ որում, 2003 թ. միջնակարգի քննություններում հաջողություն է գրանցել «Արաքս» դպրոցի աշակերտուհի Արազ Խուդաբախշյանը:

Հարկ է նշել, որ 2005 թ. թավրիզահայ 1 երիտասարդ մասնակցել է Պետական համալսարանի տնտեսաերկրաբանական բաժնի դոկտորանտուրայի ընդունելության քննություններին և մեծ թվով մասնակիցների մեջ գրավել 1-ին տեղը Արևելյան Ատրպատական նահանգի ամբողջ տարածքում: Հատկանշական է, որ նա եղել է Իրանում դոկտորանտուրայի միակ ուսանողը, որն ընդունվել է՝ սովորելու այդ ճյուղում: Փաստորեն՝ հայազգի որոշ դիմորդներ սահմանել են դժվարին արգելքները հաղթահարելու նոր նշաձողեր:

Դպրոցականների առարկայական օլիմպիադաների հաջորդ տեղում կարելի է դիտարկել «Մաթեմատիկա» առարկան: 2006 թ. մայիսի 19-ին տեղի է ունե-

ցել Թեհրանի մակարդակով տղաների ուղեցույց օղակի մաթեմատիկայի առաջին օլիմպիադան, որի ընթացքում 7248 մասնակցից «Ի. Սահակյան» դպրոցի 2 աշակերտ զբաղեցրել է 1-ին ու 2-րդ տեղերը:

Հետաքրքրական է, որ մրցույթներ են կազմակերպվել նաև հենց հայկական դպրոցներում, որտեղ ևս գրանցվել են ակնհայտ հաջողություններ: 2007 թ. «Մարիամ» հաստատության աղջիկների դպրոցի միջնակարգ բաժնի երրորդ դասարանի ավարտական ամենաաղավար համարվող ֆիզիկա առարկայի քննությունից հայ աշակերտուհիների 100 %-ը հաջողություն է ունեցել:

2008 թ. Հայ ազգային «Սահակյան» ոչ շահադիտական դպրոցի 6 աշակերտ, որից միջնակարգ օղակի առաջին դասարանի 3, երկրորդ դասարանի՝ 2 և ուղեցույց օղակի 1 աշակերտ գրանցել է հաջողություններ՝ Իրանի «Թարբիաթե մոդառես» համալսարանի կազմակերպած գիտական օլիմպիադայում «Ֆիզիկա», «Քիմիա», «Մաթեմատիկա» առարկաներից: Հարկ է նշել, որ այն լրացուցիչ ուսումնառությանը հատկացված միակ համալսարանն է և հիմնադրվել է Իսլամական Հանրապետության հիմնադիր Իմամ Խոմեյնիի հրամանով 1982 թ. [17]:

2008 թ. հունիսի 20-ին Թեհրանի հայոց «Սահակյան» դպրոցի ուղեցույց և միջնակարգ օղակների 16 աշակերտ քննություն է հանձնել «Մաթեմատիկա» առարկայից և մասնակցել «Թարբիաթե մոդառես» համալսարանի կազմակերպած գիտական օլիմպիադաների եզրափակիչ քննությանը և գրանցել նշանակալի հաջողություններ: Միջնակարգ օղակի առաջին դասարանի աշակերտ Մարիո Անդրեասյանը, մասնակցելով ֆիզիկայի օլիմպիադային, իր տարեկիցների մեջ երկրի մակարդակում գրավել է 2-րդ տեղը: Հարկ է նշել, որ հայ սաների ցուցաբերած հաջողությունների մասին գրել է «*Շափարաթ*» օրաթերթին իրանական 1387 թ. թիր ամսի 10-ի թիվ 1427 համարում: Փաստորեն, իրանական մամուլի դիտակից չի վրիպել հայ սաների տաղանդը:

Եզրակացություն: Այսպիսով՝ 2000-2008 թթ. դպրոցական առարկայական օլիմպիադաներում հայ տաղանդավոր սաների գրանցած արդյունքներն Իրանի հայ համայնքի գործունեության համար ունեն կարևոր նշանակություն: Հենց դա է իրանահայ դպրոցի կրթության որակի ցուցիչը: Այդկերպ ուրվագծվում են համայնքի ապագա սոցիալական կառուցվածքը, մասնագիտական ներուժը, ավելին՝ հայությունն ընդգծում է իր ներկայությունը իրանական միջավայրում, ընդհանրապես, և կրթության բնագավառում, մասնավորապես:

ПРЕДМЕТНЫЕ ОЛИМПИАДЫ КАК ПОКАЗАТЕЛЬ КАЧЕСТВА ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ШКОЛЕ ИРАНА (2000-2008 ГГ.)

Մկրտչյան Կարեն

Кандидат исторических наук,

Институт истории НАН РА

Республика Армения

K86mkrtyan@gmail.com

Аннотация

Предметные олимпиады, организуемые Министерством образования Исламской Республики Иран и соответствующими провинциальными и столичными учреждениями,

находящимися в его подчинении, направлены на выявление учащихся с одаренными, талантливыми и творческими способностями, на развитие интереса к учебным предметам и содействие получению устойчивых знаний. Они также дают возможность убедиться, что в иранских, в том числе армянских школах, учатся образцовые подростки.

В свою очередь, для армян это рассматривается как способ доверить молодежи руководство собственными общинными структурами. В этом плане заслуживает признания неоспоримая роль педагогов, благодаря неустанным усилиям которых ученики достигают новых высот.

В иранской образовательной среде, где преобладает исламская религиозная идеология, нелегко развивать собственные традиции армянской школы. Вот почему предпринимается попытка в какой-то степени синтезировать армянские образовательные компоненты с иранскими.

Участие талантливых армянских учеников и занятие ими лидирующих мест на школьных предметных олимпиадах имеет важное значение для деятельности общины. Таким образом, армянство подчеркивает свое присутствие в иранской среде в целом и в образовательной сфере в частности. Очевидно, что помимо воодушевляющего эффекта, победы на предметных олимпиадах придают новый импульс молодому поколению, подчеркивают реальный потенциал сообщества, а также то, что очень важно раскрывает интеллектуальные способности. Таким образом, при сравнении с уровнем образования населения Ирана в целом, включая меньшинства, в 2000-х гг. количество абитуриентов по техническим и естественнонаучным специальностям в армянской общине и результаты, достигнутые талантливыми учениками в школьных предметных олимпиадах, свидетельствуют о высоком качестве образования.

Ключевые слова: предметные олимпиады, школа иранских армян, ученик, университет, качество образования, талантливые ученики, экзамен, конкурс.

SUBJECT OLYMPIADS AS AN INDICATOR OF THE QUALITY OF EDUCATION IN THE ARMENIAN SCHOOL OF IRAN (2000-2008)

Mkrtchyan Karen

Ph.D. of History,

Institute of History of the NAS of the RA

Republic of Armenia

K86mkrtchyan@gmail.com

Summary

The subject Olympiads, organized by the Ministry of Education of the Islamic Republic of Iran and the relevant provincial and metropolitan institutions under its jurisdiction, are aimed at identifying students with gifted, talented and creative abilities, developing interest in academic subjects and promoting the acquisition of sustainable knowledge. They also provide an opportunity to make sure that real, exemplary teenagers study in Iranian, including Armenian schools.

For Armenians, this is seen as a way to entrust the youth with the leadership of their own community structures. In this regard, the undeniable role of teachers deserves recognition, thanks to whose tireless efforts students reach new heights.

In the Iranian educational environment, where Islamic religious ideology prevails, it is not easy to develop one's own traditions of the Armenian school. That's why an attempt is being made to synthesize Armenian educational components with Iranian ones.

The participation of talented Armenian students and their leading positions in school subject Olympiads is important for the community's activities. Thus, Armenians emphasize their presence in the Iranian environment in general and in the educational sphere in particular. It is obvious that, in addition to the inspiring effect, victories at subject Olympiads give a new boost to the younger

generation, emphasize the real potential of the community, and also, most importantly, reveal intellectual abilities.

Thus, when compared with the educational level of the Iranian population as a whole, including minorities, in the 2000s, the number of applicants in technical and natural sciences in the Armenian community and the results achieved by talented students in school subject Olympiads indicate a high quality of education.

Keywords: *Subject Olympiads, Iranian Armenian school, student, university, quality of education, talented students, exam, competition.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Badalyan G., Iran. Hanragitaran, Yer., 2011, heghinakayin hrat., 879 ej:
2. Bakhchinean A., Hayeryn Afrikayum, patmabanasirakan usumnasiruthyun, Yer., HH GAA patmuthyan instit., 2024, 292 ej:
3. Baghdasaryan E., Iranahay hamaynqi amboghjakan hamarot patmuthyun, 2 hatorov, ht. 1, Toronto, 2015, ej. 214–231:
4. Bayburdyan V., Irani hay hamaynqy. Ardi himnakhndirner, Yer., «Lusakn», 2013, 212 ej:
5. Bayburdyan V., Irani patmuthyun, Yer., YePH hrat., 2024, 784 ej:
6. Bayburdyan V., Irann aysor (Teghekatu), Yer., 1999, 224 ej:
7. Bayburdyan V., Iranakan heghapokhutyany fenomeny, «Irani Islamakan heghapokhutyany hamematakan konteqstum», mijazgayin gitazhoghovi hodvatcneri yev zekuytsneri zhoghovatsu, Yer., YePH hrat., 2011, 59 ej:
8. Bayburdyan V., IHH-um HH tarber tarineri despanneri yeluythner, Hayastan–Iran. Patmakan antsyaly yev nerkan, mijazgayin gitazhoghovi nyuter: hodvatcneri zhoghovatsu, HH GAA arevelagituthyan instit., 2022, 396 ej:
9. Iskandaryan G., *Hayastan–Iran haraberuthyunery Hayastani ankakhuthyan dzerkberumic heto (1991–2014)*, Yer., 2016, 418 ej:
10. Iranahayots hanragitaran, Yer., «VMV-Print», 2012, 462 ej:
11. Irani Islamakan Hanrapetuthyan Sahmanadruthyun (himnakan orenq), thargmanets - Garnik Badalyany, (voch pashtonakan thargmanutyun), Tehran, «Nairi» hrat., 2005, 124 ej:
12. Hovhannisyan N., Iran. Ayathollah Khomeynii darashrjany, Yer., «Zangak-97» hrat., 2004, 112 ej:
13. Mkrtchyan K., Irani pashtonakan dirqoroshumy hay hamaynqi iravakan kargavitchaki hartsum yst iranakan pashtonakan aghbyurneri, Otari aghbyurnery haykakan gaghthavayreri masin, mijazgayin gitazhoghovi nyuter, prak B, Yer., HH GAA patmuthyan instit., 2022, ej. 206–229:
14. Mkrtchyan K., Iranahayuthean tegasharzhery yev dranc arandznayatkuthiunnery 21-rd dari skzbin, «Haykazean hayagitakan handes», Beyruth, 2024, ht. 44/1, ej. 159–182:
15. Mkrtchyan K., Irani hayots themeri gortcuneuthyan hartsi shurj, Hayots yekeghetsu dery petakanuthyan bacakayuthyan paymannerum, gitazhoghovi nyuteri zhoghovatsu, Yer., «Lusakn», 2025, ej. 193–204:

Tcanothagruthyun

16. NODET, <https://iransummerschool.com/en/about/NODET/> (ditumy – 19.02.2025):

17. Irani hamalsarannery, https://parstoday.ir/hy/radio/programs-i15283-%D4%BB%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8_ (ditumy – 19.02.2025):

Получено: 19.03.2025

Received: 19.03.2025

Рассмотрено: 24.03.2025

Reviewed: 24.03.2025

Принято: 08.04.2025

Accepted: 08.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License

ԲԱԺԻՆ 8. ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 8: ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ШКОЛЫ И ПЕДАГОГИЧЕСКОЙ МЫСЛИ
SECTION 8: HISTORY OF ARMENIAN SCHOOL AND PEDAGOGICAL THOUGHT

UDC 37(09) (479.25) + 2- 47(479.25)
DOI 10.46991/educ-21st-century.v7.i1.344

**ՄԱՆԿԱՎԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՉՄԱՆ ՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Բաղդասարյան Վիկտորիա

հայցորդ

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն

victorya.baghdasaryan@ysu.am

<https://orcid.org/0000-0002-6224-4938>

***Անձը պատրաստել անձեն անդին արժեքի մը համար,
անձը կազմել անձեն վեր նպատակի մը որպես սպասարկու:
Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջին***

Ամփոփում

Համառոտ ներածություն: Դարեր շարունակ մանկավարժական գործընթացի կազմակերպման հարցում ուսուցչի դերակատարությունն ու կարևորությունն անհերքելի փաստ են եղել, ինչն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը, ուստի ուսուցչի կերպարի վերափոխման, կատարելագործման, անձնային ու մասնագիտական բարձր հատկանիշներով օժտված մանկավարժի, նրա գործառույթների վերանայման անհրաժեշտություն կա: Ուսուցման և դաստիարակության ոչ մի տեխնոլոգիա չի կարող օգնել ուսուցչին արդյունավետ իրականացնելու իր մասնագիտական գործունեությունը, եթե նա ինքն անձնային և մասնագիտական առումով պատրաստ չէ դրան: Պատահական չէ, որ բոլոր ժամանակներում մեծ նշանակություն է տրվել ուսուցչի անձին և մասնագիտությանը, իսկ այսօր՝ նորագույն տեխնոլոգիաների և արհեստական բանականության առկայության ու զարգացման պայմաններում, առավել քան կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես XXI դարի մարտահրավերներին դիմակայող, բարոյական արժեհամակարգի կրող ու փոխանցող, հետազոտող ու նորարար մանկավարժի:

Առիթնաղ ուսուցչի և հետազոտող մանկավարժի նորարար ու ինքնատիպ կերպար է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Վեհափառը, որն իր ողջ մանկավարժական գործունեության ընթացքում եղավ և մնաց այնպիսին, ինչպիսի սերունդ որ պատրաստեց իր մանկավարժական բեղուն գործունեության ընթացքում: Իր բազմաբովանդակ կյանքի մեծագույն մասը նվիրաբերելով մանկավարժի շնորհակալ ու անձնագոհ առաքելությանը՝ Վեհափառ հայրապետը սահմանեց՝ ինչպիսին պիտի լինեն իրական մանկավարժն ու ուսուցիչը՝ հիմքում դնելով ինքնազարգացման ու անձնամղիմի կարևորագույն բաղադրիչները:

Բանալի բառեր՝ ուսուցում, դաստիարակություն, նորարար ուսուցիչ, հետազոտող մանկավարժ, ուսուցչի անձնային որակներ, մասնագիտական կոմպետենցիաներ:

Ուսումնասիրության հիմնախնդիրը բազմալստակ ուսուցիչ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի՝ ուսուցչի կոչման ու առաքելության մասին մոտեցումների ու հայացքների վերահանումն ու արժևորումն է:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Առաջին անգամ Վեհափառ հայրապետի մանկավարժական գործունեությանն անդրադարձել է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանն իր «Հայ մանկավարժ կաթողիկոսներ» գրքում՝ արժևորելով մեծանուն կաթողիկոսին որպես մանկավարժ:

Հիմնախնդրի վերաբերյալ կան տարբեր ժամանակաշրջանների ուսումնասիրություններ, որոնցում անդրադարձ է կատարվել հիմնահարցին տարբեր տեսակետներով ու վերլուծական մոտեցումներով: Նրանց թվում են Խ. Աբովյանը, Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսը, հոգեբան Կ. Ռոջերսը, ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Զ. Դեուլեր և ուրիշներ:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել մանկավարժ-կաթողիկոս Գարեգին Առաջինի՝ որպես նորարար ու առինքնող ուսուցչի մոտեցումները ուսուցչի դերի վերաբերյալ, դիտարկել ուսուցչի անձնային ու մասնագիտական որակները, կարևորել դրանց դերն ու նշանակությունը ուսուցչի աշխատանքային գործունեության ոլորտում:

Հետազոտության նորույթն այն է, որ նորովի են ներկայացվում և արժևորվում մանկավարժ-կաթողիկոս Գարեգին Վեհափառի մոտեցումներն ու հայացքները ուսուցչի կոչման ու առաքելության վերաբերյալ:

Հիմնական նյութի շարադրանք: Մանկավարժ-կաթողիկոս Գարեգին Առաջինի՝ ուսուցչի կոչման ու առաքելության մասին մոտեցումների ու հայացքների ընկալման համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել հենց Վեհափառ հայրապետի մանկավարժական գործունեությունն ու բացահայտել Նորին Սրբությանը որպես ուսուցիչ:

Ինչպիսի՞ն էր նա՝ ուսյալ ու բանիմաց ուսուցիչը: Իր մեջ խտացնելով հորից ստացած «արժանապատվության, շիտակության, բարոյական սկզբունքներին և հայրենիքին հավատարիմ լինելու զգացումն ու մորից սովորած բարությունն ու մեծահոգությունը»՝ սկսնակ ուսուցիչը պետք է որ կարողանար ըստ արժանվույն դրսևորվել: Ո՞վ կարող է առավել դիպուկ բնութագրել Գարեգին կաթողիկոս-մանկավարժին, մտավորականին, քան նա, ում բախտ է վիճակվել աշակերտելու «սուր, արթուն, թափանցող ու պայծառ միտք» ունեցող ուսուցչին: Դրա վառ ապացույցը նրա աշակերտների՝ ի խորոց սրտի ասված խոսքերն են, որոնք բնութագրում են Գարեգին ուսուցչին:

«Ամեն մտաւորական ուսուցիչ չէ եւ ամէն ուսուցիչ մտաւորական չէ: Գարեգին Վեհափառը երկուքն ալ եղաւ գերազանցօրէն, ամբողջականօրէն, վաւերականօրէն: Ներամիտփ, ինքնակեդրոն, ինքնանպատակ մտաւորական չէղաւ երբեք: Իր առածը, իր ունեցածը ուրիշներուն բաշխելու բնատուր կոչումը իրագործեց բարձրագոյն աստիճանի նախանձախնդրութեամբ, նուիրումով ու ապրու-

մով», – այսպես է արտահայտվել իր սիրելի ուսուցչի մասին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն [2, էջ 133]:

Անդրադառնալով Գարեգին Վեհափառի մանկավարժական գործունեությանը՝ պրոֆեսոր Ն. Հարությունյանը գրում է. «Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելուց հետո Վեհափառ հայրապետը շարունակեց իր մանկավարժական գործունեությունը Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում՝ իր հարուստ փորձն ու գիտելիքները փոխանցելով ճեմարանի սաներին, նրանց մեջ սերմանելով անմահության այն վեհ գաղափարը, որի գիտակցումն ու նրա հանդեպ ունեցած մեծ հավատը վճռորոշ ու ճակատագրական դեր են ունեցել հայ ժողովրդի կյանքում» [6, էջ 80]:

Վ. Դևրիկյանը գրում է. «Վեհափառը ուսուցիչ էր, երբ գահակալն էր Կիլիկյան Աթոռի: Վեհափառն այսօր ևս ուսուցիչ է: Չնայած բազմազբաղ և ծանրաբեռն առօրյային՝ նա ոչ միայն դասավանդում է Հոգևոր ճեմարանում, այլև պարբերաբար հանդիպում կիրակնօրյա և հանրակրթական դպրոցների ուսուցիչների հետ՝ բուն դասավանդմանը զուգընթաց ներկայացնելով և իր ըմբռնումները ուսուցչի կոչման ու առաքելության մասին» [7, էջ 34]:

Գառնիկ Անանյանը գրում է. «Մեծ մանկավարժ է Վեհափառը: Եթե նույնիսկ շրջանցենք այն պարագան, որ հոգևոր առաջնորդը դերի ու կոչումի բերումով ուսուցիչ է արդեն, ամբողջ ազգի ուսուցիչ, նեղ մասնագիտական առումով ևս ծանրակշիռ է նրա վաստակը: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի Դպրեվանքի սանը տասնամյակներ շարունակ եղել է ուսումնական նույն հաստատության հսկիչ, տեսչի օգնական, տեսուչ, դասախոս, անտարակույս շարունակելու է մնալ նրա հովանավորը» [8, էջ 180]:

Պարզ ձևի մեջ խոր բովանդակություն դնող, խոսքի, մտքի ու գրի եռամիասնությունն իր մեջ զուգորդած ուսուցիչն ամբողջ կյանքում սեր ու գործվանք հաղորդեց իր սաներին, շրջապատին, նույնիսկ անծանոթներին:

Կարևորելով դպրոցի և եկեղեցու միասնականության և միևնույն նպատակին միտված լինելու գաղափարը, ընդգծելով դպրոցի՝ որպես անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում առաջնային դեր ունեցող սոցիալական ինստիտուտի կարևորությունը՝ Վեհափառ հայրապետը գրում է. «Դպրոցը որպէս մարդու պատրաստութեան, կազմաւորման գլխաւորագոյն հաստատութիւն՝ առանձնայատուկ տեղ պէտք է ունենայ հոգեւոր հովիւին կեանքին եւ գործունեութեան մէջ: Դարերու աւանդութեամբ նուիրագործուած իրողութիւն մըն է, որ Հայ Դպրոցը անբաժան եղած է Հայաստանեայց Եկեղեցիէն: Պատմական պրպտումներու եւ վերլուծումներու կարիք չկայ՝ հաստատելու թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծոցէն ծնաւ Հայ Դպրոցը եւ անոր առաջին ուսուցիչները եղան Հայաստանեայց Եկեղեցւոյ սպասաւորները վարդապետ (=ուսուցիչ) բառով նկարագրուած» [5, էջ 75]՝ միևնույն ժամանակ նշելով, թե վարդապետներն էին առաջին ուսուցիչները, որոնք իրենց վրա վերցրին կրթելու և դաստիարակելու վեհ առաքելությունը՝ չնայած պատմականորեն ավանդված ազգային բարդ ճակատագրին:

Մանկավարժ-կաթողիկոսի համար միշտ հարց էր, թե ինչու Մեսրոպ Մաշտոցը, որն արքունի դպիր էր, իր փառավոր պաշտոնը թողեց և դարձավ հոգևորական: Պատասխանը գտավ մեկ բառի մեջ՝ ճգնություն: Ճգնությունը հոգու պրկումն է՝ գաղափարական հեռանկարով և բուռն աշխատանքի, աննկուն ճիգի վճռականությամբ: Մանկավարժ-կաթողիկոսը ճգնության իմաստը գտնում է հետևյալ բանաձևման մեջ. «Անձը պատրաստել անձեն անդին արժեքի մը համար, անձը կազմել անձեն վեր նպատակի մը որպես սպասարկու» [9, էջ 111]:

Մեսրոպյան ոճով ճգնությունն է մարդակերտման արվեստը, առանց որի սին ու անիմաստ է մեր ազգապահպանման համակարգը: Այս է մարդակերտման և հայակերտման առաքյալի՝ Գարեգին մանկավարժ-կաթողիկոսի բանաձևումը: Ակնբախ ու վարակիչ է Վեհափառի ճգնությունն իր ողջ կյանքի ընթացքում:

Մանկավարժի մասնագիտության էությունը և կարևոր առանձնահատկությունն այն է, որ նրա գործունեության առարկան սովորողի ուսումնակրթական գործունեությունն է, մանկավարժի ու դաստիարակողի գործունեությանը փոխկապակցվածությունը, իսկ այդ գործունեության արդյունքները փոխապայմանավորված են: Այսօրինակ փոխգործունեությունն ուսուցչի ինքնակայացման և աշակերտների նպատակաուղղված զարգացման գործընթացների միաձուլումն է, որում առաջնային է սովորողների կրթվածության, դաստիարակվածության, զարգացվածության ընդհանուր մակարդակը:

Ուսուցիչ-կաթողիկոսն առավել կարևորում էր ուսուցման գործընթացի երկկողմանիությունը: Ուսուցչից սովորողին և սովորողից ուսուցչին փոխերգործուն ուսուցման սկզբունքն ապահովում է սուբյեկտ-սուբյեկտային հարաբերություններ, որոնք ուսուցման կազմակերպման գործընթացի արդյունավետ իրականացման նախապայման են:

Կարևորելով փոխներգործուն ուսուցման սկզբունքը՝ Վեհափառը գրում է. «Հայրապետական մեր պարտավորությունը գիրի լեզվով կատարված աշխատանք մըն է, իմացական հաղորդության արարք մը, որուն իմաստն ու արժեքը կախում չունին միայն տվողեն, մատուցվողեն, մատուցողեն, այլ նաև ընդառաջողեն, ընդունողեն և հակադրողեն» [9, էջ 114]:

Այս տեսակետից ելնելով՝ բազմավաստակ մանկավարժը կարևորել է ուսուցչի հետևյալ գործառնությունները.

- ուսուցողական, որն ուղղված է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակների, խնդիրների որոշակիացմանը և դրանց հասնելու մեթոդների, միջոցների ընտրությանը, ինչի համար հիմք են ուսուցման սկզբունքներն ու մեթոդները: Նա գրում է. «Կարգը, դասավորումը, հարակցումը առարկաներու և արարքներու, ամենեն կենսական օրենքներեն մեկն է ստեղծագործության և մարդկային կյանքին: Հանեցե՛ք կարգը տիեզերքի նյութեղեն աշխարհեն, քառսը կունենաք ձեր առջև, վանեցեք կարգն ու օրենքը մարդկային կյանքեն, կույր և նույնիսկ քանդիչ ընթացքի մը կվերածվի մարդու հավաքական ապրումը այս երկրագունդին վրա» [9, էջ 114]:

- դաստիարակչական, որն ուղղված է սովորողների աշխարհայացքի, արժեքային կողմնորոշումների, մտածական գործընթացների, հոգևոր-բարոյական, ֆիզիկական որակների, գեղագիտական ճաշակի, էկոլոգիական մշակույթի, իրավական ու տնտեսագիտական գիտակցության, աշխատանքային կարողությունների ձևավորմանը:

Նա գրում է. «Դաստիարակությունը ոչ թե ապրուստ ճարելու միջոցի մը ձեռքբերումն է, այլ անկէ անդին կեանքը ապրելու այնպիսի եղանակի մը իւրացումը մարդուն կողմէ, որուն հոմանիշը երջանկութիւն է, երկրնքի արքայութիւն մարդոց կեանքին մէջ: Բնականօրէն այստեղ մասնագիտական իմաստով յատուկ դասընթացքի հարց չի դրուիր: Մէկը իրաւաբանութիւն կուսանի, մէկը ճարտարապետութիւն, մէկը բժշկութիւն, մէկը փիլիսոփայութիւն, մէկը պատմութիւն, եւ այլն: Ասոնք կապուած չեն այն դաստիարակութեան հետ, որ պարզ մարդը նպատակ ունի անոր երջանկութեան ձեռքբերման էական նպատակին մէջ: Այստեղ հարցը կեանքի արուեստի ուսուցումն է, որուն մէջ այնքան որոշադրիչ նշանակութիւն եւ դեր ունին կրթութեան եւ դաստիարակութեան էութային հարցերը, ինչպէս սովոր են հիմա մեր հայրենիքին մէջ ըսել հիմնահարցերը» [3, էջ 119]:

Ըստ Գարեգին ուսուցչի՝ մանկավարժի գործունեությունը պետք է հիմք ընդունի տեսականի և գործնականի միջև կապի սկզբունքը՝ բերելով օրինակներ, հիմնավորելով իր խոսքն ու գործնականում ցույց տալով կիրառությունը:

Մանկավարժ-կաթողիկոսի կարծիքով ուսուցչի բերած օրինակները երևակայական կամ հեքիաթային չպիտի լինեն, այլ արդի կյանքի մարտահրավերների հետ փոխկապակցված: Ուսուցիչը պետք է քաջատեղյակ լինի մեր պատմության, մշակութային և քաղաքակրթական նվաճումներին՝ հեշտությամբ կարողանա դրանք կապել ներկային և ճանապարհի հարթել աշխատանքի, նվիրումի ու զոհաբերության:

Սոսկ դասագրքի նյութով չբավարարվող հմուտ մանկավարժն ինքն էլ հաճախ էր դուրս գալիս դասագրքի նեղ սահմաններից ու աշակերտներին մղում հետազոտելու ու ստեղծագործելու: «Աշակերտին առջեւ կը բանար մտածողութեան եւ վերլուծումի լայն հորիզոններ: Դէմքերը, դէպքերը ու գաղափարները միշտ կը փորձէր առնչել այսօրուան կեանքին... Դասարանին մէջ Գարեգին Վեհափառը իր տինամիք ներկայութեամբ ու գրաւիչ դասաւանդութեամբ սիրելի էր բոլոր աշակերտներուն համար: Միայն դասաւանդող ու դասախօսող ուսուցիչ չէր Վեհափառը, այլ նաեւ ու մանաւանդ հետեւող, հետապնդող ու պահանջող: Դասարան մուտք կը գործէր միշտ թեւին տակ գիրքերով եւ ամպիոն կը բարձրանար լեցուն, յստակ ու պայծառ մտքով» [2, էջ 134-135]:

Ուսուցչի մասնագիտության մէջ Վեհափառը կարևորում էր առաջնահերթը, կարևորը երկրորդականից գատորոշելու կարողությունը: Ըստ նրա. «Հարկ է կարողանալ ընդհանուրը տարբերել մասնավորից: Այս սկզբունքով եմ կողմնորոշվել շատ վճիռներ ընդունելիս: Արժեքների սանդղակում գատորոշելու զգացողություն է անհրաժեշտ ունենալ: Նա, ով որոշում է կայացնում, պետք է կարողանա լավ տեսնել ամբողջը և ընտրել այն, ինչը կարևոր է» [4, էջ 25]:

Սովորողի համար, ըստ բազմափորձ մանկավարժ-կաթողիկոսի, չափազանց ուսուցողական և դաստիարակչական նշանակություն ունի ուսուցչի օրինակելի կերպարը:

Ինչպես իրավացիորեն նշել է պրոֆեսոր Ն. Հարությունյանը. «Վեհափառ հայրապետը մասնագիտականից առավել մեծ տեղ է տալիս ուսուցչի անձնային որակներին և միանգամայն իրավացիորեն գտնում է, որ ուսուցչի համար ամենակարևորը նվիրումն է գործին, որն իր մեջ ներառում է հետևյալ բաղադրատարրերը. 1. ապրում, 2. նախանձախնդրություն, 3. ազգային շահի գիտակցում» [6, էջ 85]:

Իր աշակերտներից շատերը գուցե և չդառնային հոգևորականներ, եթե նրանց ուսուցիչն ու ուղենիշը չլինեք Գարեգին մանկավարժ-կաթողիկոսը:

Խոսելով ուսուցչի անձնային որակների մասին՝ Վեհափառ հայրապետը չէր կարող չանդրադառնալ նաև ուսուցչի հեղինակությանը (լիդերության մասին է խոսքը), այն հեղինակության, որը մարդու անձից է ճառագայթում: Այդ հեղինակությունը մարդը ձեռք է բերում իր ծառայությամբ: Ճշմարտության վկայությունից ու որակյալ ծառայությունից ձևավորված հեղինակությունն է, որ ընդունվում է սիրով և իր ետևից կարող է տանել իր համակիրներին, այս դեպքում՝ սաներին [4, էջ 159]:

Մանկավարժ-կաթողիկոսն իր պատկերացումն ուներ աշխատանքի ու աշխատասիրության մասին: Ըստ նրա՝ «աշխատանքը սրբության ճամփան է, գործունեությունը՝ մարդու ճշմարիտ ինքնարտահայտությունը, իսկ անգործությունը, ծուլությունն ու դատարկապորտությունը ժխտումն են մարդու իսկության և կոչումի» [9, էջ 113]:

Աշխատասիրությունը համարելով ուսուցչի կարևորագույն բնութագրիչներից մեկը՝ նա հաճախ է ցավով խոսել մեր ժողովրդին պակասող աշխատանքային էթիկայի մասին: Բերելով բազում ուրիշ ազգերի ու ժողովուրդների օրինակներ, որոնք նվազ օժտված էին տոհմային առաքինություններով, սակայն կազմակերպված, համակարգված և լարված ու որակյալ աշխատանքի ավանդույթ ձևավորելով՝ գերակշիռ դեր են զբաղեցրել ներկա աշխարհում: Իր առաջնային պարտականություններից մեկը Գարեգին մանկավարժ-կաթողիկոսը համարում էր իրեն վստահված աշակերտներին այդ «բնավորությամբ կրթելը» [9, էջ 113]:

Խոսելով երեխայի ներաշխարհի, նրան հետաքրքրող երևույթների, մանկավարժությունից պահանջվող խնդիրների, ինչպես նաև աճող սերնդի հոգևոր ու կրոնական դաստիարակության կարևորության մասին՝ Նորին Սրբությունը նշում է, որ մանկանը կրթելու ամենակարևոր գործոնը սերն է և սեփական անձը որպես դասագիրք ունենալը: Իր հոգում սեր չունեցող ուսուցիչը երբեք չի կարող լավ մանկավարժ լինել և ըստ այդմ էլ անկարող է հասարակության համար պիտանի մարդ դաստիարակել: Նա շեշտում է, որ մանկավարժությունը երբեք չի կարելի ուսուցանել: Վերջինս նման է Աստծուց տրված շնորհին: Ամեն մի ուսուցիչ, որ հանձն է առնում կրոն դասավանդել, պետք է այն համեմի կյան-

քով: Ցանկացած մի խոսք կամ արտահայտություն, որ վերցվում է Աստվածաշունչ մատյանից, նախևառաջ պետք է երեխան հասկանա կյանքում եղող որևէ միջադեպի զուգակցումով: Այլապես դրանք զուտ գաղափարներ կմնան երեխայի համար, որոնք նա պարտավորված պիտի լինի գոց հիշել [10, էջ 102]:

Վեհափառ Հայրապետն իր աշխատություններում անդրադառնում է նաև ուսուցչի բարոյական կերպարի աղավաղման հարցին: «Հայ ուսուցիչն այսօր դարձել է արհեստաւոր: Կը սպասէ զանգակին, որ հնչէ, որպէսզի երթայ ուսուցչարան եւ խօսի, թէ այդ օրը ինչ նորույթ կայ շուկայի մէջ: Դասարանէն դուրս ուսուցչութիւնը մեծաւ մասամբ իր հարազատ կոչումով չապրուիք մեր կեանքին մէջ: Այսօր մենք փայլ կը փնտրենք. լոյսը մորցած ենք, շպարը կը փնտրենք. ներքին գեղեցկութիւնը մորցած ենք, կեղեւը աւելի կը խօսի, քան աւիշը, երեւնալը աւելի կ'արժէ, քան ըլլալը» [1, էջ 254]:

Պրոֆեսոր Ն. Հարությունյանը փաստում է, թէ այսօր լուրջ ու մտահոգիչ հանգամանք է մեր հասարակության ու ժողովրդի համար մեր մատաղ սերնդի վաղվա օրը ճիշտ կերտելու սուրբ գործը, որի հանդեպ ցանկացած թերացում ու ոտնձգություն անթույլատրելի են և դատապարտելի [6, էջ 86]:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ Գարեգին Վեհափառը կարևորում էր ուսուցիչ-աշակերտ հարաբերության փոխգործակցային բնույթը, որտեղ աշակերտը դառնում է ակտիվ մասնակից՝ իր մտածումներով, հարցումներով, փորձով: Նա դեմ էր դասավանդման ավանդական մեթոդներին: Նրա համոզմամբ ուսուցումը հնարավոր է միայն սիրով և աշակերտի ներաշխարհը զգալու ունակությամբ:

Գարեգին Ա-ն ուսուցչին համարում էր ոչ միայն գիտելիք տվող, այլև կենդանի օրինակ:

Լինելով օրինակելի և նորարար ուսուցչի առինքնող տիպար՝ Գարեգին Վեհափառը հստակ ուղենիշներ է դնում՝ ինչպիսին պիտի լինի իրական մանկավարժն ու ուսուցիչը՝ հիմքում դնելով անձնանվիրումի և ինքնազարգացման հիմնաքարերը: Նրա համար օրինակելի ուսուցիչը մարդասիրական բարձր հատկանիշներով օժտված, բարոյական արժեքամակարգի կրող, հետազոտող, ինքնակրթվող և ինքնակատարելագործվող, աշխատասեր ու ընթերցասեր անձն է՝ բազմակողմանիորեն զարգացած ու մասնագիտական հարուստ պաշարով զինված:

Նա՝ որպես ուսուցչի օրինակելի կերպար, ուղենիշ է բոլոր նրանց համար, ովքեր դասարանից ու դասագրքից այն կողմ ուսուցչությունն ուզում են վերածել նվիրական կոչումի և կյանքի մնայուն արժեքի: Չենթարկվելով ժամանակի ու տարածության օրինաչափություններին՝ Գարեգին Առաջին Վեհափառը հավերժ կմնա հայ մանկավարժության պատմության էջերում որպես բոլոր ժամանակների փայլող աստղերից մեկը:

PEDAGOGUE-CATHOLICOS KAREKIN I'S APPROACHES AND VIEWS ON THE TEACHER'S VOCATION AND MISSION

Baghdasaryan Victoria
Ph.D. student,
Yerevan State University,
Republic of Armenia,
victorya.baghdasaryan@ysu.am

Summary

The role and significance of the teacher in organizing the educational process have been indisputable, and this remains relevant today. In light of dynamic societal changes, there is a growing need to reconsider and reshape the image of the teacher—developing professionals endowed with high personal and professional qualities. No educational technology can support a teacher in effectively fulfilling their professional duties if the teacher is not personally and professionally prepared.

It is no coincidence that in all historical periods, the figure and profession of the teacher have been highly valued. Today, in the era of emerging technologies and artificial intelligence, the teacher's role is even more vital—as a moral guide, a carrier and transmitter of values, a researcher, and an innovator capable of responding to the challenges of the 21st century.

A striking embodiment of an inspiring educator and innovative researcher is His Holiness Karekin I, Catholicos of All Armenians, who remained true to the values he instilled in his students throughout his prolific pedagogical career. Dedicating the greater part of his rich and meaningful life to the grateful and selfless mission of a pedagogue and mentor, the Supreme Patriarch defined the essence of a true educator and teacher, grounding it in the fundamental components of self-development and devotion.

Keywords: education, upbringing, innovative teacher, researcher-pedagogue, personal qualities of the teacher, professional competencies.

ПОДХОДЫ И ВЗГЛЯДЫ ПЕДАГОГА-ПАТРИАРХА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I ПО ВОПРОСУ МИССИИ И ПРИЗВАНИЯ УЧИТЕЛЯ

Багдасарян Виктория
Соискатель,
Ереванский государственный университет,
Республика Армения,
victorya.baghdasaryan@ysu.am

Аннотация

На протяжении веков важная роль и высокое назначение учителя в организации педагогического процесса были неоспоримым фактом, и сегодня это не утратило своей актуальности. В условиях стремительных общественных изменений существует необходимость в переосмыслении и совершенствовании образа современного учителя, который должен обладать высокими личностными и профессиональными качествами. Ни одна педагогическая технология не может быть эффективной, если сам учитель не готов к своей профессиональной деятельности, как в личностном, так и в профессиональном плане.

Неслучайно во все времена большое значение придавалось личности учителя, его моральному облику и профессиональной подготовке. В условиях развития современных технологий и искусственного интеллекта особенно важна роль учителя как носителя и передатчика нравственных ценностей, исследователя и новатора, способного противостоять вызовам XXI в.

Яркий пример новаторского и самобытного образа, вдохновляющего своих последователей учителя и исследователя-педагога, – Католикос Всех Армян Гарегин I, который на протяжении всей своей педагогической деятельности оставался верен идеалам, которым он сам следовал и прививал новым поколениям своих учеников. Посвятив большую часть

своей насыщенной событиями и делами жизни благодарной и самоотверженной миссии педагога-наставника, Святейший Патриарх всей своей деятельностью показал, каким должен быть истинный педагог и учитель, положив в основу важнейшие компоненты самосовершенствования и самоотверженности.

Ключевые слова: образование, воспитание, новатор-учитель, исследователь-педагог, личностные качества учителя, профессиональные компетенции.

Օգտագործված գրականության ցանկ

1. Garegin A. Kathoghikos, «Khorhe yev mtir...», S. Ejmiatcin, 1995 th., 287 ej:
2. Garegin I: Havatqi yntcan, khmb. Iris Papazyani, Kanada, 2009 th., 320 ej:
3. Garegin A. Kathoghikos Amenayn Hayots, Keanqy i haghorduthean ynd Astutcoy, Křonakan, Astuatcabanakan Yev Hayagitakan erker, London, 2015 th., 500 ej:
4. Garegin A. Amenayn Hayots Kathoghikos, Zrucner Jovanni Guaytayi het, (erkrord hratarakuthyun), S. Ejmiatcin, 2001 th., 291 ej:
5. Garegin A. Kathoghikos Amenayn Hayots, Dzernark hovuakan astuatcabanuthyan, Mayr Athor Surb Ejmiatcin, 1996 th., 176 ej:
6. Harutyunyan N., Bisharyan H., «Hay mankavarzh kathoghikosner», Yerevan, 2012 th., 104 ej:
7. Vardan Devrikyan, Vehapar Hayrapeti gahakaluthyan mek tarin, «Ejmiatcin» amsagir, S. Ejmiatcin, 1996 th., D:
8. Ananyan G., Gitnakann u mankavarzhy, «Ejmiatcin» amsagir, 1995 th.:
9. Nshanavor tchemaranakanner, prak 1, Ejmiatcin: Mayr Athor Surb Ejmiatcin, 2005 th., 467 ej:
10. Vardanyan M., Kronits usucichneri patrastman nor dasyntaci bacumy Araratyan Hayrapetakan temum, «Ejmiatcin» amsagir, S. Ejmiatcin, 1995 th., Zh–ZhA–ZhB:

Получено: 13.05.2025

Received: 13.05.2025

Рассмотрено: 14.05.2025

Reviewed: 14.05.2025

Принято: 25.05.2025

Accepted: 25.05.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**«Կրթությունը 21-րդ դարում»
գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես**

Հատոր 7, համար 1, 2025
Երևան

**«Образование в 21-ом веке»
международный научно-методический рецензируемый журнал**

Том 7, Номер 1, 2025
Ереван

**«Education in the 21st Century»
International Scientific-Methodical Peer-Reviewed Journal**

Volume 7, Issue 1, 2025
Yerevan

*Հանդեսի շապիկին Մեսրոպ Մաշտոցի դիմանկարն է
(հեղինակ՝ Ստեփանոս Ներսիսյան):*

*На обложке журнала изображен портрет Месропа Маштоца
(Автор – Степанос Нерсисян).*

*On the cover of the journal is a portrait of Mesrop Mashtots
(Author: Stepanos Nersisyan).*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի, Ա. Խիզանցյանի, Գ. Հարությունյանի

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am